Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8324

1852

89·99
9-89

2003

891.99
Գ-89

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ՏՊԵԱԼ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Տ. ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՑԻՈՅ

1852 — ՌՅԱ

29743-Ա. Ի.
(2093.
40)
13410-58 զ

2413 / Գ-89

ԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ
ԱՊԱՇԱՒԱՆԱՑ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ

ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ ՋՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ
ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆՑ
ԱՆՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՑ

ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ ՅՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ
ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵՑԵԼՈՑ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ
ԹԱԳՈՒՑԵԼՈՑ

ՍՊԵՂԱՆԻՔ ՋՕՐԱՒՈՐՔ ՎԻՐԱՑ ԱՆԲԺՇԿԱԿԱՆԱՑ ԴԵՂՔ
ԱԶԴՈՂԱԿԱՆՔ ՑԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ
ԲԱԶՄԱՄԱՄՆԵԱՑ ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ

Ի ԴԻՄԱՑ
ԿԱՐԵԱՑ ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԻԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ
ՊԱՏՃԱՌՔ ԱՂՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՅՑՄԱՆՑ
ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ
ԱՍԱՑԵԱԼ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

Гос. Публ. Библиотека
ССРА
им. А. Мясникяна

Printed in Turkey

Printed in Turkey

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՁԱՅՆ հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց. եւ մատուցեալ եդեալ 'ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ձենձերոյ սասանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Ա՛յլ հոտոտեսցիս հայեսցիս, գթած, քան 'ի պատարագն բոլորապատուղ մատուցեալ ծխոյն բարդութեան։ Ը՛նկալ զսակաւամանեայ բանիցս յօդուած քեզ 'ի հաճութիւն, եւ մի՛ 'ի բարկութիւն. ելցէ

'ի խորոց սատի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ յիւմն է պարարտութիւն: Եւ 'ի դնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիւ, հզօր, մի՛ իբրև զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն Յակոբու, ըստ բողոքելոյն Եսայեայ, և զանիրաւութիւնն Բաբելոնի՝ տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական 'ի խորանին Սելովայ, զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին հանգստեան 'ի գերութենէն դարձելոյ, որ 'ի վերստին գիւտ կորուսելոյս հոգւոյ առակի, ընդունելի կամաց քոց լիցի:

Բ. Բայց քանզի ձայնդ աչաւոր դատաստանիդ հատուցման՝ ուժգինս հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութեան, կրկնս ինձ երկնէ մարտից յարուցմունս, այժմէն դուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիմում անձին ցուցանի, խռովութիւնս ամբոխից, հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյլք, չարեացն ընդ բարիսն, և գերեալ զիս 'ի մահ ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժամանել առ իս. զոր ընտրեալն առաքելականացն դասուց Պօղոս՝ առ օրինակեալ զՄովսէս, զՔրիստոսի փրկութ՚ին յաղթօղ ցուցանէ: Վասն զի թէ մերձ է օր տեառն, որպէս գիր ասէ, 'ի հովիտն անձուկ ապարխսին Յովսափաթու և հեղեղատին Կեդրոնի, փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեանց, որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ զհանդերձելոցն ինձ կերպարանեն, ապա ես յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութ՚ին ստուծոյ մարմնին եղելոյ, մեծապէս գտեալ զիս առնթ վնասուց՝ բազմաց տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերակացուին անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս

Եդովմայեցւոց եւ փղշտացւոց, եւ այլոց բարբարոս ազգաց։ Քանզի այն ընտրութիւն ամօք չափեցաւ, իսկ պատուհաս խմուս պարտուց առանց աւարտման ունի զսահման։ Ես, դու եւ որդայթ անձողոպրելի, ըստ մարգարէին եւ առակողին. տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ատէն գծագրել։ Օ՜ր միայն քո է հրաշագործել պտուղս դեղոյ 'ի հնարս կենաց ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւիչ ամենայնի՝ գոլեալ 'ի փառս անձառս անսահմանելի բարձրութեան, յաւիտեանս յաւիտենից։

ԲԱՆ. Բ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի առ բարձրեալն աստուած յօդաւորական շղթամբք կարգաս, որ գործովք միայն գրաւի եւ ոչ ստեղծաբանութեամբ կաշառի, որ յեգիպտոս միշտ ունիս զարտիդ զդարձն, զի՞նչ օրինակ առ այս քեզ նմանագոյն եւ յարմարական աստանօր եդից՝ անձն իմ պարտաւոր, պատժակլիցս կործանեցելոյն Սոդոմայ, ըմբերանեալ դատախազս Նինուէի, անարի բարբարոսս քան զոխկլինն հարաւային, վատթարագոյնս քան զՔանան, յամառեցեալս քան զԱմաղէկ, անբժշկականս քաղաք դրօշելոց, Նշմար մնացեալ ապստամբութեան հինն Իսրայէլի, յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն Յուդայ, կշտամբեալս դեր

քան զծուր. տարամերժեալս քան զծայգան, խոլթաբարոյս քան զԳալիլեա, աններելիս քան զանհաւանն Կափառնաում, պարսաւեցեալս իբր զՔորազին, բամբասեցեալս ընդ Բեթսայիթայ, անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս Եփրեմի, աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտութեամբ, 'ի կորեանց առիւծուց անձնական օձս եղեռնային, կերպս ձուոց քարբից լցեալ ժանտութեամբ, պատկերս վերջին հարուածոցն Երուսաղէմի, ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի, տաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն, խորտակեալ դրացս վտահարան, և կրկին ծրդեալ շինուածս խոսուն, թողեալ ժառանգութիւնս յարմարական, մոռացեալ տունս աստուածակերտ, ըստ բանից նախագրեցելոցն՝ Մովսէսի, Դաւթայ և Երեմիայի, յարկս բանական՝ ունողս բորոտութե՛, հարուածեալ խրատու քերմանն, օրինիւ կազդուրեալ, օծեալ կաւոմն՝ ողոքական հեզութեամբն, անճարակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին, արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ, հերքեալ տարագրեալ խարոցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ, ծածկեալ դրամս յերկրի չարեօք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի։

Բ. Այլ դու աստուած, աստուածդ հոգւոց և ամենայն մարմնոց՝ ըստ դաւանելոյ աստուածաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ՝ ըստ սրբոյն Յովհաննու ձայնին, շնորհեա կատարել 'ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութեան։ Եւ ընդ լալով սերմանել բանիս 'ի նախընթաց չուս աստիճանաց օթեւանացս պատրաստութեան, 'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերկրեցեալ լռութեամբ քաւութեան՝ պտղոյն երանութեան որայիցն բարութեան։ Մի՛ տացես

ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր Իսրայէլի, և ստինս ա-
չաց ցամաքեալս՝ ով ամենագութ։ Տուր բանական
մաղթողիս՝ հզօր և ողորմած, նախ քան երկնի, և երկին
երկրի, և նա ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա Իսրայ-
էլի։ Լու երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս
ազդեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց։ Դու
ստեղծիչ՝ և ես կաւ, բաց տարակուսելոյս 'ի մուտս
մաղթանաց այսր հեծութեան՝ կամս քաղցրութեան՝
զօրանալ աստէն. զի մի՛ 'ի բանալ վերնայինն երկնի՝ ան-
ընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ, իբր զնիւթ
մոմոյ սպառեցայց ջնջեալ 'ի միջոյ։ Ոգի զրկելոյս, ըստ
մաղթանաց գոչման ասողին, և ոյժ թալկացելոյս, և
կեանք մաշելոյս՝ մտացս խղձիւ, այլ ոչ տաժանմամբ
կրից՝ աշխատութեամբ զքեզ խնդրելոյ, առ զաւանդ
մաղթանացս, և տուր զողորմութիւն քո շնորհացդ. ըն-
կալ զփոքրս 'ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ 'ի հզօ-
րէդ. զօրացո զբանս զղջման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի
բարձանց՝ աստուածաշունչ պատգամօքս 'ի սմա եղե-
լոցս։ Պարգևեա բարբառ՝ զառակն Եսայեայ, լուսա-
ւորեալ առ ճշմարտութիւնն, մատուցանելով մահու-
արժանոյս՝ ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ զոսկի քո
շնորհի, ընդ անզարդութեան երկաթոյս սևութեան
գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյցք առաքինութեան, հրա-
շեկ Լիբանանու։ Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղ-
կելոյս՝ չերկնչել 'ի քէն, անճառ և ահաւոր։ Մի՛ եղէց
անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաշան սերմանող
անբերրի երկրի։ Մի՛ լիցի ինձ երկնել և ոչ ծնանել,
ողբալ, և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել, ամ-
պել և ոչ անձրևել, ընթանալ և ոչ հասանել, ինձ ձայ-
նել և քեզ ոչ լսել, պաղատիլ և անտես մնալ, կողկո-
ղել և ոչ ողորմել, աղաչել և ոչ ինչ օգտել, զոհել և ոչ
ճենճերել, զքեզ տեսանել և դատարկ ելանել։ Տուր
ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ՝ միայնդ հզօր. մի՛

զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ Թուով աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ հատուցանէր։ Կեցո զիս գթած, լուր ինձ ողորմած, մարդասիրեա ներող, խնայեա երկայնամիտ, պաշտպանեա ապաւէն, բարերարեա հզօր, ազատեա ամենակալ, կենագործեա նորոգող, վերականգնեա ահաւոր, լուսաւորեա երկնային, բժշկեա հնարաւոր, քաւեա անքննին, պարգեւատրեա առատ. շնորհազարդեա աննախանձ, հաշտեա անախտակիր, ընկալ անոխակալ, սրբեա 'ի պարտուց օրհնեալ։ Եթէ յառեցից զաչս իմ, նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վտանգից յաւուր Թշուառութեան, գքոյդ տեսից փըրկութիւն՝ լոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր յամենագրաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան քաղցրութեամբ ինձ պատահեսցէ։ Ցոյց ինձ տէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգեւօք սիրոյ քոյ եկեալ հասեալ։ Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանեցուցես. զանակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատութեանն աւուր շնորհեսցես։ Քաւ լիցի քեզ, բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գազան դժնդակ տացես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկութ՟ի։

Գ. Արդեօք մոռասցի՞ս զբարերարելդ՝ անկալութիւն. անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝ խնամող. այլայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփոխ. նհանջեսցես զկենագործելդ՝ անվախճան. Թողուցո՞ւս զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ։ Աղաւաղեսցե՞ս զքաղցրութեանդ բարեշնորհ ծաղիկդ. անպատուեսցե՞ս զնիւթ պանծանաց քումդ ճոխութեան. յեղանակեսցե՞ս զփառս հերաց քումդ բարձրութեան. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պսակի։ Եթէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ ալքայութ՟ի

լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգևեսցես փրկութիւն. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս, ո՞չ ապեղանիս խոցուածոյս, ո՞չ դարման տկարութեանս. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգևդ տիեզերաց, որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և յարակայ մշտնջենաւորութեամբ, վկայեալ 'ի բնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերկս յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեաց յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. Գ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր իմ տէր տուիչ պարգևաց, ինքնաբուն բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ զբնաւս յոչէից, փառաւորեալ, անքննին, ահեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի, անճառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի, անորոնելի, անսկիզբն, անժամանակ, անշամանդաղ գիտութիւն, աներկեան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն, անստուեր ծագումն, ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն, ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգ-

ւոց հաց, օտար մթութեանց սէր, աներկբայ խոստումըն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռնկալու մեծ, ապաւէն գովեալ, աննուազելի շնորհ, անպակասելի գանձ, անապական անձրև, արփիացնցուղ ցօղ, ամենատեղաց դեղ, ձրի բժշկութիւն, կրկնաձիր առողջութիւն, վեհագոյն խրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, ստրկամեծար թագաւոր, աղքատասէր պաշտպան, մշտահարուստ տուիչ, անխափան դիմեցումն, աննահանջելի հրաման, անհամառօտ յոյս, երկար տեսողութիւն, անզղջական տուր, ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն. մխիթարութեան ձայն, սփոփանաց լուր, բերկրութեան բերումն, անուն կենդանի, նախախնամող մատն, անգայթակղելի ելք, անխարդախ ընթացք, կենդանարար կամք, աննենգելի խրատ, աննախանձ պատիւ, լայնական հնարք, անձկական պայման, անգտանելի հետք, աներևոյթ շաւիղ, անչափագիր պատկեր, որքանութիւն անսահման, աննմանական տիպ, անզուգական գութ, ողորմութիւն բազմազեղ, խոնարհութիւն տօնելի, համբոյր փրկական։ Նա ևս քան զայս ազդմունք վայելչականք՝ աստուածութեանդ նուիրելիք. օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, քարոզեալ, աւետարանեալ, հռչակեալ, հնչեցեալ, պատմեալ, անխաբելի կամօք աղաչեալ, և որ ինչ առ մեզ բերին առ ’ի քէն հոսմունք քաղցրութեան, զոր հանդերձելոցն ճառից լուսաբանեն կերպաւորութիւնք. որով զուարթ ցուցանիս ’ի փրկութիւնն իմ, երանութիւն, իբր ’ի պարարտութենէ իմեքէ ախորժտենչանօք լցեալ. զի ոչ իմով ինչ սնոտիապատուաստ փառատրիս երգով, այլ զի պատճառ իմն առցես ըզփոքրս աղերս՝ մեծիդ փրկանաց։

Բ. Նա քանզի առ ամենայն հասակ տնկեցեալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական

նորոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցուց ունի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի, իբր կցորդ մեծ գիտականն կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից, առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն, առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութեամբն, առ պարտաւորս և արդարս, առ ինքնարդոյ բարձրայօնն և սխալեալ անձնադատ գտեալն, առ բարիսն և եղեռնագործս, առ նկունս և առ արիս, առ ստրուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և գերաշխարհիկս, միջակայնոց և պայազատաց, շինականաց և տոհմականաց, արուաց և իգաց, հրամայողաց և հնազանդելոց, դեր ելոց և նուաստից, վեհից և փոքունց, պատուականաց և ռամկաց, ձիավարժից և սուսականաց, քաղաքականաց և գեղջկաց, արքայից գոռոզութեանց 'ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց, միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց, մաքրականաց տիրանուէր զգաստութեանց, քահանայական երջանկակրօն ընտրութեանց, այցելութեանց բարեզգեստից դիտողութեանց, աթոռակալութեանց նախագահից սրբանուէր տեսողութեանց. որոց ոմանց աղերս աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարդել ինձ մաղթանս բազմադիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ։

Գ. Եւ արասցես զայն ընթերցողացն 'ի սիրտս յստակս՝ բժշկութիւն հոգւոց և մաքրութիւն յանցանաց, թողութիւն պարտուց և արձակուրդ մեղաց կապանաց։ Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոյն, և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապաշաւ ըղձից։ Շնորհեսցի տէր և ինձ ընդ նոսին առ 'ի քէն զղջումն կամաց, և նոցա խմոյս ձայնիւ շունչս բարեհամբոյրս.

նուիրեսցի վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին, և բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խընկեսցին։ Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան, շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ։ Եթէ ելցեն ինձ բարեպարկշտք ընծայիլ սովաւ, ընկալ կենդանեօքն վասն քո, գթած, և զիս ընդ նոսին. եթէ ախտս ինչ որբանուէրս կաթուածոյ աչաց սովիմք բերիցի, եղիցի 'ի քէն խնամակալ՝ և յիս անձրևեալ. եթէ գրեսցի և 'ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարեալ։ Եթէ հեծութիւնս աստուածահաճոյս 'ի ձեռն այսր բանի 'ի գաղտնեաց ուրուք յառաջ եկեսցէ, օգտեսցայց քև բարձրեալ՝ և ես ընդ նմին. եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս ձայնի և աղաչողացն աղերս յառաջ մատուցեալ։ Եթէ պաղատանս բազմադիմիս ընդ իմս երկնեսցի, լիցի և ինձ քև և վասն սոյին կրկին նուիրեալ. եթէ յարգեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ 'ի հաճութիւն, նախայլոցն ընդ իս քև ընծայեսցի։ Եթէ 'ի տխրանաց ինչ ձանձրութենէ ոք նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստատանաւ այս հառաչանաց՝ 'ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վստահութեան մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի։ Եթէ յուսոյն ձգարան սուսերքն յանցանաց հատեալ կորեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք ամենակալիդ բարւոք պատուաստեալ. եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ զոք պաշարեսցէ, գտցէ փրկութիւն սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի 'ի սիրտ խոցիցի, քաղցրութեամբ քո՝ սովաւ ապրեալ ողջասցի։ Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց՝ յանդունդս ոք խորոց իցէ ընկլուզեալ, եկեսցէ 'ի լոյս կարթիւ այս հնարից՝

քև պատրաստեալ, եթէ թմբրութեամբ խաբից խաւարին գործոց իցէ ոք միաւեալ, զօրացի անդրէն վասն քո՝ միայն ապաւէն՝ 'ի քեզ ապաստան եղեալ։ Եթէ պահպանակն վստահութեան զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութեան. եթէ ամայի 'ի զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի, ապաւեսցէ սովիմբ առ 'ի նոյն դարձ նորոգողին։ Եթէ սարսուռ դիւային ջերման դողութեամբ ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութեան մրրիկ խորտակիչ հոգւոյ յանկարծ բախեսցէ զհաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն զեկուս այս թևոց 'ի քեզ պատկանեալ։

Դ. Այս արասցես լինել դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ։ Օգնեալս իմ դու կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ 'ի սա. շունչ զօրութեան մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց. ամէն։

ԲԱՆ. Դ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ՚ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հողւոյս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի և ՚ի սահմանէ բանի փախչելի յիշատակ անձողոպրելի անաչառ քո ատենի՝ ՚ի կշտամբութիւն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի։ Նա զի և չիք իսկ բժշկութիւն բազմավտանգ սաստկութեան վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսողին զանձն իմ ՚ի կորուստ։ Մանաւանդ զի ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի, և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբէք խաբելի, ոչ յօդուածովք բանից ստելի, ոչ արագմամբ ոտից փախչելի, ոչ Թիկանց դարձուցանելի, ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի, ոչ բերանով ընդ հող հատանելի, ոչ ՚ի խորս երկրի ղօղելի։ Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութիւն իմ նուաղեալ և իսպառ ունայնացեալ. մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ մնացական, և ես կորստական. իրաւանցն կշիռ պակասեալ և անիրաւութիւնն իսկոյն զօրացեալ. բարեացն բերք հալեալ, և սխալմունքն արձանացեալ. աւանդն կորուս-

եալ, և դատակնիքն այժմէն գտեալ. մահուն մուրհակ գծեալ և աւետեացն կտակ եղծեալ: Բարերարն տըխրեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեալ, և սատանայ խնծղիւք պարեալ. վերնական զօրքն ողբացեալ, և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մթերք լցեալ, և պահողին գանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ, և ստացողին պարգև մատնեալ. հաստողին ձիր մոռացեալ, և կորուսչին հաղբքն պահեալ. երախտիք փրկչին հենգնեալ, և բելիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և գոռողին ժանդ ժանդխս ժամանեալ:

Բ. Եւ արդ ո՞չ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կանխութեան նախաձայնելոյ, ոչ ստեղծանիլն երբէք յարգանդի և ոչ նկարիլն 'ի յորովայնի, ոչ 'ի ծնունդ յառաջագայիլ և ոչ 'ի լոյս կենաց հասանիլ, ոչ 'ի թիւս մարդկան գրիլ և ոչ 'ի հասակ աճման ամբառնալ, ոչ 'ի պատկեր գեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հանդերձաւորիլ, քան ընդ այսպիսեաց սատակագունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վիմաց կարծրութիւն բերէ, թող թէ մարմնոց լուծականութիւն:

Գ. Եւ արդ տուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութիւն, որ զայսոսիկ դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ աստուծոյ, և սուրբ եղերուք. զի զողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ: Ե՛հա բարձրացիր վերստին ինկեալ այսր յիշատակաւ, որ ունիս զամենայն, և 'ի քէն է ամենայն, և քեզ փառք յաւիտենից. ամէն:

ԲԱՆ. Ե

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ։ Քանզի որո՞վք դիմօք վերադրեցելովք նշանակօք աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր, անճառ, անպատում, հզօր աստուած բոլորից։ Քանզի դասեալ աստատին 'ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո միշտ զօրացեալ և զանիրաւութիւնս իմ յայտ պարտաւորեալ։ Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ տպաւորութեան, զտկարս օժանդակելով։

Բ. Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր միտամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի շնչականացն որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ պճնեցեր, ծնար հայրաբար, սնուցեր դայեկապէս, տածեր ստացողապէս, տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ գաւթի, ջրո՞վ կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով ջամբեցեր, աստուածային արեամբդ արբուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր, լուսովդ փառաց վերածածկեցեր, զհողանիւթ մատունս անմաքուր ձե-

ռայս 'ի քեզ մատուցեր, զմոխիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր, զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր։ Ոչ կիզեր զբերանս լցեալ նանրութեամբ՝ 'ի ժառանգակից կարդալ զքեզ, ոչ կշտամբեցեր ըզ-յանդգնեալս 'ի քո կցորդութիւն, ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս 'ի քում անհարկութիւն, ոչ արգելա-նաւ կապանաց ընդ մահապարտացն տարագրեցեր, ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս՝ որ անմաքրապէս առ քեզ համբառնայր, ոչ մանրեցեր զոտս իմոց մատանցս 'ի շօշափելն զբանդ կենաց, ոչ պատեցին զինև մառա-խուղք 'ի ձօնելն զքեզ՝ ահաւոր, ոչ վշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխնելն զքեզ՝ անսահմանելի, ոչ գնա-ցեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևողս, իբր ընդ վրիպեալ տունն Իսրայէլի, ոչ խայ-տառակեցեր 'ի հարսնարանիդ զանարժանս քում պա-րերգութեան, ոչ 'ի գձուձ հանդերձին տեսիլ զանօ-րինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռացս և ոտիցս յարտաքին խաւարին հալածեցեր։

Գ. Զայս ամենայն մասունս բարեաց և զներելոյդ երկայնմտութիւն ընկալեալ 'ի քէն՝ բարերար, օրհ-նեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, փոխադրեցի վնասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօ-րէնութիւնս, մարմնականաց և անձնականաց՝ ամենա-կիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշունց։ Զայսոսիկ քեզ, աստուած իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխաբերեցի. զայս քեզ ինձէն հատուցի չա-րիս, ըստ մոլոխեան յանդիմանութեանն առակի, մո-ռացեալ զիմաստութիւն և սիրողս յիմարութեան։ Զայսց բարեաց երախտեաց կաճառս՝ ընդունայնու-թեան գնացիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսա-ւորութիւն շնորհաց անճառից 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խելագարութեան ցնդեցի։ Ու-

Թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձե-
ռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ, ոչ հաւանե-
ցայ ըստ մարգարէին որ զԻսրայէլէ ամբաստանութեան.
և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ,
և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձ-
եալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին յոճ՛ն առաջին
մատեայ, փչոցն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս
յորոմանն արդիւնաւորութիւն։ Առ իս եղանեն առածք
աստուածարեալ սուրբ մարգարէիցն. քանզի մնացեր
յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի.
դարձայ յանախորժ դառնութիւն պտղոյ՝ այդիս օտա-
րացեալ. բուռն հարի զանհաստատ հողմոյ, որովք
միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի
երանելոյն Յոբայ ընդ ճանապարհ իմն անդարձ գնա-
ցի. 'ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի։
Ձայնատարր հետովք խաբեցայ կենացն անձկալեաց
հասանել. փակեցի ինձէն զելիցն ուղևորութիւն. բացի
կամաւ զկորստեան խորխորատն։ Խցի զպատուհան լը-
սելեացս իմոց առ բանիդ կենաց ընդունելութիւն. կա-
փուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ'ի զկենացն դեղ
նկատել։ Ոչ ընդոստեայ 'ի թմբրութեանց լքմանէ մը-
տացս 'ի պատգամ փողոյդ ահաւորութեան. ոչ զգաս-
տացայ 'ի բողոք գուժի հրափորձական աւուրն ըստ-
րութեան. ոչ երբէք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մա-
հացուի, որ 'ի կորուստն կարապետէ։ Ոչ ետու հան-
գիստ քոյ հոգւոյդ 'ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ ընդ-
բնութիւն շնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ պար-
գևի. իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին,
զհոգիս կենդանի մահացուցանել։

Գ. Եւ զի՞նչ է ինձ սակաւս և նուազագոյնս յօդել
սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ անցեալ է
ըստ քանակութիւն և վրիպեալ ըստ բժշկութիւն։ Արդ
քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և անոխակալու

թեամբ. մատչել առ այցելութ՛ի դատապարտելոյս որդի աստուծոյ կենդանւոյ. քեզ փառք յամենայնի. ամէն։

ԲԱՆ · Ե

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՍԿ արդ զի՞նչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայնիս հեծութեան՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հեղքել, և կամ ըղձանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութք, մատնամուխ զզուանօք փսխել։

Բ. Նա՛ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ սրբոցն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղու, և շրթունք խնդութեամբ, ըստ առակողին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատակել համայն աստանօր. թէպէտ առ իմում թերութեան բարւոյ անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն։ Տօնելի եղև Մանասէ առ իմոց պարտուցս առաւելութիւն. պատուեցաւ և փարխեցին առ դժնէիս ամբարշտութիւն. գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտազանցութիւն. յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն Ամասեայ առ անշնորհութիւն ապախտաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատախազն է ան-

Հաւատից․ պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց։ Ոչ պակաս քան զփարաւոն զատեղծուած սրտիւ իմ խստացուցի․ ըստ օրինակի խռովութեան մրրկաց ծովու ծփեցայ․ ոչ այնքան սարսեցի և պատկառեցի ՚ի սաստկութենէ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերայն։ Ընդ թիւս չափուց կշռութեան առ իմս գործոց՝ և աւազոյն կոյտ սահմանեցաւ․ պակասեաց անբաւելին շեղջք առ համբարս իմոցս անօրէնութեանց։

Գ․ Զի թէպէտ և յոյժ բազում են մանունքն ՚ի յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ ուրոյնք և առանձնականք ՚ի ծննդոց անձրեւէ․ իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք․ զորս անհնար է առնուլ ՚ի միտ։ Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր, ոմն և բիծք իւր, ոմն և արկածք իւր, ոմն և փուշք իւր, ոմն և արմատք իւր, ոմն և հաստուածք իւր, ոմն և պտուղք իւր, ոմն և նշխարք իւր, ոմն և ճիւղք իւր, ոմն և ոստք իւր, ոմն և արմկունք իւր, ոմն և ճիրանք իւր, ոմն և մատունք իւր, ոմն և խլրտմունք իւր, ոմն և զօրութիւնք իւր, ոմն և ազդմունք իւր, ոմն և նշմարանք իւր, ոմն և տիպք իւր, ոմն և մնացուածք իւր, ոմն և ստուերք իւր, ոմն և մթութիւնք իւր, ոմն և յարձակմունք իւր, ոմն և հնարք իւր, ոմն և պատիրք իւր, ոմն և դիտմունք իւր, ոմն և դիմեցմունք իւր, ոմն և չափք իւր, ոմն և խորք իւր, ոմն և գարշութիւնք իւր, ոմն և կայծակունք իւր, ոմն և կիրք իւր, ոմն և մթերք իւր, ոմն և գանձք իւր, ոմն և ցնցուղք իւր, ոմն և աղբերք իւր, ոմն և դիւտք իւր, ոմն և շանթք իւր, ոմն և հրդեհմունք իւր, ոմն և պատկառանք իւր, ոմն և վիհք իւր, ոմն և անդունդք իւր, ոմն և բորբոքմունք իւր, ոմն և աղջութիւնք իւր, ոմն և ամպրոպք իւր, ոմն և կայլակք իւր, ոմն և հոսմունք իւր, ոմն և հեղեղք իւր, ոմն և սառնամանիք իւր, ոմն և դլունք

իւր, ոմն և շաւիղք իւր։ Ձնոյն և տապ իւր, հրատն և գոլորշիք իւր, հալոյն ճարպին և ճենճերմունք իւր, օշինդրին և դառնութիւն իւր, կործանչին և հնազանդեալք իւր, բռնաւորին և յելուզակք իւր, գողոյն և սպառազէնք իւր, աւազակապետին և գումարտակք իւր, գազանին և կորիւնք իւր, խածանողին և ծակոտուածք իւր, ապականագործն և նմանիք իւր։

Դ. Արդ այսքիկ պէտք են գլխաւորութեանց ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց՝ իւրաքանչիւր ոք 'ի սոցանէ բիւրք բիւրուց և հազարք հազարաց. իսկ ընդհամայնիցս թիւ նա միայն զօրէ իմանալ, որ զառ 'ի մէնջ չէութիւն գրեալ՝ իբր զէութիւն գործոց տեսանէ։ Նա արդ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութեամբ վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ զբնաւ խիկութիւնն սահմանեցի, որ 'ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի փոփոխանութիւն. այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բաւանդակապէս։

ԲԱՆ Ա։

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ զի մի զփրկութեանն վստահութիւն խապառ-կորեցից, և ապազէն եղեալ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք զոր վերագրեալքդ սահմանեցին՝ զորքանութիւն պատկերին ձևոյ եղեալ ահարկուս, ցուցից առ սմին բազմաբոյլ բանութեան մարտկացդ՝ զօրեղ ախոյեանս աստուածականս՝ ամենայաղթողս և անպարտելիս, թէ և կսկծելիս կիրս և դժուարակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ ճանապարհաց երկք և տաժանմունք։ Քանզի զայն ամենայն դունդս չարութեան բանսարկուին զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոյ աչաց, իբր զճճիս զեռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ կամ դոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութեան ելեալ 'ի յոգւոյ, իբր շնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարևու, զսառնամանեաց սաստկութիւն հալէ. քանզի ըստ միում նմանութեան հեշտածինք են, և ըստ միւսում դիմադրութեան դիւրամեռք։

Բ. Այլ ես ոչ երբէք կասեցից դատել զդատապարտեալս՝ բանից կսկծմամբ, պարսել զպարտաւորեալս՝ իբր զխնասակար անխղկանաւոր անհամոզելի. վասն զի զոմանս սաստկեալ 'ի յիմոց նեղչացն, ոմանց զօրութիւն տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ։ Տունկս դառ-

նոստեան, որ զգարշութիւն անառակ վարուց ծաղկեցի · բարունակս ապականաբեր և մահողկուզեան, որ զկորուստեան զինին երկնեցի · Քանանու զաւակս՝ և ոչ Յուդայի, ըստ ասից մեծին Դանիէլի · որդիս գեհենին, և ոչ արքայութեան · ժառանգս դժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց · նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախտս առ երախտաւորդ, ապաշնորհս առ բազմապարգևդ, միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ, դառնացուցիչս քաղցրութեան բարերարիդ, ծառայս չար և վատ, ըստ տէրունեան յանդիմանութեանն, իմաստունս զչարիս գործել ըստ Եսայեայ նախասացութե՛ն, ժիրս առ ժանդագործութիւնս զազրութեան։ Փոյթս առ 'ի բարկացուցանել զտէրն, մշտաշարժս առ գիւտս սատանայականս, հանապազորդեան վիշտս ստացողին, թոյլս առ բարեացն թռիչս, ծոյլս առ երանութիւնն ընտրութեան, դանդաղս առ դիտմունս խոստացելոցն, անարխս առ կարիս պիտանեացն և օգտակարացն, պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց։

Գ · Վայ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի · վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեանն ձիր մոռացայ · վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց՝ որ ոչ գոյ հատուցանել · վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ դառնալ առ հանգստարարն · վայ խաստակարիս տէրունեան պատուցըն, որ չիք հնար յանդիման լինել հզօրին · վայ եղէգնախաւխ կիզանողականս նիւթոյ, որ տոչորելոց եմ 'ի գեհենին · վայ ինձ առ այս յիշատակ, զի նետք բարկութեանն աստուծոյ այրեցելովք են գործեալ · վայ յիմարութեանս, որ ոչ մտառեցի զծածկեցելոցն յայտնութեան հանդէս · վայ ամբարշտիս, զի միշտ անդադար ոստայնս չարեաց կկեցի · վայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից, կտտողացն թունաւորաց զիա՞րդ համբերեցից · վայ ինձ առ արբումն մահուն

բաժակի, ո՞րպէս զյաւիտենականն տուժեցայց․ վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս, ե՞րբ դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց․ վայ ինձ առ նուազութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն․ վայ ինձ առ ձեպ տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի․ վայ ինձ առ ձայնին ահաւորութիւն դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կընքելոյն, թէ ոչ գիտեմ զքեզ։

ԲԱՆ․ Ը

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Եւ *արդ զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ, կամ ո՞ւր թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս, կամ ո՞րպէս ելցես 'ի մեղաց բանդէ։ Քանզի բազում են պարտքդ և անթիւ հատուցմունքն, սաստիկ կշտամբանքն և անվախճան նախատինքն․ անողորմ են հրեշտակքն և անկաշառ դատաւորն, հզօր ատեանն և անաչառ բեմն, քստմնելի սպառնալիքն և անողորմ հատուցմունքն, ահարկու հրամանն և մերկապարանոց յանդիմանութիւնքն․ հրեղէն են գետքն և անանցանելի են վտակքն, թանձրամած խաւարն և արտաքոյ այցելութեան մառախուղն․ ապականութեան է գուբն և մըշտնջենաւոր է տագնապն, ամենագրաւ տարտարոսն և անզերծ սառնամանիքն։ Եւ արդ արդարև քեզ են*

զանձեալ դառնինքս այսօրիկ դժնդակք և տարժանելի օթևանք անըմբերելեացդ պատուհասից, որ անարժան անձն իմ մեղաւոր, չարագործ, պոռնիկ, բազմաբիծ, և սահման անդատանի բնաւին անմաքրութեան։ Ո՛հա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեսցես՝ Թիւր-եալդ 'ի յուղղութեանց և զառածեալդ 'ի մաքրութեանց, տարագրեալդ յարդարութեանց և 'ի կարգաց պարկեշտութեանց, ունայնդ 'ի լիութեանց հոգեպարգև հարստութեանց, նախանձարկու բարերարին և ամենակալ Թագաւորին։

Բ. Լու քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր և զանօրինակդ հարուած, վկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկութիւն, որ չարդ 'ի բարեաց, որ դառնութիւնդ 'ի քաղցրութեանց, որ խաւարդ 'ի լուսազարմից, որ կապտեալդ 'ի պճնելոց, որ դսրովեալդ 'ի գովելոյ, որ անբարիշտդ 'ի բարեպաշտից, որ շնչականդ 'ի բանականաց, որ անմիտդ 'ի մտաւորաց, որ անհանճարդ յիմաստնոց, որ անմաքուրդ յընտրելոց, որ մահացուդ 'ի կենդանեաց, որ խոհերականդ 'ի սրբոց, որ արբշիռդ 'ի պարկեշտից, որ կեղծաւորդ յարդարոց, որ անպիտանդ 'ի պիտանեաց, որ անարգդ 'ի փառաւորաց, որ նուազդ յառաւելութեանց, որ գերիդ 'ի գերազունից, որ նուաստագոյնդ 'ի վեհից, որ աղքատդ յընչեղաց, որ անարժանդ 'ի փրկութեանց, որ տնանկդ 'ի բարձրութեանց և 'ի հոգևոր հարստութեանց, և հատուածեալդ յօրհնելոյ։

ԲԱՆ. Թ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից 'ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան , ով անձն իմ թշուառ , ամենապատկառ և առ պատասխանիս բանից անբարբառ , անպիտան աստուծոյ և սրբոցն մասնակցութեան։ Զի եթէ զլիծ մի ծովուց 'ի յորակութիւն դեղոյ հեղեղեցից , և ընդդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից , և զպուրակս յոքունց անտառաց շամբից եղեգանց 'ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից , և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել։ Նա՝ զի թէ զմայրս Լիբանանու 'ի մի լուծ կշռոց զօդեցից , և կամ զլեառն արարատեան 'ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից , ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համազուգակցել։

Բ. Ուռաս ամբարձուղէշ՝ ստուերաստեղն՝ տերևալից՝ ունայն 'ի պտղոյ , նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սաղարթօք վարսից , այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ , բացականացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել զխնդրելին , գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց և գարշելի 'ի գեղեցկութեանց , ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց։ Զի եթէ ապաժաման յանգգոյշ ժամուն

հերապանծ տունկն պտղակրոյս անկենդան, որ դոյզն պատկերին է անպատրաստից, եկն ընդ անիծիւք, և կամ երկիր ռոգեալ ցօղով, և ոչ բազմապատիկ զաւանդս արդասեաց երկրագործութեան տածողացն մատուցանէ՝ լքեալ մռանի, իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր, ի՞բր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակիդ։ Վասն զի զհամայնն ընկալար 'ի քեզ անպակաս յառաւելութեանց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նանրութեանց և զգիւտս նորոգս՝ ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ աստուծոյ։

Գ. Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգելոց արձանաց բանից, իբր զանընդել գազան վայրենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանւոյն՝ իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստութեանն բանի. և զյոյզս մտաց խորհրդոցս գաղտնեաց իբր զգլխաւորեալ յանդաւորութիւն չարութեան գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ աստուած իմ և տէր։ Զի որով չափով չափեցից զանձինս սոդոմանք, 'ի քոյդ աննուազ գթութեանց այսրէն չափեցայց՝ ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս ընդ մեծագունիցս պարտեաց։ Եւ որքան վիրացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ճարակեցլին, այնքանեօք չափովք կրկին առ սմին և իմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհռչակեալ լուսաւորեսցին. և 'ի պարտուցն առաւելութիւն, նոյն քան փոխատուիդ առատատրութիւն բարեբանեալ միշտ պսակեսցի, ըստ խընկաւորդ քում առակի։ Զի քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութիւն, և աջով քո նորոգութիւն, և մա-

տամբ քո զօրեղութիւն, և 'ի հրամանաց քոց արդարութիւն, և յողորմութեանց քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և 'ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգւովդ քո բարութիւն, և օծմամբ խնդոյ քոյ սփոփութիւն, և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութիւն. և դու տաս մխիթարութիւն, և մոռացուցանես զվհատութիւն, և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութիւն ողբոց 'ի ծաղր փոխես։ Եւ քեզ վայելէ օրհնութիւն զովութեամբ հանդերձ յերկինս, և յազգս հարցն և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Ժ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ *արդ քանզի միապէս մատնէ կորստեան և զգլխովին ուժգնապէս և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ խմն են 'ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն։ Ո՛ ի մինն զհզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեցելոց յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութեան լափլիզող դժոխորակայն գազանի՝ իբր կերակրով արեամբ պարարի։*

Բ. Նա արդ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ և յետին մահու ժամանեալ, դոյզն ինչ դարձումն շնչոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յարեայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ Քրիստոսի ձեռամբն՝ որ գթածն է յամենայնի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս։ Նա սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն 'ի նախնեացն սքիմբք զինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութեանն դեղ ընկալեալ, ապաշաւանաց թոշակաւն զգրաւականն անեղծութեան աստէն ժառանգեաց, 'ի վեր քան զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատային, և անտեսիցն ճոխութեամբ փարթամացան։ Իսկ զխրախոյս տէրունի պաշտելի բանին յիշեալ առ սմին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն, է զի և զչափն ընտրականացն բարեմասնութեան աստուծոյ հաճելեացն զննեալ աստանօր, զայս պատկեր բանի ընկալայք նախնի գահերէց առ 'ի սրբութեանցն մուտ սովիմք հանդերձել. առանց որոյ և ոչ տէրն փառաց զիւրան առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ լծակից խնդրեաց բարերարութեանն իւրոյ զհաւատոն մեր. ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութեամբ առընթեր գոլով աստուծոյ. քանզի հաւատք քո կեցուցին զքեզ, օրհնաբանեալն աստուծոյ բերան վկայեաց։ Քանզի արդարև սեռն տեսութիւն և կատարեալ իմաստութիւն և առ աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոյ մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձգեալ մնայ անվթար և ան-

փակելի, պատուակից գոլով սիրոյ և յուսոյ։ Զի եթէ փոքու սերմանի գոյի հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք զլերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու, ապա յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ աստուած, որ զապառնիսն և զծածկեալսն առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ, Երրորդութեանն փառաւորելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ։ Զի թէ և զերկսն հատուածըս առանձնաւորականս 'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մեծասցիս նոքօք 'ի յաստուած. քանզի թէ հաւատաս 'ի նա, և սիրես. որով և յուսաս աներևութից պարգևաց նորին։ Նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԺԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ, ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ արդ ես յետինս դաւանողաց՝ ունայն 'ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն իմ եղելութիւն 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից յուսով հաւատամ Յիսուսի Քրիստոսի առնել զոր կամի։ «Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խրատեալ Պօղոսիւ, ուսեալ 'ի Դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ. որպէս հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն յարութեան նորա, ըստ

առաքելոյ , և զհաղորդութիւն չարչարանաց նորա , և որ զկնի բերլին ասացեալքն։ Կցորդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և 'ի նորոգս այս փոխադրութիւն , որ 'ի մեղացն 'ի քաւութիւն , և 'ի չարագործութենէ յարդարութիւն , և յանմաքրութենէ 'ի սրբութիւն , և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտ երանութիւն , և 'ի ծառայական կապանացս յերկնաւորն ազատութի՛։ Քանզի զիա՞րդ ոչ արդեօք չքնաղ քան զբան՝ և 'ի մթութենէ երկևանութեան խաւարի զտեալ՝ և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի , որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից՝ ստորասուզեալ ծանրութեամբ յանդնդային վհին խորխորատ գբոյն կործանման , նուագիւտ մեղօքն անջրելեօք , ունի և նշխար նշուլից՝ փրկութեան կենաց հըպաւոր , իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի , որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն։ Աւասի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ , և ակնկալութիւն բարւոյն բարձելոյ , և համարձակութիւն շնորհին լքելոյ , յուսալ վերստին անդրէն միւսանգամ նախապարգևիցն փառազարդութեանց դարձեալ հասանել․ քանզի և յաստուածուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս․ վասն զի սա զտուողին զօրութիւն ամենահնար աւետարանէ։ Յոր խունկ հաճութեան մեծապէս հոտոտի աստուած , քան յամենայն բուրումն անուշից , և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ 'ի սպաս խորանին , որ է կերպարան անձանց խոնարհից զղջեալ բեկութեամբ՝ առ 'ի միութիւն նոյն նմանութե՛։ Ըստ որում հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս ախտացեալս տեսանելեօք , հաւատա՞ք ասելով առ այդ թէ

կարող եմ առնել ձեզ զայդ, ոչ պարգեւեալ աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոյն դրաւ ընկալաւ: Քանզի զի՞նչ քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ առ կենդանութիւն մեզ անյուսագոյն, առ որ կանանցն ժամանելոց 'ի յոյս արարչին հաւատոցն հանդերձանօք, անյապաղաբար զփառացն աստուծոյ տեսին զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութիւն:

Բ. Իսկ աստատին անկապուտ շնորհին մնացելոյ զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք: Նախ Ենովք, զկնի Ահարոն, յետ նոցա Դաւիթ, դարձեալ եւ Պետրոս. ընդ որս եւ փոքրն Եղիազար, որ 'ի մեծէն աստուծոյ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ: Աւելորդ է առ այս եւ բանն առակի անառակ որդւոյն. Թողում զպոռնիկն՝ որ 'ի տեառնէ գովեցաւ, եւ զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ, եւ զաւազակն երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն հաւատովքն պսակեցաւ, եւ զոր անքաւելին են պարտիք՝ զհաղորդեալքն սպանման մահու արարչին. առ որս եւ զգլխաւորն ընտրելոց Պօղոս, որ երբեմն նախանձն էր անօրինաց: Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին դլորեալք անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութեամբ քան զնախակրօնիցն առաւելութիւն: Իսկ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահեալ հայրենի մերձաւորագոյն զօղ պատուիրանի սկզբնաւորն դաւանութեան, որ եւ զնախնւոյն պարտիս ինքեան փարկուցեալ, զնորայսըն իւրովքն տուժեալ կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով՝ բանականաց բնութեան կենաց կարապետ՝ յաղթող զօրապէս բնութեան մահու փոխեցաւ: Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ, 'ի կատարեալ տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հոսեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց դժնէից կենացս 'ի կամարն երկնից

համբարձման։ Նա թէ այն ժամանակաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութեան, և պատկերն արքունի 'ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունական քանդակուածով, անկորուստ և անփոխադրելի և յաղթող դաւաճանութեան զմերս ենթադրեալ բնութիւն, ապա առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անքող և անմերարկու՝ տերամբ Քրիստոսի ուխտեալ. որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տէրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս։ Նա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտադունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս, և ակն ունիմ փառացն շնորհի. քանզի արդարև յարդարացուցանելն զմեզ աստուծոյ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել, ըստ առաքելական բանին սահմանի։

Գ. Նա յայս անտուերադիր վստահութիւն ապաստան, կամ կործանեալս՝ կանգուն, թշուառացեալս՝ յաղթող, վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական, ամենաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն, մահու մատնեցեալս՝ 'ի կեանսն, ընդ ապականութեամբ վաճառեալս՝ 'ի ձիրն, դժոխային գործովք գրաւեալս՝ 'ի լոյսն, ստորնաւէր անասնակենցաղս՝ յերկինս, կրկին դայթակղեալս՝ 'ի վերատին փրկութիւնն, մեղօք կապեցեալս՝ 'ի հանդըստեանն խոստումն, անբժշկական վիրօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ, ստամբակեալս վտարադրութեամբ՝ 'ի սանձն հանդարտութեան, սրացեալս վարատական՝ 'ի կոչումն, ապառում դժնդակս՝ 'ի հեզութիւնն, ընդդիմաբան լուտացողս՝ 'ի ներումն։ Ի Քրիստոս Յիսուս և 'ի Հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և 'ի կամս բարերարութեան Հոգւոյն ճշմարտի. օրհնաբանեալ

խկութեանն և մի աստուածութեանն՝ զօրութիւն և
արքայութիւն մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ· ԺԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ արդ քանզի յաւէտ յառաջնում զգլխմանն
յուսահատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց
հեծանաւն 'ի մահ ձաղկեցայ, աստանօր 'ի յուսոյն կեր
պարան փոխեալ՝ յարդահատել համարձակեցայց,
զԵրրորդութիւնն սուրբ կարդալով յօգնականութիւն
ինձ մեղաւորիս։ Որ և անդստին իսկ յօրհնաբանեալն և
'ի դաւանեալն զկենդանարարն բնաւից աստուած, իս-
կոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան ան-
ուան շնորհաձիրն բարերարի՝ մահացելոյս է կենդա-
նութիւն, ըստ մարգարէին նախաճառութեան, թէ
որ կարդայ զանուն տեառն, նա կեցցէ։ Իսկ ես ոչ
միայն կարդամ, այլ նաև հաւատամ մեծութեան նո-
րին. ոչ եթէ վասն պարգևաց նորա մատուցեալ յո-
ղոք դեգերիմ, այլ իբր զկենդանութիւն իսկապէս,
և զշնչոյ տուրևառութիւն հաւաստի, առանց որոյ ոչ է
շարժողութիւն կամ ընթացութիւն. զի ոչ այնքան
յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ։
Ոչ 'ի տուրսն, այլ 'ի տուողն յաւէտ կարօտիմ. ոչ փառ-
քըն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբու-
րելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշա-

տակաւն միշտ ձենձերիմ . ոչ վայելչին տարփանօք հեծեմ , այլ հանդերձողին տենչանօք յերիկամանց աստի կականիմ . ոչ զհանգիստն խնդրեմ , այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ . ոչ հարսնարանին խնձոյիւք , այլ փեսային անձկութեամբ մաշիմ։ Ի ձեռն որոյ զօրութեան վստահապէս ակնկալութեամբ վերագրեցելոյ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ 'ի կարողէն ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել. այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և 'ի գթութիւն և յերկնից ժառանգութիւն , թէպէտ և յոյժ եմ տարագրելի։

Բ . Նա և այդ բազում պատկառանօք ամաչեցելոց դիմաց կորացեալ , զմիջնորդ ազդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութիւն , նորոգեցից 'ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանց աղիողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ։

Մաղթանք զօրաւորք արհաւրաց գիշերայնոց։

Գ . Ընկալ քաղցրութեամբ , տէր աստուած հզօր , զդառնացողիս զաղաչանս . մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք . փարատեա , ամենապարգև , զամօթական տխրութիւնս . բարձ յինէն , ողորմած , զանբերելի ծանրութիւնս . անջրպետեա , հնարաւոր , զմահացու կրթութիւնս . աւարեա , միշտ յաղթող , զխաբողին հաճութիւնս . բացադրեա , վերնային , զմոլելոյն մառախուղ . կնքեա , կեցուցիչ , զկորուսչին ընթացմունս . ցրուեա , ծածկատես , զըմբռնողին չար գտմունս . խորտակեա , անքննին , զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս . պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս . գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս . կերպացո զքո

նշանդ ՚ի հետս ելից մաղթողիս . ամրացո քո աջովդ զհանգստեանս խշտի . մաքրեսցես ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս . պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս . անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս . կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ . կարգեսցես ՚ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ՚ի խորութեան գիշերիս , բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ աստուածածնիդ և ամենայն ընտրելոյ: Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ ՚ի ծփական խռովութեանց , կենցաղական զբաղմանց , անրջական երազոց , խօլականաց ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերըստին ՚ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ , հոգենորոգ զուարթութեամբ ՚ի քեզ արձանացեալ , զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ , ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից , փառաբանողաց երկնագումար խմբից երդակցեալ , յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից . ամէն:

ԲԱՆ. ԺԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՍՏՈՒԱԾ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի ողորմութեանց շնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ ըղ

գթութիւն և զընտանութիւն աւետարանէ , քաղցր գժնէից և անգոհացողաց։ Ընդ քեզ և որդիդ քո իբրև զքեզ , զօրաւոր ձեռն իբրև զքոյդ , անժամանակ տէրութեամբ ահեղ , ընդ արարչութեանդ քում բարձրացեալ։ Եւ հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անսպառութեամբ , կատարեալ իսկութիւն դոյի , էութիւն մշտնջենաւոր , հաւասար քո ամենայնիւ , փառակից որդւոյ քոյ տէրութեամբ։ Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքննին , տրոհեալ 'ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ . իսկ միաւորեալ համագուգութեամբ , նոյնագոյ բնութեամբ տիրապէս , անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութեամբ . ոչ երիցութիւն ումեմն 'ի յումեմն և ոչ քթթել մի ական առ նուազութիւն միոյն ժամանեալ , քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն , միով պսակաւ սրբասացութեան անըսկզբնաբար աստուածաբանեալ։ «Քանզի արդարև մերաձայնեալս այս խոստովանութիւն երեքփառատրեանդ-դաւանութեան զվէմն հաւատոյ Պետրոս երանեաց . իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ բարեհրաման քո ակնարկութեամբ , ով խնդրողդ գերելոյս , հրաշանորոգ արդարացուսցէ։ «Քանզի թէպէտ և քո իցեն պարգևք , և քո ողորմութիւնք , այլ ոչ 'ի պարգևսն ես այնքան հոչակեալ , որքան յողորմութեանն . զի երկրորդն զքոյդ յաճախէ զփառս , իսկ առաջինն զճգնաւորացն յայտնէ զգործս . զի պարգևք՝ վաստակոցն են փոխարութիւնք , իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք։

Բ . Եւ արդ մի զօրասցին մարդկայինս գործք առաջի քոյոց շնորհաց , աստուած գթութեանց , թէ և անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց բնաւորականս հոսմանց . այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան , նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց։

-Քանզի և որ մաքրութեամբն պերճանային օրինականացն վստահութիւնք, 'ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիւ, ամենանուաղ անձկութեամբ լքեալ հրէութիւնն յետնեալ, և յաւէտ ընդ տարագրական ողորմելոցն, առաւել նոքա դատան կարօտեալ մարդասիրութեան։ Նա. քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ, բարերար, լոյս պաղատանաց գոչման հեծութեանս՝ որ կարդամ առ քեզ. ողորմեա, կեցո և մարդասիրեա։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք յամենեցունց յաւիտեանից ազգաց. ամէն։

ԲԱՆ. ԺԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՊԱՂԱՏԻՄ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անճառ մեծիդ աստուծոյ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին աստանօր 'ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս։

Բ. Ոչ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի անկռինչ էր. ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարին յան-

դիման կացոյց, քանզի վնասապարտ էր. ոչ 'ի պատգամ բանից միջնորդի զողորմածիդ կամս հաճեցոյց, զի անայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ծործոց զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. նա և ոչ ծնգովքն հաստատութեամբ իբր գարշապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է 'ի մեռելութենէ: Մանաւանդ զի 'ի քոյոց խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութեամբ, և փառօք քո լուսազարդեալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ ստահակեալ ապստամբութեամբ յիւր թշնամեացն թիւ յաւելաւ, ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց:

Գ. Իսկ դու բազմապարգև, բարերար, անոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ ըղծայրագոյն ցուցեր զխնամս: Ոչ քահանայապէս ըստ Ահարոնեան տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անխծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար. և ոչ որպէս Ղևտականն կարապետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց, հնոյն լռումըն և Նորոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիպացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի սատակիչն օրինակութեամբ տապարաւն արմատակըտրաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ. յառաջ քան զփորձ առակայիցն սատակեցի. այլ հեթանոսացն պահպան անուն Ասորեստանեայցն, որք 'ի Հրէից ընկալեալ զօրէնս ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ մերակերպարան խառնութեամբ, զաղատարարն գծադրեցեր զա-

ւեռոխս առ օտարազգիսն. և աստուածաբարդ ներգոր-
ծութեամբ անապականաւ ձեռն կարկառեալ, յարու-
ցեր զմարդն նախնի մեղուցեալ 'ի մահ խորոլքն ծը-
ննդոլք։ Օտարեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվը-
հատեալն հաստատեցեր, և զթշուառացեալն միան-
գամ՝ կրկին զուարթացուցեր։ Նուազանին կենարար
ծծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հացիւդ երկնա-
նով արարչականդ քոյին մարմնով նոր յեղանակեցեր։
Սրակացութեամբ երջանկացն ազանց ընտրելոց յան-
ձանձեցեր, գրգեցեր և խնամարկեցեր։ Հանդարտըն-
թաց դրաստուն տածողութեամբ անզգուելի պահե-
ցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ Ի ձեռն երկաքանչիւ-
րոց միջնորդայ՝ նախնեաց և երկրորդաց տուչութեան
կտակաց կենդանականաց, մարդասիրապէս դարմանա-
բեցեր։ Նու որպէս երբեմն ընդ Մովսէսի՝ թևս տա-
րածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և 'ի հան-
գիստն հանդարտութեան երկրին բարութեան առաջ-
նորդեցեր, և զբանին կերակուր ջամբել հրամանատրե-
ցեր վարդապետութեանց։

Դ. Նու արդ որ զընաւն ծայրագունին բարութեան
լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր,
զօցտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ դքո ստացուա-
ծըն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մաքրեալ 'ի մե-
ղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից.
ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն,
բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ, ահաւոր, օրհ-
նեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ· ԺԵ·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· ԻՍԿ դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութիւն սրտիս վտանգի յինձէն մատուցեալ, սովին նըւագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արդահատեսցի, տագնապեալ ոգւոյս վտանգիւ իսպառ. իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ աստուծոյ խոստովանեալ ընդ փառացդ քո զիմս անարգութիւն, և առ չարեօքս իմովք զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ գտայ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամոռացս։

Բ· Իսկ կրկին առակն որ առ իս, որ ոչխարին որուսն տարացուցիւ, որ յետին անզգայութեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինս ուր ոչ է այցելութիւն՝ ընդ գազանականացն դիւաց և կռոցն վայրենութեան թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին, ոչ բան ունէի, որով և զցաւոցն աղէտ պատմէի, ոչ ձեռն ձըգողական, որ համերցն է ազդողական։ Իսկ դու միայն գովեալդ յսկզբանցն յաւիտեանց և յարդի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին՝ զիս զմեղուցեալս յաննշոյլն մոլորութեան, խնամողօրէն տեսչութեամբ կամաց հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն, հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութեամբ սիրոյ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր 'ի հայրենիդ քո ժառանգութիւն։ Եւ արդ դու հզօր կենարար օրհնեալ այցելու գթածդ յողորմութեան, եթէ

գնոսս ընկալեալ զապաքանեալսն աղերսանաց, որ մինն 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեան վտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, աստուածային բարեխնամութեամբդ տնտեսեցեր զոխեղերահրաշն խնամողութին առ կորուսելոյն մեծ թշուառութիւն. յայտնեաց վերստին և արդ գթութեանցդ խորք և բարերարութեանցդ հոսանք՝ առ անօրինեալս առաւելութեամբ վերադրելոցդ օրինակութեամբ, առ բազմօրինակ մահու պարտականս, առ որ 'ի բարութեանց խառնից քաղցրութեանց յատուկ համս չար, առ անդամս մարմնոյ արժանաւորս հատման, առ համաձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր, առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց, առ օտարացեալս յընտանութենէ իմաստնոց, առ աննմանս հանդունակից բանաւորութեանց։ Որ եթէ տարացոյց գոյր, ես ասէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ հանդունակից գոյր, ես ձառէի. թէ հաւասար գոյր, ես գրէի. թէ զուգագործ գոյր, ցուցանէի. թէ օրինակ գոյր, ես ազդէի. թէ յանցեալսն, հայթայթէի. թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ ըստ նմանութիւն, զոր միայն քո է քաւել, բժշկել և կենագործել, կենդանարար համայն մեռելոց, նորոգութիւնդ տիեզերաց։

Գ. Զի եթէ սրբոյն սրտի տեսութեամբ երջանկին Դաւթայ անօրէնութիւն չարեաց բարձրացեալ առի քան զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց դժուարակրելոց յանցմունք մեղաց, իսկ որ առ իս կրկին սըխալմունք գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյզ ամենապատ ծովուն յորդութիւն, և գլխոց լերանց վերադրէ։ Արդ շնչեցէ օդ քո քաղցրութեան իբր առ Նոյիւն, և որ զերկինս հալէ զօրութիւն, ցամա֊

քեցուցանել զշիղջս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան խմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութեան մեղացս ամբարձելոց։ Եւ համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորութեամբ հակիրճ հատուցմամբ, սրբացես ահա ելս քաւութեան, ըստ մարգարէին, առ երկարաձիգս անօրէնութիւն. և ներելով իմս յամառութեան, ով երկայնամիտ ողորմած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեսցես խնապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս։ Նա զի և չիք խոկ առ քեզ ցասումն սրտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս ոչ կրին նենգութիւնք և կամ նշմարանք մթութեան. քանզի կեանք են 'ի կամաց քոց և լոյս, և ոչ արարեր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ Դաւթի և Սողոմոնի։

Դ. Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրինաւորին երեւին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բնութեանս, ըստ անսուտ քո վկայութեան, որ թէ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութենէ։ Զի որ զկատարեալ մաքրութիւնն ունէր աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս, և զինքն ընդ հասարակաց բնութեան լծակցեալ, հաստատեաց զճշմարտութիւն քո առ իմս ստութիւն յոյժ արդարացեալ. թէ ասեմք, ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա։ Եւ արդ կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի ստուգութենէ առ իմս մոլորութիւն և դժնդակ անիրաւութիւն։ Վասն որոյ խնայեա յիս

ողորմութեամբ, քաղցրութե՛ ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԺԷ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՆԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Դու արդ դու միայն աստուած երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ, քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են ձիրք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք անիմանալիք, քո արուեստք անդտանելիք, քո չափք անչափելիք, դու սկիզբն եւ դու կատարած։ Զանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զբան։ Պատկեր անպարագիր անդր քան զորքանութիւն կըշռութեան, անչափ լայնութիւն փառաց, անտարրափակ ընդարձակութիւն հաստու զօրութեան, անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան, անտկարանալի բարերարութիւն գթութեան։ Դու դարձուցանես, ըստ մարգարէին, յայգ զստուերս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին արգելականացն բանտի, յորում եւ մաղթանայն դուռն էր աղխեալ, եւ գերեալ անտի ըզմթերիցն կապուտ վտարանդելոցն հոգւոց, սուսերբ հրամանի յաղթական բանիդ զկապ սատակման մահուն խզեցեր, եւ զմեղացն կարծիս ցրուեցեր։ Դարձ առ իս՝

որ զընդդամ զընդդանաւ վհիս տղմասից գբոյս յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանսարկուին նետից:

Բ. Այլ դու յամենայնի տէրդ բարերար, լոյդ 'ի մէջ խաւարի, օրհնութեանդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքննելի, անճառ, բաւական ըստ սրբոյն Յակոբայ, անհնարիցդ ամենից դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխռիւս մեղաց, ճաճանչ կիզանող ընդհանրական Թափանցանցութեան խորհրդոյ մեծի, յիշեա զիս յողորմութեան քո, օրհնեալ, և մի յիրաւունս քո. 'ի ներողութեան քո, և մի 'ի հատուցման. յերկայնմտութեան քան 'ի հաւասարութեան: Այլ կշռեսցես զմեղանաց խմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո և մի ընդ արդարութեան. զի առ սակ նախնումին՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր:

Գ. Արդ մատիր առ իս, բարութիւն, որպէս յունկանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութեանս, զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ. ԺԷ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից Թաղծութեանց հոգւոց վշտացելոց, մի

յաւելուր հեծութեանս ցաւ, մի՛ խոցեր զվիրաւորեալս, մի՛ դատապարտեր զպատժեալս, մի՛ տանջեր զչարչարեալս, մի՛ գաներ զհարուածեալս, մի՛ գլորեր զանկեալս. մի՛ կործաներ զգայթակղեալս, մի՛ մերժեր զհեռացեալս, մի՛ տարագրեր զհալածեալս, մի՛ ամաչեցուցաներ զպատկառեալս, մի՛ կշտամբեր զհարթուցեալս, մի՛ խորտակեր զբեկեալս, մի՛ խռովեցուցաներ զամբոխեալս, մի՛ ալէկոծեր զբքացեալս, մի՛ սասանեցուցաներ զդղրդեալս, մի՛ շփոթեր զմրրկեալս, մի՛ կեղեքեր զդիշատեալս, մի՛ ջաղջախեր զբեկեալս, մի՛ գօշեր զմորմոքեալս, մի՛ կուրացուցաներ զխաւարեալս, մի՛ զարհուրեցուցաներ զապշեալս, մի՛ խորովեր զխարշատեալս, մի՛ մահացուցաներ զհիւանդս, մի՛ բեռանց ծանրութե՛ մատներ զտկարս։ Մ՛ի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս, մի՛ կրկնակի ողբումն դառն հեծուե՛ս, մի՛ ուժդնապէս վարեսցիս առ հողս, մի՛ սաստկապէս առ մոխիրս, մի՛ անաչառապէս առ ստեղծուածս, մի՛ ահարկութ՟ առ փոշիս։ Մ՛ի ընդ հարկանիր խստութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ ընդ ստորնականիս. բնութեամբ բարիդ ընդ 'ի բնէ չարիս, ողկոյզդ օրհնութեան ընդ պըտղոյս անիծից, քաղցրութիւնդ լսկապէս ընդ համայն դառնութեանս, փառաւորեալդ անփոխ ընդ ամենեւին անարգիս, կենացդ նշխար ընդ կաւոյս զանգուածոյ, տէրդ տերանց ընդ տղմիս երկրայնոյ, աննուազ լիութիւնդ ընդ չքաւոր ստրկիս, անկապուտ ձոխութիւնդ ընդ անպատսպար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթշուառ աղքատիս։ Քանզի ո՞վ ոք հասեալ յառաւօտ՝ և 'ի ծագման լուսոյն խիթայ մթանալ, և կամ ընթերակաց կենաց՝ մահանալ, կամ ազատութեան՝ և պարտաւորիլ, կամ շնորհաց՝ և դատապարտիլ, կամ փրկութեան՝ և մատնիլ, կամ նորոգման՝ և եղծանիլ, կամ օրհնութեան՝ և տարագրիլ, կամ բժշկութեան՝ և վիրաւորիլ, կամ լիութեան՝ և նուա-

ցիլ, կամ յաճախութեան հացի՝ եւ քաղցնուլ, կամ գետոց հոսանաց՝ եւ պապակիլ, կամ մայրենի գթոց՝ եւ նենգիլ, կամ խնամոց աստուածեան աջոյդ՝ եւ զրկիլ։

Բ. Նա եւ արդ ընդ ախտացելոյն ստուգապէս մարմնոյն բորոտութեամբ հոգւոյս վտանգաւ եւ ես պաղատիմ, տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ աչացաւացն նեղելոց մշտագիշերին խարխափանօք՝ մեծականան ձայնիւ հառաչեմ. ոչ որդի անուանեմ Դաւթի, այլ ծնունդ էիդ աստուծոյ դաւանեմ. ոչ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողական գլխակըն գիտելոյ, այլ տէր երկնի եւ երկրի հաւատամ։ Ոչ ձեռին միայն ձգմամբ հպաւորութեան, ով բարեգութ աստուած մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն։ Ոչ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ, 'ի մէջ արկանեմ կամելոյն եւ ողորմութեանն, այլ կամիս որպէս բարեգութ, եւ կարես որպէս զարարիչ. ասա բանիւդ, եւ բժշկեցայց։ Ընդ հարիւրապետին հաւատոց եւ ես լծակցեմ. ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ հաւատամ ազդել քոյ կարողութեանդ առ յարութիւն եւ բժշկութիւն, այլ 'ի վերինն երկնի բազմելով եւ 'ի ստորինս երկրի բովանդակ, առ հրաշիցն սքանչելութի ոչ ունիմ հատուցանել։

Գ. Շնորհեա ինձ, որպէս դատակնիք բանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութիւն, հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութիւն՝ աստուած բարութեանց եւ տէր երանութեանց, որ յաճախըն ընձեռել՝ բազում փառաւորիս, եւ 'ի շատն մատուցանել՝ նովին չափ սիրիս, եւ յառաւելն ողորմել՝ կրկին բարդաւաճիս, եւ յայսքան բարիս իրաւամբք գովիս, եւ ամենայնի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս, եւ որ զբոլորն ունիս՝ ընդ մերում կշռիս, եւ անճառել-

եաւդ ձրիւ մերայնովքս վճարիս, եւ ընդ երկրաւորիս զանվախճանն պարտ վարկանիս, եւ մեծագրեալ քո ըղմերն՝ վեհս գոհաբանիս, եւ 'ի սակաւուն տուչութիւն դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս։ Արա եւ ինձ զնոյն գթութիւն ունողիս զգործս անհամար պարտուց. զի եւ 'ի ճառս երախտեաց քումդ պարգեւաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեցի. եւ քեզ փառք յամենայնի. ամէն։

ԲԱՆ· ԺԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարեւ անսահման բիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանող 'ի միում աւուր։ Այլ ո՛չ թէ առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն, այլ առ աննուազ լիութիւն փրկչիդ Յիսուսի Քրիստոսի պաղատիմ մարդասիրութիւն. որ չէի երբեմն՝ եւ ստեղծեր, չմաղթեցի՝ եւ դու արարեր, չեւ եւս եկեալ 'ի լոյս՝ եւ տեսեր, ո՛չ յայտնեցեալ իմ՝ եւ գթացար, ոչ կարդացեալ՝ եւ խնամարկեցեր, ոչ համբարձեալ ձեռն՝ եւ նայեցար, ոչ պաղատեալ՝ եւ ողորմեցար, ոչ կերպացեալ ձայնիս՝ եւ լուար, ոչ հեծեծեալ՝ եւ ունկնդրեցեր, գիտելով զարդեան դիպուածոյս՝ եւ չանտեսեցեր, նախահայեցդ աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութիւն՝ եւ յօրինեցեր։ Եւ արդ զքո արարեալս

և զքև փրկեալս և զայսքանեաց խնամոց յանձանձեալս մի իսպառ կորուսցէ մեղացն հարուած գիւտք բանսարկուին, մի յաղթեսցէ յամառութեանս իմոյ մառախուղ՝ ներողութեան քո լուսոյ, մի սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեանդ, մի մահացու մսեղիս՝ ամենակատար լրութեան, մի տկարութիւնս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեան:

Բ. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, հզօր, արասցես ողջ իբրև զառաջինն մինչ 'ի դրախտին փափկութեան զպտուղն կենաց կթէի: Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց առ իս, միայն ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես 'ի բարի կրօնս վայելչութեան, ըստ աստուածաբանութեան սուրբ մարգարէին: Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծչիդ նկատեալ զկերպ մաղթեցից, հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի շնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութիւն լուսոյ հաստեսցես: Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ դեռովք մեղանաց արեան հեղեղիմ. հայեաց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ: Ոչ օծութեամբ իւղոյ պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանածիր ոտից դարչապարդ՝ զկաթիլս աչացս փարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բազկացս ստոյգ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ շրթանց կաբուցմամբ զերկիր համբուրեմ,

խառնեալ հեծութիւն աղբերցս արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ։ Սառնեալ մեղանօք հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակողմամբ անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ զհետևականն բարձողութ՛ի շինուածոյ մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսառիթ պըտղոյն խափանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին, միայն հնարաւորդ առ 'ի փրկութիւն։ Ո՛վ փառաբանարան հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրացոյց արդել հողմ բանսարկուին. հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութեամբ, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեսցես բանդ կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի։ Ընկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դե կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խմումս թըշուառութեան՝ ողբականօք գգուանաց ձայնից, ով բարերար որդի աստուծոյ, օրհնաբանեալ աչացդ ցօղով վերականգնեսցես 'ի կենդանութիւն, իբր զսիրելին 'ի յանշնչական մեռելութենէ։ Սոյդ դառնացողս 'ի գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արև անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ աղիողորմ թշուառութեան կականման ձայնի այրւոյն 'ի Նային մօր միամօրին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն, և ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տուր յուսահատելոյս զքաջալերութիւն մխիթարութեան գթած քո բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի. Թէ մի լար գերի բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ 'ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ։ Ընդ այսակիր անզգայելոյն դիւալլուկ և քարակոշկոծ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քստմնելի

դիտախուխ հերացն , վայրենիներես բանդագուշելոցն , 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից • իբրև զնոսին առ քեզ դիմեցից · հերքեալ մերժեսցես զգունդս չարացն ապականողաց 'ի քո խորանէս , զի ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հանգիցէ , լցեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս՝ զգեցմամբ անդամոցս , զգաստ արասցես զխելագարեալս ամենաթշուառ ։ Ընդ գերեցեալ դժոխաբնակաց վտարանդելոցն հոգւոց արգելեալ կամ 'ի վըտանգի · զճառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյս իմ անձկութեան , 'ի կապանաց օցտողին զերծեալ զիս ապրեցուսցես ։ Պաղտնորդայթ աներեւութերակ վըխպակ արահետ գարշութեամբ մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպարան կայ 'ի տագնապի · ըղծածկեցեալն 'ի տեսողութեանց զչարագործին նիւթիցն այտուցմունս , քո ինքնաւորդ զօրեղութեամբ որդի աստուծոյ , գթածաբար առողջացուսցես ։ Ո բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեանց մահացուցանողաց իւրականօք կորստեան բերիւք , դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս , տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի , որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութ՛ի ։

Գ · Եւ քանզի անցաւ ըստ նմանութիւն օրինակութեանց յանցուածոցս վէր , ըստ ճարակողն քաղցկեղի , առ բնաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումըն , չիք սպեղանի իբր Իսրայէլի առ անչափութիւն խարանացն մատուցանել . 'ի խարսխաց բարձիցս մինչև ցափն կառուցման լրութեան անդամոցս չէ առողջութիւն , այլ ամենևին անբժշկութիւն ։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ և երկայնամիտ թագաւոր անմահ , լուր պաղատանացս արգահատութեան սրտիս վըտանգի , որ կարդամս առ քեզ տէր 'ի նեղութեան ։

ԲԱՆ· ԺԹ·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· ՀԱՅԵԱՑ *ամենահայեաց տեսութիւն կենաց բարութեան յուսոյ 'ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց։ Անհաս մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի, լուր ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի, ազդումն խնկելի, խկութիւն դաւանելի, էութիւն փառաւորելի, գոյութիւն օրհնաբանելի, տէր Յիսուս ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ, որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քոյ ըստ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային, և այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ աստուածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա։ Զքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ 'ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա։ Զխախտեալ շինուածս քումդ հանդստեան խորանի մարմնոյս՝ պահպանաւ հոգւոյս, մաղթեմ բարերար, 'ի բնակութիւն քեզ մաքրագործեա։ Մի հատուցաներ չարեացն իմ գործոց զնոյն փոխատրութիւն։ Արբեալ եմ ըստ մարգարէին բանի՝ և ոչ 'ի գինւոյ· Թափեա զմրուրս անօրէնութեան Թմբրութեան մահու բաժակիս՝ ազատաբար հրամանաւդ ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն։*

Բ. Արդար ես յիրաւունս քո, և յաղթող 'ի դատաստանի. եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք քո. եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտանջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ունայնացուցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձցես, թէ զաւուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ իջման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր տեղասցես, թէ 'ի լրութենէ բանի քոյ սովեցուսցես, թէ զականջացս դրունս խըցցես, թէ զշնորհեդ ձիր կորեսցես, թէ զգետոյն յատակի ոտից սասանեցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ 'ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլատակմամբ հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցասման հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն և սաստիկ քան զգեհենն, թունաւորագոյն քան զորդունսըն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն. վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտապան գոլ սոցա։

Գ. Նա քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւնք փոխաբերութեանց առ ազգակցութիւն մեղանացս՝ իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս առ ծանօթութիւն խնդրողին։ Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի 'ի նախնումն վտանգին տառապեալ սառնում։ Նա զի ոչ զցանկականն խորխտականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս

զանզոսանալի զկնգումն։ Եւ քանզի ոչ սիրեցի զլուսազգեստս, արդար հատուցմամբ 'ի մթութիւն ըմբռնողական միգին կորստեան վրիպեալ դանդաչեմ։ Եւ զի ոչ խորեցի զմանունս փոքունցն յանցանաց, իբր անվնասակարգ վարկանելով, պատկանապէս, 'ի խածանողականացն զազիրն զեռնոց խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ ըստ գծագրութեան այսր օրինակի ապականութեանն գբոյ նուիրեալ մատնիմ։

Դ. Եւ արդ ոչ յաստուածուստ ամենաբարի գանձուցդ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից խաւար, և ոչ յապաւինութենէդ գայթակղութիւն, այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս հոգւոյ. իշխանին մոլորութեան հնազանդեալ, թողի զտեղի քո նորա, ըստ գրոյն խրատու յանդիմանութեան։ Եւ քանզի յայտնեցաւ յետուստ զաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կերպիս անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, ոգեղս ցուցեալ զիս ամենեւին իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեա յիս զլոյս քաւութեան՝ արքայ երկնաւոր. զի թօթափեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն 'ի Բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի հողոյ, և 'ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կարութեան նախնում մաքրութեանն, վասն մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգև քոյ աստուածութեանդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Ի

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր անոխակալ եւ երկայնամիտ, ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա ճշմարտութեամբ են գործք քո, եւ խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ տեսողդ ծածկութից։ Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցոյն փրձեցան եւ ոչ վնասեցան 'ի Բաբելոնի, զնոցա թախծութեան զերգն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, եւ պատուիրանաց քոց ոչ անսացի։ Եւ քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա, եւ զայս խոստովանութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութեան, եւ այլ յաւելից՝ ամենապարտս մահու։ Ընդ Դանիէլի երանեալ եւ սուրբ մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութեան ազգականութենէ տանն Յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական եւ նուիրական բանից պաղատանս, խմոլս պատժականութեան գոչմամբ հեծութեանս եւ այլ կրկնեցից։ Ի մէջ գիտութեանս՝ անպատշաճականս գնացի, զարտուղի սըխալեալ դժնդակապէս. այս է ամենայնիւ ամենայն իրօք մեղանչելն։ Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վազեցի. որ է հաւասարի կերպարան բասխր անօրէնութեան։ Ընգիտեցն չափոց չարութեան գործոց լրումն յաճախութեան նիւթեցի. որ է ճշգրիտ պատկեր յանցաւորութեան։ Ապառնացար, եւ ոչ զարհուրեցայ. արգահատեցեր, եւ ոչ երբեք լուայ. որ է ա-

պատամբութեան յայտնի նշանակ։ Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ մաղձ քացախեալ 'ի կատարածի. քեզ բարեբանութիւն անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի. քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարագրութեան. քեզ իրաւունս բազմարժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս. քեզ բարձրութիւնս անձառ գովեստից, և ինձ զաճիւն լիզելոյ պատիժ ձաղանաց։

Բ. Եւ արդ ընկալար դու բարեաց ընտրութեանց անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրկաց պտղոց վերառեալ ըստ քեզ, և ես զիմոյս ասէն առ ամին պարսաւանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր յանձնառութիւն, իսկ ինձ զո՞րս հիւսեցից շարս և տողս բանից դարուլականաց, որ քան զամենայն դժնեայս յաւէտ վրիպեցայ։ Մոլորեցայ անառակ ընթացիւք 'ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից 'ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի 'ի պատկառելեացն գործոց։ Փքացայ, վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի 'ի հող մահու եմ իջանելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ և ոչ զգրաւական հոգւոյս տուրևառութեան շնչոյս ունիմ 'ի ձեռին։ Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր, ամպարհաւաճեցայ կաւս ձայնաւոր, հպարտացայ հողս անարգութեան, 'ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի, բազուկ կառուցի բաժակս մանրելի։ Տարածեցայ առաւել իբր վէհ, և դարձեալ իբր զհեղքեալ առ իս ինքն ամփոփեցայ։ Բարկութեանն բոցով ցոլացայ տիղմս բանաւոր, իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ ընդ քառատանեաց մահու եմ փակեալ։ Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և 'ի քեզ Թիկունս փոխանակ դիմաց

դարձուցի. 'ի Թռիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սը-
լացայ. զանարատ հոգիս Հարմնոյս փափկութեամբ յա-
ւէտ վատեցի. զզօրութիւն աջական կողմանս տկար ա-
րարի, ահեկանացս կայից ուժգնութի՛ տալով յաղթեցի։
Ո՛ քեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ աստ
գրելի, և ոչ պատկառեցի. իբրև զհաւ վայրենի սրացայ,
ըստ ովսէեան բանին առ Եփրեմ, 'ի նախնին իմ սովո-
րութիւն։ Յաղօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր
կենցաղոյս շրջանակեցայ. ոչ կացուցի յոտին զերխլար
մտացս երասանաւ բանին։ Ընդ հին չարութեանցն նո-
րոգ ինքնատեղծութիւնս գտի. անուրս ըստ Յոբայ
ծանունս և անտանելիս ինձէն ինձ սատակացուցի. առի-
գած անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն իմ արարի.
իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակարկուին, 'ի
մարդկանէ համարոյ եղծայ. իբր զհանդերձս ինչ ա-
պահարից, ըստ Եսայեան բանին, զազրացայ. որպէս
զԹրծեալ աման խեցեղէն փշրեցայ անարծարծելի. ըստ
բամբասանացն Եզովմայ 'ի մարգարէէն զչորրորդ չափն
անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի։ Նւ-
զի՞նչ տուութիւն առ այս՝ և զայս յաւելուլ ընդ այս.
քանզի զվրանն իսկ դիւանուէր Մողոքայ առի ինձ այս-
րէն՝ առ դժոխոցն ժառանգութիւն, լքեալ զերկնայ-
ինն յեղանակաւ իմն օրինակի Նմանակիր ձևակերպու-
թեան, որպէս առակ պատկերի աստեղն Ռեփանայ Բա-
բելականի՝ յիսրայէլէ պատուեցեալ ցուցաւ 'ի Սինայ։

Գ. Իսկ արդ զի 'ի նախնի շնորհին համարձակու-
թենէ դարձեալ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ,
բաժանեցայ և անպատուաստելի կտրեցայ, արդ ընկալ
զիս տէր վերստին կերպարանեալ 'ի պատկեր հոգւոյ,
զանարժանս կենաց իբր զմահապարտ, իբր զչարա-
գործ, իբր զպատկառեալ, իբր զկոխան եղեալ բան-
սարկուին, որպէս զանբժշկելի մանրեցեալ, որպէս զհաս
եալ յատակս մահու, որպէս զգարշեցեալ, որպէս զխո-

տան գտեալ քո կոչմանդ, որպէս միանգամայն 'ի կորուստ վարեալ, որպէս գեգերեալ, որպէս վանեցեալ, որպէս տարակուսեալ, որպէս թշուառացեալ, որպէս վհատեալ, որպէս կործանեալ, որպէս խորտակեալ, որպէս բեկեալ, որպէս զթախծեալ, որպէս յոգնի տրտմեցեալ, որպէս թշնամանեալ։ Իսկ դարձեալ ակնարկելովդ քո՝ գթած, մարդասէր, հզօր, 'ի յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ, որպէս խոստովանեալ, որպէս 'ի յոտս քո դիմեցեալ, որպէս զապաշխարեալ։ Որ կշռես, գրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ և զազդումն շնչոյ հեծութեան, զկսկիծ շրթանց, զպասքել լեզուի և զտխրականութիւն երեսաց, զկամս խորհրդոց և ըղձայօժարութիւն խորութեան սրտից։ Որ փրկութիւնդ ես անձանց, և տեսող ոչ գործեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևութից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամող տէր ամենեցուն։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԻԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի երբէք 'ի յոտս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն, և քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ, և ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդէ՞ր ոչ զխոստովանական հետոցն խաւարայնոց

զգեմս ցուցից 'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ։ Ըստ որս ածեալ յարմարեալ առ սոյն զկերպարան տեսակի բանիդ երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ անփոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ աստանօր զմնացեալ չարութեանցն զբիծս, զոր յաջորդաւդ է իմանալի։

Բ· Օտար ժանտագործս արժանապատիժս՝ աճեցուն արարի գնացիւք անսաստութեան զգունդն Բելիարայ։ Ակքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն դիւաց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի։ Գանս գաղտնիս և խոցուածս անյայտս 'ի կործանեցելոցն դաժանաց ընկալայ։ Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն Քրիստոսի, քան թէ անդրէն առաւել կրկին եւս զօրացուցի։ Վասն իմոյ հլքոյս անօրէնութեան անուանդ Յիսուսի հայհոյի 'ի մէջ այսականաց, որպէս վասն Իսրայէլի 'ի մէջ հեթանոսաց։ Հարուածս հարուածոց վնասակարս ապականութեանց ժանդոյ և թրթրոյ և այլոց կերչաց վատնողաց զծաղիկ հոգւոյս, ըստ սրբոյն Յովելեայ հրաշական ողբոյն, որ 'ի ցոյցս երկրի վասն Իսրայէլի՝ յառակս հինից և չարաց հոգւոց, յիս ինքն անկեցի. ստեղծանել զնոսա պատրաստեցայ, քան թէ սատակել։ Բիւրս կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաշէնս. կշտամբիչս ինձ գոյացուցի անիրաւս և անպատկառելիս. ներհակս ինձ զօրացուցի սպառնալիս և անկառուելիս. դառնիս ինձ առի մասունս ընդ քաղցրաւենեացն ճաշակաց, առ ստացողն միշտ նենգաւորս, և առ բանսարկուն յաւէտ հաւատարիմս։ Եղաւ աղէտիս, միշտ վտանգիս, խաւար ամօթոյս, մուլթ պատկառանացս. զխո՞րդ և առ բանիս յանդիմանութիւն համարձակեցայց. մեծ է ձայնս դուժի, և անբերելի բողոքս աղաղակի։ Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել, տգեղս և նուաղս և ամենևին ներդևեալս, ցաւովք հեծութեանս 'ի վերջինս վարեալ

վարանումն, և մրճոտեալ աղտեղեալ գունով զաղբութեան իբր զպաշտօնատար մեհենի. վասն զի նոյն է ապա տանել ձուլեալ պատկերի, և մեղաց ախտի։ Արդ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. ետու զբաժինն քո ցանկալի յանապատ անկոխ, ըստ մարգարէին որ առ քահանայսն Իսրայէլի ամբաստանութեան։

Գ. Նա զի՞րդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս. և ի՞բր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեան կցորդեալ. և ո՞րպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստից դրունս փակեալ. կամ որո՞վք ցուցայց տպաւորութիւն նկարագրութեան աներծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ. նա և ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել, թող թէ հոգեկան կամ մտաց ընդունական. անպիտանս 'ի թիւս անօթոց, անարգս 'ի քարինս որմոց, արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց, վատթարս 'ի յազգս հրաւիրելոց, արհաւրօք մահու պակուցեալս, անխրախուսելի 'ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն Երուսաղէմի ըստ Երեմիայի բանին խրատեցեալ, պակասեալ աւուրցս 'ի հեծութենէ, և ընթացք ամացս 'ի հառաչմանէ, ըստ Նուագարանաց երգողին։ Իբր ասուի 'ի ցեցոյ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ։ Այլ ոչ 'ի մարդ ոք ունիմ զյոյս, եթէ անիծեալ 'ի տեսանողէն անյուսադրելի վհատիմ, այլ 'ի քեզ՝ տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ 'ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից, և 'ի բևեռելոյն ժամու 'ի խաչին մաղթեցեր մեծդ ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Արդ շնորհեա ինձ

յոյս քաւութեան, կեանք և ապաւէն, և 'ի տուր շնչոյս Թշուառի՝ առից զոգիդ քո բարի։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով՝ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԻԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԴԱՐՁԵԱԼ պղպջանեցից 'ի նոյն չարունակ բարդեալ զկշտամբանաց եղանակ դարձեալ անձինս, ածեալ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի. Թերևս գրեսցէ ինձ ամենագէտըն զայս յանդիմանութեան դատակնիք կնքեցուցանողականս բանի ճշմարիտ խոստովանութիւն համայնից գործոց գաղտնութեանց չարեաց։

Բ. Նաւ ոմն ձիս խօսնական կարծրերախ սանձակոտոր արձակերասան, յովանակս անհամբոյր վայրենական և անկրթական, երինջս աւողական անուղղական և անվարժական։ Մարդս մոլեգնական տարագրական և կորստական, մանուկս մեղանչական անխրատական և վարատական, անտես մահապարտական տարտամական և անգործական, բանականս անասնական գազանական և անմաքրական։ Զինենիս ամայական անպտղական և կործանական, մարմինս հոգւոյս իմ Թախծողական դատողական և տանջողական, խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական։ Ոսկի չարս կայսերական՝

արդվատնական և անգտական, ծառայս սխալական փախստական և թշուառական։

Գ. Ո՜հա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատոյն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մոլախաբ, կամակոր իսկ և սրտաբեկ, ուշամոռաց և հանճարազրաւ, զգայազերծ և իմաստապատ, յայրատանս և եղեռնալուր։ Նա սատուստ և անդուստ բնաւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք վնասեալ, ոչ միով իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրութեան քեզ պիտանացուս, տէրդ բոլորից. ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն, որ դիեցուցին. ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի, և զի՞րդ ոչ դառնութիւն ինչ ընդ քաղցրութեան ջամբեալ մատուցաւ։ Ո՜ի եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութեանս անխոնարհելի, ո՞վ ոք 'ի յերկրածնաց ատոի զիս ողջեսցէ. զամենայն խայտառակեցից, զբնաւ էութիւնս դատեալ տուժեցից, զհամօրէն զվնասակարացն զգունդ գանեցից, զխոցոտեացն զինուորութեանց դատախազեցից, զգայականացն գլխաւորութիւնս կշտամբեցից։ Մեղայ ամենայնիւ յամենայնի, որպէս գթած. ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մառախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պարտաւորութեան, անկցելի ձորձով սխալեալ առաջի քոյ՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութեան կանխեալ ներութեամբ անայլայլելի։

Դ. Ո՜րդ մատո, խնամակալ, հզօր, երկնաւոր, բարի, ամենից հատուչ յոչէից, զբանիդ զօրութեան իմաստից կայծակն 'ի գործի ազդման լեզուիս շարժութեան, առիթ մաքրութեան յամենուստ զգայականաց գոյաւորութեանց յիս մասնաւորելոց՝ քո ձեռակերտից, սոքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք կրկին հանդերձա-

նօք, անպակաս ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն 'ի փառս մեծութեան հօրդ քոյ աստուծոյ մերոյ, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԺԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր աստուած ամենայնի, զօրաւոր յամենայնի, անպարագիր և անվայրափակ տեղի ամենեցուն. բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին, անուրեք վայրից, և չիք սահման առանց քոյ։ Ոչ երևեալ երբէք, և ոչ տեսականութիւն առանց քո ծագման լուսաւոր։ փառք աչաւորութեան, անուն անհասութեան, կոչումն մեծութեան, ձայն անբաւութեան, իսկութիւն անքննութեան, անմատչելի հեռաւոր, և անընդմիջելի մերձաւոր, տեսող հեծութեան, նկատիչ թշուառութեան, մօտակայ թախծութեան, ամենաբուժ հնար անճարութեան, հայր գթութեանց, ծագող ողորմութեան, աստուած մխիթարութեան։

Բ. Հայեաց տէր ողորմութեամբ 'ի պատկեր վշտաց դառնութեան բազմավտանգ կրից կարեաց, զոր հանդէպ քո տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի 'ի խոյզ ընտրութեան կոչեր դատաւորաբար։ Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ իսկ մարմինն մեղօք գրաւեալ, և անձն 'ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ, գործնակա-

նացն գործի սովորութեամբն կարեաց կապեալ, զանգ-
ուածն հանդերձանաց մահացու կրիւք շաղախեալ,
զգայութիւն սրտին իմաստից խեթիւ խոցոտեալ. ա-
կնկալութիւն բարեացն բնաւին բարձեալ, և 'ի բանա-
կանութեանն ընդ անասունս դասակարգեալ, և զազիր
գարշութիւն ընդ գոյութեանն շարամանեալ, և տեսա-
կանացն ողջ ելով իմանալիքն վիրաւորեալ, և 'ի սաստ-
կութենէ յանցանացն յիշատակի յաւէտ յուսահատ-
եալ, և տագնապաւ նախագործելոցն միշտ տարակուս-
եալ, և յստակութիւն աղերսին խապառ պղտորեալ, և
խղճիւ մտացն յուզմանց կրկին ճենճերեալ, և ձեռն
'ի մաճի գործոյն զյետնոցն հետազօտեալ, և կերպ 'ի
յառաջ դիմեալ՝ ոտք 'ի վերջ կոյս յետահարեալ, և
դիտութեամբ էիցն՝ 'ի չէիցն միշտ խաբեցեալ, և 'ի
մտացն մարտ՝ 'ի փոքունցն յաղթահարեալ, և 'ի թա-
ռանչ սրտին հագագին դուռն հրդեհեալ, և խոնաւ
զօրութիւն քմացն ամենայն ուրեք տոչորեալ, և անա-
րև միգով յամենայն մասանց պարփակեալ, և լայնու-
թիւն ակնկալութեանն ամենևին խապառ ամփոփեալ,
և անբերելեացն տոյժ 'ի զգալիսն տպաւորեալ, և եղ-
կութիւն կորստեանն 'ի յուշ անդ եկեալ, և դատակ-
նիք հատուցմանն 'ի դիւանի մտացն գրեցեալ, և բա-
րերարին ակն 'ի ցասումն իմն երևեցեալ, և լոյսն բնու-
թեամբ՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ, և ահաւորու-
թիւն էին ընդ փոքրկութիւն բնութեանս ընդ հար-
եալ, և միշտ որոտմամբ բանից բանաւոր մոխրոյս բար-
կացեալ, և իրաւանցն վճռօք զարժանիս մահու կոչկոճ-
եալ, և որ իմն է տաղանդ՝ յանառակս ատէն կորուս-
եալ, և պատուական իւրն ստացուած իբրև անարգ
յերկրի թաղեալ, և տաժանմանցն արդասիք ծուլու-
թեանն մթով ծածկեալ, և իբրև զ'ի բաց բարձեալ
նշմարան ճրագի չերևեալ, և պատասխանարան լեզ-
ուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ, և անհամբոյր հըր-

թանցս դրութիւն օրինաւոր դատմամբ պապանձեալ, և յուզմունք մտացս՝ 'ի զանազան մասունս ցնդեալ, և զկեանս 'ի վերայ օգտին ոչ ինչ գլտացեալ, և 'ի կշռութիւն բարւոյն ընտրութեան յիմար երևեալ, և ընթացք ելիցն նհանջմամբ չարին խափանեալ, և վառարան իւղոյն աճիւնովն հնոցի լցեալ, և անուանս գիր 'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան անդ արձանացեալ։

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. եթէ պատգամաւոր, խստութեան. եթէ մատենագէտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափման. եթէ բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառում, կսկծման։ Եթէ ջրովն ընտրութեան փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ։ Եթէ բերս նկատեմ բարութեան, 'ի կարծեաց չարեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն, ընդոստիմ. եթէ 'ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդիման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ։ Արդ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարակուսանացս 'ի վերայ միմեանց բարդելոց, որք զըստորև զգայականաց սրտիս գթութեան 'ի ներքուստ անտուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք խոցոտեալ, անարտաբերելի մշտակիր յարամնաց հանապազամուխ բևեռեալ սաստուստ ընդ հոգւոյս, լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակման մահու գուշակեն։ Թարախ մթերից պատեալ զերկաթով գաղտնեացս ծածուկք ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս ընդ ելս շնչոյս տուրևառութեան. յորոց ներղութեանց չարաչար ճնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կողկողագին թախ

ծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութեան յերկբաստեղծից նահատակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրողօք՝ զաղերսանս ըղձից 'ի տորնայնոցս տարի յերկինս առաքեմ։ Շնորհեա տէր անդորրութիւն կենաց հանգստեան ողորմելի վաստակեցելոյս 'ի յընդունայն երկրագործութիւնս, համայնդ յամենայնում, ամենայնիւ ստացեալ քեզ փառս։

ԲԱՆ. ԺԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՞Ւ արդ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս մատչիմ աղերսել, արքայութեա՞նն յորմէ վրիպեցայ, եթէ փառա՞ցդ փայլչութեան յորմէ զրկեցայ, թէ կենա՞ցդ անմահականաց յորմէ հերքեցայ, թէ ընդ հրեշտա՞կն պարակցութեան յորմէ տրոհեցայ, թէ ընդ արդա՞րսն մանակցութեան յորոց ձեղքեցայ, թէ ո՞ւռ որթոյն կենդանւոյ յորմէ քանցեցայ, թէ ո՞ստ տնկոյն բերկրութեան յորմէ գօսացայ, թէ ծաղի՞կ փառացն շնորհի յորմէ թափեցայ, թէ պանձանա՞ցն ժառանգաւոր յորմէ կորացայ, թէ հայրենի՞ ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, եթէ զգեստո՞ն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ 'ի ստացո՞ղ դարձին յուսացայց յորմէ խորթացայ, եթէ 'ի լուսո՞յն իղձս դիմեցից յորմէ մեկնեցայ, եթէ Յիսուսի՞ յոսկերն յօդիմ յորմէ մերժե-

ցայ, եթէ 'ի թեւս նորա մերձիմ յորժէ օտարացայ, եթէ յապաւէ՞նն ապաստանեցայց յորժէ խեթացայ, եթէ 'ի փրկութեա՞նն նորոգութիւն յորժէ մահացայ, եթէ 'ի զգաստութեա՞նն զուարթութիւն յորժէ ես լքայ, եթէ 'ի կանո՞նն կենացն ուխտի յորժէ փոխեցայ, եթէ 'ի սահմա՞նն հաստադրական յորժէ սահեցայ, եթէ յանշա՞րժ վիմին պնդութիւն յորժէ սասանեցայ, եթէ 'ի շա՞րս գումարտակին յորժէ հոսեցայ, եթէ 'ի քաղա՞քն անդրանկաց շինիմ յորժէ գերեցայ, եթէ հանապազորդեան հացի՞ն աղօթեմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փոխադրութի՞ւն երկանցն խնդրեմ յոր ոչ քըրտնեցայ, թէ պարգեւօ՞քն պսակեցայց յոր չհանդիսացայ, թէ արձա՞ն ինձ կենաց գրեցից յորժէ ջնջեցայ, թէ զերախտեա՞ցդ ձիր յիշեցից զոր միշտ մոռացայ։

Բ. Ո՛հա հատաւ եւ կամ խզեցաւ լար կենաց յուսոյն, տիրեցայ 'ի բորոտութեանցն դարշութենէ համայն ախտացեալ, ամենայնիւ սպառեալ զմարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռոյց աստուծոյ։ Դոյզն պալար փայլունակ տգեղ լինացեալ, մնացուած ինչ պահեալ նախունակ երկդիմի կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ, պարծանացն նշոյլ ամենեւին ինձ չիջաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին ստուերացաւ, ելք կենացն բնաւին փակեցաւ, մխիթարութիւնն բարձաւ, դատաստանին ատեան մերձեցաւ, թոյնք մահուն ինձ արծարծեցաւ, սպանեալն կրկին ինձ կենդանացաւ, լաստին դադարք վիմօք խցաւ, շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելչութիւն ստուերացաւ, հանճարին առաջնորդական խափանեցաւ, կշտամբանացն փուշ բազմացաւ, անօրէնութեանն ուղէշ ծաղկեցաւ, բոց գեհենին ինձ բորբոքեցաւ, ծառայութեանն լուծ սաստկացաւ, ստրկութեանն կապ զօրացաւ, ունողն յարկին կառուցման ահա անկաւ, բարձրութեանն վտահարան կոր-

ծանեցաւ, ընտանութեանն միաւորութիւն անջրպետեցաւ, սրբութեանն սիրող հոգին աստուծոյ տրտմեցաւ։

Գ. Նա քանզի զվերջինն համբուրեցի դառնութիւն, տանջանս՝ խէթս՝ տխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյս անյուսադրելիս, ամօթանս անպարուրելիս, խայտառականս անվերարկելիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն ուղեւորութեան ապաձեռն անթոշակութիւնս, իսկ դու փրկութիւն զօրութիւն և օգնութիւն, ողորմութիւն լուսաւորութ՛ի քաւութիւն և անմահութիւն տէր Յիսուս Քրիստոս, որդի աստուծոյ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի, որ ընձեռես ջուր պապակելոցն 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու, պաշտպան աննախանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լիութիւն աննուազ, երանութիւն տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս զամենապարտ՝ բանդ կենդանի՝ առ հաւասարապատիւ քո հոգի, զի քև վերստին հաշտեալ յիս դարձցի։ Եւ 'ի ձեռն քո իւրոյն կամօք մաքուր նուիրեալ, զօրեղն ինքնութեամբ զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին նովիմբ միշտ 'ի քեզ շնչոյս ողջունի կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի։ Նման որոյ քեզ ընդ հօր քում հոգւովդ սրբով՝ երրեակ անձնաւորութեանդ 'ի միում բնութեան և 'ի մի աստուածութեան փառք, և 'ի ըստեղծականաց էից գոհաբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԻԸ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՅՑ քանզի ՚ի վերայ այսքանեաց պէտութեանց ամենաթշուառ վտանգաւորիս մի զմիով եղ և ելս առնելոյ, զոր զկերպարանս անցից ՚ի մասնէ վերաձաւեալքդ նախագրեցին. ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զերգկութիւն աղէտիս։

Բ. Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ հոգիս ՚ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր ՚ի նաւակի։ Օ՜ որ Եսայեաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն որ ՚ի պարսկականն հինից՝ Երուսաղէմի և Սամարիայ կործանմանն, նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց. որ և առ իմս հոգևորական խորտակումն զուգաձայնել՝ ոչ է սխալական։ Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյզն կասկած արկածից ՚ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին, որ ՚ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ, ձմեռն յամարայնի բքաբեր հողմով ժամանեալ երեքալեանն դիմակցութեամբ, ամբոխեաց զհանդարտութիւնն։ Ուստի նաւն ՚ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ։ Թևոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման՝ ՚ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ, շինուածոյն շուք անզարդեցաւ, առասանք ձգողականացն խզեցաւ, տեսարան գլխոյն դի-

տակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամոլից կցորդութեան բաժանեցան, սամիք ուղղչացն հեռոց գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ, ղեկացն կառուցմունք անդրէն սուզան, չուոցն յարմարութիւնք պակասեցան, ողնափայտին պատսպարան խոյն բեկաւ, կապարանք զըստին հաստուածոյ յօշատեցաւ, գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շըթանցն եզերաց խախտեալ ստեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ, դահաւորակին հանգստարանն չփոթեցաւ, մածմունք տախտակաշարք ՚ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղյուք պնդման բեւեռացն քարշեցան։ Արդասիք լրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ։ Նաւուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն ՚ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Նշմարք սակաւ մնացուածոցն՝ ՚ի ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր, ողորմագին թախծանօք հեծէ։ Վան զի թէ զբարի նաւապետն երկնաւորօքն զօրօք յաշխարհիս ծովէ առ ՚ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս առցէ աշխարհել բանիս յարմարութիւն, ոչ ինչ վրիպեսցէ ՚ի ստուգութենէ։ Քանզի արդարեւ ելաց բարեգութն տէր յառակ մարդկութեանս զթաղեալ ազգակիցն, ելաց առ նմին եւ զԵրուսաղէմ մոլեալ եւ զՅուդաս մոլեգնեալ, յորոց երկուցն կորեաւ վստահութիւն յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի. իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց՝ առասան յուսոյն ձեռամբ ունողին յանքոյթն արտաքսեաց խաղաղութիւն։

Գ. Արդ իցէ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ։ Իցէ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ։

Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զյոգնաթախիծ սիրտ մխտացելոյս բերկրեցեալ։ Արդ իցէ՞ ակն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան ընութեանս կրկին հանդերձեալ։ Իցէ՞ արդեօք թէ տեսից զքակտեալ տաղաւար թշուառացելումս միւսանգամ կանգնեցեալ։ Իցէ՞ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս ազատեալ։ Ապաքէն գուցէ՞ ակն ունել զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազդուրեալ։ Արդեօք տեսի՞ց զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան յողորմութիւն ինձ երեւեցեալ։ Եթէ տեսի՞ց երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ ժպտեցեալ։ Արդեօք լուա՞յց ընդ ձայնի գուժիս աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ։ Արդեօք տեսի՞ց ըզբիւրակործան փլասեցեալս անօթ կազմեցեալ։ Իցէ՞ թէ տեսցեն պատուհանք աչացս իմաստից զմուրհակ պարտուցս իմոց պատառեալ։ Եթէ յայտնեսցի՞ օրն իմ անձկութեան շնորհին քաւութեան բարւոք ինձ ծագեալ։ Արդեօք մտի՞ց 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ քեւ առաջնորդեալ։ Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս , ըստ Եզեկիէլի , ցամաքեալքս 'ի կենդանութեանց եկաւորութեամբ ազդողական շնչոյս զօրացեալ։ Իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սուրբ քո , աղաղակաւն մարգարէին 'ի պորտոյ կիտին , հեղեղեալս 'ի լուսոյ որ կամ առաջի քո ամաչեցեալ։ Եթէ լինիցի՞ խաւարասնունդս մթացելոյ ծագման առաւօտ։ Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտասառոյց յեղանակս գարնանն մօտ։ Եթէ տեսի՞ց զցօղ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ արօտ։ Եթէ իցէ՞ արդեօք նկատել զգազանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հօտ։

Դ. Եւ քանզի ըստ բանին Յոբայ շուրջ պատեալ են չարեացն հնարք ընդ որ ոչ կարացից անցանել. իսկ ե-

թէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոյ ցուցցի , գթութեան քոյ դուռն բացցի , ճառագայթ փառաց քոց ծաւալեսցի , խնամք ձեռին քոյ յայտնեսցի , արեգականդ կենաց օր տարածեսցի , առաւօտիդ ըղձալի տեսիլ մերկասցի , առատութիւն քաղցրութեան քոյ աղբերասցի , վտակ արարչիդ կողից հոսեսցի , ծորումն անապակ սիրոյ քոյ հեղցի , ծագումն աւետեաց շնորհի քոյ երևեսցի , պարգևիդ քո ծառ ծաղկեսցի , մատունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի , համառօտեալն ակնկալութիւն հանդիպեսցի , հատուածեալ ձայն ողջունի քոյ տէր լուիցի , հեռացեալդ խաղաղութիւն մերձեսցի . յայսմիկ յաւէտ սովին սահմանաւ երանականաւ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ , ապաւինեալ 'ի հոգիդ քո սուրբ , որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փառաւորեալ 'ի լոյս անմատոյց , որով կեանք և երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս . յաւանդ անկորուստ ընդ իս պահելով առ հաւատչեայ ճշմարիտ յիշատակի , 'ի ձիր անեղծութեան անուամբդ անճառելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տէրութեան երրեակ անձնաւորութեանդ՝ որ եսդ յիսկութեան յէութեան և յարակայութիւն բարձրութեան քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ ։ Որ առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարող ես , գթած . և քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի և 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի , յաւիտեանս . ամէն ։

ԲԱՆ. ԻԷ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ սուգապէս եւ իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն եւ զբանիցն յարմարութիւն հանդերձեն, 'ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացըն բղխմունս. ուստի եւ բազմեալ իմ 'ի գլուխս պարաւակմբից դասու այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն, եւ ես ընդ նոսին նոցին հեծութեամբ աւաղական ձայնարկութեամբ զանձինս տարածանեմ զվշտակրութիւն, որ ոչ բնաւին մեռեալ աշխարհի, եւ ոչ իսկապէս կենդանի աստուածոյ, ոչ ջերմ սոսկ եւ ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին գրեալ 'ի յայտնութեանն. երիցս ատելի երրեակ տէրութեանն եւ ամենատես արարչութեանն։ Եւ այս են պատկանեալ թախծականացն կերպադրութիւնք, կրկին ողորմելի այսու երեւեցեալ՝ որ 'ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զթշուառութեանցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ շաղկապեալ։

Բ. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեպով մեծաւ 'ի տուժի, ես ապիկար մատնեալ անարժան գործովքս յիրաւի, վատնիչ արքունի գանձուց կրկնադատ եւ անթափելի, պատասխանատու մեծին ըմբռնեալ ան հրաժարելի, բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի։ Անբարեխօս կապեալ 'ի պահեստ դառն արգելանի, հեծումն եւ վաստակ ցաւոց ճաշակեալ յան-

Նշոյլ բանտի , անապաւէն տանջեալ անթօշակ կամ ողորմելի · այլ յեղանակ ինձ ողբականաց ասաուստ կընքեցի , փոխարեցի սովին բարբառով կոծ կսկծելի , կարգադրեցի շղջաբերութեամբ 'ի նոյն պայմանի , անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի։ Ողբատութեանն հնոց յամենուստ մասանց մըրկի , անպատսպար թշուառ վտանգեալ սրտիւ 'ի գրաւի, տարակուսեալ հոգւով ապաշնորհ այր 'ի վրիպակի , անխընամելի հայցմամբ դատաստանն յինէն պահանջի։ Մ՝եղաց և մահու գինուք զգայարան դաղտնեացս խոցի , անփրկելի մատնեալ բռնութեան չարեացս գերի , սուր սուսերաւ սաստից գոյութիւն բնութեանս յօշատի։ Յիշատակաւ բեմին աստուածին 'ի դատաստանի, անծագելի մռայլ չարատես աչացս երևի , անձեռնկալ կալեալ եղկելիս 'ի տարակուսի , ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի։ Յոյժ անարև և անլերարկու 'ի տարտարոսի , անապաւէն մոլար մոլմոքեալ 'ի հուր գեհենի , անյայտնելի կորուստ կործանեալ 'ի մեղաց վհի։ Ահա զոր ունիմ արծաթ անպիտան ոչ երբէք յարգի , և ոչ ընդունի և կամ համբարի 'ի գանձ տէրունի, հայցուած պղտոր և ձեռն անմաքուր աննըւիրելի։ Ալ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ յոյս առեալ դարձի , զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ մօրդ Յիսուսի, բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի՝ դու զօրաւոր փրկանակ կենաց իսկուհի երկնի , քեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խնկոց 'ի յերկրի , և անուշից իւղոց մատուցումըն յամենայնի։

Գ․ Որդ յասացեալ ողբոցս հիւսուած այլ մասն յաւելի , բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի · զկորստեան խորս չափելով զորքանն երբէք ոչ գտի , մանաւորօք բանիւք 'ի հանդէս նորին ջանացի, զմտացս արադեալ զթևս յերևոյթ իրին ոչ հասի , զուշին պտղոտութիւն յանլթարելեացն բաժակ բարկու-

թեան 'ի ձեռն իմ առի , զտարտամութիւն տարակուսանացս իբր ճաշակումըն մահու արբի . և այժմ զյանցիցն յաճախութի̃ ողորմելի ձայնիւ յերգ արկի։ Աներեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզովանալի , անտեսական իմն քրայս հալոցաց սաստիկ եռացմամբ անշիջանելի, սլաքս նետից պատկանեալ դեղովք 'ի շտեմարան խորութեան սրտի , խիթք ցաւոց խոցոտման մահու 'ի գնացս երակաց գոյութեան լերդի , կիրք երկանց անճարակ ճեպոյ 'ի պատուած աղեացս անելանելի . անզօրելի դեղոց ջերմութիւն 'ի յերիկամանց մասունս երկակի , անհնարաւոր դառնութի̃ մաղձի 'ի նախադուռն իմոյս կոկորդի։ Աւաղս ձայնից լքուցանողաց 'ի փողս շնչոյս խոշորս հնչի , բազմահատուած էութիւն բնութեանս ներհակք միմեանց 'ի պատերազմի, երկչոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ 'ի վտանգի . հարազատաց դաւաճանութիւն անհաշտելի 'ի կատարուածի , ոչ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ 'ի մեղաց գարշութեան տղմի, կասկածաւոր պատժապարտութեամբ վերակնարկելով քեզ բարերարի , յանակնկալս կենաց վճէ արտաքսել 'ի լոյս անձկալի։

Դ. Նոյն ինքն որ զայս բան տպաւորեաց՝ ընդ երջանկացըն պսակեսցի , ակնարկելով քո ողորմութեան անպարատիցն հաղորդեսցի, վասն զենման աստուծոյ բանիդ՝ բարեգործեալ քև կենդանասցի . օրհնութիւն դովեալ քո շրթանց 'ի գլուխ բաշխողի այսր մատենի, հաստատեսցի ըղձականութիւն սաղմոսեան բանիս առակի, նկարագրեա հոգւով քո բարձրեալ 'ի նորոգումըն անեղծանելի . զի դու միայն ես երկայնամիտ ներող , քեզ փառք յամենայնի . ամէն։

ԲԱՆ. ԻԼ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զգրութիւն թուոցս յարմարեցի կական և հեծութիւն , հառաչանք կողկողագինք , դառնութեան լալումն և արտասուաց երգ , դարձեալ սկսայց զճառ պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար զգաղտնածածուկն յայտնաբարբառ . զի անդրադարձութեամբ սկզբնամբն և վերջաւորօքն բառից , զնոյն համաձևութիւն 'ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան աստանօր եդից։

Բ. Մ՝եղայ մեծիդ բարերարութն̃՝ անարգս մեղայ,
մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ,
մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև մեղայ,
մեղայ սիրոյդ վերնում գթութն̃՝ յայտնապէս մեղայ,
մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ,
մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց՝ անբաւս մեղայ,
մեղայ աննուազ լուսոյդ փայլման՝ ննջողս մեղայ,
մեղայ ճաշակման անճառդ կենաց՝ բազումս մեղայ,
մեղայ անհաս պարգևացդ ձրից՝ հանապազ մեղայ,
մեղայ գովեալ մարմնոյդ աստուծոյ՝ մահուչափ մեղայ,
մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ խնկապէս մեղայ։
Ահա արդարև օրհնեալ է հատուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի , սոյն սա պատուելի աւանդ , անմոռաց պատուէր , հայրենեացն տուր , նախահարցն օրէն , համայնից թոշակ , անհերքելի բան , զօրաւոր պատասխանի , կենդանութեան կամուրջ , ախորժելի վեր-

նոյն, սիրելի որդւոյ, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրտաբեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց գիրք, վաղնջուց կանոն, քրիստոնէից հարազատ արարչութեանն յաղթող, անջրպետ հզօր, խորոց ահաւոր, արուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ, ընդ որ չէք ումեք անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ոչ յիշատակեցաւ 'ի վերջին դատակնիք դասուն լքելոյ· դուցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զսահմանն յաւիտենական քակտեսցէ։ Ո՛ արդփառաց մեծութեան, որով նոյն ինքն աստուածութին պակեալ բարդաւաճի։ Քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան, և ոչ առ ժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ դատաւ։ Իսկ եթէ Աքար զարմեան, և Սաւուղ կիսեան, և Յուդա սիմոնեան, առելով զսոյն ոչ արդարացան, և ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի ակամայից բռնաւատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութի։ Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս։

Գ. Մ՚եղայ երախտեացդ մռացութեան՝ վերստին մեղայ, մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղայ, մեղայ առ կենանդ դժրողութեան՝ իսկ և իսկ մեղայ, մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝ չարաչար մեղայ, մեղայ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ՝ վատթարս մեղայ, մեղայ պարտականս անկենդան մահուն՝ ձաղելիս մեղայ, մեղայ անպատկառս քո բարձրութեն՝ տաղտկալիս մեղայ։ Մերջին ինձ կրկին աշխար հոգևոր՝

զի 'ի կորուստ և 'ի կործանումն իմն երևեցայ, զի անդարձ վարատեցայ, զի որդիս թշնամի գրեցայ, զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիզի։ Եւ ես առ սմին ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի, զի բացին կորուսչին գտայ։ Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունիմ առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զբռեալ ոլմս դարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյս 'ի մռայլ շրջեալ, զգերանակլիր ակն՝ թշուառացեալ, զջահ փառաց՝ շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք վնասակարս, առ տնօրինականն տէրունականս, առ յայտնութիւնսն աստուածայինս, առ երևմունսն արարչագիրս, առխոնարհութիւնսն սարսափելիս, առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուութիւնս քան առ համօրէն աւետարանին զարմանս, հիացմունս, հոգս հալողականս, անդաճմունս անհնարաւորս, թուականութիւնս մտաց անբարդելիս, ելմունս անկատարս, իջմունս անհաստատս, յուսահատութիւնս յարմարականս, յանդիմանութիւնս պատշաճականս, ճաղանս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս։ Արդ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութիւն։

Դ. Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողուլ. և զխայթուածս մահու բժշկել, տէր ողորմութեց, աստուած բոլորից, Քրիստոս թագաւոր բարձրեալ հօր որդի, առեղծիչ գթած բարերար, օրհնեալ առատ հարուստ, ահաւոր հզօր ողորմած, տեսուչ ձեռնկալ հաստիչ, ապրեցուցիչ դարմանիչ կեցուցիչ, երկայնամիտ անոխակալ ապաւէն, բժիշկ գովեալ երկնաւոր, անճառ լոյս կեանք, յարութի նորոգութիւն քաւութիւն. եթէ հայեսցես մարդասիրութեամբ, ըստ որում քոյդ են սովորութիւնք, նայեցեալ 'ի քեզ կոչկոչիմ և ես. եթէ

ըու լիցես, հաւաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղա-
տիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղա-
չեմ. եթէ առ իս դառնայցես, գոչեմ: Ապա եթէ ան-
տես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանի-
ցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ.
ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ
եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես,
սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հա-
լածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հեր-
քիմ. եթէ զբոյ վհատութեանս ոչ առցես, տագնա-
պիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս,
ընկճիմ: Իսկ եթէ քննես, բարկածիմ. ապա եթէ ուժ-
գինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մեր-
ժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառես-
ցես, ամաչեմ. եթէ ձայն տայցես, երկնչիմ: Օ՜ բար-
եացն պարգև մատնեալ, զերանութիւնն թողեալ, ըզ-
շնորհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մո-
ռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուս-
եալ, զստեղծիչդ էլիցս բարկացուցեալ, զանձառութ-
շնորհին ընդոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ: Իսկ
եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոյ մար-
դասիրեալ՝ առ իս ժամանեցուսցես, տէր Յիսուս Քրիս-
տոս զազդեալն գիր լնանիլ 'ի յիս, եթէ բժշկութիւն
դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենառատ
քաղցրութեամբ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ կեր-
պարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդե-
ցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին 'ի փրկութիւն ան-
մահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգ-
ւոյդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ. ԺԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԶԻ՞ արդ զո՞ր յայտնեցից, և յաղագս ո՞յց նը-շանակեցից. և վասն որպիսեա՞ց ճառեցից, և զո՞րքան ծածկեալս մերկացուցից, և կամ վասն որո՞ց խոստովանեցայց. զներկայի՞ցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի. զապագայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմապատիկ շարժութեանցն՝ յորոց գլորեցայ. զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է աստուծոյ մեծ գրեցեալ, թէ զան-կերպագրելի չխշտակելի. զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթևագոյնն՝ որ են ծանունք. զհոգեկանա՞ցն կը-րից կործանչաց, թէ զմարմնականաց ախտից սպանո-ղաց. զառ դրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակատար ախտակարութեանցն. զաներևութի՞ցն, թէ զտեսակա-նացն. զառ ձե՞ռն հպաւորութիւն, թէ զառ նոյն ինքն չունչ հեռաւորութիւն. զայնակա՞նն դիւրին խածմու-նս, թէ զերկարաւորն նետաձգութի. զխորութեա՞նն զանչափութիւն, թէ զամենածաւալն յայտնատեսիլ. ըզ յոգնագլո՞ւխն պռնկութիւն, թէ զառողջութեանն անբժշկութիւն. զպարարո՞ւմն չարին մարմնոյս, թէ ըզ սովին բարւոյն հոգւոյս. զխնամո՞յն հանդիպանալ յոչ ախորժելեան աստուծոյ, թէ զբանադատութեանն տը-ւամբ ձգիլն 'ի նոյն մոլեգնութիւն. զառ 'ի մա՞հն մե-ղաց, թէ զընդունայնութեանն կարծեաց:

Բ. Արդարև որպէս կամաւ խելագար զերծեալ 'ի ձորձոյ, զառ ականոյս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն

գործեալ իմաստնոյն , որ թէ հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց , օտարացեալս 'ի կրօնից , հեռացեալս 'ի կարգաց , 'ի սրբութեան անսուրբ , 'ի կուսութե՛ն անմաքուր , յարդարութեան ամբարիշտ , 'ի բարեպաշտութեան վնասապարտ , բերանովս մերձ առ ատացողն և հեռի երիկամամբք , շրթամբքս պատուամատոյց , ըստ մարգարէին , այլ ոչ եթէ սրտիւս: Նա եթէ պարտ է զքստմնելիսն ասել աստանօր , չար քան զտանջանսն յանդգնութիւն , իբր զուր իմն պաշտօնատարս աստուծոյ , 'ի միտս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ և ոչ ինչ օգտիմ , պնդիմ և ոչ հասանեմ , փութամ և ոչ ժամանեմ , անձկամ և ո՛չ տեսանեմ , փափաքեմ և ոչ հանդիպիմ , կարօտիմ և ոչ պատահիմ , ունիմ զամենայն երկրի , և եմ պատգամաւոր աղօթանուէր ամենայն աշխարհի: Այլ թող զբազումս զայսոսիկ , բարերար , և մի՛ ունիցիս · դիւրինք են քեզ զսոսին եղծանել , քան ինձ տաժանաւորս աջով նկարել · վասն այնորիկ գրեցի առանց խղնայելոյ , զի դու առատապէս ջնջեսցես , օրհնեալ , որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար , ըստ մաղթանաց բանի հեծութեան սրտի Եզրի երջանկի , յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ , որ զսոյն պատմէ · յամենայն կրից մահացուցանողաց վտանգեալ , անկեալ 'ի վիհ դարշութեան մեղաց անդնդականաց ապականութեանց · քանզի չհաւատամ , թէ լսես իսկ ինձ , ըստ Յօբայ ձայնին: Արդ ես ինձէն ինքնադաւով անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ բնութեանս , արդեօք փակեցի կնքեցի առ յինէն յամենայն մասանց զկենացն հնար , զի 'ի փրկութիւն մեղօք կապելոյս կրկին մեծացիս գովեալ:

Գ. Նա քանզի 'ի մարգարէէն բարւոք խրատեալ փորձ գտցուք , մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ · առէք

ընդ ձեզ բանս, ասէ Ովսէէ, և դարձարուք առ տէր աստուած ձեր, և ասացէք ցնա, կարող ես թողուլ ըզ մեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն 'ի բարութեան անձինք ձեր։ Ահա աստուած խօսեցաւ, և ո՞վ է որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւատասցէ։ Արդ այսպիսի վճիռ պաշտելի, նուիրեալ պայման, սահման նոյնագոյ, կենաց աւետիս, կէտ տէրունի, դուռն բարութեան, սփոփանաց հրաւէր, ճշգրիտ պատկեր, անստգիւտ գանձ, անմոռաց յիշատակ։ Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ, աստուատ վըկայեմ սմին՝ ընդ մարգարէին, կարող ես յամենայնի թողուլ զմեղսն բազմաբեղունս. և ես զօրասցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս։ Յամենայնի խղճես, ամենայնի բաւես, ամենայն ուրեք հասանես, ամենից բռնութեանց յաղթես, զամենայն կարծրութիւն փշրես. զամենայն ընդդիմահար վանես, զամենայն խստութիւն վատնես, զամենայն սրացեալ ընդոտնես, զամենայն դառինս անուշես, զամենայն դըժուարամոքելիս քաղցրացուցանես, զամենայն զպարտս շնորհես, զամենայն յանցանս թողուս։ Կարող ես, զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենարուեստ, զամենեցուն զմեղս ընկղմել և չքացուցանել բառնալ 'ի միջոյ, իբր զճաճանչ փոքու կայծական սահմանեալ 'ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ 'ի տիեզերատարածն ծովու։

Դ. Արդ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի, ողորմեա վասն խաչի չարչարանաց մահու որդւոյ քոյ, հայր գթութեան։ Սկիզբն առաջողի ողբերգութեան ձայնի այսմ արտօսրածին նուագի, որ զայս դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր։ Որ հետս ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց։ Որ զհպարտութեն

թեւս հարթել մեզ վարդապետեաց 'ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց վերջնոց և միջնոց, Երրորդութեամբդ բարեգործեալ, 'ի Նորոգութիւն լուսաւորութեան. ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ գրոեալ ընդ սմին։

Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և գիտասրտուռ ջերմեռանդնագ ախտաւորութեանց Աստուծով փարատիչ։

Ե. Որդ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձից հայր ամենատեղծ՝ անունդ ահաւոր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, խնկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի, ողքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, պատճառ որդւոյ հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ. քեւ և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեա տագնապող և դիւական տենդիս ջերմութեան, որ ապրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախիցէ 'ի մարդոյս՝ զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի, որով սրսկեալ միանգամ 'ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք։

Զ. Եւ արդ յայսց պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի գործոց չարեաց իւրոյն հրեշտակաց. տանջեսցի և հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բնակութե յարտաքին խաւարն։ Եւ ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից մերոց։ Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն քամենափուշ տա-

ժամատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ միածինդ քո
յաղթարակ խաչին, ցաւեսցի չարին։ Եւ 'ի կողահերձ
սայրասուր սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ
ընկալաւ, իսպառ սատակեսցի սկզբնարար մահուն։ Եւ
զի խոնարհեցոյց զգլխաւորն գլուխ յաւանդել զոգին 'ի
ծոց քո բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն
բելիարայ 'ի կոր կործանեսցի, ամենայնիւ հերքեալ 'ի
կորուստ։ Եւ զի ղողեալ ծածկեցաւ անմահն իսկութի
յոլովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութիւն
կարծեալ գոռոզին 'ի յատակս մահու դժոխոց մթին
ստուերին յառեալ դիտեսցէ. և յիշեսցէ զառաջին հար-
ուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտու-
թիւն թիւնից վիշապին կենարարն կրիւք ամենազօրին։
Վասն զի 'ի փառս քո, հայր ողորմութեան, իբր 'ի գո-
վեստ որդւոյ քոյ հոգւովդ սրբով զայս խոստովանիմ.
քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմխու-
մէն առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն
բանդ անձնաւոր ընդ անժամանակդ հօր փառաւորեմք։
Եւ քեզ միայնոյ տուրք Երրորդութեանդ, հաւասարա-
պատիւ տէրութեանդ, համաբուն անբաժին ինքնու-
թեանդ՝ օրհնաբանութիւն, գոհութիւն, զօրեղութի
և անճառ վայելչութիւն մեծութեան, բարեվիճակ
հարթութեան, զուգակշիռ հաւասարութեան յաւիտ-
ենանս. ամէն։

ԲԱՆ. ԺԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ դու միայն սկիզբն բարեաց, գթութիւն անճառ, որդի բարձրեալ միոյ աստուծոյ, որ զողջոյն զօրն թողութեան ցուցեր փրկարան, և ոչ կորստեան դատապարտարան, յեղանակեալ ինձ զաւուրն չար առ մեծ աւետիս ակնկալութեան: Բժիշկ ախտացելոյ, հովիւ մոլորեալ ոչխարի, տէր ապաւինեալ ծառայի, գինի անապակ մեծ տրտմեցելոյ, ապեղանեաց դեղ վիրաւորեցելոյ, ազատութիւն մեղօք գրաւելոյ, օրհնութիւն բարեաց մերժելոյ, կնիք շնորհաց խոտելոյ, օծումն կոչման կապտելոյ, կանգնումն վերստին կործանեցելոյ, պատսպարան հզօր գլորեցելոյ, օժանդակ վեհ գայթակղեցելոյ, դուռն բարձրութեան տարակուսելոյ, սանդուխք երանութեան եղկելոյ, ճանապարհ շաւղաց մոլորելոյ, թագաւոր ներող պարտելոյ, քաղցր յուսադրութիւն լքելոյ, ձեռնկալ կենաց հերքելոյ, մեծդ միայն և ամենառատ, որ զլիութիւն բարեաց սահմանեալ հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ Պօղոսի գոհաբանութեանն: Քանզի իննուց յինից և թուոց երից և չորեակ տասանց ՚ի վաղորդայնէ տունջեանն առ մուտս արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ իսկ և իսկ ՚ի սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց ակնկալութիւն մարդկան, բարեգործել միմեանց շնորհատրութիւն. իսկ առ իմս թշուառութեան և անարգութեան զքոյդ եղեալ փառս, ամենակարող զօ-

րութիւն ահեղ, բոլորից աստուած, օրհնեալ տէր Քրիստոս, որո՞վք սահմանեցի կշռութեամբ չափոյ հաստողիդ ընդ հողոյս հաւասարութիւն կցորդեալ։ Քանզի մնաս յայտնի անքաւ և անհետազօտելի, ամենեւին բարի անման բարկութեան խաւարի, ուստի յոյժ նուազ են քում մեծութեան աստեղացն թիւք, զորս գոյացուցեալ յոչէից յորջորջմամբ անուանց կնքեցեր, և կամ հիւթ երկրի՝ 'ի յոդս հեղեալ, զոր 'ի չգոյից հաստեալ տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախագրեալ համարդ սակաւութեան, որովք քեզ նըմանիլ վարդապետեցեր։

Բ. Ո՜հ ծածկեցաւ և ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կամաց երկայնմտութեան՝ հանուրց չարութիւն, իբր դոյզն մառայլ 'ի տապ արևու, և որպէս աստուստ խոկ կիրք բընութեանց զհասարակաց բարուց ցուցանէ։ Քանզի ո՛վ ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ. ո՛վ ոք զազրացաւ, և ոչ ամաչեաց. ո՛վ ոք գարշեցաւ, և ոչ պատկառեաց. ո՛վ ոք սխալեաց, և ոչ ապաշաւեաց. ո՛վ ոք կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ո՛վ ոք գայթակղեցաւ, և ոչ սորջացաւ. ո՛վ ոք պարտեցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՛վ ոք պատրեցաւ, և ոչ յոգւոց ելաւ. ո՛վ ոք ճաշակեաց լեղի, և ոչ դառնացաւ. ո՛վ ոք անկաւ 'ի բարձրութենէ, և ոչ ընդոստեաւ. ո՛վ ոք կորոյս մեծութիւն, և ոչ աշխարեաց. ո՛վ ոք զրկեցաւ յերանութե՜, և ոչ ելաց. ո՛վ ոք կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ոչ ողբաց. ո՛վ ոք գտաւ ինքեան վնասակար, և ոչ սոգտաւ. ո՛վ ոք մերժեցաւ յերեսացն աստուծոյ, և ոչ հառաչեաց. ո՛վ ոք լուաւ զաստուծոյ սպառնալիսն, և ոչ սոսկացաւ. ո՛վ ոք ընդ մի չարեացն՝ հազարս չաւաղեաց. ո՛վ ոք մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ. ո՛վ ոք անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտսն կոծեաց. ո՛վ ոք ետես զտրուկն յիւրում մեծութեան, և ոչ զկծեցաւ. ո՛վ ոք կատարեաց չարիս, և ոչ զինքն

լսկ նզովեաց . ո՛վ որ ախտացաւ , և ոչ զանձն դարմ-
եաց . ո՛վ որ յամօթալեացն գործեաց , և ոչ զիւրն մար-
մին ձաղեաց . ո՛վ որ 'ի պատկառելւոյն հպեցաւ , և ոչ
զօրն իւր անիծեաց . ո՛վ որ զգործեցեալսն յիշեաց , և
ո՛չ տապացաւ . ո՛վ որ զգաղտնիսն մտաբերեաց , և ոչ
խորովեցաւ . ո՛վ որ զծածուկսն նկատեաց , և ոչ մահ
կորստեան խնդրեաց . ո՛վ որ զաներեւոյթսն կերպաւոր-
եաց , և ոչ կրկին յերկիր կորացաւ . ո՛վ որ ընդ մեղացն
հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց . ո՛վ որ
զվնասակարսն բնութեանն , և ոչ պապակեցաւ . ո՛վ որ
զկամաւ ներգործեալսն , և ոչ սաստկման ինքեան ա-
ղօթեաց . ո՛վ որ զանճառելիսն , և ոչ խռովեցաւ . ո՛վ որ
զանկրելիսն էութեանն , և ոչ թախծեցաւ . ո՛վ որ զմե-
ծամեծսն , և ոչ մաշեցաւ . ո՛վ որ զանբծութեանն ա-
պականարարսն , և ոչ տոչորեցաւ . ո՛վ որ զտարագրու-
թեանն պատճառ յանցմունս , և ոչ տագնապեցաւ . ո՛վ
որ զերեսացն աղտեղի տեսիլ , և ոչ բարկութեան վեր-
նոյն զանձն պարտ վարկաւ . ո՛վ որ զմի 'ի կարեւորացն
մեղաց յաչս կերպացոյց , և ոչ զինուք մահու խոցե-
ցաւ . ո՛վ որ զխայտառականացն , և ոչ վայս վհատու-
թեան ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց . ո՛վ որ յար-
քայական դահոյիցն տնանկացաւ , և ոչ կարկամեալ 'ի
վայր գլորեցաւ , ո՛վ որ ընդ պսակին պերճութեան հող
'ի գլուխ եղեալ , և ոչ կրկին չարչարեալ յոգի մահա-
ցաւ . ո՛վ որ ընդ պայծառ պատմուճանին քրձազգած
եղեալ , և ոչ տխրեցաւ : Ո՛վ որ զկեանս իւր կորոյս ,
և ոչ արեան արտասուս երկնեաց . ո՛վ որ ընդ արկանել-
եաց լուսոյ խաւար զգեցաւ , և ոչ նուաղեցաւ . ո՛վ որ
'ի վերայ սգոյ սխրելւոյ ոչ թառամեցաւ : Ահա այս կեր-
պարանք ճշգրտագոյնք պարտաւորիս յանդիմանութե՛ ,
տխուր դէմ , քաղեալ ճաճանչ , ցամաքեալ խոնաւու-
թիւն , երկթայեալ շուրթն , անշքեալ տիպ , տրտմեց-
եալ ոգի , պղպջեալ ձայն , կրկնեալ պարանոց : Եւ զի

թէ ոք զխոկութիւնն լոկ նշանակեսցէ , ոչ անօրինէ , անամբարտաւան միտ , անհպարտ սիրտ , անխնդրող պարգևի թշուառ , անաղերսալի պասքեալ , ինքնակշտամբելի դեգերեալ , իրաւամերժ սովեալ , արդարալլուկ քաղցեալ , պատշաճադատ հարուածեալ , ինքնավկայ մահապարտեալ , արժանապէս հանեալ , անձնանէծ եղկելի։ Եւ զայս Թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշտամբեալ , և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ։

Գ. Եւ արդ եթէ զչարիս՝ հնարաւորութիւն բանսարկուին գտողին զմեզ դայթակղեալս , զիւրսն 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի , զի՞րդ ոչ զբարիսն տընկեալս 'ի մեզ հոգւոյ սրբութիւնս 'ի խնամակալութենէ կամաց կեցուցչիդ օնևօն դրեսցես , տէր բարեգութ , հզօր և յաղթող , քաւիչ մեղուցելոց , կարող յամենայնի առ ամենայն փրկութիւն։ Եթէ զանդունդս առերկինս փոխես , և կամ զխաւար մթութեան 'ի լոյս հաստես , եթէ զդառնութիւն լեղւոյ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես , և կամ զկոծ սաստկութեան վշտաց 'ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կարգես , դիւրինք և հնարաւորք են քեզ այսքիկ . և ես քան զսոսին բաւես առ նոսին տիրեալ համայնից ահաւորապէս . և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն։

ԲԱՆ. Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ճշմարտեսցի բան քո, ողորմած բոլորից աստուած, ներող և օրհնեալ, 'ի բազմադիմելին դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղաւորին. թէ և առ յետին խոկ շունչն իցէ ընտրութիւն, և կամ 'ի մէջ չարութեանն փոխադրութիւն։ Մանաւանդ զի գժնեայ կցորդս այս անձնիշխանական՝ միշտ մարտիկ, խաբող շողոքորթ, յարեալ 'ի ստութիւն, ըստ առակողին արածող հողմոց, դժուարունելի հաստողին փախչող, գերեալ որսողին մոլեկան մարմնոյս, ներհակ տնկակից, յոգնապատճառեան ամենավարան, զոր քո է գիտել զքանեացն յաճախութիւն։ Նա զկնի մեղանացն, ողորմագինս իմն ողբարկութիւնս վհատականս տաժանակոծս բազմաւաղելիս, քո առաջի տէր գթարկութիւնս գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կարգելոց անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառեցելոյն։

Բ. Եւ զի մի կրկնաբանութիւնս 'ի շատախօսութիւն կրթեսցի, առաւել քան զոյն այսու ողբալի, քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութիւն, այլ զտանջանացն թեթևութիւն. ոչ ընդ կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն զգայական շնչոյն 'ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն։ Ի հանգստեան իւրում վաստակեալ, 'ի խրախութեան ինքեան տրամեցեալ. դիմօք ժպտեալ, և մտօք խոցեալ. կերպ 'ի ծաղր, և

աչք 'ի յողբումն . երեսք զփոփանս ձեւացուցանէ , և արտասուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ: Ըմպանակք երկու յերկոսին ձեռին , մինն արբեամբ և միւսն կաթամբ . երկու բուրանոցք կայծակնաւորք , մինն խնկով և միւսն ճենճերիւ . սկաւառակք կրկին կրաւորականք համոց , մինն քաղցու և միւսն դառնութբ . բաժակք զոյգ առ երկուս բերմունս , մինն արտօսր և միւսն ծծումբ . տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց , մինն գինի և միւսն լեղի . դրունք տեսանելեաց ներհակաց , մինն 'ի լաց և միւսն 'ի վրիպումն . խանութք հալոցականաց հակառակութեանց , մինն արծարծէ և միւսն շիջուցանէ . հայեցուածք դիմաց երկուց , մինն դոյզն ողոքանօք և միւսն անանխայելի բարկութեամբ . համբարձումն երկակի բազկաց , ոմն 'ի հարուածս և ոմն 'ի մերժումն . դէմք կրկնակի կերպից , մինն տխրեալ և միւսն ցասուցեալ . կշտամբանք ընդ միոյ երկու , մինն սատեացս և միւսն սպառնեացն . ապաւինութիւնք կարծողականք , մինն զօնէ և միւսն թերևս . 'ի մի բերան երկակի բարբառ , մինն եղկութիւն և միւսն խռովութիւն . երկուս ազդմունս 'ի միում սրտի , մինն կեղակարծ յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան . ամպ լըթագոյն ահագնատեսիլ կրկին տեղացմանց , մինն նետս և միւսն քարինս . որոտումն ահեղ երկոցունց բերմանց , մինն կարկուտ և միւսն հրացան . ցայգ ցաւագին երկուց վտանգից , մինն լալոյ և միւսն մահու . առաւօտ սգոյ երկուց բողոքմանց , մինն սաստից և միւսն սպառնալեաց . արեգակունք երկու 'ի յերկուց ծայրից , մինն խաւարի և միւսն կիզման:

Գ. Եթէ հարուածոյ աջ կառուցանի , ինքեան վարկանի . և թէ ձեռն պարգեւաձիր , ոչ իւր ակն ունի: Ի պարծանս ուրուք կորանայ , յամբարձումն գլխոյ ընկճի , 'ի չարեացն յիշատակ հեծէ , 'ի ճառս մաքրոյ պատկառէ , 'ի պատմութիւնս հանդերձելոցն երերի:

Եթէ օրհնի յուժքէ յայտնի, 'ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յուժքէ լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ. եթէ գորովեսցի սաստկապէս, ինքեամբ ինքեան վկայէ. եթէ ձաղեսցի ուժգին, սակաւ հատուցումն առաւել պարտուցն դրեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լիցի, այո ասէ, և դարձեալ կրկնէ. եթէ որոգայթ մահու ճայթեսցէ յերկնէ, հազիւ ըղդէմն համբառնայցէ: Օ՜ խորոց իրաւանցն մատեան խփեալ, զպատասխանութեանն յոյս լքուցեալ, զհամարձակութեանն ընթացս փակեալ: Եւ եթէ ոչ էր անմերկանաւոր կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ ինչ դանդաղէր: Արդարև վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ 'ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հոգէկից բանի իմաստնոյն:

Դ. Եւ արդ զի՞րդ ոչ ողորմեսցիս, բարեգութ, այսքանեացս ձայնարկութեանց կողկողագինս հեծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տէր: Ահա առ չարութիւն դերւոյս բարութիւն քո, առ մահապարտիս դառնութիւն քաղցրութիւն քո, առ կորուսելոյս յայտնութիւն ճառագայթ քո, առ յանդգնելոյս մոլութիւն ողորմութիւն քո, առ խակութիւն վնասակարիս հեզութիւն քո, առ կործանելոյս այցելութիւն աջ քո, առ ընկղմելոյս վերբերութիւն ձեռն քո, առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս մատն քո, առ պակուցելոյս պաշտպանութիւն ոգի քո, առ ապախտաւորիս իմ վստահութիւն երկայնմտութիւն քո, առ օծումն ամենադժնէիս զօրութիւն քո, առ մեղաւորիս քաւութիւն հրաման քո, առ փախուցելոյս ապաւինութիւն ոտք քո, առ սրացելոյս պատսպարութիւն բազուկ քո, առ վրիպելոյս առաջնորդութիւն լոյս քո, առ տարակուսելոյս հնարաւորութիւն հանճար քո, առ անիծելոյս կրկին տացումն օրհնութիւն քո, առ վհատելոյս քաջալերութիւն խրախոյս քո, առ վըշ-

տագնելոյս մխիթարութիւն բաժակ քո, առ նեղելոյս ընդարձակութիւն կամք քո, առ ատեցելոյս կոչումն սէր քո, առ հաստատումն սասանեցելոյս բան քո, առ հոգւով վիրաւորելոյս կաթուած արեան քո, առ աներեւոյթ մթերս ցաւոցս ակնարկութիւն քո, առ յուսահատելոյս անդրէն ընտրութիւն իշխանութիւն քո, առ պատուաստումն կորեցելոյս կցորդութիւն քո, առ խաւարաւ մահու ծածկելոյս նշոյլ կենաց քոց, առ խռովեցելոյս իմ հանդարտութիւն խաղաղութիւն քոյ, առ վայրագութիւն օտարացելոյս ողջոյն քո, առ մոլորելոյս դարձաւորութիւն ձայն քո։ Օ՜հ դու տիրես ամենայնի գթութեամբ, և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի. և ոչ է բարութիւն առանց քո, և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԼԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՄԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս զաղէտ տագնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչանացս անփոփելի իմոյս վտանգի. զի դու ողորմած ընկղընահայրդ խոստովանութեան անյայտ ծածկութից որդի աստուծոյ կենդանւոյ տէր Յիսուս Քրիստոս, քաղցրութեամբ նայեսցիս քաւել։ Արդարև կարող ես, ճշմարտապէս բաւական ես, եթէ կամիս՝ հնարաւոր ես. կամիս առաւելապէս, որպէս և կարես։ Հաւատանամ մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնու-

լըն, բազմանան քեզ դանձք 'ի ցրուելն քան 'ի ժողովելն, յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն քան 'ի ճշդելն, կուտին քեզ համբարք 'ի տարածանելն քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ այսմ ամենայնի՝ դտանել քեւ ելք փրկութեան. հաւատամ անարգս ընդ պատուականին, յուսամ ընդ Աբրահամու և ընդ Աննայի. զի մինն բանիւ քո հաւատոց և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Սյան որոյ և ամն 'ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառանցեալն և զամուլն արգանդ Սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութեան բազում ժողովրդոց մարգարէից արքոց և թագաւորաց ընտրելոց հայել յուսացաւ։ Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց, որ է թիւ մի անբաւութեան զընաւն նշանակելոյ զէութիւն, աստուածութեանն յարակայութեան սահման անհետագօտելի, և աւագանին նորածին որդւոց անհատ յորդութիւն։ Այս թիւ պանծալի, որում ոչ է կէտ կցորդի և ոչ սպառուած վախճանի, այլ կոյս ամն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ անձառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց իմաստից։

Բ. Արդ համարեա յարդարութիւն անյուսալի փրկութեան հոգւոյս զամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան, ընդ նախադրելոյն երջանկաց եղեալ և դասեալ զայս դաւանութիւն փոքր հաւատոց իմոյս խնդրուածոց. զի կեցից և ես առ նոքօք բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց գքոյդ շնորհաց։ Մանաւանդ զի կրկին բարձունք են և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի գերադոյնք. խմուռն խոլոլութեան հաշտարանք և հզօրապէս քաւարանք, և կարծեաց թերութեան մտաց սլացեալք. ընդ արեան քո աշաւորի և ըստ մարմնոյ ծնօղ-

քո խնկելի . պարք առաքելոցն , դասք մարգարէիցն , գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն հետեւակ սպառազէն արիութեամբ մերկամարտիկն մրցութեամբ , գումարք միանձանց , բոյլք բանականաց ընտրելոց , ժողովք բարեկրօնից , հոյլք հոգեզինաց յերկրէ երկնաւորաց , զինուորութիւնք վերնականաց ընդ մեզ կցորդելոց , աւանդք երախայրեաց , մատուցմունք զուարակաց , լուցմունք ղամբարաց , բուրմունք խնկոց իւղոց հանդերձանօք , յաղթանակք փրկական նշանաց , կառուցմունք խորանաց աստուածաբնակաց , ձեռք քահանայից շնորհիւ կատարելոց։ Ա՜ շարժումն անձին յիշատակ աստուծոյ , առ փոփոխումն դարշապարի , առ կարկառումն աջոյ և ամբարձումն բազկի , առ բարիս գոհութիւն , և առ գթել աղաչանք , առ բանս ընտանիս , առ խօսս հասարակաց , առ ձայնս բնաւորականս , առ գործոց յաջողուածս , առ առաքինութեան ջերմութիւնս , որ 'ի տունջեան և 'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգւորաց՝ քև առաջնորդեալք . 'ի նիրհել և 'ի զարթնուլ , 'ի պատերազմի ազգաց , 'ի մարտս դիւաց , 'ի հակառակութիւնս հերձուածողաց , առ փոքունս , առ մեծամեծս , առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց , և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան , եթէ հրեշտականս եթէ տատամնելիս . վասն ոմանց աղօթս՝ մեալ 'ի նոսին , և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես սքանչելապէս հնարիւք անճառիւք . հաւատացեալ յամենեցունց , թէ բաւական ես յամենայնի , կաթնաբոյծ հասակաց , տիոց պատանեաց , մտաց վայրենեաց , ստամբակաց դառողաց . մինչ զի առ թատերս տեսարանաց , և առ կոյտս խառնիճաղանճ բազմութեանց , և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ։

Գ . Արդ դու ստացար զամենեսեան , և քո են ամենեքեան , և ողորմեցիս ամենեցուն՝ միայն բարեգութ .

զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի 'ի քում համարի են. քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց։ Արդ և ես կցորդիմ թշուառ բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս. յանդգնիմ ասել, թէ որ կարգայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ, առ այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զի՞րդ ոչ քո իցէ։ Յորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝ ապխտականիչ երամս աղաւնեաց, 'ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ ուղիղս հանդարտաբարս, 'ի թիւ շանց գազանականաց գառինս նուիրելիս, հեզութիւն 'ի խստութեան, կատարելութիւն 'ի թերութեան, խոնարհութիւն յամպարհաւաճութեան, ճշմարտութիւն 'ի ստութեան, միամտութիւն 'ի մանկութեան, անբծութիւն յայլամտութե՛, բարօրութիւն 'ի չարութեան, պարկեշտութիւն 'ի լրկութեան, ողորմութիւն յանգթութեան, ապաշաւանք յանյուսութեան, քաղցրութիւն 'ի բարկութեան, հաշտութիւն 'ի թշնամութեան, անոխութիւն 'ի խածանողութեան. քաջալերութիւն 'ի լքութեան, օրհնութիւն 'ի նեռաձգութեան։ Յոր ոչ բաւականացայ երբէք 'ի դատել ճշգրտապէս, թէ ո՛վ յերկրածնաց ասել կանխեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառաբար կշռամբես իրաւամբք զարդարութիւն՝ առ ամբարիշտ մաքուրն և առ պոռնիկ զղջացեալն. առ ամենեսին բարեգործ՝ միայն Թագաւոր օրհնեալ 'ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԼԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես յետնեալս 'ի նախադրութեանց արժանաւորաց դրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթանաց. ընդ նկունս և անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարագրեալսն և առ.քեզ դարձեալս, ընդ երկուացեալսն և ճշմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկճեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զօրեալս, ընդ հեռացեալսն և մերձեցեալս, ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս: Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ ըզ մեղսն Երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանատուութեանն որ առ ժողովուրդն նախնի, և կամ տանն Յակոբու զանօրէնութիւնս նորա, այլ իմոյս ժամանեցից յայտնութեան. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յաբելով ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ ըստ Սաղմոսողին. որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութեանս ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն իսպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ էիդ:

Բ. Եւ արդ կրկնելով ծունր բարեբարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ գըլոր-

մանն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ անասնական գետնաքարշութեան սողնոյ սահեցմամբ՝ կամօք բևեռեցայ։ Այլ 'ի քեզ տէր յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց գաւազան 'ի յարմատոյն Դաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ աստուածութիւնդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ 'ի քոյդ երախտեաց 'ի վայր կորացեալ դիմօք, աչ.ք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսութեամբ 'ի քեզ մերձ 'ի հեծութիւն, բնաւին ողորմութիւն, բոլորովին քաղցրութիւն, զլիճ լուսոյ արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից։ Տուր ամենառատ աննուաղ երկայնմտութեամբ՝ քո դառնացուցչիս, միայն դու 'ի յամենայնի սահման փրկութեան, աստուած բոլորից, անճառ մեծութիւն, անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն, հզօր զօրութիւն, կարող բարերարութիւն, անպակաս լրութիւն, անճառ ժառանգութիւն, վայելչական վիճակ, առատ պատրաստութիւն, անստուեր իմաստութիւն, տենչալի տուրք, անձկալի ձիր, բաղձալի բերկրութիւն, անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք, անծախելի ստացուած, անփոխանորդելի բարձրութիւն, ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւն, դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցելոց, փրկութիւնդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպարանդ սահեցելոց, վշտակիցդ գայթակղելոց, երկայնմտութիւն տարակուսելոց, լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյցք, օրհնութեան անձրև, հոգի երեսաց, զօրութիւն դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, ազդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ ոտ-

տի, ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ, խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն, ճշմարտութեան ճանապարհ, երկնաձեմ սանդուղք։ Եւ այլ բազմութիւն բանից գովեստից անհամար կարգաց և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգեղէնք։

Գ. Առ քեզ հայի ամենայն ակն տեսողի, աստուածդ ամենայնի. նայեա 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և եթէ յաղախնաց ոք աղաչեսցէ։ Եւ ընկալ զցօղ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութեան քոյ, Քրիստոս, և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ դարձն և զդաւանութիւն, և համբուրիւ շրթանցս առ ճաշակ փրկութեան կենացդ հաղորդութեան՝ համաշնչապէս զանքակ միութիւն. և զնոյն գթութիւն նորին ողորմութեամբ ընկալեալ 'ի քէն, բարերար, գրաւականեսցես զմեծդ պարգև ընդ փոքու հաւատոյս. և 'ի ձեռն գթութեան սիրոյ քոյ առ քոյ անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմերունք հողմոյն խստութեան 'ի յօդ հանդարտութեան, և մրրկին սաստկութիւն 'ի սիկ ախորժութեան, և կարծիք երկիւղին 'ի մեծ վստահութիւն, և պատուհաս պատժոյն յերանութեան պատահումն, և վտանգք թախծանացն 'ի հոգևոր խրախճանութիւն, և աղէկոծութիւն ծփանացն 'ի խոր խաղաղութիւն, և ղեկացն թևարկմունք յանքոյթ նաւահանգիստն, և բեկք բեռանցս մեղաց փոխարկեսցի 'ի թռչակ շնորհաց։ Եւ յայսքանեացս ամենից բիւրուց բարութեանցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոստովանեալ, ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հերքեալ

և հալածեցեալ, ունայնացին մուրհակք մեղացս, խը-
զեցին հաղբքն, ոռոչեցին որոգայթքն, կապտեցին
կապանքն, վանեցի վէհն, վերացին վնասքն, պարսա-
ցին պատրանքն, ջրեցին մեղքն, պատառեցին պար-
տիքն, խորտակեցի լուծն, քակտեցին քեղիքն։ Նու ընդ-
մաայլ մթութեան չարեացն յանցանաց և դիւացն բա-
նակաց պաշարողաց՝ արև փառաց քոց ժամանեցէ կե-
ցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ,
'ի դիմաց և 'ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգ-
ւոյ գարնայնոյ ընդ ակնկալութեան սպասողացն քումդ
երևման։ Զի դու ես բարերար առ ամենեսին, և հը-
նարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն զկեալն
կամիս և զփրկութիւնն բաղձաս։

Դ. Ով ամենապարգև ձեռն Յիսուսի Քրիստոսի, և
առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քո սրբոյ
բնակեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութեան
սրտէ սիրոյ սեննկիս. և աներծական քո նկարագիր՝
նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
մանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի մատ-
եան յաւիտեան կոակաւդ կենաց հոգւոյդ աւետեաց
երկնից յօրինողիդ։ Նու քեզ միայնոյ պատճառիդ, և
միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ,
երրեակ անձնաւորութեանդ և միոյ աստուածութեանդ
վայելեն փառք յերկնաւորացն վեհից, 'ի սրբոցն դա-
սուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԺԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ զյարմարութիւն պաշտաման բանիս 'ի խորհրդոց հոգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկաղգեստից զուգամանապէս խառնեցես 'ի յանուշութիւն կազմութեան իւրոյն Մարիամու կնոջ բարեպաշտի։ Յոր հաւասարեալ նոյնութեամբ ընդ երջանիկ պոռնկացն 'ի քէն ընկալելոյն յաւէտահրաշ յօրդանօք, պարարեսցիս մեծապէս խմորս բանիւ նուաստիւ, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ, անկշտամբելի 'ի բամբասանաց Սաղմոսին, մի օծցէ զտերև ոստոյ գագաթան իւղ մեղաւորին։ Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութեամբ բուրման խոստովանութեան այսր մատենի 'ի բազումս ազդեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութեան նոցայն յիշատակի։ Քանզի դու նոյն տէր զգաստացուցիչ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց, որոց առակեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սոյին անձառ ներգործութեամբ 'ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն։ Ընդ անասնական գարւոյն կերակրոյ զբազմահամբաւ պտուղ ցորենոյդ կենացդ հացի, ընդ ապականացու արծաթոյն՝ զարքունականդ պատկեր, ընդ յիմարարար թմբրութե գինւոյն՝ զբաժակդ արեան արարչիդ, ընդ իւղոյն առելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝ զօծումն

շնորհին առ ի դարձելոյ, ընդ գերծման գլխաշուք կրթանոյն՝ զանապականութեան վերարկուն, ապարանջանին պճնութեամբ՝ զխուխչս բարեմասնութեան, օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութեամբն, ընդ ունկանն գնդի վայելչականն զարգու՝ զանստուեր յիշատակ տէրունականդ ձայնի, ընդ քայլս պերճութեան լանջացն՝ զյոգնահաւաք աւանդըս ուղղութեան քրիստոնեակրօն լծոյդ քաղցրութեան։

Բ. Բայց զի՞ է յայտնի ինձ պարծել, և ոչ վերստին 'ի սոյն պատկառել։ Արդ յայլ օրինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից զպատիժ պարտուցս իմոց մեղանաց, 'ի մարգարէիցն տառից բերեալ համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից սաստիկ դատախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ բերկրումն նոցա պարել. յորս հառաչանս, ձայնս հեծութեան, բողոքս բարկութեան, նախատինս խորտակման, լալումն կարեւոր։ Արդ մեծիդ աստուծոյ գթութիւն ամենաժամեան՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութիւն, առ որս՝ զղջմունս, խոստովանութիւնս, աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս, խրախոյս աստուածայինս, փառաց ժառանգութիւնս, հրաշից յայտնութիւնս, սքանչելեաց տեսութիւնս. յորոց ոմանք յոյս ընձեռեն, և ոմանք վհատութիւնս բազումս մատուցանեն. յորս ես կամակործանեալ՝ կորստեանն վկայեցայ։ Զի եթէ զգեստ աստուծոյ զվարագուրին պատուակ ասաց Եզեկիէլ, յորում արար ժողովուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել առ 'ի նոսա, իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի զաստուած զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Զարմանամ, թէ զիա՞րդ ոչ կիզում. հիանամ, թէ ի՞բր ոչ այրիմ. ափշիմ, թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջաղխեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժանեալ 'ի յօրինակէ ժանեաց

կորուսչին, ըստ գրոյն։ Այլ այս միայն է պահեցեալ
ինձ նշոյլ յիշատակի փրկութեան՝ յուսոյ, զի քրիստո-
եան աւետարանն կեանս է ամենեւին, 'ի կերպարանաց
պատկերի բանին ծանուցեալ. որով առ մեղանսն դար-
ձըն, առ պարտիսն շնորհն, առ եղծումն նորոգութիւնն,
առ անօրէնութիւնն քաւութիւնն, առ վէրսն բժշկու-
թիւնն, առ վտանգն անդորրութիւնն, առ պատիժն
ներումն, առ պատերազմն հանդարտանալն, առ հուրն
անձրեւն, առ պատուհասն պարգեւն, առ ակնկալութիւն
սատակմանն՝ ձիրն, առ գործարան մահուն՝ կենացն ա-
զատութիւն։

Գ. Նա զի՞նչ է ինձ զայսքանեաց յիշմանց 'ի թիւ-
արկանել, և ոչ զանձառելիսն ստանոր դասել։ Յիշա-
տակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութիւն, յա-
նուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն, սոցին ակ-
նարկութեամբ ընդ հոգւոյն հաղորդութիւն. խաչին
փրկանք, բանին սփոփութիւն, բարուք վարձ կամացս
առ կշռութիւն գիտողին, աւազանն կենդանարար՝
հաշտութեանն միջնորդութիւն, և այլք ամենայնք ան-
թիւք բարիք 'ի բարերարէն բարդեցեալք, ազատք 'ի
հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք։
Այսոքիկ են, որ ինձ 'ի մէջ դառնութեանս մահու՝
կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի եթէ ոչ
զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ
և իսկ ըստ բանի երգողին։ Ոչ փոքրկութեամբ որդւոյ
զհայր փառաւորեմ, ոչ նուաստութեամբ հոգւոյ զորդի
նախատեմ. համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն ա-
բարչութեամբ։ Քանզի և 'ի դէմս հոգւոյն սրբոյ այս
են աղաչանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում
գառնդ երկնաւոր զենանի, զայս աղօթեցի։

Աղօթք, որ նախ քան զպատարագն մատուցանի։

Դ. Ամենակալ բարերար մարդասէր աստուած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Մատչիմք մեծաւ դողութեամբ սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում անզննին զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Էմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի։ Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միանական աստուածութեանդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս։ Եւ և 'ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին։ Որդի աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ 'ի դնալն քո 'ի վերայ ջրոյն, անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ՝ թևապարփակ պաշտպանողօրէն գթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։ Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծ մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր, կարող տիրապէս, զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից յանէից։ Եւ ստեղծանելն 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց։ Քեզ հնազանդեցաւ միութեամբ

կամացն որպէս հօրն խորում ազգակիցն քո , էակիցն հօր անդրանիկն որդի մերձոյս կերպիւ . զքեզ աւետարանեաց ճշմարիտ աստուած հաւասար և համագոյ հօր լուր հզօրի , և զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց , և իբր զաստուածամարտիցն զքո հեստելոցն չարաբանական բերանս կարկեաց , և զիւրն շնորհեաց արդարն և անարատն գտիչն ամենայնի , որ վասն մեղաց մերոց մատնեցաւ , և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք 'ի ձեռն քո , և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի , յաւիտեանս յաւիտենից . ամէն։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի , մինչև փառաւորութիւնն լուսոյ հրաշապէս յայտնեսցի ազդեալ , աւետարանել վերստին զկրկին խաղաղութիւն։

Ե. Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ անեղծ և անստեղծ անժամանակ հոգւոյդ գթածի որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս առ ողորմածդ հայր . որ զսուրբսն պահես , և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր։ Արդ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց , որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան . և մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք 'ի տեսականացս աչաց իմաստից . վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից , և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինդ յերրորդութենէդ պատարագի , և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ , իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս , և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ , առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ

մանանայս կենաց նորոյ փրկութեան։ Եւ հալեցի 'ի հրոյս յայսմանէ զայթագղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գըթութիւն, որպէս որդւոյդ աստուծոյ՝ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան։ Այո այս և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս։ Օ՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս և 'ի մի իշխանութիւն գոյութեան. զի քոյ է գթութիւն և կարողութիւն և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ · ԼԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ առ այսոքիւք թշուառացեալ շնչոյս խմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ աստուած, զոր 'ի նախնին ճառեալ՝ և յերկրորդումս ցուցից։ Իսկ յանդիմանութիւնս զրաբանականս՝ 'ի կոյտս բազմութեան ազգաց, և թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արդա-

հաստութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնա-շարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք։

Ի հանդիսարանս խօսից ատենի բանս մաղթանաց, որով հոգին աստուծոյ հաշտեալ հասանէ յօգնականութիւն։

Բ. Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հօրդ հզօրի, առաքեա զցօղ քաղցրութեան քոյ, և բարեգործեա 'ի յանձին և յիշխանական ազդման ըզ-գայութեան զամենալից շնորհս բազմապարգև քո ողոր-մութեան։ Եւ հերկեա զբանական անդաստան մարմ-նեղէն կարծրացեալ սրտիս յընդունակութիւն արգաս-եաց հոգևոր սերմանց։ Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմ զամենայն պարգևս 'ի մեզ ծագեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մար-գարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազ-գակից քո էակիցն հօր անդրանիկն որդի քոյին գոր-ծակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզ-եաց զքեզ աստուած հաւասարակից իսկութեանդ հօր։ Շնորհեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետևել արագաթռիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժա-մանեսցէ առ իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ աստուածութեանդ քո, և 'ի լրութիւն շի-նութեան կաթուղիկէ եկեղեցւոյ։ Եւ կարկառեա 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո, և զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո. փարատեա 'ի մտաց իմոց զմէգ մթու-թեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ 'ի կենցաղոյս երկ-

բէ 'ի բարձունս։ Լուսաւորեա 'ի յիս վերստին զծագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեան քո, Հզօր, արժանի լինել առնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր լսողաց։ Եւ քեզ ամենայն փառք յամենայնի, ընդ Հօր ամենակալի և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն։ Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ սուրբ Երրորդութեանն՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ։

Երրորդութիւն անպայմանական նորոգ ստեղծաբանութեան ազդեալ յաստուծոյ, յոր ինչ 'ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ։

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն, աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն, գերազանց գոլով սահմանի անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւիտեանցս անտարրափակ էութեանց ստեղծականացս կարգաց, օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ ամենահարուստ մեծութեամբ յաւէտ պսակեալ, հատիչ ժամանակաց և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձից և յարմարապէս յօրինիչ տեսականաց և աներևութից։ Ոչ անուամբ չափեալ և ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ նմանեալ և ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ օրինակաւ ձևացեալ և ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ 'ի թերութենէ տարածեալ և ոչ 'ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբէքի գրաւեալ և ոչ 'ի տեղւոջ վայրի երևեալ։

Դ. Հայր գթութեանց՝ ունող ամենայնի, և աստուած հանուրց որ յերկինս և որ յերկրի, բաց 'ի բանէն

միայնոյ՝ որում զամենայն ինչ ունի · ստեղծիչ և տուիչ
շնորհաց ամենից, բայց 'ի հոգւոյն խնկակցէ որում զհա-
մայնն կազմեաց։

Ե · Մ՚ինն յերջանկափառ համազօր ահաւորութենէ
երից անձնաւորութեանց խոնարհեալ 'ի վերուստ՝ ան-
տուստ 'ի ստորինս, որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներք-
նոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ, և անկա-
րօտ դիմացն ծնողին իւրոյ, մտեալ 'ի սենեակ կուսին
արգանդի պարզաբար, և ելեալ անտի յօդաւորաբար
մարմին էապէս անորոշելի, անթերի մարդկութեամբն
և անպակաս աստուածութեամբն։ Մ՚ի որդի հօրն մի-
այնոյ և միածին անդրանիկ աստուածամայր տիրածին
կուսին, արարիչն յեղականումն մարդ եղով ճշմարիտ
սկզբնածին · ահա ոչ գլնի եղելոց երկրատեղծիցս նը-
մանութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհա-
փառ, որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամա-
նակս, անդրանիկ ըստ Սաղմոսողին, քան զամենայն թա-
գաւորս երկրի · անապական խառնութեամբ կերպաց-
եալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ,
և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս իսկ ասել՝ լու-
սոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ։ Նոյն
ինքն եկեալ կամաւորութեամբ 'ի խաչն մահու, իբր
զգառն անարատ 'ի սպանդ վարեցաւ, և հանդերձեաց
զօրէն ինքնիշխանութեամբ զարարածոց իւրոց փրկու-
թիւն · չարչարեալ իսկութեամբ կենդանեօք՝ եդաւ 'ի
շիրմի անորոշելի յաստուածութենէն · եռօրեայ թաղ-
մամբն 'ի դժոխս՝ սանդարամետականացն վհատելոցն
բանտարգելիցն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս։
Նա և աւարտեալ զտնօրինականացն զփրկանաւորն զորըն-
տեսութիւն, աստուածապէս վերակենդանեաց · և կա-
ռավարեալ 'ի թեւս հողմոց՝ ելեալ 'ի Քրովբէս ամպով
անքննութեան ծածկեցաւ · համբարձեալ գեր 'ի վերոյ
ամենայն երկնի, նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրա-

կան սկզբնաժառանգ հօրն հաւասարութեան, յորմէ և բնաւ խոկ ոչ մեկուսացաւ, անկորուստ առեցելովն և աննուազ սեպհականօքն։ Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման, քննել զծածկեալն կշռութեամբ չափոյ արդար կրաւանց. որում սպասեմք և յոր աղօթեմք, հաւատացեալքս յամենայնի՝ ամենայնիւ ամենակալ տէրութեան նորա. որ արդարև մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ։

Զ. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր և զհոգի էութեան նոցին, ամենազօր, ճշմարիտ, կատարեալ և սուրբ, որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամենայն, ինքնագործ հոմիշխան երկուցն ևս ընդ նմին անեղծ և անսահման Թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին և բանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն և հոգին բարձրացեալ։ Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգևս 'ի գովեստ անուան փառաց միածնին. որ ազդեաց յօրէնսն, շնչեաց 'ի մարգարէսն, փչմամբ ազդակցին տպաւորեցաւ յառաքեալսն, կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի Յորդանան 'ի մեծութիւն փառաց եկեղյն, փայլեաց 'ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, ած արքայութիւնս, օժանդակեաց Թագաւորս, ետ վերակացուս, հրամանատարեաց փրկութիւնս, շնորհեաց ձիրս, հանդերձաւորեաց քաւութիւնս, զմկրտեալսս 'ի մահն Քրիստոսի՝ 'ի բնակութիւն իւր մաքրազարդեաց. զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց, և ինքն է աստուած խնկեալ տիրապէս ամենայն յամենայնի։

Է.· Քանզի ոչ նախաթուելովն յերրորդութեանն ոք մեծ ինչ քան զմիւսն, և կամ զկնի անուանիլն նուաստագոյն առ նմանն, և կամ 'ի մինն առելով խառնակութիւն գոլ զիմացն, և կամ յերիցն տրոհումն ուրոյնու-

թիւն եւ կամացն։ Քանզի անմեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի իւրեան զօրութիւն. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհագադ ումն և անկենդան և առ ամենայն հրաման նուաղեալ։ Իսկ բանն եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որք ումն և կամ լքեալ և կամ 'ի մահացուէ ումեմնէ ոչ էր։ Որպէս և հոգին եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի, ապաշուք ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի։ Այլ եթէ ոք հակաճառական բանիւ յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն յորժամ և չէր, և անբանութեանն բամբասանօք պատուել վարկանի ըզվեհին մեծութիւն, և կամ ստրկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգևոր, որով այլ իմն գոութիւն օտար մուծանել և կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն, զայնպիսին քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զդժնդակ դևս դիմամարտիկս գազանականս, հերքեալ 'ի միջոյ 'ի բաց հալածեմք, եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդ դէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի։ Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով 'ի նոյն տէրութիւն միակցորդ հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութեամբ, հանգունատիպ հարթութեամբ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, 'ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանըս յաւիտենից. ամէն։

Ը. Արդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի՝ ամենալուր ականջաց մեծիդ աստուծոյ ընծայեցուցի. սովիմք սպառազինեալ, և ապա մտի 'ի հանդէսն։ Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչչև ստեղծեալ էր քո զամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն 'ի

քումդ լրութեան փառաւորեալ իսկ էիր · այլ զի զմերժ-եալս զիս յարգեցես , անձառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիւ հաղորդութեամբ: Իսկ զի՞նչ պարտ լիցի ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ ա-սել Ադոնայի տէր , և զհրամայեալ պատուէրդ ոչ առ-նել · որ ինձէն իսկ զիս զօսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ աս-տուծոյ՝ եղծի , որ և խորտակելն է իրաւացի · և ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Այլ արդ քանզի բազմօք պաղատեցայ գրուակօք խանդաղատականօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լուր , բարեգութ , ըստ սմին բանի այնմ ամենայնի: Յղեցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից յօդեալ ընդ նոսին · Թերևս 'ի մաքրոց և 'ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջուց իւ-ղով զանգելոց 'ի սեղան փառացդ քոց մատիցէ:

Թ · Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր Քրիստոսդ մի՝ աստուծոյ միոյ, հզօր և ամենակալ , որ յաղթես գթութեամբ խնամոց քաղցրութեան քո, ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց գոյակ-ցաց , առ որս յաւէտ է ամբոխութիւն և բիւրամա-նեայ հակառակութիւն, այլ և հրեշտակացն անախտա-կանութեան, նաև և ևս քան զայս՝ սրբասնելոցն անա-րատութեան · յորոց մի էր և Եղիաս, որոյ ցոյցք խըս-տութեանն 'ի Քորեբ լերինն նշանակեցաւ յերիս օրի-նակս , 'ի շարժումն մեծ , 'ի հողմն ուժգին , 'ի հուրն կիզանողական · իսկ քոյդ հեզութիւն երկայնմտութեան՝ 'ի հանդարտութիւն մեղմութեան օդոյն քաղցրու-թեան · քանզի կամաց ողորմութեանց դու միայն ես, ըստ գրեցելումն: Վան զի թէ և հաճոյք գտան մե-րասերքս առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմա-նութիւն վերնային , սակայն երկրածինք են և նոքա , ընտրեալք 'ի մարդկանէ · իսկ դու ոչ ունիս չարանալ

խնկութեամբ բարիդ, յամենայնի օրհնեալդ, ամենեւին փրկութիւնդ, ամենայնիւ հանդիստդ, համայնից անդորրութիւնդ, համօրէն ախտացելոց դեղ առողջութեան, աղբիւր ջրոյ կենդանւոյ ըստ Երեմիայ։ Դարձ առ իս և ողորմեա ինձ, որ այնքան ծարաւես պապքիս անկարօտդ աստուած խմուլ փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց բան լինի ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութեան 'ի մերոց դիմաց կենցաղականաց վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել, ողորմեա Երուսաղէմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութեան առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս, Երուսաղէմի։

Ժ. Արդարև լուար բարեգութ, անսացեր թագաւոր, ունկնդրեցեր կեանք և յոյս, 'ի միտ առեր երկնաւոր, յարգեցեր հզօր, նկատեցեր ծածկագէտ, տեսեր խնամակալ, կարեկցեցեր անպատում, խոնարհեցար միշտ բարձրեալ, նուաստացար ահաւոր, յայտնեցար անճառ, ամփոփեցար անսահման, քանակեցար անքննին, մածար ճառագայթ, մարդացար անմարմին, շօշափեցար անքանակ, կերպաւորեցար անորակ, լցեր խնկապէս զաղաչողացն բաղձանս։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ։ Ահա ողորմած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ · ԼԵ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ, տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, անտարակոյս տեսանողութիւն, կամք ամենընդարձակ, առատութիւն անպակաս, ո՞վ ոք զօրեսցէ տանել հանդիսիւ պարերգութեամբ 'ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութեան, որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից խմուամ փրկութեան: Եւ զոր մեծն է գրեցից պատմել յապառնիսն. քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր. այլ և զերկինս ղամբարօք նոցին զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա. այլ առեր 'ի պատիւ մեծաց գովեստից առաջին դասել զմարդասիրութիւնն: Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անձաւ 'ի խո՞րհուրդս սոսկալիս. զերկնային ըուսակերպից կոչեցեր զնոսին սպասաւորս և զլխաւորս յատուկ մատակարարութեանց. իսկ զատրնային ծընունդս մահկանացուաց տիրական և աստուածական պաշտելի անուամբդ պերճացուցեր: Ընցեալ վերստին ըստ սահման կշռութեան չափոյ, լցնեցեր քեզ կտակս գրոց ճառից անբաւից զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութեանն: Եւս և 'ի մարդանալդ քո միդ յէութենէն, ոմանց վասն ինքեանց և կիսոց վասն այլոց զեղեր առատութեամբ զտուրս կենաց, արուեստըս բազմօրինակս, սքանչելիս աստուածագործս, նշանս ճշմարտատեսիլս: Որպէս զի թէ անդամալուծին պակասելոյն 'ի հաւատոյն՝ հոգաբարձայն առաջարկու-

թեամբ զցոյցս յուսոյն՝ զթսցեալ ողորմեցար, և ո՞րչափ զօրեսցէ առաւել բան քո ամենակար առ ախտալից մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչման. քանզի արդարև մեծ են չարիք հրաշից, քան զանմաքրեալս հոգի սուրբ հաստել, զլուացեալս պատկեր անտիրելի աղտոյ ներգործել. նաղի և երկրորդս առաւելութեամբ յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառս հայրենի բարձրացուցանէ։

Բ. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցելոյն քոյ նախատպաւորեցեր Մովսէսի. դու ես, որ 'ի մեղս և յանօրէնութիւնս վերակացու եղեր տոհմին Յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի ընդ խաւարն հեթանոսաց ընտանենային։ Դու ես, որ օրէնսդէտ առնես զմեզաւորսն 'ի ճանապարհի, ըստ բանի երգողին Դաւթայ. դու ես որ փոխատրես զքարեղէն սրտից կարծրութիւն 'ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան բանի ընդունելութեան։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբոլանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

Գ. Օ օրհնեալ քո շրթանցդ զաշխարհաստեղծ բերանոյդ զաստուածեղէն անձրևացդ զկեցուցանողդ կաթուած մատո լսելեացս դրանց բացարան, որով զօձին խորամանկութիւն բանսարկուին թիւնից բարձցես և բժշկեսցես։ Ամենակալդ ձեռօք զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դատարակեալ զպատշաճականն՝ մի յանդգնաբար խօսելով իբր զնախնին լքայց 'ի յուսոյդ, և անբաւութեան մատնեցայց վանեալ յորսողէն։ Ոուսաւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութեանն շիջեալ լապտեր

շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեցայց։ Արդ զանօրէնութիւնս իմ, տէր, և ընկեա 'ի խորս ծովու. որ է փոքր առակ մեծութեան քումնքաւութեան, ըստ մարգարէին, զիմս ընկղմել չարութիւն։ Կանգնեա կործանեալս անձին նշան վստահութեան, զի մի յուսահատութեանն կոծող կառուցեալ զծածկեցելոցն բողքեսցէ։ Բաց, հզօր և գթած, ըզբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութեան կորուսչին սերմանց՝ մանկաղակամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես։ Դէմ եդեալ հետևել առ քեզ բոլորից աստուած՝ պետրոսեան օրինակութեամբն, 'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ. մատո ժամանեա զաջդ կեցուցիչ յօգնականութիւն ինձ սասանեցելոյս։ Ընդ Քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս ասպականապաս կաղկանձողական ամենաթշուառվտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի 'ի բազմազեղդ քո սեղանոյ մանաւորեսցես։ Արա փրկութիւն նիւթոյ խորանիս որդւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս։ Զի քո է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն, և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն, և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԼԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԴ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ քանզի անթիւ են յաճախեցեալ և գերազանցութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շնորհաց առ պարտուցս իմոց առաւելութիւն, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն։ Ո՛վ ափդ ամփոփիչ ամենից հոգւոց գոյից արարիչ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուեր, զի զձեռնարկութիւնն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես։ Ո՛վ ընթացողականդ լծակցութիւն երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութիւն թշուառացելոյս գրաւականեսցես գթածաբար։

Բ. Որ գօսանալ ձեռաց կռփողացն հրամայեցեր օրհնեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առ ժամայն չորացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես։ Որ դատողացն ապիրատութեան զխոստովանեալդ աստուած սպառնացար, որ զարուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին բարութիւն հանգստեամբ հանդերձ գործեսցես։ Որ զհայհոյչացն հնարաւոր չարաբանութիւն կապեցեր, որ զլուսնին պատկեր երանգաւ արեան գուներ, զի զանհամարձակ լեզուս 'ի գովեստ քեզ զօրացուսցես։ Որ նախատողացն մոլեգնութեան սաստեցեր, որ զտաբերս սասանեցեր, զի զթշուառացեալս գլուխ գթու-

թեանդ օծմամբ իւղեսցես։ Եւ 'ի մոլորեցուցիչն կարգալ զքեզ աստուածասպանիցն՝ զօդուած ծնօտիցն բաժանեցեր քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրութիւն վիմացն հերձեր, զի զանուանակս բարեաց հոգիս՝ 'ի բերմանէ ընդունայնութեան ողորմութեամբ հանդարտեցուսցես։ Եւ զպահապանացն սուրս ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութեան արժանացուսցես։ Եւ 'ի կնքելն զշիրմին փականս կենդանակիր քո գերեզմանին՝ անդրէն յոլսայսեալս զնոսին յանդունդս երկրի սուզեցեր, զի 'ի տապանակի անձինս զնշխար լուսոյդ հանգուսցես։ Եւ 'ի համբառնալն զքեզ կորուսեալ, և իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենապատ զսերմն ծննդոցն կրճատեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրութեան բարեաց՝ անկորուստ և անփնասելի ընդ փրկեցելոցն հաղորդեսցես։ Եւ յարծաթոյն կրկնակապէն կաշառաձգութիւն, որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց քեզ գրաւ մատնութեան և անարգութեան մանաւորեցին զուրացողացն մոլեգնելոց, ըստ հին հարուածոյ հանուոյն Մովաբու՝ 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի հաստատութեանց և ընդ իշխանութեամբ մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ, 'ի հաստատութիւն վիմիդ կառուսցես։ Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամենայնի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգեւաց առ իմս երախտիս, ով ամենագութ բարերար գոլեալ եւ ամենազօր, թէ եւ սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ արքայազունք են եւ իշխանականք ինքնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհից, մեծափառք, լուսանորոգըք եւ հրաշապատիւք. յաղթողական վերամբարձութեամբ դրօշիւք հռչակեալք ըստ գլխոց գլխոց պսակապաճոյճ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց, համբոյրս հեզս երջանիկս եւ խաղաղականս աստուածային հարազատութեանց այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթո տէր զզօրութիւնս քո, եւ եկ կեցուցանել զմեզ. որք յոյժ զօրեն հալածել զմեղս, եւ զանյուսութեանն կարկուտ հալել եւ փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ բարուոյն աստուծոյ։ Քանզի եւ զընաւն այսքանեացս ձրից որ 'ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ տկարիս, թշնամւոյս եւ ապախտաւոր ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ համարձակեցայց ոք զօրել խօսել, զսակաւս 'ի բազմացն քան թէ զխկութիւն համանգամայնիցն. առ այսոսիկ զառաջին նիւթն յիշելով յորմէ հատեցաւ, իբր զտկար ոք նկուն 'ի զօրութենէ մեծէ հեղքեալ պարտեացի։

Բ. Այլ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ ընդնոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և կատարելութիւն հաստողիդ, և առ բարիսն իմ չարժանութիւն, սակայն ամենալոյս աննախանձ և բազմազեղուն գոլեալ պարգեւութեանդ զօրեղութեան վանեալ են կարծրութիւնք արտաքերութեան սրտի բանսարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վհատութեան, ըսպառմամբ խոպանացման աղբերացս երկուց, որ 'ի զգայականս Եդեմայ բղխել պատրաստեաց տնկողն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ 'ի յիս բարեգործութեան կենսատունկն դրախտ, ահա մի ցամաքութեամբ արտասուացս՝ աղանդահնար պատրանօք չարաչար խորամանկեացէ վերստին հանել 'ի փափկութենէ նախնում վիճակին։ Իսկ յորժամ կացցէ աստուած համբարձեալ հրաշիւք արուեստից 'ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղաղութեամբ, բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամենայն վնասակարութիւնք խարդախութեանց և կարծմութիւնք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բախեցեալ ցընդին, ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ հողոյ խորտակմամբ փշրեալ։

Գ. Արդ չէ իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին Յոբայ՝ 'ի մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին հրամանիդ, մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս, սոսկմամբ սասանեալ յամենայն կարծեաց. ապաւինիմ և արդ անձամբ բեկելով 'ի յոյժ հաստատութեան կենդանի աներծ. զի ողորմութեամբ նայեցեալ 'ի յիս իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ ապաձեռն անթաշակութեամբ, զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթափմամբ աչաց ընդ միջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես։ Ս Երացս

յինէն, աղաչեմ զքեզ, խաչիւդ լուսոյ զխեղդ վտան-
գիս, հոգարկութեամբ տրտմութեանդ՝ զտարակուսելի
տխրութիւնս, փշանիւթ պսակաւն՝ զբողբոջ մեղացս,
զարկուածով գանին՝ զհարուած մահուս, ապտակին
յիշմամբ՝ զկարիս ամօթոյս, Թշնամանօք Թքոյն՝ զան-
գոսնելի գարշութիւնս, լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս
դառնութիւն։ Ահա քո են այս ամենայն բարութիւնք
անբովանդակելիք՝ աստուծոյ միոյ միածին որդի. առ
որովք զչարութիւնս իմ յիշատակեալ՝ զամէնօրհնեալ
անուն քո կարդամ բարձր աղաղակաւ իմանալեացս
պաղատանօք։ Տես 'ի խոստովանութիւն զզջման պար-
տութեան ամաչեցելոյս, և տուր ողորմութիւն որդւոյս
սատակման մահուն անմահի. զի 'ի բազմութեան իմոցս
մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւե-
լութեամբ՝ քո ողորմութիւնդ աւետարանեսցի, հրա-
չակեալ հնչմամբ ահաւորութեան յերկնի և յերկրի։
Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս.
ամէն։

ԲԱՆ. ԼԶ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՅՑ արդ որպէս երբեմն յայլ ընթերցուածի
որ 'ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն զխաւա-
րային ծնունդս գլխաւորացն օրինացն մարմնականացն
անդամոց գրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու,

նոյնպէս և յայսմ սահման ընտրութեան բանի զլուսածնելոյն զազատարարն օրէնս հոգւոյն կենաց որ 'ի տէր Յիսուս՝ յիշատակեցից նուազս յոքունց, եթէ յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ։

Բ. Քանզի են արդարև կայսերականք ոմանք 'ի բարձրութեանն գահի բազմեալք, Թոշակաւն շնորհաց լցեալք և հաստատեալք։ Թագաւորն և սիրեցեալք իւր, արքայն և պատուաւորք իւր, պսակեալն և իշխանականք իւր, բարեհռչակեալն և հնչմունք իւր, յաղԹողականն և փողք իւր, զօրաւորն և մարտիկք իւր, գովեցեալն և փառք իւր, փեսայն և պարաւորք իւր, դշխոյն և օրիորդք իւր, փեսաւէրն և հանդերձանք իւր, ազատութիւնն և շնորհք իւր, այցելութիւնն և ձեռն իւր, խոստումն և քաւութիւն իւր, պահպանութիւնն և աջ իւր, պարգեւն և զարդ իւր, նշանն կենաց և ամրութիւն իւր, կնիքն և նկարագիր իւր, ամպն և հովանի իւր, արուեստն և հրաշք իւր, հոգին և անեղծութիւն իւր, բանն և կատարած իւր, ուխտադրութիւնն և լրումն իւր, զօրութիւնն և հրամանք իւր, լուացարանն և սքանչելիք իւր, մանանայն և անապականութիւն իւր, վէմն կենդանի և վտակք իւր, սիւնն հրոյ և ճառագայթ իւր, որոտումն և ազդմունք իւր, յոյսն վերին և փրկութիւն իւր, ծառն օրհնութեան և պտուղք իւր, բարունակն և բարութիւնք իւր։ Լաւ զի մի զբնաւն ասելով յամենայնէն վրիպեցայց, եթէ յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն, 'ի շատն ասել լռեցից և 'ի սակաւն ժամանեցից, բաւականացեալ ամէնապիկար կարիւ։

Գ. Բայց աւաղ յաւէտ աստանօր Թշուառացելում եղկելի անձինս, քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս բողոք գուժիս. վասն զի ընդ այսոսիկ առընԹեր սոյին գայ արդարութիւնն և կըշիռքն, վճիռն և հատուցմունքն, քննութիւնն և լոյսն,

յանդիմանութիւնն և ղամբարքն , մերկութիւնն և պատկառանքն , յայտնութիւնն և ամօթն , ամբիծն և վաստակքն , թիւրեալն և պատիժքն։

Դ. Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս , քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ մանգաղն առ հունձն , դատաւորն առ ատեանն , հզօրն առ բեմն , սպառնացեալն առ կորուստըն , բազուկն առ դատաստանն , գաւազան խրատուն առ հարուածն , սպառազինութիւնն առ նախանձն , հովիւն առ ընտրութիւնն։ Քանզի բանն զոր խօսեցար ընդ իս , նա դատի զդատապարտեալս 'ի վերջնումն աւուր հատուցմանն։ Այլ կանխեա , բարեգութ , նախընծայ քաղցրութեամբ առ նուաղ հեծութիւն վարանական երկիւղիս , և զօրութիւն ընձեռեա ձեռամբդ օրհնութեան 'ի յետին տագնապիս առաջինդ քո օգնութեամբ մխիթարել , բժշկել , քաւել և կենագործել։ Եւ քեզ փառք յամի յաւիտեանս յաւիտենից . ամէն։

ԲԱՆ. ԼԹ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի զկերպարանն առաջին լքի 'ի վնասակարին թելադրութենէ իմոյս ծուլութեամբ կորուսեալ իսպառ , ցուցից արդ այժմուս զհնոյն յիս տեսակ . ողորմելի հեծութեամբ թախծեալ 'ի հոգի , անաչառ խայտառականօք հրապարակաւ 'ի յեկեղեցիս բազմութեան ազգաց վերապատմեցից բարձր ձայնիւ ,

բարբառով մեծաւ աղաղակելով։

Բ. Մ՛ատեանս շնչական բարդեալ 'ի յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս , ըստ տումարի տեսլեանն Եզեկիելի , քաղաքս անպատուար և անմահարձան , յարկս ունայն 'ի դռնափակաց ամրութեանց , աղս տեսակաւ այլ ոչ համեղութեամբ , ջուրս աղտաղտին անախորժելի ծարաւեաց արբման , գետինս անօգուտ հերկագործութեան , սահմանս լքեալ հեղեղավայրս կնիւնոյ , խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս , աստուածախնամ երկիրս անձնաւոր՝ որ բանսարկուին պատրանաց մշակեցայ , և զընծիւղ փայտս պտղալորոյս , հատանելի ծառս ունայնաբոյս , կրկնամեռ խօսուն տունկս անյոյս , ամենաշէջ ձիթաստանս անլոյս։ Արդ վերստին առ սոյն բերելով զայս նմանութիւն աւաղականաց , բազմօք կրկնեցից . որ ամօթոյն դառն պատուհաս պահեալ կայ հիքոյս , կրճումն ատամանց և անհատ լալումն աչաց եղկելոյս , հայրական ցասումն անսպուժելի՝ դառնութեան որդւոյս , ապականութիւնն աննորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս , նոր կշտամբութիւն գտողին չարեաց՝ ախտացեալ հոգւոյս , տարտամ տագնապի տարակուսանաց՝ ելից գերելոյս , զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառացելոյս , 'ի խրձունս որոմանցն վկայելով՝ վտանգեցելոյս , 'ի ձայն ահարկու զանբժշկութիւնն ազդել լքելոյս։

Գ. Ո՛հա արդարև երգս կատակերգութեան ջնարահար պռնկի , յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և զկծեցուցիչս , ըստ առակաւոր բանին Եսայեայ՝ որ 'ի պատգամին Տիւրոսի։ Ո՛ի թէ նա զդիպուածն փոքր անցից ապառնեացն 'ի մօտոյ իմն տպաւորեալ , բողոքէր դիմակս դիմակս կերպից կերպից աւաղականաց , ըստ կոծողացն կարգաւելոյ , իսկ առ իս ո՛րչափ և ո՛րպիսիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս . որ զաղտեանն տեառն սպասեալ առանց վրիպանաց , մր-

նացի անպատրաստ և անհանդերձելի։ Արդ եթէ ընդդատաստանացն ահաւորութիւն կրկնեցից, բազմացուցից ինձ աշխար. ապա եթէ զփորձն խոկութեամբ ցուցից, յաճախէ ինձ երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զայնս և ոչ անագան ապաշաւեցի։ Այլ խնայեա յիս, գթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգև Քրիստոս թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Խ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՄԵՆԱԿԱԼ աստուած բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վտանգի, և յերկիւղէ տագնապի ապագայից կարծեաց փրկեա կարող զօրութեամբ զերծեալ 'ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մեծութեամբ և իմաստութեամբ անսահմանելեաւ։

Բ. Եւ քանզի ուշիւ մտացս տեսեալ 'ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ, նկատեմ ինձէն աստանօր կանխաւ զտիւն լուսոյ սրբոցն յուսոյ, զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յէիցս առ պատսպարան փախստեան. ոչ անդունդք խորոց, ոչ վիհք վհից, ոչ բարձրութիւնք լերանց, ոչ անձաւք քարանց, ոչ կարծրութիւնք արձա-

նաց, ոչ ծերպք ծակաց, ոչ փապարք փոսից, ոչ սորք հեղեղաց, ոչ բաւիղք խորշից, ոչ շտեմարանք յարկաց, ոչ ծածկութիւնք սենեկաց, ոչ եմակք հովտաց, ոչ ծործորք դժուարաց, ոչ վերադրութիւնք բլրոց, ոչ արձակմունք շնչոց, ոչ անբաւութիւնք ծովուց, ոչ սահանք յորձանաց, ոչ հեռաւորութիւնք եզերաց, ոչ ողբմունք ձայնից, ոչ հեղեղք արտասուաց, ոչ տատանմունք մատանց, ոչ համբարձմունք ձեռաց, ոչ պաղատանք շրթանց։

Գ. Այցելիկ սաստկութեանց մասանց անձողոպրեեաց դու ես, տէր Քրիստոս, հնարք և դադարք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ, արդ հայեա 'ի յանզերծ վտանգիցս շրջադրութիւն՝ միայնդ քաղցր առ ամենեսեան։ Խզեա սուսերաւ յաղթական կենաղէն խաչիդ զցանցս վարմիս, որ յամենայն կայից պաշարեն 'ի մահ զգերիս, և հան 'ի յանդորր զոտս սասանեալ թիւր ընթացողիս։ Բժշկեա զհրատապ ջերմնական տոչորումն մղձկեալ սրտիս, մերժեա զդիւային չարահնարութեանս շշուկ քո պարտաւորիս, հալածեա զյուսահատ անձկութեան հոգւոյս մթութիւն չարի կենակցիս, ցրուեա զծխամած թանձրութիւն բռնութեան մեղացս երևոյթ մռելոյս 'ի յիս, կորո զզազիր թխատիպ կրկցս ապականութեանս կարիս։ Նորոգեա զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց մեծութեան անուան հզօրիդ յոգիս, զօրացո ըզշնորհիդ փայլումն 'ի գեղ դիմացս և 'ի կերպարան տեսութեան մտացս հողեղինիս, յարմար յերիւրմամբ կացո յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութեամբ զտեալ զմռայլս մեղաւորիս, աստուածային կենդանի աներծ երկնաւոր լուսովդ քո ծածկեալ յօրինակս երիս։ Զի դու միայն ես օրհնեալ ընդ հօր 'ի գովեստ հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. Խ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՈՐԴԻ *Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքննելին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ. որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տրտմութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի։*

Բ. Որ *ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննելի, 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս, և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։*

ԲԱՆ. ԽԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր աստուած գթութեան, փրկութեան և ողորմութեան, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան և առողջութեան, լուսաւորութեան և կենդանութեան, յարութեան և անմահութեան, յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենաստեղծ, կենդանի, գովեալ, ամենակատար, մերձ 'ի հեծութիւն համայն եղելոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո և ոչ կապեցեալ, ոչ կախեալ և ոչ բևեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ և ոչ անարգեալ, ոչ լլկեալ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ և ոչ մահացեալ, և արքայութեանն արդարոց մասին անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենին ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոց, փառաւորեցեր առ յոյս փրկութեան իսպառ լքելոյս։

Բ. Օրհնեալ օրհնեալ և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք կանգնեա 'ի կործանմանէս, բարերար. բժշկեա 'ի հիւանդութեանցս ախտից, ողորմած. յեղերաց մահուս դարձո զիս 'ի կեանս, կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նմին, ապաւինութիւն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո, յարութիւն, կեանք, անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, աջ ամենազօր, ձեռն ամէնիշխան, մատն ամենամերձ։

Կամեաց տէր և փրկեցայց, ակնարկեա միայն գթութեամբ՝ և արդարացայց, ասա բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց, մոռացիր զթիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայց, առատաձեռնեա՝ և արդէն 'ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԽԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ 'ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՈՒԺԳՆԱԿԱՆ կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ պատճառ կենաց անախտականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յիսուս Քրիստոս. աստուած ամենեցուն, իմանալեաց և տեսականաց. ահա դու 'ի յիս ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութեան, առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին ողջացեալ շնչով և մարմնով, ամենայնիւ կարող և անվանելի։

Բ. Որ ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութեան, ոչ փոփոխս մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ սրագործութեան, ըստ երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վրիպութիւն և ամենասխալ տարակուսութիւն։ Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայնն հնարաւոր

է, իմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամքն կատարեալ է, քո կտակն աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն շնորհ է։ Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուազութեամբ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ, ոչ վրիպեալ 'ի բարկութենէ, ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ, ոչ սխալեալ 'ի խստութենէ, ոչ ամբոխեալ 'ի խռովութենէ, ոչ դըղրդեալ յանգիտութենէ, ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ պակասեալ 'ի բարձրութենէ, ոչ լքեալ յայցելութենէ, ոչ տկարացեալ 'ի փրկութենէ։ Դու սկիզբն և լրումն ամենայնի, և 'ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԽԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՍՏՈՒԱԾ անսահման, ծնունդ աստուծոյ հարազատ անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց, Քրիստոս Թագաւոր, լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց. ընդ մեզ լըմամբ և ընդ առաքչիդ խոկութեամբ, մերայնովս զքոյինդ ծանուցանող հրաշապէս։ Հայր քո օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ, ում փառակիցդ ես արարչութեամբ. այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ,

մինչև զքեզ իսկ մատնեաց մարդկան։ Իսկ դու կա-
րող գոլով 'ի վեր քան զմիտս, զտնտեսութեանն ա-
ւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումս
զմահուն ճաշակել բաժակ անմեղի մարդկութեամբ և
անպակաս աստուածութեամբ։ Նա և հոգիդ սուրբ կեն-
դանարար՝ որպէս քո և հօր քո խակակից, և համապա-
տիւ էութեամբ ծնողիդ և ծնիցելոյդ։ Մ՛ի Երրորդու-
թիւն կատարեալ 'ի դիմաց երից անորոշելի հաստուա-
ծոց, անսկիզբն և անժամանակ, բնաւին բարերար,
համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ
գոյից և յօրինիչ ամենից, անքակութեամբ և միով բը-
նութեամբ փառաւորեալ։

Բ. Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէ-
ութենէ՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմի-
այնակ ծնունդդ յանքննին ծոցոյն, ոչ անխնայեալ յոր-
դիդ 'ի համապատիւդ և 'ի սիրելիդ, այլ կամաւ նուիր-
եաց մահու չարչարողացն զինու, ըստ մարգարէու-
թեանն Զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ
հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ
ոչխարացն հօտին, որպէս օրինակն նուրբ նախագրին և
ուխտագրութիւն խորանին և նուիրումն արեան սպան-
դին և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին,
զփրկութիւն թշուառացելոյս 'ի կամաց կեցուցչիդ յա-
ռաջագոյն նկարագրէր. և արդ հի՞մ տրտմիս անձն իմ
կործանեալ՝ ոչ յաստուածուստ հնարաւորութեանց,
այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութեանց. կամ ըն-
դէ՞ր զիս խռովես՝ յուսահատութեամբ սատանայակա-
նաւ զմիտս հարեալ. յուսա յաստուած, խոստովան լեր
նմա, և նա հոգա վասն քո, ըստ դաւթեան սաղմոսին,
և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի։

Գ. Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստողին 'ի վեր է
քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և երկ-
րականաց. և եթէ բիւրս կրկնեցի, ոչ լինի չափեալ.

քանզի անքովանդակելոյն և բարերարին է անճառելի։ Նա զի ումն օրհնեալ զումն օրհնաբանեալ յեռորդական համագոյութենէն առաքեաց. իսկ նա 'ի հաճութիւն կամաց առաքչին մեռաւ. և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութ՚ի՝ մեծաջան բաղձանօք մաղթէ։ Իսկ համաբարբառ միակամութեանն ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներգործել, որպէս հոգին կենդանւոյն և բանն բանականին, պայծառութիւն փառացն և կերպարան էութեանն։ Նա կեանս փոյթ, առ ողորմութիւնն ըսթափ, առ ձեռնկալութիւնն պատրաստ, առ փրկութիւնն կազմ, առ առատութիւնն յորդ, առ յաճախութիւնն զեղուն, առ անբաւութիւնն լի, առ աննուազութիւնն փարթամ, առ երկայնմտութիւնն ճոխ, առ անհասութիւնն բարձրեալ. մի Երրորդութիւն կատարեալ 'ի յանձանց երից, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԽԶ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ յոյս բարեաց տնկեալ 'ի սրտի՝ անձն իմ կործանեալ, և գտեալ հաւատոց պնդեալ զերիկամացնդ երկակի մասունս՝ զկրկնապղտոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովան լեր բարերարին աստուծոյ՝ զմտացդ իբրև զգործոց, զխորհրդոցդ իբրև զլրութեանց, զանտեսիցն իբրև զյայտնեցելոց, զորոդ

ծածկութից իբրեւ զբարբառումն ձայնից, զանձնարկութեանցդ իբրեւ զարդիւնականաց մեղանաց, զազդել շրթանցդ իբրեւ 'ի գլուխ ելելոց չարեաց, զոտիցդ հետոց իբրեւ զպատուիրանաւն աստուծոյ վազողաց, ըղձեռացդ ձգումն առ ցասումն իբրեւ 'ի հեղումն արեան գործողի, զծիծաղելն բնաւին իբրեւ զկամաւորական լքումն շնորհի, զերդմնականն՝ որ թէ 'ի հանդէպս թէ 'ի տարադէպս՝ իբր զգործակցութիւն խաբողին, զամբարտաւանութիւնն իբր զհին կործանիչ նախաստեղծին բարձրութեան, զարտին նեղութիւն իբրեւ ըղձերութիւն հաւատոց, զմեղկութիւնն իբրեւ զպարտութիւն զօրաւորին պնդութեան, զտրտունջն առ վտանգս կրից՝ իբր զուրացութիւն ուխտին որ առ տէրն, զապարասանութիւնն իբր զթոռն իմն անգթութեանն, զամբարհաւաճութիւնն իբր ոչէիւք առ վեհան գոռոզութիւն, զհպարտութիւնն իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց, զակամայից ընդ կամաւորացն, զըռնացելոցն ընդ հաւանականացն, զեկամտիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնսն ընդ ապաստուածութեանն, զփոքունսն ընդ սաստկագունիցն, զնուազունսն ընդ յոլովիցն, զանճառիցն իմոց իբր զճառելեաց գիտողին, զանգրելոց փաստուցն իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան մագնեստիս վիմի, զթեթեւագունիցն առ խտիր մտաց իբր զատուար ծանրութիւն բեռանց, զխնդիր չափոյ ծածկելոցն իբր զճշդով պահանջումն ստերն սակի 'ի բերանոյ կլտին կորիւնի չորեքդրամեան կշռութեամբն, զանդնդականացն գործոց իբր 'ի յականջս աստուծոյ արագ ժամանելոց։ Ո՜ այսոսիկ յաճախեա կուտեա կրկին յանձնառութեամբ, վերըստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զչէոցն իբր զեղելոց, ընծայեալ աստուծոյ զպարտութիւն վանեցեալ անձինդ. զի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօ թողութիւն պարտուց մեղաւորին, զոր տէրն արդա

բացոյց և հրաշափառապէս հռչակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ զղջմանն քան զպարսաւանս մեղացն։

Բ. Յարդեա և դիզեա անձինդ մեղապարտի բամբասանս յոքունս զքոյն խոհերս բազմամասնեայս, անձն իմ կշտամբեալ յոքնախթանդ բանիւ· զչարութիւնն, զանօրէնութիւնն, զվրիպութիւնն, զառ 'ի մարտին հանդիսէ փախուստ, զպարտութիւնն, զմոլեգնութիւնն, զամբարշտութիւնն, զապշութիւնն, զթմբրութիւնն, զքունն արթնական, զառ 'ի յընթացսն զնիրհումն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրութիւն, զզազրութեանն հաճութիւն, զյամենայն 'ի նմին, զփափագելն աստուծոյ ատելեացն, զաներկիւղութիւնն, զանսաստութիւնն, զանհարթութիւնն, զթերութիւնն, զթիւրութիւնն, զլուծութիւնն, զճշդութիւնն· զանկապ արձակումն, զծիծաղականսն, զվընջողականսըն, զկատակերգականսն, զգայթագղականսն, զպատրողականսն, զանդէպ քաջութիւնսն, զանյարմար մարտսըն, զառանց օրինի արիութիւնսն, զխեղդմունս հոգւոյն, զտատանողականսն զերկչոտութիւնս, զբազմատեղնեան ճիւղսն զրահետականս, զանպատկառ փարքմունսն, զգժտութիւնսն, զգժդմնութիւնսն, զանդատ ատելութիւնսն, զմարմանջմունսն դիւրըմբռնողականս, զփոքունցն զանկշռութիւնս, զխոստմանցն դժրողութիւնս, զուխտիցն մոռացութիւնս, զնմանեացն այլակերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեանն մոլորութիւն, զյօնիցն յաւակնութիւն, զապիրատութիւնսն, զինքնասիրութիւնսն, զնախագայլիցն տենչութիւն, զհատուցանելն եղեռնականացն, զնոցինն զանշահ աղճատանսն, զվայրապար բերմունսըն, զընթացակցութիւնսն խորամանկութեան բանսարկուին, զբանին սերմնակաթութիւն, զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն,

զհայրենեացն ծախս , զկապարանն ձգողական , զփոկով ընդ երնջոց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւնս , զյարաթաթաւ տղմաբնակութիւնս զլքումն լաւացն , զընթադրութիւնս անկարծիցն , զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական , զնորոգ մտացն , զօտար խորհրդոցն , զանկայուն կամացն , զհաճման հաղագին , զէութիւն շնչոյն , զեւն քան զսահման կանոնացն դրութեան՝ զիշխանականին զամենասփիւռ բացարձակութիւն , և զոր չէ ճառելի և կամ գրելի և կամ պատմելի և կամ յերեսս դիմաց բերելի։

Գ. Նաև արդ զի՞րդ բժշկեսցիս , անձն իմ եղկելի , 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ , բարձեալ թողեալ այր մի տարադիր անողջանալի . ըստ մարգարէին . քանզի մի 'ի վերագրելոցդ բաւականապէս զօրէ սատակման , թող թէ այսքան դասք սպանողաց դժնէից դահճաց շուրջ պաշարողաց։ Մանաւանդ զի ոչ այսու և եթ նմանադրութեամբ կշռի տարացոյց տարժանեցելոյս , այլ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի սորին մասունս ծայրից տոնոցն զօրհասական թոյնս բերելոց , և յաման մաշկեղէն արկեալ ամփոփէ զելլիցն շաւիղ կապարանին շրջափակութեամբ , ցուցանի արտաքուստ բարիոք , իսկ 'ի ներքուստ համբարք չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և գործօնեայք սատակման և մշակք մահու։ Արդ այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեան տաժանեաց թշուառաքիրտն թոշակք , անձն իմ պարտական կրկին սատակման . որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ , զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս . ով այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ , բնաւին ատեցեալ , սիրողդ մտացդ ախորժմամբ զլցեալսն ամենայն անառակութեամբ , և զոր առասքեալ ցուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց , սաստուս սկսեալ մինչև 'ի կատար

կանոնի այնր պայմանի , և որ հասեալ են , ասէ , յաստուածոյ իրաւանցն վերայ , եթէ ոք զայսպիսան գործեն և կամ կամակից են , արժանի են մահու։ Արդ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սատակման 'ի մահ դատապարտութեան . այլ անխայեա՛ յիս ողորմութեամբ՝ բարեգութ , կենդանի , հզօր , կամարար , կարող , հնարաւոր , օրհնեալ յաւիտեանս . ամէն։

ԲԱՆ . ԽԶ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա . Արդ մխրճեալս ես յաւէտ ամենապատիժ , միշտ դժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ , արածողս զերամակս զազիրս վայրագասունս խոզից արօտականաց գարշութեան մեղաց նախատ վարձկանութեանց , հովիւս տածողական զհօրանս ուլուցն ամայաբնակաց 'ի վրանս հովուացն , ըստ երգոյն երգոց առ իս առակին . որ ոչ իսկ ծանեայ զիս երբէք գիտել , թէ յով և յոյր պատկեր և վասն որ գոյացայ։

Բ . Ահա 'ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց , ըստ ձևոյ հրեշտակի կառուցար , իբր 'ի թռիչս թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել , ով յիմար , զիա՞րդ քեզէն կորացար յերկիր , զաստեացս միշտ հոգացեալ զխորուածս , ընդ ցիռս անապատականս համարե-

ցար։ Իբր զձիրատ բազմաբերանեան 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորութիւն, զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի օտարասցիս զաստուած տեսանել, և զմնացականացն իմաստասիրել։ Բանականութեանն յարդանօք կրկին ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեանն որ առ քեզ եղէն՝ անարգել լեզուով խօսեսցիս։ Ձեռինդ հաստմամբ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել ըզտնտեսութիւն, իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն աստուծոյ՝ աստուած կոչեցար։ Երից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ զգայութեանց, զի մի և երևելիդ նիւթականութիւն քումդ տեսութեան՝ մտացդ դիտման անդատ եղիցի. զի ոմանք սուրք են և զօրաւորք, և այլք փոքունք են և պիտանիք, կէսք կարծրակերպք և ազդողականք, են և գողտրականք և պատուականագոյնք, դարձեալ կարեւորք և պատկառելիք։ Իսկ Թարգմանութիւնք սոցին տեսութեան 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի անձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց և շարունակ հետևման աւուրցն առ պսակ ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի։

Գ. Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի. իբր զի առանց բնաւից զուգամասնութեան կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն, միաւորեալ է հաստուածոյն անպարտութիւն յանուն Քրիստոսի ժողովելոցն. որպէս 'ի հաստումն և 'ի նուազութիւն միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմութեան մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութիւն

պատկերին յանարգ փոփոխութիւն։ Եւ արդ այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութեամբ եղական պատկեր աստուծոյ՝ կշտամբեալ իսպառ ոգի իմ գերի. և թէպէտ յառաջին նմանութենէն կողոպտեալ դատար պատուիրանին յանցաւորութեամբ 'ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութիւն ես կերպարանին. և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր յԱդին դարաստանի. ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելից դուռն աղխեցեր. ընդէ՞ր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան զախտ արտասուացդ տարժանութեան. ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին դարշելի գործովք զաղրացուցեր. հի՞մ զեդեալ հանդերձին մեղաց պատմուճան անառակ վարուք քեզ արկեր. ընդէ՞ր զտանողացդ ոտից սրբութիւն ճանապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին զուխտազանցութիւն հին պատուիրանին. ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զԱդամ 'ի ծառոյն կենաց. ընդէ՞ր նենգեցեր քեզէն քո կամաւ զանստուեր յուսոյն յարակայութիւն. ընդէ՞ր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպաստեցեր. ընդէ՞ր զլինեցար ընդ դէմ քո ներհակ, ով ընդունարան խելագարութեան. ընդէ՞ր որսացար 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն վըստահութեան. ընդէ՞ր կարթիւ պատրանաց ածար հաղորդ մարմնոյ կենդանարարին։ Ա՛յլ վերստին յուսացեալ 'ի Նա կարդա նմա ապաւինելոյս, քաւիչ նորոգիչ փրկիչ կեցուցիչ և կենդանարար, ողորմած խնամող մարդասէր և անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Խ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զի՞նչ գոյ աւել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ եւ հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի, ըստ մարգարէութեանն խրատու, ահա 'ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս։ Իսկ եթէ զփականս շարժողութեան շրթանցս բացից, բռնադատեցից խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնական եղերերգութեան լալեաց բազմութեան խէթ մտացս յառաջադրեմ։

Բ. Եւ արդ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից եւ ես ընդ նմին. մեղայ տէր մեղայ, եւ անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիններորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակս անձինս մեղաց՝ քան զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ։

Գ. Մ՚եղայ յերկինս եւ առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց արտօսրածին ողբովք գոչման 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ, հայր գթութեանց, աստուած բոլորից, չեմ արժանի կոչիլ եւ ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ եւ անպիտան ապաբան վարձկան։ Ընկալ զսովեալս տարագրական, պարտական վնասուց. եւ զցաւ քաղցոյս ըկանաց նեղոյս

նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Եւ ընդ առաջ քո ողորմութեամբդ 'ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո, զթած և անոխակալ, անօրինեալս մեղապարտի զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան ամենառատ կամօք մատուսցես. զզարշապարացս թշուառութիւն մերկութեան ոտիցս՝ պատսպարութեամբ աւետարանական ամրամերարկու օդիցս կօշկաց 'ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես։ Զզուարակդ պարարակի եզինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ խնկապէս մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրեա. որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ 'ի լրութեան, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ, բոլոր յամենեսին և բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս և խնկութեամբ 'ի ստորինս, աննուազ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ. փշրեալ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ. քեզ փառք ընդ նմին, հայր ողորմութեան, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԽԸ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի, աննիւրհելի ակնդ նկատող, ծնող անքննելին փա-

ռաց միածնիդ. իրաւացուցես զինս ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս։ Զօնեա զկեալս կորուսելոյս մերնականացն պարերգութեամբ, աւետարանեա բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահացելոյս, զբարեբաստութիւն կամացդ յայտնեա գովեալ բոլորից գոյից եղելոց, ստացիր անուն քեզ անճառ և ինձ թշուառիս նորոգ փրկութիւն, կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան, զվճիռ հոգւոյս մահու ջրեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելւոյ, վստահութիւն փրկութեան բարեաց արեամբ Քրիստոսի քո նկարեսցես. ցոյց զսքանչելիս քո բարեգթութեանդ 'ի ճաշ հարսանեաց քում հարազատի։ Մ՛ի փակեսցես զխմելոյս առ քեզ զառագաստ սրահի կենացդ յարկի, մի՛ տրոհեսցես 'ի բազմականացդ և'ի բարեացդ քո զըրկեսցես, մի՛ պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութիւն, մի՛ կնքեսցես 'ի քսակ բարեացդ զզազրութեանց իմոց գարշութիւն, մի՛ երկարս ինձ զվէր մեղացս 'ի յախտալից մարմնիս ծածկեսցես, մի՛ զփտութիւն նեխութեան ցաւոցս ինձ տնկակից մահու մնացուցես, այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան զժանտութիւնն ապականարար, որպէս զի զատեալ 'ի հիւծմանց ախտից՝ առողջութեանն պատրաստեցայց. հնարաւորեա, գթութեանցդ հայր, մեծ խոցուածոյս զօրեղ սպեղանիս, կարևոր կործանմանս՝ բարի այցելութիւնս։ Ո՛ 'ի քո եմ, տէր ոգեսէր, թէ և առ մի նուազբիւրս մեղիցեմ, բայց ոչ գրեցայց համայն մեղուցեալ, տուիչ կենաց իմոց բարերար, 'ի շնորհ պարգևաց կենաց քոց ապաւինեալ. զի ճանաչելդ զքեզ բովանդակ արդարութիւն է, և գիտել զզօրութիւնդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ իսկ գրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո, ասէ, ամենեցուն, խնայել տայ քեզ յամենայն. և դարձեալ, մօտ է քեզ

յորժամ և կամիս կարող գտանել։

Բ. Ա՛յս սողմանի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ որ քան զնա ինձ զուգաշաւիղ. երբեմն որդի, ապա ատելի. երբեմն միջնորդ խաղաղութեան աստուծոյ ժողովրդեանն, և յետոյ խորոց որոշման բազում խռովութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և զօտարին անուն ծանուցեալ։ Ա՛նպատճառ օցտող, անկարօտ զրկող, անսովելի գող, գրդեալ տրտնջող, փափկացեալ փախստական, սեղանանենգ սարտուցեալ, անպատասխանի վնասապարտ, քաղցրանոյց հայհոյիչ, զաւակ հայրատեաց, կտակարանացն մատնիչ, Մոլեքի չարախօս, մոռացող երախտեացն, իմաստուն սխալական, ամենագէտ յանցաւոր, ամօթապարտ զղջացեալ, տարակուսեալ աշխատող, աղաչաւոր կռապաշտեալ, յամրային դարձաւոր, կաղակարծ ընկալեալ, կասկածաւոր հաշտութիւն, յապայս յիշատակ, յերկբայս փրկութիւն, չաւատալի գիւտ, 'ի մասնէ մնացուած, խարդաւանեալ գերի, կիսակտուր պրծեալ, կամաւոր անձնամատն, ամարդի յղփացեալ, բազմավրէպ հանճարեղ։ Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ամենայն ուրեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ և փոքր գովեստ՝ իբր 'ի վերայ ինքնագրաւ կորստականի, երգիծանութիւն խառնեալ ընդ աշխար. բան նորա թելադիր բարգաւաճութեան ամենայն հասակի, և խոտորումն նորին 'ի շրթունս բնաւից թառանչ թախծութեան ողորմելիս իմն ազդեալ։

Գ. Զարմանամ, վհատիմ տարակուսեալ ապշութեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պատահեսցէ. զիա՞րդ անկաւ ամբարձեալն, զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն, զիա՞րդ կործանեցաւ կառուցեալն, իբր օտարացաւ ծանուցեալն, զիա՞րդ զակատեցաւ զա-

ւակն ընտրութեան, զիա՞րդ սրացաւ մերձաւորն, զիա՞րդ աղօտացաւ փայլեցեալն, զիա՞րդ պատանդեցաւ ազատեալն, զիա՞րդ անօրինեցաւ ուսուցիչն, զիա՞րդ նուաղեցաւ հուչակեալն, զիա՞րդ անարգեցաւ փառաւորն, զիա՞րդ փոքրկացաւ մեծատունն, զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն, զիա՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրողն, զիա՞րդ ունայնացաւ պատարունն, զիա՞րդ կորեաց զուխտըն որ ընդ բարձրելոյն։ Պատկառեմ ասել, թէ և ընդ սնդարամետականին կապեցաւ. զի՞ կայր նորա և կռոց, ուստի՞ սէրն ընդ պատկերաց, վասն է՞ր կամքն ընդ խորանաց. զիա՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն Սամուէլի առ Սաւուղ եղեալ, հմայք, ասէ, մեղք են, և ցաւս և աշխատութիւն ածէ թերափ 'ի վերայ. զիա՞րդ ոչ հայրենի յանդիմանութիւնն, կուռք, ասէ, հեթանոսաց դևք և անշունչք են, և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա։ Տէր միայն ածէր զնոսա, Մովսէս նախագրեալ յառաջաձայն ձաղանօք սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա աստուածս օտարոտիս, զոր ոչ ճանաչէին հարք նոցա։ Ո՞ւր է մահամատոյց այլազնեայ արձանն փագովրայ, ո՞ւր տգեղն և անպանծալին Սիդոնացւոց իգական ամենանզով ձուլածոյն, ո՞ւր կանացի կերպին անդրելին խայտառակութիւն զազիր տեսակին, որով ամօթոյ մարգարէքն զանասնորէն գիմեցուին անխտրաբար յանուն չարութեան անժուժկալ դիւքն անաստուածաբար ձօնեալ մոլէին։ Տարաւ զէութիւն բարեբաստութեանն՝ որ զնախնին որսաց 'ի կորուստ, յաղթեաց մեծութիւնն իմաստից առաւելութեան, գերեաց գոռոզութիւնն, յիմարեցոյց փափկութիւնն, վանեաց արծաթն ծառայեցուցիչ, յոգի դատեցաւ զայրն տօնելի հին զէնն կործանողին, 'ի գրկացն աստուծոյ հանեալ՝ 'ի յոտս ստամբակին գթեցոյց, մեռոյց մեղկութիւնն, թմբրեցոյց ծուլութիւնն, արբեցոյց շուայտութիւնն։ Ով դիւրապատիր

մարմին երկրածին, որո՞վք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւնս, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց. վասն զի նուաւ է իմանալ, թէ անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստուծով դատեալ ընտրեսցի. որ զի թէ առ այս պայմանի յիմար ոք լիցէ, և 'ի հաստչին կամս յուսասցի, ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ։

Դ. Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի Սողոմոն զդարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կշտամբութեամբ, իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զիսկն ոք նկատեսցէ, Ունայնութեամբքն է իմանալի. այլ և 'ի մատեանս քահանայից և 'ի գիրս Աքիայ Սիլոնացւոյ, յորում զփոյթն իւրում ընթացիցն արտասուելիս իմն յեղանակէ. զուր ջան, անօգուտ վաստակ, անմիտ հետեւումն, անշահ արշաւանք, անկայուն երկք, օտարին իմաստք, ոչնչից յոլովք, բամբասելի բերք, անյարմար վարկածք, անտի սերմանիք, աւաղափուլ շինուածք, ապականացու ստացուածք, քամահանաց տաժանմունք, ինքնամարտ կռիւ, ընդ ոգւոյ իւրում դատ, ընդունայնաթոպ քիրտն, վնասակար վաստաք, կորստական շաւիղ, վրիպակ ճանապարհ, կործանական կրթութիւնք, մոլորապատիր վարժութիւնք, հանապազախաղ տեսութիւն, ակնայայրատ պչրութիւն, պոռնկակերպ կերպարան, ախտաբորբոք նիւթ, դժնեատեսիլ գոյն, յոքնատխուր դեղ, յոլովամեղձ ծուխ, շոգի ցնդելի, վաճառ մերձ 'ի յառ, տաղաւար քակտելի, ընդ վայր աղաղակ, անպատճառաւոր ծաղր, արհամարհելի ասպարէզ, անձնավաճառ գիր, սատակչական ելք, անաստուած մտածմունք, ստայօդ ճառ, զայրացուցանող զրոյցք, եպերանաց խծբիծ, խելագարութեան խնդիր, ամօթանաց ցոյցք, խայտառականաց յայտնութիւնք,

տուակ ապառնեացն , ապաշաւանաց գործ , ըմպահկա-
նաց պատմութիւն , հեղգացելոց , օրինակ , խոլխոլատ
ծածուկ , որս խաւարային , մահագուշակ վիհ , անյատա-
կելի անդունդք , ուղեկցութիւն սպանողաց , յիմարու-
թեան բարբանջմունք , դարանակալաց վայր , խարխուլ
յարկ , չինուած սասանեալ , կամուրջ խախտեցեալ ,
երեւոյթ փախչելի , խաբող շողշքորթ , անոպայ մատնիչ ,
ընդ դէմ բարձրելոյն հակառակութիւն։ Ո՛վ այս ամե-
նայն մասունս բանից խոստովանական կանոնադրու-
թիւն , 'ի սէրտս բնաւից նախասերմանեաց ծողոլողս
կանոնադիր դարձելոց զղջման . որպէս զի մի պարծեսցի
ոք 'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝
զանձն և զընկերն խոցոտելով . քանզի կռապաշտ է
քողով ծածկեալն , որ զկերպարանս միայն ունի , և զոչ
ախորժելիս ստեղծչին կատարէ։

Ե . Լո՛ւ արդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ որքան զղջա-
ցաւ , մի խոպառ պախարակեսցի . այլ յիշեսցի այրն այն
'ի բարի՛ , իբրև զհիմն յուսադրութեան 'ի տէրունի
ոտան դիմելոց , յորժամ հոգւոյն էջ յայցելութիւն
աստուածութեամբն անբաժանելեաւ՝ կենագործել
զանդ խոստովանեալսն . զոր մեռեալքն ահա կենդան-
եացս անտարակոյս բերին աւետիս։ Ընդ որում մաղթ-
եալ իմ պարտաւորի՝ իմաստութեանն ոչ ժամանելոյ ,
'ի մեղանայն մասն կարգեալ , բարեբանեալ մեծիդ պա-
ղատիմ . լից զնուազդ իմ բանագրութիւն 'ի յերջանկին
համձարեղութիւն . Նիւթեսցին ներկայիս հայցմունք
'ի բարգաւաճին յարգաւորութիւն՝ 'ի գերաշխարան
արքային աղերս . այցելութիւն խնդրոցս դիցի քո ընտ-
րեցեալ վեհ արքայորդւոյն , զոր միածնիդ օրինակեցեր։
Յարեանն կցորդութենէ դքո փառակիցդ ճաշակե-
ցաք . տուր փրկութիւն քոյոյ ծառային , ամենահնար ,
զօրեղ , ահաւոր , 'ի ստողծողիդ փառս աճեցուցեալ
զանքաւելի մեղացն ջնջումն։ Յիշատակաւ խորհրդոց

բարեաց՝ ընդ ողորմելովն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութեամբ զաստուածութիւնդ քո քարոզեալ 'ի մատեան լուսազարդ կտակի, եկեղեցւոյ ընծայեաց հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ, հայր: Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կալթուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ զձեպ զզջմանն փոքր ինչ կասեաց:

Զ. Արդ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմասնութիւնք, գգթութիւն քո ողջունեսցես. որով զկոչկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձգութեամբ, երանութեան վերարժանացո. որ յոքնահոսան արտասուաց ելւք զմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սաստկակսկիծն ապաշաւանօք, հօրն կրիցն գերազանցեաց ողորմելի ոգւոյն հեծութեամբ. զոր 'ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերովս 'ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտդ ներողութեամբ միացուցեալ խառնեսցես, գթած. և զանյարմարն առ նա կարծեցեալ զՍաղմոսին բարեբանութիւն, 'ի փառս էակցի որդւոյդ կնքելով նովաւ կեցուսցես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց: Զայս պուետիկոս ումն բարեշնորհ արգահատէր ընդ Սողոմոնի, ամենայնիւ փարձս փարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ տնտեսէ: Քանզի և Օստացւոյն 'ի նմանէ ստեղծեալն բազմահրաշաւորն մարգարէաճառն պատմագրութիւն աստուածութեանն արդարացուցիչ՝ զՍողոմոն ողորմեալ կարգէ. որ զի անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն նորին:

Է. Զոր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել

գոչումն . զի թէ կորուսցես զմեզ դատել ըստ գործոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս. իսկ եթէ գտցես, այնքան բարձրանաս, որքան մեծութեանդ քում վայելէ. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւ՝ ողորմածութեամբ, քան նախահրաման սաստկութեամբն։ Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութեամբ 'ի խնամս գթութեան ձրի եւ ամենառատ պարգեւօք սիրոյ մխիթարել յաւէտ զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տոչորման անբժշկականի։ Ձեռն եղեալ փրկութեան նորոգեսցես վերըստին, քաւեալ եւ պատսպարեալ 'ի մեղսակործանս խորտակմանէ։ Եւ քեզ միայնոյ սկզբանդ եւ անսկզբանդ, ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց՝ սուրբ Երրորդութեանդ եւ միում աստուածութեանդ փառք եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԽԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. *Զի արդ մի՛ տիրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում, աստուած բոլորից լուսոյ. մի՛ կապտեսցէ գողոյն ապըստամբ զզարդ փչմանդ շնորհի 'ի քո ստեղծեալս կերպէ . մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի առ 'ի դրաւել զիս 'ի նոյն։ Չիք իմ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բաց 'ի քէն, Քրիստոս, որ ան-*

բանդատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութեան, որ բառնաս զկարիս մեղաց ամենակատարդ բանիւ, որ արեամբդ քո ստացար և մարմնովդ կերակրեցեր. որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի, որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրելով, հօր քում մատուցեր ժառանգակցապէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղծիչ ամենից և կեանք: Դու ես աստուած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց քան զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութեամբք, ոչ զերկիրս և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւնք, ոչ զսահման լայնութեան ծովու և որ ՚ի նմա են եղելութիւնք, ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ և որ ՚ի նմա են անբաւութիւնք, ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք՝ որչափ առ իմս կարեկցութիւն, յասելն քո սուրբ մարգարէիւն՝ քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ո՜վ է աստուած իբրև զիս կարող թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս: Ահա արդ խնկեալ են բանք քո, ողորմած, և խոստովանեալ բարերարութիւնք, փառաւորեալ խորք խորհրդոյդ, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ:

Բ. Արդարև ոչ ոք բաւէ յէիցս թարգմանել խօսիւք նիւթական լեզուի ՚ի մասանց այտի քումդ գթութեանց զոր առ իս ցուցեր, յօրինիչ. քանզի և մեծ իսկ է զօրութիւն՝ զհնացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանդոյից ստեղծագործել: Եւ զի ոչ է քո տկարութիւն, որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝ գլութիւն գործոյն գլխաւորէ, ահա յարիցես փառաւոր լինել, բարեգործ, ՚ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութեանս. զի իրաւամբք ուխտի բարձրացցի՝ հա-

տատուն եղեալ մեծապէս օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութեան լուսովդ ուղերձեալ, քան 'ի ճանապարհ ստեղծանելոյն։ Զի առ մինն արարիչ միայն ճանաչիս, իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն և բարերար, ընդ հաստելոյն և ողորմած, ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ յօրինելոյն և հեզ, ընդ նկարելոյն ամենազօր, ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տածելոյն հովիւ, ընդ դարմանելոյն խնամիչ, ընդ ողջ պահելոյն բժիշկ, ընդ ձեռնկալութեանն զօրավար, ընդ անպարտութեանն թագաւոր, ընդ արարչութեանն քաղցր, ընդ ամենատուր պարգեացն առատ, ընդ միշտ անսալոյն ներող, ընդ ոչ բարկանալոյն անոխակալ, ընդ կարեացս փշտակցելոյ ծածկագէտ, ընդ յանձանձելոյ գթոցն ապաւէն, ընդ գերունակ գործոյն աստուած, ընդ անսպառ բարութեանն՝ օրհնեալ յամենայնի։

Գ. Արդ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զհողի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ յարդարեա անդրէն վերստին յանարատութիւն մաքուր սրբութեան նախնի լինելութեանն. զի բազմացի առաւել աճեցուն եղեալ յաճախ տուչութիւն անսահմանելի քոյդ սքանչելեաց նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոցն ստուերականաց։ Եւ ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան մտացս թևս ընթանայ զանբերելիսն յիշատակել, արդարացայց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութիւն բազում մեղանաց խոստովանելոյս, հզօր, ծածկատես, ամենափրկիչ. զի մի ծայրագոյն լրութեամբ աւետեացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով սաղմոսիւն զշնորհօք փրկեալսն մկրտութեամբն. և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի յիս առաւելապէս այժմէն

վերստին, ծանրս առնելով զբեռն պարտեացս քան զքաղցրութիւն պարգևացդ, այլ ազատեա զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու։ Քաւ լիցի, թէ անկցի ընդ տկարութեամբ սահմանաւ ճշմարտութեանդ ծագումն իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր բաւութիւն է թագաւորեալ՝ վտարեալ են մեղք, և՛ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է յուսահատութիւն, և ամբարձեալ քոյոդ շնորհաց՝ հալածեալ են պարտիքն, և մերձ գոլով ձեռինդ աստուծոյ՝ ոչ գոյ անհնարութիւն, այլ ամենևին լուսաւորութիւն, բովանդակապէս զօրութիւն, անպարտելի կարողութիւն։ Քո է փրկութիւն, կենդանութիւն, նորոգութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, արքայութիւն, անեղծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Ծ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՅԼ արդ, քանզի որպէս ոչ է առանց Քրիստոսի աստուածոյ ոգւոց փրկութիւն, և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն, և կամ առանց արուսեկին նշուլից արևու երբէք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութից և ստգտանաց անձին՝ բաւութիւն։ Օ՛ի զի՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս, և կամ զի՞նչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ընդ

մաքսաւորին գովեցայց, և կամ ո՞ւր ասի պարսաւեալ մարգարէն Յովէլ՝ երիցս կրկնելով զանձինն եղկութիւն, և կամ զի՞ գուցէ սրբոյն դատաստան առ՚ի յիշատակ աւուրն մեծի, և կամ ի՞բր արդեօք անմաքուր իմացի շրթամբք Եսայի՝ հեռին ՚ի գործոց տանն Իսրայէլի, և զիա՞րդ ատուած պարտաւոր պաշտի ագահեան մամոնին՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել, և կամ յո՞ւս թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն ՚ի տան սգոյ, և սիրտ անմտին ՚ի տան ուրախութեան։ Ո՛ ի՛ր որ զխալէլն Ադամայ անձին իւրում ոչ գրեսցէ, և զմեղս ամենից ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհարցն, կորոյս զիւրն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ բնութեանս. և ոչ բերկրի սիրտ առ զուարթութիւն երեսաց աւետեօք յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն Քրիստոսի ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ ատուծոյ տրտմեսցի։

Բ. Ա՛րդ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին, զոր տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել ոչ յառաջին բարձին հրպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ ժողովլոց, ուստի Դաւիթ և Երեմիա ուխտիւ կանոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մեղօք՝ և ՚ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն, յետնոցն հաւասարեալ աստէն ՚ի յերկրի կամաւ խոնարհութեան, ուստի բարձրեալն ատուած պարարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն ՚ի բազմականն երանութեան համարձակեցայց, թէ ես և թէ նա հետևեալ սովիմբ։ Ո՛ւ որ զերծեալ ՚ի բամբասանաց բանի մարգարէին, որ ՚ի վէսս ոմանս ակնարկէ. մի՛ յիս, ասէ, մերձենար. մաքուր եմ, և ո՞վ զիս տեսանիցէ։ Ա՛յլ զանկշիռն խոնարհութիւն երջանկին Դաւթի ինձ նպաստ առեալ

ասել ընդ նմին, ես իբրև զանասուն համարեցայ հերք-
եալ 'ի զգայութենէ, և հասին չարիք ինձ շուրջանակի.
և նեխեցան և փտեցան վէրք իմ 'ի յանզգամիս ան-
բժշկութիւն, և զայլոց ոմանց ընտրելոց 'ի յԱսորես-
տանի՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտութեան
անձանցն անարատից. ընդ որս և զԵզրի մեծի քահա-
նայի զասելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ
զերեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ ած:

Գ. Արդ ես ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զիմս
խառնեալ ընդ նոցին պարտիս, և 'ի նոցայոցն զառ իս
դառնութիւն կրկին առաւելեալ, նոքօք հեծեծեցից.
Թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութեան գունոյ՝ դարձ-
եալ ոգեղութիւն: Ահա արդ մեղայ, զի անմտու-
թեամբ գործեցի զոչ հաճոյն քո բազմօք սխալեալ
յանցաւորութեամբք. նայեա յիս, գթած, որպէս եր-
բեմն յուրացութեանն ըմբռնեալ Պետրոս, զի յոյժ
ունայնացայ: Լուսաւորեա ինձ զողորմութեանդ քո
ճառագայթ, ամենեւին բարերարութիւն. զի ընկալեալ
զօրհնութիւն քո, տէր, արդարացայց կեցից և մաքուր
եղէց յանստեղծից քո իմոց լկողաց: Չունիմ հա-
մարձակութիւն զմեղապարտ ձեռինս հաստուած առ
քեզ տարածանել, մինչև մատուցես զօրհնեալդ քո
զաջ 'ի նորոգութիւն դատապարտելոյս: Արդ յաղթեա
վերատին իմում յամառութեան քոյին հեզութեամբդ
առ իս ժամանեալ մարդասիրապէս. և զամենայնն յա-
մենայնի ամենայնիւ քո կարողութեամբդ՝ զառաջին
չարիսն միջնովքն և վերջնականօքն թող ինձ, հնարա-
ւոր անհասից Քրիստոս թագաւոր լուսոյն արդարոց:

Դ. Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի
վնասակար եմ բարեգործիդ մահու հարուածոց առ
կնիքն, առ շնորհն, առ փչումն, առ պարգեն, առ ա-
ւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրութիւնն,
առ պատիւն արքայական, առ պատկերն, առ դրոշմն,

առ օծումն, առ ճոխութիւնն, առ համարձակութիւնն, առ ընտանութիւնն, առ կեանսն, առ լոյսն, առ երանութիւնն, առ յոյսն, առ փառսն, առ անխոնարհելի բարձրութիւնն, առ պսակն անկապտելի, առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քև տէր Քրիստոս, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս իժիս և քարբիս՝ ունկնախից և լսելափակ անլուր ականջացս. որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան յոքնապատիկ յաւէտ քան զսոյն չարիքն իմ յաճախեալ, իսպառ կործանեցին, մերժեալ 'ի կենաց ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականութեան։ Եւ արդ դու միայն խրաւակչիդ և ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ 'ի դըթութեան, մեղայ քեզ անօրինեցայ անիրաւեցայ. վասն որոյ և եղծայ զեղծայ յանցեայ ամբարշտեցայ. և ոչ լուայ խոստովանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ, որ դու իսկ երևեցար անձառելեաւ քո սիրովդ, զոր գրելն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի։ Քեզ արդարութիւն և փառս և մշտնջենաւոր գովութիւն, և ինձ պատկառեցելոյս 'ի քէն, խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպանութիւն սրտի և ոգւոյ. բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԾԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ առ երկրածի՞ն ոք պաղատեցայ այրս մահացու ամենապատիր, եթէ ընդունայն է աղաղա-

կեղն . առ մահկանացո՞ւ բանական , եթէ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն . առ մա՞րդ ոք եղծական , եթէ ընդ տկարութեան բանին և նանիր է զօրութիւնն . առ իշխա՞նս երկրաւոր գահից , եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն . առ եղբա՞յր ոք հարազատ , եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն . առ հա՞յրն իմ երկրաւոր , եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուազութեանն . առ մա՞յրն իմ որ երկնեաց , եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն . առ թագաւորութի՞ւնս աշխարհի արդեօք , որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն քան զկենագործելն . այլ առ քեզ բարերար աստուած օրհնեալ 'ի բարձունս , որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի , որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել։

Բ. Որ եթէ փախնումք 'ի քէն , դու զկնի ընթանաս . եթէ տկարանամք , զօրացուցանես . եթէ վրիպիմք , շաւիղ դիւրութեան ուղղես . եթէ պատկառիմք , քաջալերես . եթէ ախտանամք յանձն և 'ի մարմին , բժշկես . եթէ գարշանամք մեղօք , մաքրես . եթէ ստեմք , քո ճշմարտութեամբդ արդարացուցանես . եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորեցիմք , յերկինս ցուցանես . եթէ 'ի կամաց մերոց ոչ դառնամք , դու դարձուցանես . եթէ մեղանչեմք , ողբաս . եթէ արդարանամք , ժպտիս . եթէ օտարանամք , սգաս . եթէ մերձենամք , տօնես . եթէ տամք , ընդունիս . եթէ յամրանամք , երկայնմտես . եթէ մեք ժխտեմք , դու առատապէս շնորհեալ ընծեռես . եթէ լքանիմք , տրտմիս . եթէ արիանամք , խնդաս։

Գ. Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշաւորական զվհատելոյս զսիրտ սփոփէ , և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեանն հանդէս . որ

յաղթականն է դիւաց և տարակոյս բանսարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղդ պանծալի ըսքանչելափառ, անխոնարհելի բարձրութեամբ լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական ամենայնիւ յաւիտենական ընդ դէմ անբարի բարուց բռնութեանն Բելիարայ, որ ունի յինքեան գանձս հոգևոր օգտից գիտողաց մտաց ընծայեալս զպարտումն մահու և զլուծումն մեղաց, և յոյսս կրկինս յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութեան արդարոցն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուս գրեալս հոգւոյն աստուծոյ. որպէս ամենայն խոկ երգ Սաղմոսացն մաքուր սրտից է տեսանելի կտակ կենաց մարդկան նկարեալ։

Դ. Զի եթէ ՚ի նախնումն տկար կերպարանն զայս աւետիս և վստահութիւն ընդ գոգեալ ունէր՝ կործանման մահու նախաժաման մեծ աւետադիր և կեանս երկնակրօնս վերնակենցաղս միշտ անձառելիս, և այն՝ ջնջական գիրն և յեղանակաւոր օրինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն, և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարարութիւն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթողացն. Որ զի թէ Մանասէի փրկութիւնն խոստովանելի է անսուտ վկայեալ յետ այնքանեաց մեղանաց անբժշկականաց, որ արեամբն արդարոց ելից զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք հայրենի, ըստ մարգարէագիր անսուտ պատմութեանն. որ և զմեծն խոկ տեսանողաց բազմերախտիս ձեռնկալութեան խնամոզորէնն պաշտպանութեան նախնակերտ յարկին տեսչութեան, մանկավարժ ինքեան և նախնի, մեքենայիւ մահու սղոցեաց, ՚ի յերկուս մասունս խզեալ դժնդակ տանջանօք մաշեաց. իբր խորհրդով ապստամբութեան զյուսոյն փրկանակ կորեալ։ Ո՞ւ որով զչար յաւելուածն մոլեգ-

նական՝ դքրէական վերնամարտութիւնն 'ի բարձրեալն յանդգնութիւն . քանզի ոչ պատկառեաց երբէք զըստեղծողին պատիւ և զանուն յիւրաբնակ խորանէն մերժել . հալածեալ զաստուծոյ հոգին , Բելիարայ զանձն դաւանեաց։ Քանզի զնոյն տաճար տիրական խնկարկութեան հաստողին սահման՝ հուչակաւորն երկրի տեսարան՝ զսարսափելին ազանց սրբարան , ուր տեսիլք հրեշտակականք և աստուածային հրամանք յաղթողականք լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երևէին, զայն վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ Քեւանայ ուսեմն քառադիմակի Նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի պաշտօնետեղ դարձելի և դիւաձենձեր զոհարան պատրաստեալ կազմեաց։ Զրկեալ զարքայն երկնաւոր 'ի յարքայականն կայից , զամենահարուստն՝ ունայն 'ի ստացուածոց իւրոց, զտանուտէրըն՝ անհանգիստ և Թափառական տատանեալ, Բէեղզեբուղայ ձեղուն նկարեալ , և զանունն ահեղ վտարանդի արարեալ . գերի տարեալ զաւանդ գովելոյն , ողբալի զողորմածին մասն նուազեցուցեալ. աղուեսուն փոքու ապարանք զորահն լուսոյ կարգեալ , և բնաւից ունողին և ոչ գլխոյն տաղաւար յիւրայոցն եդեալ . հատեալ զցանկ հզօրին , բախտից հմայից զսեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման երևեցուցեալ։ Լայնեալ հետս բազում ընթացելոց 'ի գայթակղութիւն, հովիւ կորստեան հօտին սատակման , մոլորութեան բուռն վարդապետ , և այն՝ գլխութեամբ կրօնիցն օրինաց , հայր ունելով զմեծն Եզեկիա զնմանակիցն Դաւթի։

Ե. Այնքան ստացեալ գոմունս չարեաց, որ և զաստուծոյ պատիւն որ զարքայութեանն փառս ընծայեաց նմա , հայհոյեալ և Թշնամանեալ , և զաղօթկերացն բազմութիւն սուսերաւ մահու խողխողեալ։ Ընտանի դաւաճան , մերձաւոր վատնիչ , հարազատ սատակիչ,

կցորդակից սպանող։ Նա աստուած ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զԱբրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ. Իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր 'ի նմանէ. Իսրայէլիւ ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. 'ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տապանակն աստուածագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ գարշութեան ձուլածոյին էր փոխանակեալ. առ Մովսէս ոչ էր կարդալ. զի անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ Ահարօն ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանող էր նոցա։ Եւ նորա քաւութիւն մեղաց, և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ, բարերար, բազմացուսցես կարգեսցես զովեստս անճառս և անլռելիս 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց, և զդուռն յուսոյն մտից անփակելի պահեսցես 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոյս, անմահութեանց պարգևաց տուիչ Քրիստոս, զովեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ · ԾԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՕՐՀՆԵԱԼ տիրաբար 'ի քում էութեան, անսահմանելի և անփոխադրելի խնկապէս բարի, պաշտօն

խնկելի, և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի. երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն, գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց քթթել միական, որ հրաշալորս զարմանալիս գեր քան զամենայն ազինս նախնեացն անսահման առաւելութեամբ կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկալորս 'ի շնորհաբաշխութեանս Նորում։ Դու զանտուստ զմուտս լուսարանի պատուհանին անձկութեան նշուլիցն աղօտականաց, չափով գիտութեանցն ըստ Սողոմոնի, և իւր խոկ Նմին և Նմա ընդ Նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելոցս զառագաստն անջրպետարան ելիցն ողորմութեան ձրի պարգևացն աստուածականաց. զոր ընդ մէջ իմն մասնաւորօք աւետաւոր յիշատակաց և 'ի հնումն զայսր տպաւորութիւն օրինակաւ նկարագրէր, զդարձարուքն առ իս և ես դառնամ առ ձեզ. և յորժամ դարձցիս և հառաչեսցես, յայնժամ կեցցես։ Նա զի և զաղջամղջին սևութիւն գունոյն փոխարկել 'ի ձեան պայծառութիւն, և զարանցն արեամբ ներկելոցն յեղանակել 'ի պատահումն գեղման, ըստ Եսայեայ և Զաքարիայ, և 'ի մէջ բարկութեանն դարձեալ զոյգ զողորմութիւն. քանզի անապատանալ քաղաքացն Իսրայէլի և դարձեալ բնակիլ, և ճանապարհացն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան և անդրէն հետևիլ, և լքանիլ 'ի սովոյն ոգւով և դարձեալ զօրանալ ձեռամբ, և գնալ աստուծոյ 'ի տեղի իւր զայրացմամբ և դառնալ ողորմութեամբ, ըստ Ներողութեան զելմն, և 'ի մէջ սաստիցն սպառնալեացն կրկին պաշտպանութիւն, և 'ի սրտին խռովութեան յուզումն խնամոց գթութեան։

Բ. Այս մարգարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալստեան զազատարարդ հրաման կանխաւ ազդէին, և զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել վասն անքաւութեան, փոքունք են և նուա-

գունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկագործութիւն։ Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վկայութեան արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան զդատակնիք մահուն Հաբելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս և անմահականս շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ հոգւոյդ սրբոյ միութեան, քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան, խնկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան, անկապուտ փառաց, 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, աստուած խոկ լինել ընտրութեամբ շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ Պօղոսի բանին, ոչ ունէր օրէնն։ Ա՛րդ դու, փրկութիւն, եկիր հայրենիդ քո հարստութեամբ, արարեր և կատարեցեր զյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի, քաւիչ ամենայնի։ Եւ քեզ փառք ընդ հօր քում 'ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ քո սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԾԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր զօրութեանց, բոլորից գոյից Թագաւոր, օրհնաբանեալ ողորմութիւն, աստուած ամենեցուն, որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութեան, ամենայն անբաւութեանց դու ես ըմբռնութիւն. մինչ զի կարծրն քեզ հոսանուտ է, և լոյծն քեզ պնդակազմ, և չիքն քո լի անհնարաւորական, յաղթող զօրութիւն ահեղ. հուրն ցօղ իմն է զովական, և անձրեւն բոց կիզանողական։ Զքարն բաւես ցուցանել կերպարան ազդման, և զբանականն դնես անխօս և անշունչ արձան։ Զպարտաւորն ողոքեալ պատուական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ խրատմբք քննեալ դատես։ Զմատուցեալն 'ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութեամբ օծեալ դարձուցանես։ Կանգնես զմատնեալն հաղբից գլորման, և զսասանեալն՝ 'ի վստահութիւն վիմին հաստատես։ Զախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն դարձեալ անդրէն 'ի յետս նահանջես։ Եւ յորժամ սպառին առ 'ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալին յայնժամ ներգործես. քանզի վասն քո գիտես թողուլ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել անիրաւութեանց և զմեղս մեր ոչ յիշատակել, ըստ Եսայեայ և Երեմիայ։

Բ. Այլ առ շնորհ նորոգ փրկութեանս բազմօք գոհաբանութեամբ հետևեալ, 'ի յաճախութիւն անբաւելոյն ըմբռնեալ առ սմին խոկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ

զլուսոյդ անսպառ բարիսդ, որ 'ի քէն առ իմ յամառ թշուառութիւն, քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս զտառ ողբերգութեան այսր մատենի. լցից թախծութեամբք և հեծեծանօք։ Նոյն առեալ խառնեցից 'ի տուողիդ հաճութիւն ընդ ցաւոցն զդեղն, ընդ վհատութեանն ըղխրախոյսն, ընդ յուսահատութեանն զյիշատակդ անուան հաստողիդ, ընդ տխրութեանս զփոփանսդ, ընդ խմուամս դառնութեան զքաղցրութիւն կենարարիդ, ընդ պատիժ օրինին զշնորհսն, ընդ պարտս անիծիցն զազատարար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահուն զամենայնիւ նորոգութիւնդ։

Գ. Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ. լուր լռութեան սրտիս, տէր Յիսուս, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար գոչելոյ։ Որ մարմնակից և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս, և աննուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութիւն առ ելս կենաց։ Զի որքան զօրէ մարմնոյ անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ աստուածդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն։ Զի ոչ եթէ մաքրութեանդ աղբիւր պարտականն գոյ մահու յորըստորէ կատարիլն, այլ կամօք քովք՝ հոգւոյդ գործակցութբ՝ 'ի հաճութիւն հօր և 'ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանիս։ Իսկ եթէ ամենիցդ աստուած անքննելին՝ իմովըս վասն իմ առ իմ փրկութիւն, 'ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ. և դու, բարերար, յաղագս իմ 'ի

յիմս կերպի փոխանակեալ ընդ իմում պարտեաց , և մահ ընկալեալ անպարտդ զմահապարտիս վնասուց պատուհաս , և 'ի յիմ անուն յանցաւորապէս , որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ , բազում մեռեալ և մնաս կենդանի . ոչ ուրացողացն ձեռօք , այլ դաւանողացն հաւատովք աստուածապէս նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշխեալ։

Դ. Ասէր ոմն ողջքաւոր՝ չաւատալեացն պաշտօնատար . մեծ ինձ և անկշռելի առ ամին դատէր անյարմարագիր անձին յուսադիր , հաւատամ զփառս և զերջանկութիւն , քան թէ մարտիրոսութեամբ իսկ՝ թող թէ ուղղութեամբ իմս թշուառութեան յանցաւոր մարմինս վախճան ընդունել։ Իսկ զանձառութիւն խորհրդոյս այսու դիտեցի . դաւանէր իսկոյն , որ զի և մաքրոցն անձինք առանց նուիրման այսր յիշատակի չև են իսկապէս կատարեալք իսպառ , եթէ ոչ ընդ այս հրաշակերտութիւն մեծութեան հոգւով խառնեսցին։ Ապա թէ մեղաւորիս մասին կրկին մատուցար բաժին ասելով՝ յուսայր , իբրև այն թէ ես ինքն եղէր ճշմարտիւ , դրաւեալ զիմս դաժանութիւն ընդ քում համեղութեան , պատարագեալ քոյինանիւթ զանդուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամենայնիւ 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց 'ի քաւութիւն , 'ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ . յուսոյս օրինակ յարդաւորութեամբ դրել զիս 'ի փառս , այսմ փրկանօք հաւատալի երևեցուցանէր , քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ , որչափ աստուածականին առ մարդ զօրութիւն , և տիրական աստուածախառն մարմնոյն կամաւորական նուիրումն առ անմահական սպանդին մատուցումն , և անմահն առ մահկանացուս , լոյսն ահաւոր առ ստուերայինս , յաւիտենականն քան զանցաւորս ,

բարձրեալն քան զերկրաւորս, անստեղծն քան զեղականս, բարին խնկութեամբ քան զթիւրեալս բնութեամբ, մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն, օրհնութե՛ առիթ քան զանիծից պատճառ։

Ե. Արդ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի, աղաչեմ գթած, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց, մատիր քաղցրութեամբ առ ախտացեալս մեղօք, քաւեա 'ի պարտեաց՝ ամենակատար բաւականութիւն։ Իսկ առ 'ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից 'ի սուրբս բընակես. և ըստ տարազու սերմանն և հնձելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին Պօղոսի, և աչացաւացն 'ի տապ արևու ոչ է զօրութիւն։ Այլ դու, բարերար հաստիչ յոչէից, յարգես յաւէտ խնկապէս համայն և զդաւանեալն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթեա՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց համօրէն յանցաւորաց տարակուսելոյ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԾԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ յամենայնի առ ամենայն ակնկալութիւն քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից Յիսուս. քո է բարերարու-

թիւն, կեանք և անմահութիւն։ Դարձ առ իս գթութեամբ, և հանդերձեսցես դառնալ առ քեզ ինձ կըրկին բերկրութեամբ. զի առանց քոյ կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ։

Բ. Ա՛հա ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս, ոչ պանծամ դորովեալս, ոչ խրոխտանամ լքեալս, ոչ մեծաբանեմ պապանձեալս, ոչ ըմբոստանամ ձաղեալս, ոչ երջանկանամ եղկելիս, ոչ արդարանամ ամբարիշտս։ Զի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի, և ոչ երկուորեակք լծոյն 'ի ճահ ճեմեսցին առանց եզողի, ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գումարին առանց ժամանակին, ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի առանց տարրական օդոյ, և ոչ ես նոքօք հանդերձ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քէն է ինձ փրկութիւն, ըստ Սաղմոսողին, և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման յականջս լսելութեան ամենայն հասակի, Եկայք 'ի հանդիստ իմ բնաւին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց։ Իսկ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զազրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Եւ կամ զի՞րդ յԱբրահամ պարծեցայց խորթացեալս 'ի գործոյ նորին որդիս գարշութեան հօր ամորհացւոց, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ, ըստ մարգարէին որ առ իս յանկուոր ձայնի. ժառանգս մերժելի

եթովպացի և ոչ սենեկին Սառայի, ըստ տեսանողին առ խս առածի, եղբայրս Ղամինի և կամ Գոմորայ, համբակս անլուաց և անաղելի՝ խակակութ պորտոյն խակութեան Ողայ և Ողողիբայ, ըստ Եզեկիէլի կրկնանախատն կշտամբութեան։

Գ. Աւ քանզի 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զզուեալ ուժգին լկանօք խապատագնապմամբ 'ի ծովին, փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հոսանաց բռնութեանց գարնանագայր գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման, ջրակուլ ոգեսպառ պղտորարբութեամբ, դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախառիւ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխիցն հեղեղիցին հեղձուցեալ։ Այսու առակաւ և ես եղկելիս՝ խօսին և ոչ իմանամ, գոչեն և ոչ ինչ լսեմ, բարբառին, և ոչ զարթնանամ, հնչեն և ոչ փոխադրիմ, փողեն և ոչ գումարիմ, վիրաւորիմ և ոչ ևս զգամ, կռոյն գարշութեան նմանեալ թափուր յազդմանէ բարեաց իմաստից։ Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ ճշմարտութիւնս, ատելի և մեղադրելի, և ատենին Քրիստոսի արժանապէս մատնելի։

Դ. Աւ. քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ սատեւացս պարտեաց զայս կտակ թողի որոց ընթեռնուն, իմովս բանիւ առ աստուած կարդալ հանապազորդութեամբ, այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեան մշտնջենաւոր ձայնարկու առաջի.քոյ, ամենակալ. զոր դիրդ ընդ մարմնոյս և բանդ ընդ հոգւոյս զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս ձայնէ, բարեգութ, մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՂԲ

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ վասն զի սլացեալ ոգւոյս թեւօք ՚ի թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի ՚ի կշիռս իմանալ-եացս մտաց, ոչ գտի համեմատ զոք ինձ պարտաւոր. և առ այս զԴաւթեան Սաղմոսին զբանն ՚ի յերգ ինձ առի գառն կշտամբութեան դաւաճանաւոր գործա-վար. ո՞վ յարիցէ ընդ իս ՚ի չարիս հաւասարել յանօրէ-նութիւնս։ Եւ քանզի այս ըստ ամին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այլս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ, քան իմովս բանիւ բազմաց տա-րագրիլ. Թերևս սովիմբ առ այսու արդեօք և ինձ շնոր-հեսցես, շնորհողիս զպարտիս իմոց։

Բ. Եւ արդ զի՞նչ քեզ աղերս հաճոյական ՚ի յայսմ և՚ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից գովեալ Թագաւոր երկնաւոր Քրիստոս, եթէ ոչ զառ ՚ի յինէն անխծեալսն օրհնել մաղթեմ, զկապեալսն ար-ձակել, ազատել զդատապարտեալսն, բարեգործել ըզ-նզովեալսն, պսակել զթշնամանեալսն, սփոփել զտրտմեց եալսն, դարմանել զխորտակեալսն, խնամել զարտուց-եալսն, պատսպարել զնենգեալսն, զվիրաւորեալսն ՚ի մարմին՝ յոգի բժշկել։ Եթէ օրհնութեան բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի հայես-ցիս ընդունել, գթած։ Ես տառապեալս ամենաթշուառ ՚ի վերջին սպասաւորութեան մաղթանաց այսր մատենի ՚ի բովանդակ մտաց շնորհեցի իմոյն՝ փակեալ առ՚ի քէն

զանխծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և դժնէից նենգողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտութեան արգահատեցի, վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց ելեալ առաւել ողորմեցիս ըստ քոյդ մեծութեան, գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս, ամենակարդ վարանելոյս, իմաստութեանդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս։ Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրև զողողակ մթային ոչ ընդելական 'ի հաղբս մահու անզգայապէս, չիմացայ զկորուստն, չգիտացի զորոգայթըն, չտեսի զըմբռնող որսոյն ծածուկ մեքենայս, չըկարծեցի զխաբուսմն կերպարանաց կեղծաւոր վարմին, չնկատեցի զգայթակղութիւնն շուրջանակի, չշօշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին, ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ Սաղմոսողին։

Գ. Քանզի և որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ բարւոք թուեցաւ, չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմոյս բանիւ. քանզի իբր զանզգայ պաճարս անասնոց մեռանիմք և ոչ զարհուրիմք, կորընչիմք և ոչ հեծանամք, թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք, եղծանիմք և ոչ զղջանամք, մաշիմք և ոչ մտառեմք, պակասիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք, գերիմք և ոչ եւս զգամք։ Իսկ հանդիստ ասել երջանկին Յոբայ ըզվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զսոյն ընդ սրբոյն, եթէ ոչ ունէի զքեռն աշխատութեան մահացու գործոց ըստանձնեալ։ Մանաւանդ զի որոգայթն գաղտնի և հնարագիրն աներևակի, տարր ժամանակիս յանէից, անցեալն անյայտ և ապառնին կարծողական, ես անհամբեր և բնութիւն թերահաւատ, ոտք անհաստատք և միտք ցընդեալք, կիրք հարկաւորք և բարք անժուժկալք, մարմին մեղսամակարդ և յօժարութիւն երկրասէր, դիմամարտութիւն անկակից և խառնութիւն ներ-

հակական, բնակութիւն կաւեղէն և անձրևք ուժգնակիք, կարկք անթուելիք և պատահարք ամենագրաւք, միտք չարախնամք և տենչմունք բարխառնեցք, կեանք առօրեայք և զմբաղք սակաւաւորք, խաբմունք յիմարութեան և խաղալիք տղայականք, աշխատութիւնք ընդունայնք և վայելմունք երազականք, համբարք ոչնչից և պահեստք հողմոց, նմանութիւնք ստուերաց և կերպարանք ծիծաղելիք։ Քանզի իբրև եկն եհաս պատուիրանն, ըստ Պօղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս նիւթեան, մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեանցն, և ես մահացայ կենացն և կենդանացայ կորստեանն։

Դ. Գողացան օտարք, չարին գումարք, զստացուածս սրտից իմաստից, ըստ գրոյն կանխաբանութեան. որով եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութեան ինձ նուաղանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութիւն։ Ոչ յառեցի զակն ոգւոյս ՚ի գլուխն իմ կենաց Քրիստոս, որով ընդ ուղիղն հետևեցայց։ Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս, յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի, ՚ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ, յերկնայինն ուղւոյն անդնդոց մատնեցայ, ՚ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ, յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ, կարծելով ընդ ահեակն մտցիլ՝ յաջն գթեցի, ՚ի զերկրորդն թուզել՝ զնախնին կորուսի, ՚ի խնդիր սակաւուն՝ ՚ի կարևորացն զրկեցայ, ՚ի յուխտին պահել՝ դաշինն դժրեցի, առ սովորութեանն կորիլ՝ կորուսիչս գտի, ՚ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ, զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի։ Յորոց փրկել զմատնեալ գերիս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու զհոգիս. զի դու միայն, տէր Յս, ճանաչիս բարերար, անսահման փառօք ընդ հօր և հոգւոյն սբյ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԾԶ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ զաւխթան մահու դիպուածս դժոխարմատ ծառոյս դառնութեան պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և ողդիք դաւաճանողք, ստորագրեցելովք մասամբքդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ։

Բ. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահածիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, շունչք ծխախառն, գընացք խաւարային, գոյութիւն լերդի վիմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ։ Գազան վիրաւոր, թռչուն նետահար, փախստական քարավէժ, ըմբռնեցեալ վնասապարտ, աւազակ ծովակուր։ Զինուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս, բեմական ստորնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր։ Դպիր կըշտամբեալ, իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, երեսք լպրշեալ, գոյն անհամբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ։ Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, ոգի գաղձանաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուտաճահալ, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ։

Սնապարծ յուսահատ, անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռոզ, անասնօրէն ապիրատ, դժոխային ագահ, աներասան յանդուգն։ Մոլեգնութիւն անաստուած, ձեռնաձգութիւն սպանող, տատասկացան երկրագործ, երջանկութիւն եղկելի, մեծութիւն վատթարեալ, վայելչութիւն անշքեալ, կարողութիւն տկարացեալ, բարձրութիւն խոնարհեալ, փառաւորութիւն ընդոտնեալ, պատուիրանազանցութ՚ի յարակայ, սխալանք ինքնակամ։ Մատակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հազարապետ գողամիտ, մերձաւոր կծծի, բաշխօղ ժլատ, վերատեսուչ կարկամ, ոգի անախտակիր, իղձք անսէր, բարք ատեցող, աղիք անգթականք, գնայք անխոհեմ, աներեւոյթք փնասեալք, ծածուկք անիծեալք, դիպուածք թշնամանեալք։ Վաճառական վատնիչ, շահարար շուայտեալ, պաշտօնեայ արբեցող, գանձուց ոստիկան երկմիտ, պատգամաւոր բանսարկու, դռնապան քնէած, աղքատ հպարտ, մեծատուն ժխտող։ Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ, բնակակից չարախօս, սուրհանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր, առաքեալ խռովարար, միջնորդ անիմաստ։ Արքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգէկործան, իշխան տիրադաւ, զօրաւար զրկող, ՚դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ։ Նախատողի ծաղր, սիրելեաց աշխար, բանագրի դարով, յանդիմանչի դատախազութիւն։ Քանզի և ՚ի վեհագունիցդ կողմանց էր ուրեք արդեօք զի էի, իսկ ՚ի վատթարականացդ մասանց եկն երբեմն եհաս զի եղէ։ Արդ այսքան փնասակարութիւնք խարդախութեանց յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և յոմանց տիրեցայ իբրև զտկար՝ կամաւ մատնեալ զիս ինքն մահու։

Գ. Արդ զո՞ր ՚ի վերագրելոցդ մասանց քեզ ատեցայ և իմ կորուսչաց ՚ի սպաս պաշտաման քեզ ընծայ-

եցից, զո՞րպիսիս ապականութեամբ պարագրեալս ամենասուրբդ քո մեծութեան հանդէպ կացուցից, և կամ ո՞րքանեօք երկայնմտութեամբք համբերեսցես այսքանեաց պարտուց, ո՞րքան ներես, ո՞րպէս լռեսցես, զիա՞րդ իսկ անսայցես, ե՞րբ ոչ մատնեսցես հարուածոց գանից զարժանիս սատակման մահու։ Արդ այսոցիկ աննշոյլ մթութեանց հոգւոց խաւարի ողորմութեամբ լուսոյ քո պատահեսցես բժշկել քաւել և կենագործել, զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յամենայնի. ամէն։

ԲԱՆ․ ԾԷ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՄԱՆ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՔՐԻՍՏՈՍ աստուած անուն ահաւոր, մեծութեան տեսակ, անքննին բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութեան վերնում հանդստեանն, ճանապարհ հանդարտութեան, ապաւինութիւն նորոգ և անտխրական երանութեան, ամենակալ իշխանութիւն բոլոր էականութեան, օրհնութեան կոչումն, աւետեաց ձայն, բերկրութեան բարբառ, անմահութեան դեղ, որդի անճառ աստուծոյ միոյ. որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհամ է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ

երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ ինձ յուսահատութեանն է, քեզ սփոփանաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրծցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էականութեան զօրութեան ընդ ոչ գոյն համարեալ է։

Բ. Արդ դու, ողորմած աստուած բոլորից տէր Յիսուս Քրիստոս, և այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն անուան փառաց մեծութեան հօր քո օրհնելոյ, վասն կամաց գթութեան ոգւոյդ քո սրբոյ, տես 'ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւն, և 'ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն. Նայեա 'ի բնութեանս ամենապատաղ խակութիւն, և պարգեւեա բժշկութիւն վիրացս և հնարաւորութիւն կորստեանս, զերծումն բազմամասնեայ մահուս և շաւիղ կենաց ապականելոյս, նորոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամբարշտելոյս։ Եթէ ես զաննմանն ինձ կամս ցուցի, ո՞րչափ առաւել դու ըղբնաւորականդ քո զընտանի բարերարութիւնդ. եթէ 'ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութեան, ո՞րչափ առաւել 'ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես խմոց ատելեաց ողորմութիւն մաղթեցի, դու Քոյոյս զիա՞րդ ոչ կրկին մատուցես, հզօր, յաննուազդ առատութենէ։

Գ. Արդ տես 'ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նայ-

եցեալ 'ի յիմս փրկութիւն . ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս , որ զընաւն համայն տեսանես . և որպէս զՎիժին գթել ոչ գրեցեր, և զաւաղոյս փոքու սասանել մի համարեսցիս . և իբրև ըզԴաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն , և առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն գործեսցես, երկայնմտութիւն . որ տաս ամենեցուն առատապէս անաչառութեամբ որպէս յաղթող բարի բազմիմաստ, և ոչ նախատես զյետնեալ ստրուկս որպէս ողորմած և ամենաստեղծ . ստացիր վերստին, և մի կորուսաներ զգնեալս արեամբ քո, գթած։ Ո՛ ի քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութիւն , և քեզ վայելէ փառք յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ· ԾԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· ՕՐՀՆԵԱԼ տէր Յիսուս ընդ հօր, 'ի կամս հաճութեան հոգւոյդ քո սրբոյ . և օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան . օրհնեալ միայն որդի օրհնելոյ . չիք իմ թագաւոր իշխեցող շնչոյս բաց 'ի քէն, Քրիստոս։ Այս է օրհնութիւն Յակոբայ՝ ասէ Եսայի, յորժամ բարձից զձեռս նորա։

Բ· Արդ ողորմեաց ինձ, տէր բարեգութ, ըստ նախնիդ քո սովորութեան , և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին Դաւթի և ըստ Մովսէսի . զի բանիդ

քո փրկութեան ժամանեալ, հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն։ Աստուածապէս ինձ հրաշագործեա, ողորմած արքայ երկնաւոր, որպէս անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահձացն խշտիս, ժողովելոցն 'ի սրահին Բեթհեզդայ։ Յորոց մի էր և կրկին Թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր գիտելով՝ զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դառն գիշերին տիրամարտութեան՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ։ Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի դատողացն զքեզ 'ի խաչին։ Եւ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ մահու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձառ բարութիւն, սխրալի մարդասիրութիւն, սարսափելի ներողութիւն, տոկալի երկայնմտութիւն, անբաւելի քաղցրութիւն, փառաւորելի հեզութիւն։ Որ միշտ յաղթիս 'ի գթութենէ և ոչ թշնամանիս, պարտիս յողորմութենէ և ոչ պարսաւիս, բռնադատիս 'ի մարդասիրութենէ և ոչ անգոսնիս, հարկիս 'ի բարութենէ, և ոչ հայհոյիս, ստիպիս 'ի սիրոյ և ոչ բամբասիս։ Պաղատիս դարձին իմ առ քեզ և ոչ ձանձրանաս, արագես զկնի ապերասանիս և ոչ լքանիս, ձայնես չլսողիս և ոչ սպառնիս, փութաս մեղկելոյս և ոչ խափանիս։ Առ չարս ես բարի, առ ամենապարտս ես ներող, առ մեղաւորս ես քաւիչ, առ խաւարեալս ես լոյս, առ մահացեալս ես կեանք։

Գ. Այս են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս անձառս և զարմանալիս։ Ասա և ինձ թշուառացելումս, օրհնեալ ամենապարգև, արի առ զմահիձս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեա

յանդորր հանգիստ անաշխատ կենաց: Խզեցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի զերիզապնդեալ մահազգեստս պարփակութիւն դժոխագնեայ կապանացս, և լոյծ ինձ զհանգոյցս խեղդողականս ոգեպահանջ սատակութեանս, առաքելով զարժանաւորս մահու յազատութիւնն վերին անանց բերկրութեանն, կենսաբեր և աստուածային քո բանիւդ: Մի՛ տակաւ տակաւ ազդեսցես, և մի օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի ստուար ծանրութիւն բեռանցս մեղաց տիրեսցէ թիկանցս ազդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ հայել 'ի դժոխս, և ուժգնակի գոռոզ բռնութեամբ անպարապ հոգևորական զինուն արարեալ՝ մահու ծառայեցուսցէ: Այլ օգնեա ինձ, բարի վշտակից հեծութեան կարեացս մահու երկանց, առեալ յինէն զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուսցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեանն, պնդապէս հաւատով յուսոյն կարծրութեան ընդ քեզ բևեռել անսայթաքելի: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ. ԾԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՀԱՒԱՏԱՄ և վկայեմ մտաց գիտութեամբ՝ 'ի քէն ազդեցեալ ոգւոյս իմաստիւ ուշիւս տեսման,

զի ըղձալի են քեզ, բարերար, աղաչանք մեղաւորաց քան զխնդրուածս արդարոց։ Ո՛վ մինն զպարտութիւն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ, առ որ ծանուցեալ զբնութեանս չափ, և մեծ կշտամբիչ աստէն համբարձեալ ինքնագոր մարտակից նմին խոկ ինքեան և դառն դսրովիչ և ծածկատես դատախազ։ Իսկ միւսն յարդիւնս բարեաց իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վստահութեան, մոռանայ զսահման բընութեանն, և պարգեւաց քան ողորմութեան դիտեալ ակն ունի։ Վասն որոյ առ մինն անթիւ են ստեղծուածք ճառից, որ զողորմութեանցդ քո փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն լռեալ են քոյդ, անքննին ահաւոր և ամենախնամ, ամաչեմ ասել՝ թէ և երկրաւորիս գործոց պատմութիւն դքոյդ յառաջեալ։ Արդարի տէր, և մի զօրասցի քան դքոյդ աջ հողեղինի. մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ ջանից մարդկան։

Բ. Եւ արդ առողջքն անդամօք անկարօտք են բժըշկութեան, և տեսանողականքն աչօք չունին պէտս առաջնորդի, և փարթամքն ընչիւք ոչ դեգերին առ դուրս լիոցն, և ամենայնիւ յղփացեալքն ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի, և սուրբքն վարուք ապէնիազ են ողորմութեան։ Եւ արդ ինձ գթասցիս ողորմել, բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատուր վարանեցելոյս։ Քանզի թէ էի իբրև զՅօբ, ասէի զանձն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ էի իբրև զՄովսէս, ասէի վստահութեամբ զնորայն, ծանիցէ տէր զայնոսիկ որ իւրն են. թէ էի իբրև զԴաւիթ, ասէի՝ արարի զիրաւունս և զարդարութիւն, և դարձեալ զմեծն քան ըզբնութիւն մարմնոյ, զմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, մի լուիցէ ինձ տէր. թէ էի իբրև զԵղիա, ասէի զանձն իմ այր աստուծոյ. թէ էի իբրև զԵրեմիայ, ըզքոյդ ճշմարտութիւն յանձն օրինակէի. թէ էի իբրև զԵզեկիա, պարծէի զբարուոքն և զիրաւացին՝ գնացի

առաջի քո արդարութեամբ. թէ էի իբրեւ զՊօղոս, առէի զիս բնակարան ազդարան եւ ընդունարան աստուածոյ բանին։ Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտութեան օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարդանօք բանից իբրեւ զնոսա, եւ զբնաւին չարս որպէս զբարին զայնոսիկ առաջի քո յիշատակել, այլ եւ ոչ զամենուստ դոյից զբարեհաչակեալ անունդ հզօր ամբարշտեալս լեզուով գովել։ Իսկ դու առ ամենայն հընարս զօրաւոր՝ մատո ինձ ոգի փրկութեան, աջ պաշտպանութեան, ձեռն այցելութեան, հրաման բարութեան, լոյս ողորմութեան, բան նորոգութեան, պատճառ քաւութեան, գաւազան կենաց օգնութեան։ Զի դու ես յոյս ապաւինութեան, Տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. Կ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԶԻ արդ որպէս զի ոչ վայելէ օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զի՞արդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկառ, որ հանապազ ընդունիմ անէծըս 'ի սաղմոսիս բարեբաստութեան։ Զի իբր երդեցից ինձ վտանգս եւ արձանացուցից նախատինս, եւ 'ի մերկութեանս դրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից·

զիա՞րդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես. զիա՞րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց. զիա՞րդ, թէ դատ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ ամբծութեան իմոյ որ յիս. զիա՞րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց. զիա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայն որ զկնի. զիա՞րդ, թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ. զիա՞րդ, թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս և զլեզուս մեծաբանս. զիա՞րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութիւն. զիա՞րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս. զիա՞րդ զևսն, թէ ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. զիա՞րդ, թէ և ես եղէց ամբիծ ընդ նմա. զիա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց. զիա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ. զիա՞րդ 'ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս բամբասեցից. զիա՞րդ զերջանիկն պարծանս թշուառացելումս կերպաւորեցից, թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի. զիա՞րդ օտարս 'ի բարեաց՝ զխոտողիդ դաղանեաց արդահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարշտս զանձն իմ. զիա՞րդ ես ինքն գոլով զայլս անիծեցից, թէ տուր նոցա տէր զգործս նոցա, և 'ի կարգ բանիցն համարձակեցայց։

Բ. Քանզի թէ զյետինս բանիցս առաջնովքն սատանոր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք և յաճախեսցեն դառնութիւնք։ Բայց 'ի չեղջեցելոցն արտասուաց՝ դոյգն մի չափեալ, բաւականացայց հանապազորդեան յանդիմանութեամբ սաղմոսարանին ըստ անի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս և աստուած քառասներորդի իններորդի հատուածի

բանի յանդիմանողի զիս դարշեցուցեալ, հանապազ խայտառակէ · խցեալ զբերանս 'ի փառաբանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ, աստուածային ձայնիւն դատապարտեալ, յանկալութենէ կենաց լքանէ, միանգամայն և վճիռս մահու ինձ իբր 'ի պատնիշէ առաքէ: Քանզի թէ չար է անէծս առնուլ յօտարէ, ապա անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար · իսկ եթէ չառնուլ նախատինս 'ի մերձաւորաց օրէնք են, ապա 'ի տեսողէն հայել զայսոսիկ, կրից արեան տաժանմունք, վիշտք աղէտից և խէթք մտաց: Բայց թէ առ խոնարհութեան անձին իւրում մատնեսցի, ջնեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ իւրմէ, 'ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բերանոյ մերնոյն օրհնեսցի · զի ճշգրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ Նա՝ զհետս կենաց ոչ լքանելով · սահմանաւն սիրոյ զպարտեացն արմատ կրճատեաց, ոչ տիրեալ 'ի խարդաւանաց չարաբանողաց · ոչխար հօտին Քրիստոսի գտաւ բժշկեալ՝ դիմելով 'ի յաղն բուժիչ աղեացն արկածից: Բայց և ես անբանական բարոյից է՝ առուն կենդանեաց 'ի մէջ դալարոց ծաղկածին վայրից կենաձիր բանից թմբրութեամբ մտաց 'ի յարօտս մահու ճարակել:

Գ. Եւ արդ քանզի իմ է առակս վերջին կշտամբողական, և առ իս ակնարկէ զդիպուածոցն չար պատահմունս, որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզանողականս հրոյ տոչորման, հոսեալ 'ի յերկնուստ զդիւգագաթանս իմաստնարանի բազմակիս: Քանզի զիա՞րդ 'ի յարդիւնս ինձ օգտից սաղմոսն եկեսցէ, յորժամ անպտուղ 'ի բազմերգութենէն լինիցիմ, ոչ նուագել հոգւով, ըստ Թելադրելոյն Պօղոսի · զիա՞րդ ընդ մարգարէին ևս զտէրունին խառնեցից մեծս մեղաւորաց՝ նկունս պիտանեաց, առեալ ընդ սրբոյն, թէ 'ի բաց կացէք յինէն ամենեքեան որ գործէք զանօրէնութիւն·

զիա՞րդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն արար զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պահեցի զայս, և որ զհետն գան ասացեալքն. զիա՞րդ Թափուրս 'ի լրութենէ իմաստից կենաց ընդ երկիւղածս տեառն օրհնեցից. զիա՞րդ ընդ մեծին մաղթանաց զիմս յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի տեառնէ՝ զտեսիլ վայելչութեան նորա և զհրամանատրութիւն տաճարի նորա. զիա՞րդ 'ի հրաժարելն ինձ ձեռնամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելէ օրհնութիւն. զիա՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զինի յոլովից առեալն, թէ երեսք տեառն 'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ. զիա՞րդ ըզմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին. զիա՞րդ զկերպարանացն իմ նմանութիւն, թէ բազումք ամբարշտաց խորտակեսցին. զիա՞րդ սատակման ինձ պապաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն. զիա՞րդ զբազմայածեան լեզուս 'ի յօրհնեալն բան մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով. զիա՞րդ փշովք մեղաց հեղձեալս զանարատին պարծեցայց, այլ զիս յանբծութեան իմում ընկալար. զիա՞րդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր զհանդունակիցան դարոլեցից ապրել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս աստուած:

Դ. Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ անպատկառապէս պերճացոյց ունայն պանծանօք ասել ընդ Դաւթի, մի թէ մոռացեա՞լ իցէ մեր զանուն աստուծոյ, կամ ձըգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս դարշութեան խոնարհեցայ, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն յաւանականացն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ Աստարտայ և Քամովսայ և Մեղքոմայ արուարձանի և Թարահատայ Թարմատարի, ընդ զազրատեացն կանաց-

եաց՝ իշանդամիցն պատկառանք՝ անվերարկու ծանա-
կութիւնք։ Ո՞ր ոչ պատկառեցից սոսկմբ առել ընդ-
նահատակին, որ զայս դիմագրաւութիւն առ բայլն ու-
նէր միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհանապազ, և որ
'ի կարգին է սորին սաղմոս։ Ո՞ր յիմարս յարս և վատ-
թարս առել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաս-
տութիւն և սիրտ զհանճար․ Ե՞բր մարդելոյզ կերպա-
րանաւոր՝ զմարդահաճոյից ոսկերս ցրուել մաղթեցից․
Ե՞բր զկրկին երկրորդեալն մեծանունն բարութիւնս,
թէ հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց։
Զիա՞րդ ունողս անբաւից մեղաց զարդարոյն առեալ
կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց
մեղաց ընթացայ և ուղիղ եղէ․ զիա՞րդ զիս ինքն մատ-
նեցից կորստեան յասելն զայս բան, թէ մի՛ ողորմիր
գործողացն զանօրէնութիւն․ զիա՞րդ, թէ որպէս հալի
մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց աս-
տուծոյ․ զիա՞րդ գրգեալս ապականացու փափկութեամբ՝
սահմանեցից զաննմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի
պահօք զանձն իմ, և զազգակիցս նորին ընդ նոյն, թէ
ես 'ի նեղել նոցա քուրձ զգենուի, և իբրև զսգաւոր և
զտրտում խոնարհ առնէի։ Որպէս հանդարտեցից ըղ-
նմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն
միուր բարկութեանն աստուծոյ ոչ ապաւեսցի, և արբ-
ցեն 'ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի․ Իբրև զեան
առ սմին, թէ զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես։
Զիա՞րդ զապերախտութիւնն Յակոբայ 'ի ճառ առեալ
հենգնեցից, որ ընդ սուտերին զճշմարտութիւնն ընկալ-
եալ, մոռացայ ընդ նոսին նոցին թերութեամբ զերախ-
տիսն Քրիստոսի աստուածայնովքն արուեստիւք խաչին
փրկանօք, քան նոքա զզօրավարութիւնն Մովսէսի ցպոյն
սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տէրունական
տնտեսութեանն։ Զիա՞րդ զյարուցելոցն 'ի վերայ դի-
ւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զտարացեղից խուժա-

դուժ ազգացն ասելով, թէ արկլին զդխակունս բարեա-
ցըն որ 'ի մեզ` կուր վնասակարացն թռչնոց, այս է` այ-
սոցն օդայնոց. ո՛րպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճանա-
պարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին` սուրբ ան-
ուանեցից. Իբրև զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին
պատերազմի` գուպար գաղտնամարտ մտացս օցտելոց,
զոր ես զօրացուցի գործակցեալ հնարից բանսարկուին։
Նաև ոչ ունիմ աղերսել, թէ մի՛ լռեր և մի՛ դադարեր,
աստուած. և խորհեցան 'ի վերայ սրբոց քոց և սա-
ցին, զոր 'ի կարգէ սաղմոսիս է աղօթել։ Քանզի յոյժ
պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութեան
մոլեկան դիւաց միշտ ճակատելոց առ ներկայիս խռո-
վութիւն, և ընդ նոսին նոցին մշակաց։

Ե. Յորոց դու, տէր Քրիստոս որդի բարձրեալ մե-
ծիդ աստուծոյ, պահեսցես և ամրացուսցես, երկնային
զօրուդ շրջափակութեամբ` յամենայն ընթացից խաբո-
ղին հողմոց խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի
թէ և գտցին յիս անօրէնութիւնք բազմօրինակք, այլ
ոչ հայհոյութիւնք։ Որ ոչ հանդեար 'ի կորուստ նը-
մանեացն իմոց ամբարշտելոց, այլ ամենագորով թա-
խանձմամբ ընդ եղծման ջրողողն զազրագործաց կըր-
կին վշտացար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն
քեզ գրեցեր, ասելով զզարմանալին լողաց բան, ածեալ
զմտաւ ոչ ես յաւելից անիծանել զերկիր վասն գործոց
մարդկան։ Նաև մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ-
կեանս անմաքրից և պարտաւորաց սատակման. որ եր-
բեմն առակաւ դդմենւոյն զանխայելն 'ի կործանելւոյն
ցուցեր, ողորմած, և առ այլ ումեմն նեղեցար սաստիկ
վտանգեալ ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն
դարման։ Անճառելիս ցուցեր բարութեան տեսակս յի-
շատակաց տօնելիս` 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն ա-
ռաքելոցն քոց` ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հե-
ռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր։ Ահա և յիս

ցօղեա կենդանի զհայրենի գթութեանցդ զսէր, զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութեամբդ։ Եւ քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԿԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր ընդէ՞ր է ինձ բնաւն որ 'ի սաղմոսին այնպիսեաց բանիցն 'ի կիր արկանել, որ 'ի նախատինս միանգամայն և 'ի նզովս ինձ յարակային, հանապազ երգել խմուս տաւղօք։ Քանզի զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ։ Զիա՞րդ զկարգադրութիւնս տանցն 'ի յայսմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք ասելով, ոչ յուսահատ եղէց 'ի կենաց պատմողս աւետեացս նորոյս աշակերտ անման յամենուստ բարեկարգութեանց։ Զիա՞րդ ըստ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն մահու զինեցայց առակաւ առաւօտին 'ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս գանեալ խրատեցի. զիա՞րդ մասնակցեալ մեծին արութեան՝ սատակեցից 'ի քաղաքի տեառն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծըս հոգւոյս իմոյ մեռուցի։ Զիա՞րդ ատեցից գիրողն

չև յայտնելոցն, թէ զմոխիր որպէս հաց կերայ· զիա՞րդ,
որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր ընդ յատակ
արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զըմպե-
լիս իմ արտասուօք խառնեցի, և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացի։ Զի՞ս ինձ գրեցից մեղօք մա-
հացեալս, յորժամ սիրողն աստուծոյ 'ի բոլոր սրտէ ըզ-
յանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք
ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ 'ի վախ-
ճանն յանգի սաղմոս իրաւամբք առիս, քան առ Իս-
րայէլ։ Ո՞րչափ յարգեցայց դասիլ ընդ բարիսն, յոր-
ժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ
յիս գտաւ, 'ի դարշութենէ կերակրոց 'ի մահ սովեց-
եալք և յաճախութենէ ճգանց 'ի հոգւոց նուաղեալք,
ըստ խորութեան ինքնօրէն կրօնից հրէից և հեթանո-
սաց։ Զիա՞րդ արդարութիւն իմ մնայ յաւիտեանս,
զոր ոչ բնաւ իսկ կատարեցի։

Բ. Նու զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս, 'ի
համառօտել զսոյն փութացայց։ Զի՞նչ ունիմ ասել 'ի
տեղի բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց
օրհներգոյն Դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խնդրեցի
զքեզ· զիա՞րդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամե-
նայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ· իբր ընդ-
եդեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքու-
ցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ։ Որպէս զու-
նայնութեանցս իբր զկրութեանց ճառեցից ընդ պարս
մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ, ատեցի
զամենայն ճանապարհս չարաց։ Զիա՞րդ զհեզոյն ճշմար-
տութիւն իմում սուտութեանս մշտնջենական երդմնահա-
րութիւն կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդ-
ուայ զոր հաստատեցի պահել զդատաստանս արդարու-
թեան քոյ։ Զիա՞րդ ինձ հրեշտակ մահադրոժ անհրա-
ժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է
'ի մեղաւորաց փրկութիւն։ Զիա՞րդ չարս իսկապէս՝

զբարեացն գրեցից՝ որք 'ի տեառնէ առնուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից։ Ո՜ խա՞րդ զհամառօտն փոխատրութին անճառութեան՝ վրիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ ըղթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն։ Ո՜ խա՞րդ զաստուածագգեստին պանծանս ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայսն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին ասացեալքըն։ Ո՜ խա՞րդ զանճառն քան զմարմին բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութեան վհատելոց ես գանձ գեհենին, ասել ընդ օծեալն աստուծոյ հոգւովն, թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում, 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսին մինչև 'ի լրումն աւարտման բանիս։ Ո՜ խա՞րդ դասակցութեան դժնէից մարդոց համաբան այրս մահու և որդիս սատակման բարբառիմ զբարեշնորհսն, ո՞չ ահա զատելիս քո տէր ատեցի, և զմնացուածն սորին կարգի։ Ո՜ խա՞րդ մեծաւն վստահութեամբ տօնելի վեհին, անձն իմ և դու աշխար աշխարհի, զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեա զիս տէր և տես, թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ, և զյաւելուածն որ զհետ սորին։ Ո՜ խա՞րդ ես գոլով և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յաստուած ձայնակցեալ, պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի և 'ի մարդոյ չարէ։ Ո՜ խա՞րդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել աստուծոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։ Ո՜ խա՞րդ իբր հանդիպեցեալ ընդ ճըգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով զառաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից, թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչև հատուսցես ինձ։

Գ. Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր և տե-

րունի գործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց, յոր-
ժամ զամենայն արհամարհիցէ և զսկզբնապատճառն
եղելոց միայն ընտրիցէ ասելով, թէ երանի ժողովրդ-
եան, որոյ տէր աստուած է նոցա։ Մեծ է և այս բարձ-
րութիւն շնորհի և զգուշական համարձակութիւն լըց-
եալ երանութեամբ, թէ սուրբք քո օրհնեսցեն զքեզ։
Իղձալի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգե-
ւոր հաղորդութեան՝ յաստուած յուսալ և 'ի նոյն ար-
ձանանալ բանիւ սաղմոսին բերկրեալ. թէ զկամս եր-
երկիւղածաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կա-
տարէ, մինչև զողբալին և զզուարճալին ազդեսցէ, թէ
պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն
մեղաւորս սատակէ տէր. 'ի գլուխս լման գրոց նուա-
գարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վեր-
ջին հատուցման արդարոց և մեղաւորաց։ Զուգակը-
ցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս. զի թէ ըն-
դունի զհեզս տէր և խոնարհ առնէ զամբարտաւանս
մինչև յերկիր, ապա ինձ որքան եղկութիւնք կան առա-
ջի. իսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ սուրբ, և բար-
ձրը առնէ զհեզս 'ի փրկութեան, ապա հերքեալս 'ի բա-
րեմասնութեանց ես ո՞ւր հաստատեցայց. իսկ եթէ օրհ-
նելի է աստուած 'ի սուրբս նորա տիրապէս, ապա օտա-
րըս ես 'ի մաքրութեանց ընդ ո՞րս դատեցայց. իսկ եթէ
'ի կանխերգիցն մերձ այսր եդից յիշատակարան ինձ
կշտամբութեան. թէ սիրեցէք զտէր սուրբք նորա, զի
ստուգութիւն խնդրէ տէր՝ և կրկին հատուցանէ ամ-
բարտաւանիցն, ապա յո՞րում գնդի ես գտայց գրեալս
'ի գաղտնեաց գտողին չարեաց։ Քանզի զօրօրինակ տա-
տանին տագնապաւ տերևք տնկոց եղևին ծառոց շարժ-
եալք 'ի հողմոց ուժգին բախելոց հոսեալք 'ի խոնարհ,
այնպէս ջանացաւ ջարդել զընթացից իմոց վերարձա-
կութեան քաջաբեր ուղէշս՝ զյարմարեալս ձեռամբ
անեղ մշակին։ Զոր հաստատեսցես արմատացուցեալ

վերստին դարձեալ նոր պտղաւորութեամբ անապականաւ, յանդաստան կենաց խնամոյ քոյ կամացդ ամենապարգև Թագաւոր Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ· ԿԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻՆԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· ԱՅԼ արդ ընդէ՞ր ոչ ’ի վերագրեցեալն սաղմոս նախաձայնական և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից։ Քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ. և կամ զո՞ր շահ սաղմոսըն ունիցի, եթէ ոչ ’ի միտ առնուցում։ Քանզի նզովեմ զիս ինքն ’ի նոյն և ոչ իմանամ, լուացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արևու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղր ճաշակեմ և ոչ քաղցրանամ, ռետնիւ ընանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ ’ի նոյն և դատարկ երևիմ, հանապազ ձաղիմ և ոչ երբէք խրատիմ, ողոքիմ դարձեալ և ոչ զգաստանամ։

Բ· Արդարև մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ ’ի նոսին, ըստ մարգարէին որ ’ի դիմաց պարտաւորացն բանի և տէրունական առակին հին տկոցն և նոր գինւոյն։ Սան զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք ’ի միասին, ըստ Եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կցորդեմ ամին զընթերցուա-

ծըն, Թէ որ տեառն 'ի վերայ հպարտից և անբարտաւանից. ասեմ, Թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին, Թէ կործանեցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ։ Ողբք ինձ կարդացէք առ ձայնն, Թէ զոր օրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, Թէ արկցես 'ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք 'ի բանս աստուածեան վճռին մարգարէին ազդեցեալ, Թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, Թէ մահ հովուեսցէ զնոսա. աղի արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ Իսրայէլի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, Թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք Թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն գլցէ, վայ նոցա զի վազեցին զինև։ Նարբառ փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանողն Աստուծով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ ընդ ապարասան տանն Յակոբայ, տեսէք արհամարհողք՝ զարմացարուք և եղծարուք։

Գ. Այլ դարձուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց 'ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ, և խնամովք աջոյդ բարեբաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս։ Նա քեզ փառք յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց և յամենայն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԻԴ

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՐԵՐԱՐ և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ միայն Թագաւոր, ընդ հօր քում պատուեալ և օրհնաբանեալ տէր ամենայնի, որդի աստուծոյ կենդանւոյ. անպատճառ միշտ խնամ կորստեան, որ ամենևին անփորձ ես 'ի չարեաց, որ ոչ կամիս զմահ մեղաւորի, որ փրկութիւն են 'ի քոց կամաց ընծայեցեալ, որ դարձուցանես զմրրիկ մեղաց 'ի յօդ քաղցրութեան, որ ըզհուր բարկութեան յանձրև փոխարկես։ Որ զյետնեալ զկինն 'ի բարեաց՝ կրկնակի գոյիւ նահանջեր երկեակ բնութիւն 'ի նոյն արձանի, ոչ իսկապէս ընդ անպարտսըն, և ոչ համայն ընդ պատժաւորսն։ Որ զլուծութիւն ծովուն սահանաց իբր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր. որ զկարծրանիւթ վէմն անապատին 'ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր։ Որ զՅորդանանու ջրոյն սրաշարժ վայրեկութիւն՝ հրաշաւոր անդրադարձութեամբ 'ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւազանին 'ի Թիկունս առաքեցեր։ Որ զպատուաստեալ պարիսպն Երիքովի, յօրինակ կործանման բռնութեանն սատանայի՝ իբր զԹեԹևութիւն յարդի ցնդեցեր. որ զվնասակար ջուր Նորին 'ի յառակ այլայլութեան առ 'ի բարին փոխարկութեան՝ քանանացւոցն փրկութեան խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր։ Որ զՄեռայն դառնութիւն, իբր զմտաց անհաւանութիւն, կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ պիտանի արարեր։ Որ զառեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութիւն անսահմա-

նըդ քո հրամանի անորակելդ գունակութեան՝ ՚ի նոր երանգ բոսորային մածեր արիւն ՚ի ցամաքի։ Որ զան-կենդան ցուպ դաւազանին, ՚ի կերպարանութիւն առ ՚ի զքոյդ մերոյս նկարագրել, այլ և յօտարազնիցն ընտ-րութիւն, ՚ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի նման-եալ ցուցեր։ Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսէսի, ՚ի ցոյցս տեսութեան ապագայիցս հրաշից մարդեղու-թեանդ քո, բարձրեալ, և քև ախտաւոր մարմնոյս մա-քուր լինելոյ անփոփոխ փոխատրութեամբ՝ կրկին գու-շակեցեր։ Որ յայքանեացս շրջադրութիւն բարեխնա-մապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւո-րաց կորստականաց նշանակեցեր, օրհնեալ ամենագութ։

Բ. Որ բուսուցանես յերկրէ դալարի զմեռեալն յանշնչականէն, որ զանշարժն իբր զընթացող կառավա-րես, որ յանարդ արդանդէ կոչես քեզ պատկերակիցս, որ տաս պատանեկաց աղօրիս ըմբոշխնելիս, որ յայտս մաքուրս հերս ընծայես, որ զսաղարթ սեւութեան վար-սից ՚ի ձեան կերպարան զարմանագործես, ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հեռաւորական յաղթող ես հը-զօր. որ փոփոխես զշրթունս բնաւորականս, ըստ բանին Յոբայ, ՚ի կամս հաւատարիմս։ Որ սասանես զերկիր և զսիւնս նորին ՚ի հիմանց, նշանակեալ հաստատածին գոյ-իւ՝ թէ դու միայն մնաս անկորնչելի. որ հոլովես ըզ-տարերս իբրև զանցաւորս, և դարձեալ ՚ի նոյնն կապես իբրև զյարակայս, յայտ արարեալ՝ թէ և առ մեղաց բազմութիւն դիւրապէս ունել կամ թողուլ դոյնպէս զօրաւոր իցես։ Որ զարուսեկին անզգայ էութիւն իբր ծերասանաւ խմն դաստիարակես, երևեցուցեալ այնր իրի կերպիւ, թէ զընութեանս չար դիմեցումն յորժամ և կամիս հանդարտ առնիցես։ Որ զանբարբառ բոլորակ լուսնին կարգես ունայնս և պատարունս, լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝ թէ ՚ի նուազու-թենէ բարեաց զպարտաւորս մարմին դու ածես ՚ի լը-

րութիւն առաջնաստեղծ հարստութեանն։ Որ զպատկերս անխօս աստեղաց իբր զդասակս դըզն հօտից որոհես և ժողովես , յոյս իմն կենաց առ այս խորհրդաբերեալ , քաղցրահայեաց տեսութիւն , թէ և անաղաչաւորաց լեզուաց կարողապէս բաւես ողորմել։ Որ 'ի մէջ մահու և կենաց շաւիղ վստահութեան ուղղես 'ի ծովու , վկայութիւն եղեալ հաւատոյ , թէ և յանկակածաւորն վայրի քեւ պաշտպանիմք անգայթագղելի . որ իբր զջուր կաթսայից 'ի հրոյ եռացեալ , որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես։ Որ հայիս յերկիր և տատանես զսա , զի անբանիւն ըզմտաւորս զգաստացուցանես . որ իբր զակատ մի անձուկ նաւի 'ի վերայ շարժութեան ալեաց՝ զանբաւ թանձրութիւն գետնոյս դըրդես , որով ծանուցեալ լինիս ամենից հաստուածոյ՝ թէ իցես աներկբայելի , որ 'ի բան քո զօրեղ հիմնացեալ ունիս զամենայն։ Որ սերմանես զարտաշնչացեալ մարմինս յերկրի , և զնոյն անկորուստ պահեալ կրկին կենդանածնես , որ ապականացուս աւանդեալ՝ աներծս ստանաս , որ ընդ մահայու նիւթոյս՝ զնչխարդ կենաց խառնես , որ հրամանաւ ակնարկութեան 'ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանզարդութիւն ամենից եղանակաց։ Քո է զօրութիւն և կարողութիւն , որ շրջանակես զժամանակըս ամաց հոլովման աւուրց յայլ նմանութիւն բարեպատեհ տեսողութեան։ Որ կարդաս զանմռունչսն իբրև զկենդանիս . որ ազդես միայն , և նոքա ընթանան , որ միայն հենուս անկանես անձառ արուեստիւ հընարագիտութեան մէգ և առաւօտ։ Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեանն , արարեր զփառաւորեալսն մեծամեծս հրաշակերտից հանդիսից , ըստ դրոյն երջանկութեան կանխահիացն զարմացման , այլ իմն գոյացութիւն տօնելի տեսակի աներծ աշխարհագործութեան ես քան զոյն 'ի մարդա-

նալդ քո, որոյ ոչ գոյ թիւ։

Գ. Որ ահա զնշան մեր քեզ գրեցեր, որ զարդա-րութիւնն քո մեզ շնորհեցեր, որ ընդ քեզ կրեցեր ըզ-հաշտութեանն մերում փրկանակ, որ ոչ երբէք լքանիս յողորմութենէ, դարձո զամբարշտեալս 'ի պաշտօն բա-րի երկիւղի, զթմբրեալս 'ի զգաստութիւն արթնու-թեան սրտի, զանմաքուրս 'ի սրբութիւն պայծառու-թեան կերպարանի, զբազմաբիծս յանբծութիւն հան-դարտական սուրբ պատկերի, զբեկեալս յողջութիւն, որ 'ի դիպմանց ոչ խորտակի, զլացեալս 'ի խնդութիւն զուարթութեան անտխրելի, զյուսահատեալս 'ի սէր միաւորիչ անքակտելի, զամաչեցեալս 'ի վստահութիւն հաստատութեան անշարժելի, զխաւարեալս 'ի լոյս ե-րանութեան անմեկնելի, զմահու դերեալս 'ի կեանս որ ընդ եղծմամբ ոչ անկանի։ Օ՛ի փառաւորեսցի անուն քո, Յիսուս, խոստովանեալ յամենայնի ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ 'ի բարձունս երկնի և 'ի ստորեւ երկրի և 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԿԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր արդ առ ամենայն բան յամենայնի ուղիղ ես, աստուած, իրաւամբք դատիս, արդարութեամբ կըշ-ռես, ճշմարտութեամբ չափես, օրհնութեամբ հետե-ւիս, բարւոք ընթանաս, ստուգութիւն սիրես, յստակու-

թիւն կամիս, լուսաւորութիւն համբուրես, փորձիւ յանդիմանես, երկայնմտութեամբ քննես. ոչ ունիս նենգութիւն և ոչ գոռոզութիւն այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն։

Բ. Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական Հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրելոցն շնորհօք, ըստ բանին սրբութեան՝ որ աւետարանաւն կենաց 'ի քէն ընկալաք. որ ոչ 'ի կոծելն ողբացի, և ոչ 'ի փողելն կաքաւեցի։ Ասացեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ես 'ի նոյն չարիս պնդեցայ. մեղաւորիս՝ թէ մի՛ ամբառնար եղջիւր 'ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի, և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ Ամբակումայ, Դաւթի և Զաքարիայ։ Օրհնութիւն ինձ կամեցար, ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մասն. սիրեցի բարկութիւն և ոչ բարութիւն, շօշափեցի ըստ գրոյն զխաւար, և ոչ զլոյս, կենդանի ձայնիդ քո, զթած, ապառումս պատասխանեցի։ Զորդն անմահ ասացեր բանիւ Եսայեայ, և զհուրն անշէջ և զկշտամբութիւնն անխափան և զտեղին յաւիտենից և զօրինակ նմին սոսկալի, և ես ոչ իմացայ ըստ սաղմոսողին և ոչ մտառեցի, այլ 'ի մռայլ մտաւորական կուրութեան գնացի։ Ցուցեր մարգարէիւն, թէ զօրհնութիւն ստացի որ զօրէնս գնէ, և ես համառօտել զնոյն փութացայ։ Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո, տէր Յիսուս Քրիստոս, զԴաւիդ իւրովքն բանիւք կանգնեցեր, ասելոյն ինքեան ընտրութեամբն առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութեամբ բանին միջնորդեալ զկրկին հաստատութիւնն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս և զսորին նմանիս պարծա-

նաց առ իմս խրախոյս, և ոչ զկծեցայ. ճեպեցայ 'ի
տունս Բաշաղու և ոչ ստուծոյ. 'ի յերկուս յետս
երկմտութեան կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ
երգիծանելոյն Հեղիու։ Ընդիմ զՄովսէս լուովքն օրի-
նակօք եկեալ 'ի մեռելոց, և զտառս մարգարէին գըր-
եալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոյն ընդ մտացս
մատն յեռեալ, և զտէրդ Հասարակաց կտակաւն ա-
ւետեաց յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովք,
և անհաւատագոյն քան զՆոգեսին եղբայրակցութիւնն
այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական, նման-
եալ զդայականացն մասնց անողորմիցն յղփացելոց,
մնացի իբրև զսալ դարբնաց անոստ՝ յամառեալ քա-
րացեալ սրտիւ, որպէս օրինակն է Բելիարայ, և ոչ ա-
պաշխարեցի։

Գ. Այլ ազդեա վերստին առ սոյն կերպարան լըք-
եալ կրկին ողորմութիւն բարի, աՀաւոր, մարդասէր,
խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անխախճան
թագաւոր, զօրութեամբ պանծալի խաչիդ խորՀրդոյ,
'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան երկաման-
ցըս յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան.
զի առեալ նպաստ օժանդակութեան 'ի գթութենէ
կամաց ամենակալիդ, որոտասցէ բղխեսցէ Հոգիս, ըն-
ծայեալ աչաց վշտագնեցելոյս վտակս արտասուաց ար-
բուցանողաց ինձ 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն,
և քեզ 'ի Հաճութիւն ընդունելութեան, ամենապար-
գև տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԻԸ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ես արդ ես Նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, ատրիկեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանձառիցն իմոց ճառեցի, զպատկառելին խայտառակեցի, զգաղտնին հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, ըզթագուցեալսն ցուցի, զամփոփեալսն տարածեցի, ըզդառնութեանս մաղձ ժայթքեցի, զգործակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վիրիս քամեցի, զխորս պարտեաց իմոց ծանուցի, զպատրուակն կեղծեաց առի, զքող ոգեղութեանն վերացուցի, զամօթալեացն զգեստ մերկացուցի, զգարշելին յանդիմանեցի, զմրուրն մահու փսխեցի, զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի։ Յանձինս վըտանգ ոչ անխայեցի, մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի, զարմատն հնութեան տեսիլ արարի, բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ, զմիաբանութեանն կապ խզեցի, ըզդղեակ սրտիս քանդեցի, ընդ կամացս որսոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ, զպահեստ անյայտիցն արտաքս հանի, զմթերիցն գանձ՝ մեծին գուշակեցի, զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի, զապառնեացն զփորձ այժմէն իսկ գտի, զդաշն կործանողին կորեցի, զուխտն խաբողին ցրուեցի, զկատարած մարտին յաղթութեան 'ի քեզ տէր Յիսուս ապաստանեցի. ըզպատերազմին խումբ գրգռեցի, զդիմադրութիւն դի-

մեցմանն՝ բանիդ աստուծոյ յուսացայ, զխաւարասիրացն փաղանգ լուսեղինացն զինուց սադրեցի։

Բ. Եւ արդ, ստեղծիչդ ամենայն եղելոց Քրիստոս որդի բարձրելոյդ աստուծոյ, զաստէն դսրովելոյ յայսպիսեաց բանից և զհարուածելոյ յայսքանեաց գանից մի կշտամբեսցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն։ Ո՛վ, հզօր անքննին անճառ բարերար Թագաւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւ խոնարհութեան, որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յոգի դատեցի, լից նուագօք այսր մատենի անարգանօք ամօթոյ զդէմսն տատանայի, և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո։ Մ՛իասցի կնիքդ լուսոյ 'ի դեղ տեսակիս, ամրութեանդ նշան հաստատեսցի 'ի տիպ դիտակիս, երևակ կենացդ փայտի ձևասցի 'ի պատկեր այտիս, արուեստդ հրաշից 'ի ճակատիս շուք նշանակեսցի։ Մ՛ի այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ, մի բարձցի 'ի տեսանելեացս բբաց ճաճանչդ օրհնութեան, մի մերժեսցի 'ի գլխոյս առ հաւատչեայդ վստահութեան, մի սասանեսցի 'ի բերանոյս ամրութեան սեմոց՝ փառք տեառնագրութեանդ։ Պահպանակդ երկրպագելի 'ի զդայարան սրտիս միասցի, չորից նիւթոց իմոյս գոյութեան քառաթևիդ նշոյլ ազդեսցէ, ձեռինս կարկառման փրկչիդ իշխանութիւն օժանդակեսցէ, մատուցման հաստուածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակութեանց բարեգործեսցէ։ Ի մեկնելս իմում մի հեռասցի սրբութիւնդ, մի լքցի պատիւս 'ի պատւիլն պարտաւորիս, մի մերժեսցի 'ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկութիւն, մի ջնջեսցին գիծք կենդանատուիդ 'ի քո գրեցեալս շնչոյ, մի եղծցի նկարումն արեան զօրութեան 'ի տիրատիպ խորանէս, ընդ իս բնակեսցէ յիմում գերեզմանին. 'ի ծորել մարմնոյս Թշուառի օծումն շնորհիդ առ իս պահեսցի, 'ի նորոգութեանն աւուր սովաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ, 'ի քոյոց այտի

ծանուցայց, քոյովք վաստակօք պճնեցայց, երախտեօք մեծիդ յարգեցայց, աւազանին զգեստիւ պերճացայց՝ քաւեալ ողորմութեամբ։ Ա՛ստո, բարեգութ, զվերարկուդ անապականութեան տաժանեցեալս մեղօք մարմնոյս, մի յարիցէ ընդ քոյս՝ բանսարկուին, հնացուցիչ հոգւոյս վատնեսցի, խաւարաբնակացն պատիրք մի ընդ իս վերելևեսցին։ Օրհնեսցի անուամբ քո, գըթած, վէհն իմ հանգստեան, ողորմութեամբ քո լցցի գուբն իմ գերութեան, ընդ արձակեսցի քև ինձ տեղին Թշուառութեան, անդորր եղիցի, խնամող, ինձ բանտըն բարկութեան, սնուսցէ զիս առ յաճումն արգանդըն մթութեան, յուսով քո շտեմարանեսցէ զիս յարկըն այն անձկութեան, ձեռամբ քո պահեցայց 'ի խըշտին տարտամութեան, Թևօք քո ընկալայց 'ի տունն տագնապի, դու, գովեալ, ընդ իս 'ի սենեակն վտանգի։ Նուաղս ինձ աստանօր 'ի Թիւս հազարաց, զի երբեմն էի վերնային և այժմ անդնդային, երբեմն տօնելի և այժմ աշխարելի։

Գ. Ա՛յլ և արդ կրկին դու օրհնեալ 'ի բոլորից գոյից յերկնայնոց և 'ի ստորնայնոց և 'ի սանդարամետականաց մեռելոց, անպարտականդ սյս տարադրութեան։ Ես վրիպեցայ, ես օտարացայ, ես յիմարեցայ, պարտեցայ և խոտան գտայ. ես լքայ, կամեցայ և կործանեցայ. ես մոլորեցայ, ես մատնեցայ, ես մերժեցայ, ես խորթացայ, գերեցայ, և դայթագղեցայ. ես նզովեցայ, ես Թշուառացայ, արբեցայ և վատթարացայ. ես ընկլուզայ, ես խաբեցայ, ես անօրինեցայ, ես ապականեցայ, մահացայ և իսպառ եղծայ. չիք քո առ այս ինչ մատն չարի, որ ես միայն անփոփոխ բարի։ Արդ կամք քո յիս, և խաւարն ինձ ճառագայթ. ճրագ յուսոյ քո անդ, և գիշերն վաղորդայն, մարմնոյ քո հաղորդեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ։ Իսկ ես ոչ գրեմ զանձըն իմ կենդանի վասն անփախչելի վախճանին, դարձ-

եալ զի ոչ վարկանիմ կորուսեալ վասն աներկեւան նորոգմանն։ Որ և փակեալ համարիմ ինձ զելս կենացդ վասն անքաւելեացն պարտեաց, դարձեալ՝ բացեալ ինձ զդրախտն՝ վասն փրկութեանն աւետեաց. քանզի ոչ այնքան վհատութեանն գոյժ տագնապէ, որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ։ Արդ տուր, տէր, տուր ողորմութիւն, առ ամենայն ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԿԶ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ որ ոք և առցէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պաղատել սմա, եթէ ՚ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես խմոյս բանիւ կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ ընդ նմին ողորմեալ նովաւ։ Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւնն, և ես ինձէն վկայեմ այսմիկ։ Բայց յիշեսցէ նա զՍողոմոն և զբանս նորա ընդհոգեչունչս, թէ ո՞վ ոք վստահասցի սիրտ սուրբ ունել, և կամ ո՞վ պարծեսցի մաքուր լինել ՚ի մեղաց, և զի ոչ յարեաւ մարդ երկրածին ազատեալ ՚ի պատասխանեաց. և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ո՛չ թէ և ՚ի թռիչս ամբարձման թևոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի կրկին երկուցեալ ՚ի վիմին իսկ հաստատութեան՝ ուսեալ ՚ի Պօղոսէ, գուցէ անկեալ ՚ի յերկիր՝ սահմա-

նողի այսմ կանոնի իրաւադատի կշռեալ նմանեցի։
Ո՛վ առցէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պը-
սակաց, առ 'ի շիջանել անընտրողաբար յանձեռնհասն
բարձրութենէ. և պատժապարտն՝ առիթ ազատու-
թեան, որով ամբարձեալ 'ի կործանմանէ հոգևորական
մահուն՝ ապրեսցի յաւէտ։ Իսկ ինձ եղիցի պատգամս
այս բանի արժան փորագրեալ ամենևին անեղծանելի,
որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդա-
դար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ
աղաղակէ. լիցի և ոսկերացս քակտեցելոց 'ի հողապատ-
եան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խոս-
տովանել. հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝ բարբա-
ռով իմն անազդելեաւ ծածկատեսիդ զսոյն պաղատել։

Բ. Տէր գթութեանց, աղբիւր ողորմութեանց, պար-
գևք բարութեանց, որդի բարձրելոյ տէր Յիսուս
Քրիստոս ողորմեա խնայեա, մարդասիրեա, նայեա 'ի
վտանգս, ակնարկեա 'ի բեկութիւնս, խոնարհեաց 'ի
թշուառութիւնս, տես 'ի տարակոյս անձեռնհաս տագ-
նապիս, հասիր հաղորդել կորստականս կարեացս։ Շօ-
շափեա բժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւնս,
ունկն մատուցես քաղցրութեամբ ողորմագին հեծու-
թեանս, լուր 'ի խորոցն անդնդոց մահուն գերեզմանի
անմռնչելի հառաչմանս, մտցէ յականջս ամենալուր լը-
սելեացդ ձայն պաղատանաց վատնեալ անդամոցս։
Եւ վասն զի գթական կենդանութեանս անապական
է, անփոփոխ լիցի և սիրոյդ քո գթութիւն. կցորդ լեր
հեզութեամբ տաժանաւորս տկարութեան։ Մեռեալ
պատկերիս մի՛ ոխս պահեսցես, ընդ անշունչ կերպարա-
նիս մի՛ 'ի դատ քննութեան մտցես, մահու տանջեցե-
լոյս մի՛ հարուածս յաւելցես, ընդ բեկեալ խեցեղէն
անօթոյս մի՛ ուժգնութեամբ մարտիցես, վճռաւ կոշ-
կոճելոյս մի՛ բարկութիւն կրկնեսցես, կործանեալ շին-
ուածոյս մի՛ պատուհաս մատուսցես, շանս սպանելոյ մի՛

քարինս արձակեցես , լուսոյ ջախջախելոյ մի՛ սաստիկս որոտացես, հողոյս անպատուելոյ մի՛ իբր ամբարհաւաճի ուժգինս մռնչեցես: Զ՛մոխիրս մերժելի մի՛ 'ի դատ ընտրութեան կոչեսցես , զփոշիս ցնդելի մի՛ իբր զքո դիմամարտ գոյես, զտիղմս տաղտկալի մի՛ իբր զոսոխ վարկանիցիս , զգարշութիւնս անգոսնելի մի՛ իբր զըռնամարտիկ վանեսցես , զխէթս 'ի բաց ընկենլի մի՛ նիւթ գեհենին պահեսցես , զայսքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի՛ վերստին յանդիմանեսցես:

Գ· Ա՛յս ամենաթշուառ և խաւարարգել չիմին են ահա սրտաբեկ և յոգնաթախիծ արգահատութիւնք· հաստատեսցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել , ըստ սրտի արգահատելոյս · քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ · որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս: Արդ աղաչեմ զքեզ , տէր Յիսուս Քրիստոս , հայեաց յիս ողորմութեամբ , և մի՛ թողացուսցես լինել տնակից ինձ բելիարայ· և զմահաջեկոյց տապանին ազդումն անկենդանաւոյն թնդման թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հառաչման լալեաց քեզ հաշտեցուցչաց՝ յարդեսցես լսել , միայն բարեգործ , հոգեսէր , հզօր մարդասէր · և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին: Մ՛նասցեն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք· զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն · օճառք անվատնելի զինուց ինձ պատկանեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից հոգեւոր հնարից՝ զչարին հալածել զգունդ: Մ՛արտն որ առիս քե , տէր, վանեսցի· զի եթէ յարիցէ 'ի վերայ իմ պատերազմել , տեսեալ զքաղաքն ունայն 'ի զօրաց և զազդողականացն գործի ապաձայն, զքեզ տէր ունիմ մշտնջենաւոր և աններհելի պահապան:

Դ· Զ՛ի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ

․քան զօրն կատարածի, և անշաւիղ արդեանն ինձ պատրաստեսցէ, առաքեմ զաղօթսն տէրունականս նմին զանմահու. եթէ 'ի վայր զիս հնարի կործանել, զծնրադրութիւն արարչին. եթէ 'ի մոխիր երկրի թաւալել ձեռըն բերիցէ, երեսացն աստուծոյ 'ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ. եթէ վաստակս ինձ ցաւոց նիւթեսցէ, ․քրտունքն յուռթի արեամբն զանգեալ փրկչին աշխարհի զնա խուեսցէ. եթէ յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծին զիս արձակեսցէ. եթէ յուրացութիւն պարգևաց լուսոյն բռնադատեսցէ, հայհոյութեանն համբերութիւն յաստուածամարտիցն՝ զնոսին ընդ նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից գաղտնաձիգ զինուց ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան փառաց հօրն կապարճից նըմին պատահեսցէ։ Եթէ ․քողով լուսոյ խաւարականի մտանել ընդ աչս անամօթեսցի, կռփումն գլխոյն ձորձով պատեցեալ լռմանն ամենից զնա տանջեսցէ. եթէ մոլեսցի զխստահութիւն ձեռինս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ գոյացուցչին զնա չարչարեալ ըմբերանեսցէ. եթէ ձաղանօք այպանման զիս կատակեսցէ, տանելն ծաղու ամենազօրին զնա հենգնեսցէ։ Եթէ բժժանօք ինչ յուռթից կախարդել խորամանկեսցէ, ապտակն դիմաց հզօրին աստուծոյ զնա սաստկապէս ամաչեցուսցէ. եթէ 'ի մուտս գիշերային մթութեան խաւարաւ խաբէութեան լինեալ մարտիցէ, 'ի ճառագայթից լուսոյ երևման ․քո, տէր, խայտառակեսցի. եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեանցն արեգակնակէզ վառնիչ խորշակին զիս 'ի յարմատոց խախտել կարծիցէ, 'ի զօրութենէ նշանիդ լուսոյ խլեալ դօսասցի։ Եթէ 'ի փչմանն շնորհէ ունայն զիս առնել հնարաւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն ․քրովբէից ընդ մեղաւորիս զնա պատկառեցուսցէ։ Եթէ ժանիք խածողք ինձ ցուցանիցէ, լռութիւն երկնաւորին բերանոյ

զնա պապանձեցուցէ . եթէ խածմունս աղուականս հոգւոյս ազդեսցէ , բևեռացն հարմունք հաստողին բնաւից զնա կսկծեցուցէ։ Եթէ յընթացս անիրաւութեց խորհրդոց զիս մոլորեցուցէ , սևեռք ոտից անհասանելւոյն զնա կապեսցէ . եթէ հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ , քացախն ընդ լեղւոյն խառնեալ 'ի յարբումն բարերարին՝ զնա դառնացուսցէ։ Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս գոցէ , սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ իսպառ պարտաւորեսցի . եթէ ընդ վզել ընդդէմ հնազանդութեան տեառն հրամանի զանձն իմ ուսուսցէ , բերումն պարանոցի անսահմանելւոյն զնա կործանեսցէ . եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեսցէ , ստուար տէգ զինու մխելոյն 'ի կող ստեղծչին Ադամայ զնա հերձեսցէ , եթէ երկամբք վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ , պատանացն կտաւէից ունողին զնա ըմբռնեսցէ . եթէ յատակս մահու հայել զիս խարդախեսցէ , բնակել կենդանւոյն 'ի վէմն մահու զնա մեռուսցէ . եթէ խնդասցէ ընդ մարդկորէնս իմ գայթագղութիւն , կրկին կորասցի կարկամեալ կամաւ . յորժամ անմահն աստուած յարուցեալ փառօք ընդ իւր նորոգեաց զընաւ մահացեալս։ Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հազարամէից բերկրեսցի , դողասցի կրկնեալ վերստին իսկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմբռնման սաստկագունի յանվախճան տանջանարանին։ Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի , գոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ գեհենին , որ պատրաստեալն է նորա և նորին հրեշտակաց , նմա պատմեսցի , որ յաւուրն մեծի մեծին ատենի։

Ե. Իսկ ինձ ապաւինելոյս 'ի քեզ տէր Յիսուս , միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ , արարիչ երկնի և երկրի և ամենայն զարդուն որ 'ի նմա , որ գալստեանդ քո ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ.

՚ի յոյս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ, զպարտութիւնս խոստովանիմ և զմեղանս հրապարակեմ, կշտամբանաց քարամբք կոծիմ և հառաչանօք սրտիս տապանամ, ՚ի խէթ խղճիս խոցոտիմ և բոցով շնչոյս ճենճերիմ, աղի ցօղով արտասուացս այրիմ և երկկամանցս ազդմամբ կիզանիմ, յուսակտուր օդով ցամաքիմ և դառնաշունչ հողմով շիջանիմ, թախանձանաց բանիւս երերիմ և կողկողագին հեծութեամբ դողամ, տաժանելի կրիւք տուայտիմ և տագնապաւ հոգւոյս տատանիմ, ՚ի կոծ մրրկաց ծփիմ և ՚ի բախմանէ ալեաց սասանիմ, ՚ի լրութենէ համբաւոյն սարսեմ և յիշատակաւ ահին կորնչիմ, կերպարանօք ատենին հալիմ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լուր բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ, քաղցրութիւն անճառ, որ բարի և տես տենչալի։ Քանզի կարող ես յամենայնի և առ ելս շնչոյս իմոյ՝ փրկութեան մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ԿԷ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բ ԱՅՑ քանզի յոյժ արդար է բան խրատանցն Քրիստոսի աստուծոյ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ. զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանիս բոլոր էու-

թիւն կերպին իսկութեան մեծին աստուծոյ՝ միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ։ 'Նորա ոչ են շնորհեալ 'ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատութեամբ. վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ հանապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ 'ի փրկութեանն. նա վաճառեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն. նա հերքեալ 'ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոստացաւ հանդիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն կրտրեաց զառհաւատչեայ, և զիմն առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս խոզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կարծաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա սողնոց նմանեցոյց, և զիս իւրոյն անուամբ կնքեաց։

Բ. Իսկ ես զերախտիսն աստուծոյ լքի զայսքանեաց բարեաց արարողն, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց, ահա անարժանս բարեաց, անձիրս երախտեաց անընդունակս սիրոյ, տոռամբք մեղաց ձգեալս, յերկնամունս խորոց խոցեալս. քանցեալ ծառըս արմաւենւոյ, գինիս յեղաշրջեալ. ցորեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատառեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիւնս 'փոխեալ, արկանելիքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս ընկղմեալ. մարգարիտս մանրեալ, ակնս պատուական սուզեալ, տունկս գօսացեալ, նեցուկս խորտակեալ, փայտս ամենեւին փտեալ, մանրագորս աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ, բոյսս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ 'ի գռեհս աղբեաց, կանթեղս հոսեալ 'ի կոյտս մոխրոց, այրս մահու 'ի յարեանց գնդից։ Բանզի միշտ խրատեալ ընդ Երուսաղէմի առակաւ Բաբելոնի 'ի մարգարէիցն ձայնից անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ. որ աստէն անգոսնեալ եմ և անդէն խայտառակեալ, աստ դսրովեալ և անդ կշտամբեալ, աստ

ձաղեալ, և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և անդ յանդիմանեալ, աստուստ ապշեալ և անդանօր լքեալ։ Աստ հեծումն և անդ հառաչանք, աստ կարծիս և անդ կատարած, աստ խէթ և անդ հատուցումըն, աստ արկածք և անդ հանդէսք դատաստանի, ուր ոչ է բան խրատանց և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ ելք ժամանակաց, ոչ ուղք յուսոյ և ոչ դրունք ողորմութեանց, ոչ աջ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան։

Գ. Այլ դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն, դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութիւն, քև բժշկութիւն, քո ողորմութիւն, միայն հզօր, կենդանի, անճառ, տէր Յիսուս Քրիստոս բարերար աստուած. օրհնեալ, օրհնեալ և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սրբոյ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի խնկութեան մեծիդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԿԶ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ 'ի յիշատակ ահարկութեան վերագրեցելոցդ՝ որք յաստուածուստ են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զի՞արդ դադարեցայց 'ի նորոգ ողբերգութեանց, և կամ ո՞րպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս։ Զի եթէ զչորեքվտակեան առաջս գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ

և զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ամենայնի, և զըղջումն ելից խորեանց առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց սաստկութեան զբոց զովացուցանել ոչ բաւականացին։ Եւ կամ մարգարէին սրբոյ ըղձականութիւն կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմութիւն, և ծրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ողւոցս չափել զվտանգ ոչ ձեռնարկեսցեն. և ոչ եղերականք ջայլեց համօրէն բանահիւսից կանանց լալականաց 'ի սիրտ և յոգի վերաւորելոց՝ զաղէտ վտանգիս 'ի յերգ արկանել և կամ 'ի նուագս ձայնից բերել։

Բ. Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ Յոբայ կամ Երեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա, զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի. այլ ուրեմն զիս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ միոյ մանաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն ծնին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու դրացիս, մշակս մեղաց և արբանեակս անօրէնութեանց։ Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր, աստուած բարերար. ոչ գնացի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ, ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեռանն աւուրցն խառլութեան կերակրել պատրաստեցայց. ոչ կառուցի ամրութիւն որմոց և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի չնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց. ոչ կազմեցի թոշակ փրկութեան վարուց մաքրութեան, որ զնորոգութիւն ինձ երաշխաւորէ. ոչ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մատնչին, զի 'ի դատաւորին ձեռանէ աստէն խուկ փրծայց. ոչ լութեամբ ձեռին օրհնութեան մատեայ յանդիման, որով

օրէնսդրին մասնակից գտայց սրբեցեալ։ Ոչ դիմաց ետու զգուշութիւն և ոչ Թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյս իմ զինուորութիւն և ոչ ահեկիս պարածածկութիւն, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս սպառազինութեամբ, որով զՃակատն յարդարեցից։ Զկանուխն ոչ կապտեցի պտուղ, և անագանին ոչ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ և ոչ իւղ ողորմութեան, և դիշերոյն մռայլ՝ աննշոյլ. 'ի Նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ ստիպէ. զզարդ հարսանեացըն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լքի, և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի։

Գ. Եւ արդ զիա՞րդ առից մխիթարութիւն այսքանեաց վշտաց, և կամ ընդ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից, և կամ ո՞ւր արդեօք զզարշապարս ոտին կառուցից, և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից, և զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատեցից, և կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն համբարձից։ Զի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրևեաց հուրն Սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ յատակ խորութեան երկրի, սա երաց զկոկորդն ըմբռնողական և եկուլ զԴաթան բանակօքն Աբիրոնի։ Եթէ յանդրդնեցայց փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին։ Եթէ ընդ գաղանս ինչ Թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել առ իս քան երբեմն զԵղիսէին առ մատաղ մանկունս բեԹելացիս քրմորդիս։ Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղև եգիպտացւոցն խաւար շօշափելի։ Եթէ 'ի Թաւուտս բարձանց, նոքա են կոչեցեալք 'ի սպանդն զոհին բոսորայ դիւականցն։ Եթէ 'ի տկարն խիզախեցից, վառնիմ 'ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ

տախծունք։ Եթէ յարջոյն պատառողաց ապրեցայց , մժխմքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն։ Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ , մժղուկքն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման զինև մաղեսցին։ Եթէ յեզջերւէ միեղջերւոյ փախնուցում զերծեալ , նկուն ձիրանք աղկաղկաց մնոցն մրմռքողաց՝ զիս կեղեքեսցեն։ Եթէ ՚ի սեննեակս շտեմարանաց խորշից ղօղեալ ամփոփիցիմ , տաղտկատեսակ գարշութիւն գորտոյն մեղաց օրինակքն զիս զազրացուսցեն։ Եթէ ՚ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց , շարք շանաճանճոցն տարմից զինև պատեսցեն։ Թողում ասել զխառնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր ընդ Թունաւորն Թրթուր և ընդ անկենդանական երևիլն , հանդերձ ջրակարծ կարկտիւն և ապականագործ եղեմանբըն . որ առ աչաց տեսիլ ապաքէնք և նուաստագոյնք , բայց ՚ի յանկարծելն աստուծոյ յաւէտ գոռոզաբար ուժգնութք հարին հանին վանեցին զհպարտն ամբարհաւաճութիւն փարաւօնի բռնութեանն բուռն դաւաղանին՝ յաղթող վիճակաւ . որ են կերպարանք Թաքուցելոցն կրից ըկողաց անձնականացն աներևութից եգիպտացւոցն անօրէնութեանց՝ յոգի տանջողաց՝ գաղտնի մնասողաց։

Դ. Այլ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բոլորից , ՚ի յատեկին հանդիպացիր հերքել զնոսա . և ինձ ողորմեա կրկին գթութեամբ ձեռն մատուցեալ փըրկութեան տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ ՚ի մահ պարտելոյս։ Զի դու միայն ճանաչիս աստուած փառաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից . ամէն։

ԲԱ՛Ն. ԻԹ

ՎԵՐՍՏԻ՛Ն ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻ՛Ն ՀԵԾՈՒԹԵԱ՛Ն ՆՈՐԻ՛Ն ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅ՛Ն ԱՂԷՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ, վասն զի ՚ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմս եղանութեան տեառն և ստացողիդ` իբր ՚ի վերայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ հանապազ եռամ և ոչ երբէք պարզիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ ես միանամ, ահա զուր արծաթագործդ երկնաւոր իմ ճարտարապետ, ՚ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի առակի, և չարութիւնս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար` իբր զխելագար դիւաբախ իմն ողորմելի յանդգնեալ անկարգս խօսիմ` զիմս զպարտիսս աճեցուցանել, քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել։ Եւ զի մի անընդել դիպուած և անկիրթ պատահումն և անհաւասար հանդիպումն` պատրաստութիւնք հանդերձելոց տանջանարանացն ինձ երեւեսցին, ամենեւին անմռունց պահեաց սասանելն ՚ի յիմում մարմնի նշխար մնացուածոց նախնումն անիծիցըն. զոր ՚ի փոքուէ տարրէ անարգէ զմեծն է ուսանել։

Բ. Քանզի խաղալն ինքնաբերական գիւտք որովայնի` բոտոտք ճապուկք շարժողականք և ազգի ազգիք, որդունք աղեաց գաղտնակուրք, խաղաւարտք հրակայծակք և բիծք բոցալիծք և անիծք անկերպաւորք և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջողականք։ Ասպատակք այլոց վայրենեաց, ըստ նմանութեան դիւաց գիշերամարտից և մեկնազէն բարբարոս գնդից խառնասփռաց, և գաղանու-

թեամբ քանասար գայլոց արաբացւոց, կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն, կրկնապարոյր կռածագ-կցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարծի, իբր դժնիկ փշովք խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն, և յանկողինս մահճաց հանգստեանն վաստակս կրից ցուցանեն։ Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն նոցա նոցին, վաղվաղակի ըզգան զինս վտանգին՝ զոր ազդեն մարդոյն. և անդէն խկոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք իմն թռիչս արձակեն, և ըստ մարախի ձևոյ ոստոստեալ այսրը անդր տարաբերին. և ըստ բազմապատիկ նենգութեան բարուց դաւող ազուեստուց՝ խորամանկեալ խուսափեն 'ի պատուածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին։ Եւ այնքան չքոտի և անքատ անձամբքն ոչ միայն զռամիկսն և զխառնիխճաղանճս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հանեն տարագրեն 'ի գահիկոն յարկի ապարանիցն բարձրութեան, և կամ 'ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց արեաց, որք իշխեցին ամբոխից և տիրեցին ժողովրդոց և առին զքաղաքս ազգաց, զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռինն ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել վեհիցն բռնութեան, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի։

Գ. Եւ զի՞նչ է ինձ զփոքունց և զանկածից ծաղրականաց ոմանց գոյութեանց 'ի կիր արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են աստուածութեանն՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն, որք 'ի մարմնոյս անօրինելոյ ընծայէն պտուղք դառնութեան։ Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից գիւտք, և կերչացն կցորդ անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապագայիցն սոքօք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախըստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ

ակնարկութեան և մարդկային կարգ և հնարք վրիպե-ցան։ Իսկ դու, բարերար, ամենայն ունիս բաւակա-նապէս զկենայն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նո-րոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. Լ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ, ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փոքունց աստի երկրայնոց չհամարելոց ընդ դոյս եղե-լոց՝ 'ի մեծագունիցն տեսակս, աստցից զոմնելի հան-դէս իրաւանց ահաւորին անաչառութեան։ Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն աստուծոյ իբրև զնախա-ծանօթ հայրապետութիւնն, և կամ մաքրագոյնք որ-պէս մարգարէսն, կամ անբծագոյնք իբրև զառաքեալ-սն, կամ ընտրելագոյնք որպէս մարտիրոսն, եթէ ոչ դու մարդասիրեսցես աննուազ բարիդ և անփոփոխ խը-նամակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդու-նայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ։

Բ. Զի եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն ար-ձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդա-պետէ, 'ի տապոյ անտի պապակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան։ Իսկ եթէ առ Մովսէս, և նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց առ-նըն փրկութեան, որ զհայթայթանաց կրկուտն 'ի պահ-

պանութեանն աւուր ժողովէր. իսկ եթէ առ Ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. իսկ եթէ առ Դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան ստգտեալ է և նա. իսկ եթէ առ Նոյ և Յոբ և Դանիէլ, զայս Եզեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց աստուծոյ ազդեալ, կենդանի եմ ես ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրեանց 'ի բարկութենէն որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին. իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց խուն մի խիթացեալ և նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ։ Թողում ասել զբազմացն գումարութիւն խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն. ընդ որս և Յովհաննու իմն մարգարէի 'ի մէջ աստուածառաքն սպասաւորութեան մարդկօրէնն գայթակղութիւն՝ մնայ յոլովից անթարգմանելի, թէ և 'ի դէմս իմն մեկնութեան ձևակերպեսցի։

Գ. Նա քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, շնորհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ, կենագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետև դիտացեալ զաւկն որքանութեանց հողածին բնութեանս, որք մխիթարեն օրինակաւն նմանաբար հարազատապէս վստահութեան յուսահատելոց, ահա առ քեզ դիմեցից՝ որդի աստուծոյ կենդանւոյ Քրիստոս օրհնեալ յամենայնի։ Մ՛անաւանդ զառակն ազգակից այսմ մաղթանաց ստանօր յիշեալ, զմերագրելոցդ բան վերստին արդարացուցանէ. բարի է, ըստ իմաստնոյ ուսմանն երջանկի, անկանել 'ի ձեռս տեառըն, և մի 'ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին։ Նա այս բան թէ և ըզ-

Դաւթին իմն գծագրէր, որ զերեքմասնեան հարուածն
աստուածեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կա-
մաւորաբար զդատակնիք մահուն սատակման՝ իբր ըղ-
կենդանի Քրիստոսի հաւատոցն յաճախութեամբ, քան
զերկուսն ևս այլ փոքրկունս՝ որք տանջենն և ոչ ողոր-
մին. սակայն և իմս օրինակութիւն բանիս պատկերի
ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է
այլայլեալ յարմարութենէ. զի ոչ եթէ զփրկեալսն
նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութեան,
առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին ա-
նուն պատկեմ, և զշնորհս նորին առ ամենեսին բարեհըռ-
չակեմ, և զբնաւին բարձունան 'ի Թախչս վարուց խոս-
տովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմու-
Թեանն դեղոյ։

Դ. Ո՛հա դու կեանք, դու փրկութիւն, դու բժըշ-
կութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն,
դու լուսաւորութիւն. արա ինձ անդորր 'ի մեղացս
աշխատութեանց, զի և քեզ լիցի հանգիստ 'ի մշտա-
դատս հեզութեանց՝ ձանձրացուցիչս Թախանձանաց.
որ ոչ այլ իւիք, քան Թէ փրկութեամբ մարդկան
պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՀԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ քանզի երջանիկքն և փառաւորեալք սըր-
բոցն պարք, յորոց ոմանք դոյզն ինչ զԹեցին և յա-

ձախադրոյնս հաստատեցան, փոքունս սասանեցան և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան. յորոց միոյն զզանգուածոյն յայտնէ զհասարակաստեղծն ակարութիւն, իսկ միւսն զգերազանցն քան զբնութեանն օրէնս. փառս և առաքինութիւնս հրեշտակականս։ Սա է արդ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ աստուածութեան հօրն Քրիստոսի, ընտրեալքն առնեալքն խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս Քրիստոսի պաշտեցեալք, և իբրև զօթևանս հոգւոյն սրբոյ յարդարեալք, յորս չէք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենեքին անկեղծութիւն և լուսաւոր արդարութիւն, և որքան մարթ է զմարդն աստուծոյ՝ աստուծոյ նմանեցուցանել։ Սիրեսք պարզք և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անստգտանելիք, պաշտօն առ աստուած կարծր և անփոխարկելի, ընթացք արիականք և անկասելիք, ճշմարտութիւն միատարր և անցնդելի, դիմադրաւութիւն զօրեղ և անհերքելի, տեսաւորութիւն պայծառ և անապշելի. իմաստասիրութիւն վերնական և անկոխելի, պատկեր մաքուր և անաղարտելի։ Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ աստուած խոկ վարդապետեալ, և նոքօք հաճութիւն 'ի մէջ խաոլութեան արարչին բան լուսաւորեաց։

Բանք պանծալիք հաշտեցուցիչք աստուծոյ։

Բ. Այլ ես անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ պարաւեալս, որ մինչդեռ արթունս եմ՝ նիրհեմ, մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ, 'ի բարեպաշտելս իմում գայթագղիմ, մինչդեռ աղօթեմն՝ և վրիպիմ, 'ի յընթանալս իմում և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ, 'ի խաղաղանալս իմում ամբոխիմ, մինչ-

դեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյն հակամիտեմ, 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեանն ճաշակ՝ օշինդր խառնեմ, ընդ կուզս բարեացն՝ չարիս հիւսեմ, ընդ կանգնելն և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ, աճեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վճարեմ, կարկառեմ և անդրէն ամփոփեմ, ցուցանեմ և ոչ ընծայեմ, մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ։ Ի ճարակել խոցուածոյս անդրէն վիրաւորիմ, 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ, զուր հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ, գրիմ և խոկոյն եղծանիմ, նաւեմ և 'ի գիծն թուլանամ, սկսանիմ և 'ի հանդիսան ոչ ժամանեմ։ Կարգիմ և դարձեալ սասանիմ, լնանիմ և կրկին հեղում, շարունակիմ աստ՝ և անդ 'ի ստորևս հոսիմ, բարդիմ և անդէն տոչորիմ։ Հիմն արկանեմ և ոչ գլխաւորեմ, սակաւ վաստակիմ և բիւրս վատնեմ, դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ, զայլս խրատեմ և ես ի՞քն անփորձ եմ, միշտ ուսանիմ և երբէք 'ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ։ Շիջեալ չարիսն նոյնչափ արծարծեմ, սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լքանիմ, լուրիմ և խոկ և խոկ առ նմին մեղկիմ, զայս կարկատեմ և զայն պատառեմ, խլեմ զեղէճն և տատասկ տնկեմ։ Ընդ ամբառնալն և այսրէն բերիմ, մտեմ 'ի բոյնն աղաւնի և անտուստ ագռաւ ելանեմ, գամ սակաւ մի սպիտակ և սրանամ դառնամ բնաւին սևացեալ, առնեմ զիս քեզ դաւանել և ապանողին նուիրիմ, ընդ յանդիման լինելն և թիկունս դարձուցանեմ։ Սաքրկիմ և այլ մրճոտիմ, լուանիմ և նովին զաղբանամ, կերպարանիմ զԴաւթին և գործք զՍաւուղայն կատարեմ շրթամբք ճշմարտեմ և ստեմ երիկամամբք, աջովս մատակարարեմ և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ երկրագործութեան ցորենոյն՝ որոմն սերմանեմ, 'ի բարձրագոյն իմաստիցն 'ի վայր իջ-

եալ, ես ինքն զտանիմ։ Հրեշտականամ յերկուս և 'ի խորհուրդս դիւանամ, 'ի յոյս հաստատիմ և 'ի միտս տատանիմ, սուտ ձևանամ և իրօք խոտորիմ, կեղծաւորիմ արդար և արդեամբք ամբարշտեմ։ Դասիմ 'ի պարս հեզոց և ընդ այսս կայքաւեմ, 'ի մարդկանէ գովիմ և 'ի տեսողէդ պարսաւիմ, 'ի հողածնելոցս երանիմ և յորդւոցն լուսոյ աւաղիմ, հաճոյանամ յետին ռամկին և Թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Զատեանն դատաւորին Թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. հերքեալ 'ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս ներքնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Ա՛յսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար. զտէրունի պատուէրն լքեալ, ԹելադրուԹեան օձին հետևիմ. արիանամ զօրապէս, և վատԹարագոյնս ընկրկիմ. զծանրուԹիւն աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն անմասն ելանեմ. 'ի բացուստ ճոռոմս խօսիմ, և 'ի պատասխանատուուԹեանն պահու պապանձեալ կարկիմ. 'ի յելս արևուն հարուստ երեւիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ։ Ի յաԹոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ. ննջեմ խեԹիւ, և արհաւրօք զարհուրեալ զարԹնում։ Զանդաստանս կամացս չարաչարս հերկեմ, փոյԹ խնամով 'ի չարիս, միշտ անաւակ որդիս, անդարձ տարագրեալս, անզղջական զառածեալս, անմխիԹար տրտմեալս, ինքնագրաւգերեալս, մահու և ապականուԹեան ծառայեալս, անողջելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուատելի հատուածեալս, անարծարծելի շիջուցեալս, անկազդուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս։ Նա եԹէ պարտ է զաստիկն ստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա գրեմ գրեմ և ոչ անխայեմ զխոխւսնիւԹեալ գեհեննին։ Ստացուածս նախանձու նորոյս Ադամայ երկնայնոյ, որպէս և Կայենն առա-

ջին հնոյն և հողեղինին. որ ունիմ զբնաւն աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ոչ զնչոյս տուրևառութիւն, այլ զբանիցս կշտամբութիւն։

Գ. Եւ արդ ո՞ւր իցեն փրկութիւնքն, ուր սկզբնահայրն հաւատոց 'ի յուսահատութեանն վայրի զանգթութեանն իմ չարիս կրկնէ, մեծն մարգարէից քարամբք բանից կոչկոճէ, արին բարեփառ աշտէին Նիզակաւ 'ի մահ սատակէ, պատկեր ճշմարտին ընդ Աքարու համայնիւ ջնջէ, աստուածարեալն վեհից՝ յարագողացն վրիժուց մատնէ, մարգարէածին տեսանողն՝ ընդ ամաղէկացւոյն առաջի տեառն սպանանէ, նախանձաւորն աստուծոյ երկնատեղաց բոցոյն վառնէ, ստուերին լրումն և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութեամբ հոսէ, պետն առաքելոց ընդ Սափիրայի 'ի կենաց զըրաւէ, զարմանալին քննութեամբ հոգւոյն՝ բուրումն յինձ մահու ընդ կենացն քարոզ խառնէ։ Արդ անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժգնութեան հրամանի վերնոյն արի սպառազէնք. ընդ հրեշտակացն և մարդիկ, ընդ տիեզերաց երկրի և տարերք, ընդ անզգայիցն և չարժողականք, որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք լկանաց յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապադայից. իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ միրկեալ կենացս վտահութիւն, մնայ անկայուն 'ի հաստատութեանց։ Որ եթէ ոք իմաստութեամբ 'ի քըննին առեալ խուզեսցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութիւն, զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դատեալ, որ առանց թուոյ և քանակութեան համարոյ թինդս առեալ անբաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմինս ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանագրութիւն։

Գ. Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ Թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս, աստուծոյ կենդանւոյ միածին որդի, հզօր բարձրեալ անքըն-

նին անձառ քաւիչ ահաւոր, սաստեա 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց, արձանացո զծարաւս մոլեգին շարժման սրտիս խռովութեան, ընդոտնեա 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման զցնդեալ մտացս վայրագութիւն: Եղիցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամենավարան բքոյս սասանման, սատակեա խափանեա զբազմագլխեան անդամս ուրուականս գաղտնեաց ամօթոյս երկրակենցաղս հինից: Գրեսցես աղօթըս մտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի. հան 'ի խորոց մահուս անդնդոց չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ. ընկալ զխոստովանութիւն անձնադատ բանիս 'ի հոտ անուշից. շնորհեա մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ. ՀԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՈՑԼ ահա ձեզ ասեմ, ով եկեղեցիք միանձանց և աշակերտութիւնք կրօնաւորանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռօք առ ակնկալութիւն յուսոյն պարգեւաց բարեացն անբաւից տեառն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարուք զայս աւանդութիւն խոստովանութեան 'ի շինուած փրկութեան հոգւոց: Ծանիրուք

սովիմք զմարմնոյս պարտութիւն, յիշեցէք զմարգարէականն ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ, զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի աստուծոյ, և զոչ ոք է արդարն և ոչ մի։ Զտէրունականն մի մոռանայք, 'ի կատարածն իսկ պատուիրանին գոդջիք ըզձեզ ծառայս անպիտանս. մի եղիցի լինել ձեզ որք խաբողին. զգուշացարուք և դրոյն, թէ կերակուրք նորա ընտիրքն։ Քանզի և ես իսկ, որ զայս նուագութիւն մասնաւոր պողոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական սոգտանք բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց, 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութեամբ հատեցի եդի զիս ամենայնիւ պարտական չարեաց։

Բ. Լուայ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաճեցայ, 'ի յասել նորա անյարմարապէս առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք շնացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու։ Այլ ոչ ընդհատ ինչ յանօրէնութենէ. թողցէ նմա տէր աստուած զայսոսիկ. թէ և ճշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց, 'ի յասել զանյարմարսն 'ի դիմաց ժողովրդեանն Իսրայէլի բանիւ Զաքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի գիտողին աստուծոյ մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս աներևութիցն մտաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս նոքօք ամենիւրաւ հատուցմամբք, ոչ կերպարանեցայց տեսողին, ոչ կեղծաւորեցայց քննողին, ոչ ատեցից զոչ գործեցեալսն նկատողին, ոչ խաբէութեամբ ընդ միտ ինչ մտից մեծին, ոչ 'ի տեսիլ բարւոյ ցոփութեան զչարս քողարկեցից, ոչ 'ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարդեցից, ոչ խենեշեցայց 'ի զարդ օտարոտի, ոչ պճնեցայց այլով պա-

ծառուԹեամբ, ոչ պաճուճանս յարմարեցից տգեղուԹեանս դեղոյ: Ոչ որ մեղաւոր իբրև զիս, ոչ որ անօրէն, ոչ որ ամբարիշտ, ոչ որ անիրաւ, ոչ որ չարագործ, ոչ որ վրիպեալ, ոչ որ սխալեալ, ոչ որ մոլեգնեալ, ոչ որ խարդախեալ, ոչ որ շաղախեալ, ոչ որ ամաչեցեալ, ոչ որ դատապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ որ, ես ամենայնն և յիս ամենեցուն: Ոչ հեԹանոսք, զի ոչ գիտէին. ոչ հրէայք, քանզի կուրացան. ոչ տգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից: Պետ վարժից կոչեցայ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստն առ աստուած եղծի. բարի ասացայ առ եղկուԹեանն ժառանգուԹիւն. սուրբ վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի աստուծոյ. արդար դաւանեցայ ամենայն լիօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի. յաւաղանէ կոչեցայ ԱրԹուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փըրկուԹեանն աւուր Հսկող յորջորջեցայ, բայց զգաստուԹեանն աչս կափուցի: Ահա դատաստան, ահա յանդիմանուԹիւն, ահա նոր կշտամբանք և հին դատապարտուԹիւն, ահա ամօԹ դիմաց և տագնապ հոգւոյ, ահա խնդիրք փոքունց և կշիռք մեծամեծաց:

Գ. Այլ դու միայն տէր աստուած մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեաց մեղապարտս անձին ընդ վերջին պարտաւորուԹեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս: Մի լուայց 'ի քէն զայսոսիկ, գԹած, փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի: Այդ բարձցես և վերացուսցես զպահ պարտաւորուԹեան կանոնիս ընդ քեզ կապելոյ տենջանօք հոգւոյս: Հան զնախատինս պատկառանաց խայտառակուԹեանս, ծածկեա աջովդ կարողուԹեան զոգեղ տեսակ մարմնոյս մերկուԹեան, մատո հանգստեան զԹոպեալս ուժգին մեղացս բեռամբք, կորդեա

ինձ սահման հետոց բարութեան առ ելս կենացդ, պահեա յիշատակ ինձ ողորմութեան և զկնի մահու կեանք ամենեւին, օրհնեալ յերկինս և գովեալ յերկրի, բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՀԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեա ընդ միոյն տէր Յիսուս Քրիստոս, քո է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութեան զաստակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս, զպարսաւանս վհատութեան առ զուարթացուցիչ գովութիւն, ընդ ամօթոյն՝ համարձակութիւն, ընդ պատկառանացն՝ պատիւ, ընդ տարագրութեանն՝ յոյս բարութեան, ընդ բաժանմանն՝ ակնկալութիւն միութեան, ընդ ապաշխարանացն բանից՝ ողջական սփոփանս, ընդ միանգամ դատապարտութեանն կրկին ազատութիւն։

Բ. Ողորմեա, տէր, մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութեան, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողելցի, զբազմարկածեան ուղղոյն զանզերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ. և 'ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կխամեռութեամբ, գլխոք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ

հառաչմամբ, նուաղ հեծութեամբ, նրբական ձայնիւ, յոգի թախծութեան յոգնամանեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ: Կարող ես, բարեգութ, և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեամբ ասելով, թէ ողջ եղիջիր հոգւոյդ խորտակմանէ, և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո, կամ թէ երթ 'ի խաղաղութիւն սրբեալ 'ի մեղաց: Նա զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ով երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց: Յորժամ, որ այժմս բանապաճոյճ խըրոխտաձայն սիգացող բարձրապարանոց, անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ 'ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ շրթամբք, կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, գոյութիւն անշունչ, ողորմելի տեսիլ, աշխարելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, շիջեալ ղամբար, դատարկ կոկորդ, խափանեցեալ սիրտ, աղխեալ ազդարան, սպառեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղաւար, կոտորեալ ոտք, բաժանեալ յօդք, հատեալ ծառ, սըղոցեալ արմատ, թաղեալ տուն, հնձեալ արտ, ստորախուզեալ բոյս, օտարացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, թաղեալ գարշութիւն, մերժեալ ատելի, բարձեալ խէթ, անարգեալ կմախք, և լիր զանպիտան առ ոտն կոխեալ: Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհաւատոց թշուառ ձայնիւ նուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց բարերարիդ գթութեան 'ի բարձունս տարածանեմ: Օ առ քեզ դարձն յեղանակեն արդահատելով, զոր օրհնեմ. զնշան խաչիդ փըրկութեան, զոր երկրպագեմ. զյարութեանն ճշմարտութիւն, որում հաւատամ. զփառացդ քո յայտնութիւն,

զոր փառաւորեմ. զդատաստանիդ ահաւորութիւն, զոր խոստովանիմ. զբանիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ. զհոգւոյդ սրբոյ ինձ ուղեկցութիւն, զոր պաշտեմ. զօծմանդ տեառնագրութիւն, զոր և համբուրեմ. զթագաւորելն ընդ քեզ, տէր Յիսուս, որում պաղատիմ։ Ո՛րդ լքաւ մերժեցաւ բարձաւ տրոհեցաւ փախեաւ սրացաւ տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան, և յոյսդ որ 'ի քէն պարգև՝ միացական և անջնջական յիշատակարան պահեցաւ։

Գ. Տես ողորմութեամբ 'ի տարակուսանս վտանգելոյս, միայն բարեգութ փառաւորեալ որդի աստուծոյ, քաւել բժշկել կենագործել պաշտպանել նորոգել նկարել կանգնել հաստատել, վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն. չիք քո անկարութիւն, այլ ամենևին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեանդ սրբում, գոհաբանեալ յաւէտ և ես առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապատիւ զուգականութեան, երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ․ ՀԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՈՐՔԱՆ երկնաւոր, տէր բոլորեցուն, առ ամենայն բան յամենայնի միշտ երկայնամիտ, աստուածդ կենդանւոյ անքննելին որդի։ Ահա անդ է ողորմելն իսկապէս, յորում հատաւ ակնկալութիւն վաստակոյն. անդ է բարեգործելն, յորում տեսութիւն իմաստոյն խափանեցաւ. յայնժամ է մարդասիրելն, յորում տկարութեանն վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ. անդանօր է բժշկութիւն աստուածային քո ձեռինդ, յորժամ բնաւ անդամոցն տեղի եւ կենդանութիւնն. այն վայր է այցելութեան, յորում ելք հնարից ոչ գոյ։ Այն է քո մեծութիւն, յորժամ զյուսահատութեան վէրն ողջացուցանես. այն է հարազատ քումդ ազգակցութեան, եթէ յանկնեալն ժամու արուեստաւորեսցես փրկութիւն. այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի ապառումն շնչոյս բացցես, այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս խմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես։ Յայնժամ ես անոխակալ, եթէ ապախտաւորիս ընդ երախտաւորացն խնամարկեսցես. 'ի սոյին ծանեալ գիտացից՝ եթէ նայեցար 'ի նուէր բանիս նախնի գթութեամբդ, եթէ զտմլորութ՛ի չարեացս բարձցես։

Բ. Յաղագս այսորիկ հլուսին բանք և եղանակին նուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի զբարեգործացն պարգևեսցէ. որ մինչ իրաւամբք մնասցէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հան-

գուցէ. մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ, նա 'ի բազմականս ամենապատիւս գահուց դրդեցուցանիցէ. մինչ բրելոյ զաչսն գիտեացէ, նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ. մինչ ծայրատութեան մատանցըն սպառէ, նա մատանի համարձակութեան մատուցանիցէ. մինչ հայի հարուածոյ գանից, նա գթոյ գիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յուսոյ կորըստեան, նա երևելի տեսողաց բազմաց առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենայն և փառս ընծայեցուսցէ. մինչ հատման գլխոյն նայեսցի, նա ըզնոյն պսակաւ պայծառացուցանիցէ։ Այս պտուղք օրհնութեան, գթած, սքանչելարմատ քում շառաւիղաց. այս արդասիք կենաց արարչականդ քո հրամանաց. այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո անձանաց. այս նշոյլք լուսոյ ամենափառդ ճառագայթից. այս ախորժութիւն ճաշակաց բարեբանեալդ քո քաղցրութեան։

Գ. Քո միայնոյ են այսոքիկ, տէր. 'ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին. ահա զքոյդ յատուկ աղերս աղաչեմ, օրհնեալ, 'ի քոյոց այտի պարգևեալ շնորհեա. բաց, տէր, զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց առակին։ Մի խառնեսցես 'ի համբարս բարեացդ քոց 'ի չարեացն իմոց. մի շտեմարանեսցես զատելիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի պահեսցես 'ի ստացուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ վնասելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք։ Մի գրեսցես աջովդ օրհնութեան 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցըս անիծից. այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուսցես կրկին առաւել զանուն քո տէր 'ի նոսին, ցուցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտականագոյնս։ Շատ են իմ պարտիքս և անդր քան զթիւ, այլ ոչ այն-

քան հրաշալիք իբրեւ զքո զողորմութիւնդ. բազում են մեղանքս, այլ յաւէտ են նուազեալ առաջի քոյդ ներողութեան. յաճախ են չարութիւնքս, այլ յաղթական են համայնից, հզօր ամենակալ, քոյդ մարդասիրութիւն. ինձ են անհամար իմոյս անձին բիծք, այլ քեզ յոյժ գրաւեալ են ընդ սահմանաւ։ Ոչ են այնքան զօրաւորք առ կենդանութիւն զէնք մեղանաց պատկառեցելոյս պտղաբերութեան, որքան յիշատակ մահու կենդանւոյդ առ վանումն կործանողին բռնութեան։ Զի՞նչ ազդեսցէ փոքր խաւար՝ աւուրդ աստուծոյ, զի՞արդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայթից. զի՞արդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան։ Զի՞նչ երեւեսցի յաչս ամենակալիդ քոյ առատութեան՝ կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց. ահա կոշտ մի հողոյ դիւրափխրելի 'ի կարծրութենէ բախման վանեցեալ, իբր զպղպջակ անձրեւոյ բազմազեղ հոսմամբ քո կամացդ չքացեալ պայթեալ անդստին։ Զի՞նչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ կարողութեան ժամանակաց տեւելութիւն առ յանդուածոց իմոց բաւութիւն. ոչ քթթել մի ական, ոչ խուն մի տեսութիւն ածանցական, ոչ սակաւ մի նայեցուած փայլական, ոչ կիսամամնեայ յամրութիւն, ոչ փութացելոյ ոտից յեղեղումն, ոչ յելից բարձրութենէ միոյ կանգնոյ կաթի անկանելոյ, ոչ գիծ մի չափոյ մատից հեռաւեցելոյ, ոչ նշուլից արագութիւն, ոչ շնչոյ տուր եւ առութիւն, ոչ ինչ յայսմ յանգոյ եւ յանտպաւորական նմանութենէ անձեւ օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առ ժամայնք կամ հարեւանցիկք, որքան եղծմունք, ցնդմունք եւ հալմունք մեղացս սանամանեաց պահեստի՝ քումդ զօրութեան, աստուած ամենայնի տէր Յիսուս Քրիստոս, որդի անքննելին կենդանւոյդ աստուծոյ։ Որ տաս պարգեւս արեւ քաղց-

րութեան՝ չարաց ընդ բարիս, և անձրևես երկոքանչիւրոցն անաչառապէս։ Կշռես սահմանես իրաւամբք և զվտանգս կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանգիստն առ ակնկալութիւն պարգևին, փոքր խթանաւ փորձութեան զսակաւութիւն պարտուցն ստէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով և սոցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասեն։ Եւ քեզ փառք ամենազօրիդ առ ամենայն հրաշագործութիւն բարեխնամող երկայնմըտութեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՀԵ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ընկղմեալ զմայլեալ և խպառ ծածկեալ 'ի յանճառութենէ առաւելութեան բազմամասնեայ յաճախութեան մեծիդ երախտեաց, որ ամենաստ լըմամբ աննուազելեաւ յաջմէ և յահեկէ՝ 'ի դիմաց և 'ի թիկանց համբարեալ կան անբաւութիւնք։

Դարձեալ առ Նմին կրկնապատիկ երկրորդութիւն աստուածային հոգւոյն ազդեցեալ, որ ինչ յառաջքելոցն սահմանեցաւ աւանդութիւն՝ առ ամենայն լուսաւորութիւն եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եդեալ աստանօր։ Եւ որ առ անշնչականս նիւթեղէն ցուցանի երանաւոր կերպադրութիւն անճառելի։

Բ. Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ զովեստի դաւանման ճշմարտականի։ Զի որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ

ամենապատիրն խաբէութեամբ նենգողին կարթիւն հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ելեալ 'ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ 'ի յաւանդ խնկապէս շնորհի անդրէն միասնգամ համբարձեալ սովիմբ՝ 'ի Թռիչս Թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ:

Գ. Այլ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հոգեւոր երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ՝ ամենից կուսից խնկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի և այլոց ես ազգայինն ազգաց պատմեսցի որքանութիւն փառաց խնկելոյն, արժանապէս պաշտմամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ գլխոյ մարդեղութեան բանին աստուծոյ, 'ի յիշատակ ճառիս հաւատոյ Երրորդութեանն դաւանութեան: Եւ արդ 'ի յայս օրինակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկալ զիս, գթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ 'ի սմին: Ջան տուաւ 'ի հոգւոյս զնախատինս մեղացս, անմեղս և անբիծս ընդ հոլանեաւ սրբին բազմեցո, յաւել զտկարս 'ի տունն Դաւթի, և անտուստ փոխեալ 'ի տունդ աստուծոյ, ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ Յիսուս ակնարկի: Ա՛ն սակ զմտիցն, և մի՛ անօգուտ զելիցն հեռաւորութիւն արասցես. մի՛ զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս, և մի՛ զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանիցիս, մի՛ զպաշտօնն ապաշնորհ գրեսցես, և մի՛ զերկրպագութիւնն անխորհուրդ լքցես. մի՛ անպտուղ լիցի տեսականութիւն պատկերին, և մի՛ աննշոյլ՝ կերպարանին սքանչելութիւն, մի՛ անհուր ողջակիզին սպանդ մեռցի, և. մի՛ պատարագ ուխտի այս ճառի՝ արտաքոյ ցրեսցի. մի՛ ճաշակդ լուսոյ ինձ մահու լիցի, և մի՛ բաժակ քո կոչիցդ արեան՝ 'ի դատապարտութիւն եղիցի:

Դ. Աղաչեմ զքեզ, տէր Յիսուս միդ յէութենէդ, որով զգիտութիւն հօր քո և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծանեաք. քանզի 'ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգև կարգս եկեղեցւոյ, և 'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութեան բարեաց, տարածեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիդ 'ի սմա տիրողիդ բնաւից երեքսրբենիդ մատուցեալ յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան։

Առ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ իմն խորհրդածութիւն աստուածային աւանդութեան։

Ե. փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութեան երգոց 'ի հաւատ պաշտաման բանի զբարեհրաման պատճառն եղելոց զերրորդութիւնն անսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ, անհասական խորհրդոց և անըմբռնելի իմաստից, անզննելի զգայութեանց և աներևելի եղելոց, քանակութիւն վերնականն երկնի և անսահման ներքնային խորոց, լրութիւն տարածմանց և նախադրութիւն սկզբանց, մի յերից անշփոթ կերպից, և երիս՝ 'ի միոյ անհատուածելի իսկութեանց, 'ի վեր քան զմտաց անարգելութիւն յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ։ Անփոփոխ բարի, անսասանելի ուղղութիւն, անխառն կերպարան սիրոյ, մեծութիւն անյաջորդ, բարձրութիւն անխոնարհելի, անլատնելի տեսականութիւն, բարերարութիւն աննուազելի, կամք կայուն, հրաման կենդանի, ակնարկութիւն փրկչական, երանութիւն ճշմարիտ, ակնկալութիւն հաւատոյ, խոստումն անստելի, աւանդ արդասաւոր, տոյգ աւետիս, վերամբարձութիւն անձեռնարկելի։

Զ. Մի հայր միայնոյ որդւոյ՝ միական հոգւովն պատուեալ, ամենահարուստ բարութեամբ ամենեքին ունայն 'ի չարէ. օրհնաձայն գոհաբանութեամբ անքննին

ներքողիւ գովեալ:

Է. Ս՛ին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեանց . անպատումն ազգականութեանց , եռալուսեանն զուգակցութեանց , անյաւելուածն լականութեանց , ինքնիշխան կամաւորութեամբ պատուասիրեալ առ Հայրն հանդունատիպ՝ գործակցութեամբ Հոգւոյն սրբութեան խոնարհեալ իջեալ 'ի յերկնից . աննուաղ գոլով ընտանի փառացն , հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի աստուածածին կուսին մաքրութեան. յորում աճեցոյց զբոյսն օրհնութեան 'ի լուսասահման անդաստանին անարատութեան . ընդ ամենակատարն էութեան համանեալ յանանջրպետ միականութիւն , թափանցական խառնութեամբ յաստուածութեանն ոգի բաղկացոյց զգոյութիւն շնչոյս հրաշապէս: Որով անստամբակելի երասանաւ սանձաց կրթութեան զստահականութիւնս իմ հանդարտեցոյց . և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց 'ի ծայրս լրութեան անմահականն տնկոյ . 'ի մահ վիրաւորեցաւ՝ աստուածութեանն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ , որով կենացոյց զգործին պարտեաց , արաչութեանն խկութեան 'ի նմին յաւէտ անքաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ: Իջեալ 'ի վայրս խաւարային դժոխոց , եհան զկապուտն իւրաստեղծ 'ի կապանաց օցտողին . և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ , յինքն նահանջեալ զգիմեցուածն մահու , կանգնեցաւ կենդանացաւ աստուածապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց: Հաւատարիմ եղև յաշխարհի , և երևեցեալ նոյնութեամբ ամենեքին աննուազելի , որպէս էկն համայն , և համբարձաւ բովանդակ . բազմեցաւ նստաւ 'ի գերունակն դահոյս նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ: Զոր խոստովանիմք աստուած բարերար և տէր բոլորից , որ դատի զամենայն

երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն և ինքն կատարած, նոյն առաջին և նոյն առյապայ, անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ 'ի լոյս անմատոյց։

Ը. Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ և զանբաժանելի բղխումն՝ նոցին փառակից հոգւոյն տէրութեան. որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զամենայն, որ անդաստին խոլ 'ի բնէ համապարփակ մթութեան աշխարհական միգի շրջէր նկարէր և կերպարանէր ամենունակ ջուրբքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ 'ի կատարումն արդեան խորհրդոյ՝ զսուրբ աւազանն լուսոյ։ Նախ արար և այժմ գործէ, գոյացոյց և միշտ կատարէ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւնս սրբանելոց, ազդմունս աստուածօրէնս, զօրութիւնս զարմանաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս վարժողս կրթութեան հանճարոյ։ Օ սրբարարն մատուցման արեանն Քրիստոսի յարդարեաց, քաւութիւնս անձանց, առողջութիւնս մարմնոց, ըստ նմանութեան Քրիստոսի ողորմութեամբ հրամայեաց։ Մկրտեաց և դեր քան զջուր, ինքեան միայն բաւականութեամբ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ։ Վկայեաց միածնին աստուածութեանն 'ի հոսանսն Յորդանանու, օրինակաւ տեսութեան ամպոց ցուցաւ ձայնիւ հօր 'ի լերինն Թաւորական։ Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղև յակոբեան տոհմին 'ի յելսն Եգիպտոսի. յաղէգնացութիւն զօրավարութեանն Մովսէսի՝ հողմով սաստկութեան ըզփարաւոն ընկղմեաց։ Քահանայս կատարագործէ, իմաստունս կազմէ, թագաւորս զօրացուցանէ, քաւութիւնս ընձեռէ, կեանս շնորհէ մահացելոց 'ի նորոգութիւն յարութեանն։ Նոյն ինքն է օծումն մարդացելոյն աստուծոյ. մշտնջենաւոր հաւասարութեամբ ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մեծութեան որդւոյ, ան-

սահման փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս . ամէն։

Նորին ասացեալ 'ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց։

Թ. Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխոտորնակ ամբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկատուցեալս խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ . որ դերազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութեամբ, որ 'ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Սկիզբն առեալ կենացս այս գանձու 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարին վայրէ, զոր հոգին աստուծոյ լցոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտուենն բարետեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութեան, յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութիւն։ Ուստի արիւն հզօրին աստուծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զչարբեղին մահու դուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան կենդանութիւն անմահութեան 'ի սմա ազդելով։ Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական 'ի սպասաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թև օք սորին պահեսցի . նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հեղքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զաստուածային պատարագն մատուցանէ . մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն յայս նուիրան ընծայեցուսցէ։ Ս՛ի 'ի սմա լուա-

ցումն 'ի մահն Քրիստոսի, զի մի՛ յանդէտս անարգեալ աստուածութիւնն' 'ի ծանուցելումն զնախնին կրեսցէ. մի՛ ձեռնադրութիւն 'ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի՛ յամբծութիւնն խաբէութիւն խառնեսցի. մի՛ և շնորհօք քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի՛ ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի. մի՛ յընտրութիւնն ապառնի՛ հաւատ, զի մի՛ ապառնալեօք հատուցմանն զգոյշս ինչ օտար համբաւոյ գրեսցի. մի՛ երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՛ կիսամանեայ առ մարդըն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութիւնն կարծիցի յանմահ զօրութիւն արքայական որդէգրութեանն, զի ընդելութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի. մի՛ յոյս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներկևանութիւն խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի։

Ժ. Այս դշխոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ կեանս և մահու իշխէ, ըստ օրինակի ադամեան պըտղոյն յարմարապէս ճաշակելի. դերապանց քան զբնականս յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ։ Գրեալ ես է տեսակ մեծութեան վերնումն կամարին սկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն 'ի նմա զօրութեանց։ Նոր իմն ընծայէ թուիչս մարմնոց ընդ թեթևութիւնս հոգւոց, պատուականին հարստութեամբ զանարդն յարգաւորեալ։ Ոչ ինքնակիր մեղօք զազրանայ, եթէ ոչ 'ի մարդոց չարաց և կամ յանհաւատից կոխիցի։ Տիպ իմն է զարմանաւոր յաղթող իմաստից մերս տեսութեանց. անբանն 'ի բանաւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ իբր վեհագոյնն յաւէտ նուաստի։ Մե՛ծ է քան զմարդ, որքան ընտրեցելոյն

Մովսէսի ցուպն յաղթողական . առաւել քան զբանաւոր, որքան զԱհարոնն գաւազանն խորհրդական ծաղկեցեալ . գերազանց քան զմտաւոր, որչափ զԵղիաս և զԵղիսէոս գետահերձ մաշկեակն սքանչելահրաշ փայլեալ արուեստիւ։ Օգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբասնեալ ձեռաց մաքրաբար, քան թէ զինապէս . մարմին նիւթական քարի և հողոյ, գոյակից հարազատ զգայականաց և սրբոց։ Իբր զվէմն անմահ կենդանի 'ի կործանումն է և 'ի կանգնումն . որպէս ըզդատաւորն ամենից հոգւոց հանդիսանայ հրաշապէս ազդմամբ յանէծս և յօրհնութիւնս . իբրև տեսօղ անիրաւութից զոմն հրապարակէ և զոմն տածէ . առ ինքն կոչէ գրեալ յանուանէ իբր զօրհող հրամանատար էիցս։ Իբր զերան յաւիտենական անհարուածելի է 'ի դիմամարտից . ըմբռնէ զհոգևորս իբր զհնարադրութիւն մեծին արուեստի . անմեղս և անվրիպութիւնս ըստ Քրիստոսի հետոցն ընթանայ, բարձր ձոխութեամբ անպատկառաբար համարձակապէս զօրէն գովելոյ գլուխ ամբառնայ։

ԺԱ. Այնքան մեծ ունի սրբութիւն, մինչ զի զորս ըստ պատկերի աստուծոյ եղեն, կանոնաւ խարէ։ Յետ յոգունց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ ոք սխալեալ 'ի դաւիթսնորին մտանել՝ ոչ պղծի, այլ ընդ անպատրաստից թերութեանց դժուարի . ոչ նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ . ոչ լքանի իւքեամբ պարտաւոր իւրովն գտեալ, այլ 'ի մերոց գործոց խոլթնանայ . ոչ թողացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց, ըստ տիրական անձառ խորհրդոյն . ոչ կրկին յաւուր զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար նուիրանն խայտառակեսցի։ Ընտակցէ կարեաց զօրապէս իբր անախտակիր ապականութեանց որ 'ի մեզ շարժմանց . առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ դատի։

ԺԲ. Նա զի և տապան իմն է մաքրական, կրկին երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան. ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ. ոչ յալիս խռովութեան բերի, այլ 'ի բարձրութիւնն երկնի համբառնայ։ Իբր զաշակերտ հրահանգեալ հոգւոյն աստուծոյ փախչի 'ի նենգութենէ. ոչ 'ի բողք մահու մարմնոյ հարուածոց, այլ 'ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ. ոչ Նոյիւ ձեռնարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի. ոչ Մովսէս ընդ Բեսելիէլ, այլ միածինն աստուծոյ հոգւովն սրբով զսա հանդերձէ. ոչ յարաշարժ հանապազափոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա հաստատէ։ Դարձեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան տեսողականաց մեզ առաջնորդէ. որպէս կերպարան անքանակ էին յառաջ հետևեալ՝ 'ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատրաստէ։ Ընդ Ոզիէլի անտուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի. սպանանէ վառնեալ վաղվաղակի առժամայն, եթէ անասնայինն լծակցութեամբ երկրասիրաբար դետնակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնագիննին բարձեալ տանիցի։ Ոչ լեզուաւ մարմնոյ, այլ բանիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութիւն, և արագապէս մտառեալ լսէ. ոչ ձայն կերպաւորական բարբառոյ, և զպատգամս գործոցն Յիսուսի համօրէն ազանց պատմեալ հռչակէ. ոչ խաղալեաց շարժականութիւն, և աստուածայնով իմն կենդանութեան հագագաւ ազդէ։ Ոչ ոսկերաց և ջլաց յօդուած, և երկուք հազարօք կանգնօք լայնութեամբ՝ իբր զգունդն անհամար բարձրեալն աստուծոյ՝ զկենդանական զօրուն գումարտակ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ նոսին իբր զանմաքուրս 'ի սրբութենէ՝ զոմանս ախտիւ մեղանաց ջեռեալս հատուածեալ յինքենէ

հեռի, ուղեկցէ ապրեցելոցն 'ի տաժանաւոր աղխուսարկութեանցն։ Նոյն իսկ էութիւնն աստուծոյ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի Նշանակեցաւ, պատառմամբ կողին զընաւս արբուցեալ։ Ոչ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք թափանցանց միութեամբ զայն կենդանացուցեալ Նորոգ պաշտպանէ. ոչ Սողոմոն կամ Զօրաբաբէլ մահկանացուաց ոստիկանութիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ. ոչ աննուիրական հասարակաճաշակ իւղով առ 'ի Յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ և փառօք մեծին օծանի։ Ոչ տուն երկրային Նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ աստուծոյ զորին որդիս կնքեալ ձեռնադրէ. ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ. զ'ի ծոց իւր գրգեալսն գոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ։ փեսայ հարսնութեան սորա որդին աստուծոյ կենդանւոյ, օրիորդք խնձոյից սորին հայրապետացն դումարք։ Նոյն ինքն մոռացումն առնէ այսակիր բարձանցն կամալութեան, զի զերկնայնոյն աստուծոյ ունի զծանօթութիւն. օտարութիւն է ամենայնիւ դիւցն դրօշելոց, զի 'ի համօրէն քարինս սորա Քրիստոս երկրպագի. քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի Նմանութեամբ կենացն փայտի 'ի սմա տէրն Նուիրի. խորտակումն է համայն դիւապատիր յուռթիցն արձանաց, զի քարն գովեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդանեօք այսրէն հաստատի։

ԺԳ. Այս յարկ չքնաղ և աստուածընկալ ազատ է միանգամայն 'ի յամենուստ ծառայութեան. ոչ օրինակ վերնոյն Սիօնի, քան թէ ճշմարտութիւն Նմին ճանաչի. ոչ կռապաշտութեանն կապաւ բագին և կամ լծով օրինին տեղի պարտաւորութեան, այլ տէրունի բարեբարութեանն պարգևարան 'ի մէնջ համբուրի։ Ոչ սա-

տանի երբէք յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ , այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի . սոյն ինքն եւ երկին երկնի յերկրի լուսապայծառ կերպիւ հաշտակի։ Որպէս չէ առանց հօրն Քրիստոսի , եւ ոչ առանց այսր մօր արգանդի յոգի կատարիլ։ Նոտուն շրջի անբովանդակելին , եթէ ոչ 'ի սմին տան տաղաւարեսցի . ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան տէրն բոլորից , եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մտեալ ագանիցի։ Քան 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութիւն առաւել պարծի . անքաւութիւն աստուածեան լուսոյն , որպէս զդէմս մարգարէին եւ զօրինակս սրբոյն ծածկեցին , որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին , եւ նմանութեան սորուն՝ որ 'ի տաճարիս՝ ոչ հանդարտեցին , 'ի տօն հանդիսի մեծի գովեստի , եւ 'ի բանականացս դասուց խմբեալ նուագի . սա օրհնի կրկին բաղձանօք , քան 'ի դրախտն վայելչական։

ԺԴ . Այս մայր հոգեւոր երկնաւոր լուսաւոր , քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր , զիս գգուեաց որդի . կաթն տեանց սորա արիւնն Քրիստոսի։ Եթէ աստուածածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ , ոչ անօրինի։ Իբր զնշան խաչին փրկութեան զօրութիւնս զարմանալիս եւ սքանչելիս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ . բեմ ահաւորին տեառն՝ 'ի սմա հաստատեալ տեսանի . սովաւ խորհրդաբարոյիցն հերձուածողաց մոլեգնաճառ բերանք կարկին։ Ունի եւ քարինս իմն իմանալիս եւ բանաւորականս , որով զգազանամիտս անմաքուրս բացուստ 'ի բաց հալածեալ տարագրէ։ Ունանի եւ աստուածս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս միոյն աստուծոյ Քրիստոսի։ Ունի եւ զգիրն իւր ընդ արեւելս՝ 'ի տեղի խոստման բնակութեանն մերոյ առաջնոյ . ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զգալստեանն աստուծոյ շաւիղ , զփայլականն առակ տիրական 'ի դէմըս բերեալ մեզ վարդապետէ , զփրկութիւնն 'ի յելից

անդի ծագման արուսեկին քրիստոսեան երևմանն 'ի վերջնում աւուրն արարածոց երկրի Թաղմանէ։ Յաւս հալածէ, ախտաժէտս բժշկէ, դիւաց բռնութեանց զօրէ։ Արգանդ որովայնի սորին աւազանն կենդանարար. 'ի պար հարսանեաց սորա դասք առաքելոցն։ Այնքան ճոխացաւ բարգաւաճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յորջորջեցաւ. տիրամօրն լուսոյ կոչմամբ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ։ Ծփելոց մեղաւորաց նաւահանգիստ հանդարտութեան, խրախճանարան վերնոցն դասուց, բժշկարան անսխալելի տարակուսեալ պարտաւորաց։ Նորոգութիւնն անպատում 'ի սմա փառաւորի օրհնեալ յամենայնի։

ԺԵ. Իսկ եթէ ոք ձեռն չարութեան 'ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, և գիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ արուեստ երկրակենցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և հոգւոյն սըրբոյ յայտնեալ լուսանորոգ նախապրութիւն և երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականութիւն և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան և առաքելոց ձեռինն աջոյ բարեհանճար հիմնարկութիւն, և միանգամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ 'ի պարտեաց և ծնդրիտ տեսակ կերպի երևակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեանցն անդանձաւլից գերազանցեալ նոր սրբութիւն և քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոստովանողսն մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ 'ի նմանէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի. փակեսցէ զդուռն կենացս այս առա-

դատել յանդիման նորին։ Իսկ մեք զորս գրեցաք՝ սմին և վկայեմք, հաւատացեալ որում կարգեցաքս, յանուն և 'ի փառս ամենակալ Երրորդութեանն և միում աստուածութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այն իմ հաւատ յերրորդութիւնն, և այս 'ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն։

ԲԱՆ. ԼԷ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած ողորմած, բազմագութ, հզօր, ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ, որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի, որ և մըտաց է անհնարաւոր. քո է հատուցանել պտուղ քաղցրութեան ընդ փշոց խստութեան, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելեացն և աղօթս 'ի վերայ հալածչին, և փըրկութիւն հայցել խոցողին, և սպանողին ներումն խընդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղցրութիւնն անճառ է քան զօրինակ և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք և գովեալ շրթանց քոց ճաշակելիք. հոգի երեւաց և զօրութիւն գեղոյ մերոյ տէր Քրիստոս օրհնեալ 'ի բարձունս։ Այլ մարդք երկրածինք և ամենայլընդէպք՝ և բարեմատոյց ձեռաց չարիս դարձուցին. իսկ դու լոյս և տուիչ լուսոյ ոչ լսես անէծըս, ոչ ախորժես չար, ոչ կամիս կորուստ, ոչ ըղձանաս մահ, ոչ յուզիս 'ի խռովութենէ, ոչ տիրիս 'ի ցասման-

նէ, ոչ հարկիս 'ի բարկութենէ, ոչ մթանաս 'ի սիրոյ, ոչ պղպջիս 'ի գթութենէ, ոչ փոփոխիս 'ի բարութենէ, ոչ թիկանց շրջումն և ոչ երեսաց անդրադարձութիւն, այլ ամենևին լուսաւորութիւն և նկատումն փրկութեան։

Բ. Եթէ քաւեսցես, կարող ես. եթէ բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին դարձուցանես, աստուած ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեաց ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն զերծուցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես ներողութեանս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես. թէ պաքելոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երևեցուցանես, լոյս ես. թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. թէ զբիծալսն անտես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. թէ ծառայիս ձեռն մատուսցես, ստացօղ ես. թէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. թէ վհատելոյս դարման մատուսցես, կերակրիչ ես. թէ զանգէտս պարարեսցես, վարդապետ ես. թէ զղխմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես։

Գ. Նուէր արդ քո են այսոքիկ, տէր ողորմութեան, ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ, նախնի նահատակդ համբերութեան վկայից, որ վասն իմոյ փըր-

կութեան հանդխացար զորպէս յապարխի ճակատուն, զի կակղեցես զկարծր բնութիւն մարմնոյս գոռոզութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վըտանգի. և յանպարտակիրդ մարմին չափեալ զընութեանս մերում զտաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՀԷ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՜Ւ քանզի օր է օրհնաբանել և լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս սասանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոյն խոնարհութեան և կործանելոցս վերբերութեան, սարսափելի Ուրբաթումեծի Պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ դրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ առել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր, աստուած բոլորից։

Բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն խմոյս կերպիւ, ոչ խօսեցար տուիչդ բանի, ոչ բարբառեցար հաստիչդ լեզուի, ոչ ձայն արձակեցեր սասանիչդ երկրի, ոչ մռնչեցեր ամենազդեցիկ փողդ մեծութեան, ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր, ոչ մատնեցեր ամօթոյ զմատնիչսն զքեզ

տանջանաց մահու, ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր
և ոչ յապտակելն դժուարեցար, ոչ 'ի թքնուլն թշնա-
մանեցեր և ոչ ընդ կափելն երբէք խռովեցար, ոչ ընդ
կատակելն սրտմտեցար և ոչ ընդ խաղ արկանելն երե-
սս փոխեցեր։ Մերկացուցին զզգեստ պատմուճանին
իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանա-
ւոր ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քա-
ցախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ
մթերեալ նախնի դառնութեանն. ճաշակեաց վհատու-
թեամբ և արգել անդէն տարակուսանօք, առին մոլեգ-
նաբար և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Պա-
նիւ հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ խառնի-
ճաղանջն ամբոխի դատապարտեցին, ծունր կրկնեցին
նախատանաց և պսակ եդին արհամարհութեան։

Գ. Ոչ ետուն հանգիստ կենդանարարին, եթէ ոչ
զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր
երկայնամիտ, առեր իբրև զհեզ, բարձեր որպէս համ-
բերող, ստանձնեալ իբր զպարտական զփայտն վշտաց.
որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ ըզ-
զէնն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց զիւրակերպս
գահաւորակս մարմնեղէն դդութեանս պահպանեսցէ
'ի դատապարտութեանն վայրի իբր 'ի խորաձան խնձոյից։
Հանին աստաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զխոյն
Սաբեկայ ձգեալ զեղջերայն, տարածեցին 'ի սեղան խա-
չին իբր զպատարագ, բևեռեցին որպէս չարագործ,
պնդեցին իբր զապստամբ, զխաղաղութիւնդ երկնաւոր
իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնդ իբր զտա-
ռապեալ, զառ 'ի քրովբէից պաշտեցեալդ իբր զքամահ-
եալ, զսահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակման
մահու, զաւետարանիչ նկարիչ իբր զհայհոյիչ օրինին,
զտէր և զկատարումն մարգարէից իբր զհամառօտիչ
գրեցելոցն, զճառագայթդ փառաց և զկնիք անքննին
խորհրդոյդ հօր իբր զներհակ ծնողին կամաց, զօրհ-

նեալդ խոկապէս իբր զտարագրեալ, զկապս օրինին լուծիչդ իբր զայր 'ի Նզովս գրեալ, զՀուրդ ծախիչ իբր զՀերքեալ իմն կալանաւոր, զաՀաւորդ երկնի և երկրի իբր զՀաւաստի պատժաւոր, զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ իբր զՀողածին ըմբռնեալ։

Դ. Ով քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութիւնդ ողորմածիդ գթութեան, որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս տէրդ բոլորից զայս ամենայն կամաւորապէս և Հաւանողական Հաճութեամբ տարեալ մարմնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար, և մինչև 'ի քնարան չիրմին տապանի անպակաս 'ի լրութենէ ամբողջ նոյնութեան աստուած անքննին՝ զնոյն կրեալ նախատինս անճառ Համբերութեան, յարեար կենդանի ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ, աննուազ մարմնով և անթերի աստուածութեամբ։ Օրհնեալ փառօք, գովեալ գթութեամբ, բարեբանեալ միշտ ողորմութեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՀԸ

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ անկեալ յերեսս Հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ, զբարեգործիդ ողորմածութե՛ զկենդանարար ոտս Համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

Բ. Աղաչեմ զքեզ, միայն խնամակալ, մարդասէր,

գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի՛ ունայնացի վաստակք աշխատութեան փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ աստուծոյ, մի՛ սուկ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ 'ի մատնութեանն աւուր գիշերին. մի՛ լիցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր. մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի՛ անշահ եղիցին կրիցդ պըտուղք, զոր կարօտութեանս իմում մատուցեր. մի՛ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս ի բացուցանել. ահա յաղթեսցես կամօք քո՝ ըղձից չարին, վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն, կրկին պարտեսցի իսպառ դատեցեալն. մի՛ անխայեր զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ: Ո՛ անճառն արարեր բարերարութիւն յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորժամ բնաւ իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն. մեռար անմահդ և զմահացեալս նորոգեցեր. եթէ զկանոն համաձևութեան օրինին փոխեցեր, արդ զգիրին և զհեշտականն և զևս հնարաւորն մի՛ արգելցես, սկզբնաձիր ողորմածութեան բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր: Ազդեա բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ դայց 'ի լաւ անդր. և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հեռևել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝ ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս մնասապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի զպարտսն հատուցանել, ահա շնորհեա ինձ տառապելոյս զերեաս քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատելոց: Արգել և կնքեա զընթացմունս ելիցն, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսութենէ. պահեա ինձ զշնորհ ամենա-

պայծառ գանձուցդ մնացականաց, որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն, անսահման բարի։

Գ. Ո՛հա ողորմեա ինձ, գթած, աղաչեմ զքեզ ողորմեա ինձ, հզօր, կրկին ողորմեա։ Մ՛ի փոխարկեր երկունըս ցաւոց ընդ չարեաց իմոց, բարիդ ամենեքին. մի բառնար 'ի վտանգելոյս զառ 'ի քէն պարգեւեալդ շնորհ, մի կապեր զփչումն ամէնօրհնեալդ հոգւոյ, մի լուծաներ զխնկեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մ՛ի յայտնեսցին փուշք մեղանացս 'ի սրբութիւնս մտացս. մի խզեր զկապ միութեան ընդ քեզ սիրոյն պնդութեան, մի մերժեսցես զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարութեան, մի պակասեցուցաներ զաջողուած աջոյս առ 'ի զլուսոյդ մասունս բաշխել։ Մ՛ի գրեր 'ի դպրութեան կենաց մատենիդ զմահուն պարտիս, մի պահեր, մի ինձ համարիր, մի յիշեցուցաներ, մի ամաչեցուցաներ, մի նախատեր, մի ոտն հարկաներ, մի արձանացուցաներ զմեղկութեանցն, մի ամբարեր զկորստեանցն, մի իբր ստգտեալ իմն ամբաստաներ։ Մ՛ի յարուսցես ընդ իս զծառն անիծից, մի արձակեր 'ի յիս զագարթ փշասուցն, մի ընծիւղեր զծաղիկ մեղացս, մի բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս, մի արտաքերեր զէութիւն պտղոյն։ Մ՛ի թուեսցես 'ի ճիւղս երկրաստեղծ մատանցդ զգիւտս գործոցս, մի մատուսցես բան ընդդէմ ահեղ զանօրէնութիւնս իմ յիշատակել, մի մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս վարել 'ի գերութեան, մի ասէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես, մի նուազութեամբ այսր անցաւորի զյաւիտենական բարիսն տուժեր, մի 'ի սակաւուս այսմ ժամանակի զանվախճանելի զփառսն չափեր, մի ընդ հովտի վշտաց հեծութեան զանախտական ըզ կ՚անոտ գրաւեր, մի ընդ ստուերի այսր մթութեան զանճառելիդ լոյս փոխանակեր, մի զերասանակ մտացս ըզք-

ցես՝ ըստ արտուղի հետս հետևել, մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պահեր 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել։ Եթէ ամբարես զաւանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ շտեմարանես 'ի սրտի, աստատին կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ իսպառ հալեցայց. եթէ անկակից ինձ թողցես զմեղսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց։

Դ. Ակնարկեա, միշտ զօրեղ ամենակարող, փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա, գթած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես ամենակեցոյց թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՀԹ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՅԻՇԵԱ տէր, տէր գթութեանց, սիրողդ իրաւանց, աստուած ճշմարիտ. նայեա վերստին 'ի բնութեանս կերպարան միշտ սխալական. զննեա ինձ դարձ-

եալ զամենընթաց տարածմունս ելից արեանս շարժողութեան. բժշկապէս մատիր տեսանել, զի մարդ եմ հաստատեալ մտօք խակութեան թերի խորհրդոց յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսողդ ոչէից՝ միայն դու անման ստութեան խաւարի։ Ապա իրաւունս է գրել ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ պարտեալ կրկին իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիւ քում սուտ երեւել. քանզի արդարեւ գիտակ իսկ ես, թէ չար է արայն եւ ընդարբոյս չարութիւնն մեր, եւ ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանճար իմաստոյն կանխագէտկոյց առակի։

Բ. Եթէ եւ այս զաստուածութիւն տանջանաց, որ պատրաստեալ է մեզ ինձ՝ արկանել զորդիս գեհենին զարդմահուն յաւիտենականի. բարձ զամօթոյս պարտիս, որ պահեալ է յայտնել թշուառականիս յետին ատենին յանդիմանութեան։ Խրատ խաղաղութեան յառաջապարգեւ ողորմութեամբ քո ընծայեցո. զի մի անտանելիքն ահաւորութեան 'ի ցոյցս ինձ եկեալ կերպարանեսցին, անյոյս ապշութիւն ընդ կենաց զըջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր, անկաշառ եւ անխաբելի դատաւորն, ամօթն սոսկալի կշտամբանքն սարսափելի, յանդիմանութիւնն անփախչելի, տագնապն անձողոպրելի, պակուցումն անխրախուսելի, դողումն անվճարելի, լալումն անսփոփելի, կրճումն ատամանցն անբժշկելի, ապականութիւնն անողջանալի, անէծքն սարսափելի աստուածային քո բանիդ, փակումն գթոյն եւ արգելումն ողորմութեանն։ Որ ընդ գալարելն երկնի եւ ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութիւն յատակիս, ըստ կուտակելոյ կոհակաց խռովութեան ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց. եւ տատանեալ սասանեալ լայնատարած գետնոյս թանձրութեան 'ի հիմանց անտի, ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնային խորոց

Հարթէ զերկինս, և հալեալ հրդեհին բնութիւնք վիմաց
և ամենայն տարերաց դոյից · այլայլին երկինք յանեղծ
փոփոխութիւն, և յեղանակին արարածք տարերօք լու-
րովք 'ի նորոգ նմանութիւն։ Ծածկութիւնք գործոցս
հրապարակին և աներևոյթք կրից մեր յայտնին · վարք
կրօնից ներգործեցելոց 'ի մարմինս մեր նկարին · Թագա-
ւորն երկնից յատենի նստի, վճիռ հատուցմանն 'ի ձե-
ռին իւրում։ Ո՜հ վայ ինձ եօթնիցս անգամ կրկին եղ-
կութեամբ, ըստ չափոյ կշռութեան այսր համարոյ, որ
զանբաւութիւնս թուոց պարագրէ։ Զի՞նչ գործեցից
ողբալիս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի · քանզի սաս-
տիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիպումն ·
զոր ումն մարգարէ զօրինակին նմանութիւն 'ի դէմս բե-
րելով, զճեպ տագնապի անզերծ փախստեանն նշանակէ
ասելովն, զորօրինակ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առ-
իւծու և պատահեսցէ նմա արջ, և փախնուցու յերե-
սաց արջոյն և մտանիցէ 'ի տուն և յեցուսցէ զձեռն
իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ · և դարձեալ կրկին
սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսիլն քստ-
մնելի · ո՞չ ապաքէն, ասէ, խաւար է օր տեառն, օր խա-
ւարոյ և մթոյ, օր ամպոյ և մառախղոյ։

Գ · Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից
հզօր ոստիկան իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցա
նողն ահաւոր արդարութե՟ յանդիմանեսցէ · սպասաւորք
Թագաւորին առանց խնայելոյ խուճապեն, զոմանս 'ի
կեանս հրաւիրեն և զոմանս յամօթն դատապարտեն ·
կիսոց դէմս լցեալս ծաղու ցուցանեն, և ինձ ահարկուս
և քստմնելիս երևեցուցանեն · ոմանց պսակս լուսապա-
ճոյճս մատուցանեն, և այլոց կորուստ մահու բողոքեն ·
արդարոցն ձայն աւետեաց, և ինձ գոյժ անվախճան
վշտաց։ Յորժամ առ բարիսն՝ մահու յաղթութիւն
իսպառ մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի ·
ուր դրանն բաղխել ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ դը-

լծութեանն առ իս։ Յորժամ դպրութիւնք հրաշիցն զարմանալեաց, որ են ծանկեալքն յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք մարդկային բնութեանս գործոց. յաղագս որոյ եղեն գոյութիւնք ամենայն էից, յիւրաքանչիւր մարմինս անպակաս գրութեամբ իսկոյն երևին. և խորութիւնք անճառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս առաջի աչաց մերոց կերպարանին։ Ուր այժմ շահավաճառութիւնք ողբոց և արտասուաց զերկինս գրաւեն, և անդ իբր զապաժաման ընդունայնութիւնք արհամարհեալք լքանին. հառաչմունք հեծութեան ոչ կանխաւ աստի առաքեալ, չէ երբէք գտանել անդէն. ողորմութիւնք ճշդով սերմանեալ, ոչ պայծառ վառմամբ գնան առաջի։ Ուր տապանն Նախայանցիցն և կըտակարանն տիրանարգիցն և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս դատախազեն. յորում սոսկալի վայրի ումն զուխտն կցորդութեան հայրենի և ումն զխորանն վկայութեան անտեսիցն և ումն զարիւն մեծին աստուծոյ ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն։ Զտանջանարանն բազմապատիկս անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի, զի՞արդ մխիթարեցայց համառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոյն, որ փառաւորեալքն են երանութեամբ, սարսեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս ո՞ւր երևեցայց. որ ոչ միայն չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի և կորուստն անսպառելի։

Դ. Ո՛վ արագեա, ամենապարգև զօրութիւն անճառ, ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս. զի օգնեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին անվտանգելի պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ մտացս խմատիւ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ 'ի լուր

երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝ աՀին Համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեսցայց. և մի մատնեցայց կորեանցն աւխծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն գազանութեան. զի զբոլոյն մաՀուն լցուցեալ՝ զաստուստ պարարեալս անդ ձգեալ Հալեն, ուր անսպառ պաՀի մնացուած մթերիցն 'ի ծախումն յաւիտենից։ Օ ի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման 'ի կեանս և յերանութիւն, բնաւից ապաւէն Թագաւոր լուսոյ տէր Յիսուս Քրիստոս, օրՀնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Ձ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՄԱՅՐՆ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ՏԻՐՈՒՀԻՈՅՆ

Ա. ԵՒ արդ 'ի վերայ այսքանեաց յուսաՀատութեանց և աՀարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սատակութեանց աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով Թախծութեան խոպառ, աղաչեմ զքեզ սուրբ աստուածածին. Հրեշտակ 'ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուՀի, անխառըն իբրև զօդ. մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զընակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ շնչական, ծառ կենացն անմաՀից, բոցեղէն սրոյն պարունակեալ, 'ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և Հովանացեալ, Հանդըստեամբ Հոգւոյն Հանդերձեալ և մաքրագործեալ, բնա-

կութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. միածինն Հօր և քեզ անդրանիկ, որդի քո ծննդեամբ և տէր արարչութեամբ. ընդ անաղտ մաքրութեանդ և անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս, և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի 'ի քոյդ պաղատանս. հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց, տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քո և տեառն:

Բ. Օժանդակեա թևոցդ աղօթիւք, խոստովանեալ մայրդ կենդանեաց, և ելիցն իմ յերկրէս հովտէ, առանց ըկանաց հետևել 'ի կեանս օթևանացդ պատրաստութեան. զի թեթևասցի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ: Արասցես տօն ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն Եւայի. բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն: Արտասուօք օգնեա վտանգեցելոյս, գովեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնողդ աստուծոյ. ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս, տաճար երկնային. փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղախին աստուծոյ և մայր. բարձրասցի պատիւ քո ինև և ցուցցի փըրկութիւն իմ քև:

Գ. Եթէ զի՞ գտցես՝ տիրամայր, թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յու-

սահատելոյս ինձ միջնորդեցեր՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուցեր՝ մեծարեալդ աստուծոյ, թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեցեր՝ հանգիստ, թէ ՚ի խառովութեանցս յուզմանց փոխեցես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեցեր՝ գովեալ, թէ վասն իմ մոցես ՚ի հանդէս՝ մահու նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեցեր՝ քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խորոց քակտեցեր՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ, թէ զմատնեալս մահու փրկեցեր՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեցեր՝ դեղ կենաց, թէ ՚ի կործանեալս յիս ակնարկեցես՝ հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեցեր՝ կտակ նուիրեալ։ Օրհնեալդ միայն ՚ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի, զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով, ամենայն և յամենայնում, մի յերրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՁԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ աստուածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոյն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արդահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ. որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ անկիրթք չարեաց, հատեալք յամենիցխառն հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք ակնարկութեան բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, անարատք. օրհնեալք, վայելչականք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մտաց արագունք։

Բ. Որք և պտղակորոյս անկոյ թզենւոյն եռամեանն դատարկութեամբ, որ զբնաւ յաւիտեանս պտղունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պանծանելոյ՝ գրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք, հանդերձիչք, այլ և խնամակալք. որ դեղերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրից կարեկցելով, բարեմտութեանն մեր սպասեն. և յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Քանզի արդարև մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ աստուծոյ վասն մեր կարգեալ առ նոսա. զի նոքա բանիւ են առեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ։ Որք և գալոց են ընդ միածնիդ վկայք սոսկալի

դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յաւհաւորին ատենի յայտնիչք լրաւամբք զմատակարարութիւնն որ առ մեզ. որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն նուագ ձայնի, ողորմեա՛ դու ստեղծեր, մի կորուսաներ։

Գ. Որդ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց անմահականացն վերից՝ և 'ի մեր հեծութիւնս հոտոտեսցիս, բնաւից արարիչ, որ յաղթես գթութեամբդ քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին։ Որդ վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն և անվանելեացն, ամենաձեցուն առաւելութեամբ 'ի բարձրըն ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութե՛ անցաւոր ջերմութեամբ ջեռուցանողք ինքնաբուն տապոյն աստուածսիրութեան ըստ ինքեանց զմերս սառնասէր սրտիցս անբորբոք չիջուցին, այրիլ անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբուն սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յաստուած միացեալք անբաժանելի։ Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, և զինուորութիւնք անբիծք, ահաւորք, երկնաւորիդ աստուծոյ ազատագնեայ պաշտօնեայք, 'ի յամպոյդ լուսոյ ցոլք նշուղից։

Դ. Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել, Յիսուս, աղաչանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով զիս, տէր, 'ի բարիդ քո հետս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց

զուարճութեամբ քեզ, արքայ բարձրութեան փառաց անհասից, 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ, գովեալ ողորմած։ Եւ քեզ անքննին ընդ հօր անհասի՝ թուակցութեամբ հոգւոյդ անճառի վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՁԲ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր աստուած բարերար, բազմապարգև թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար, գործեցեր զանպատումն և հանդերձեցեր զհրաշալին, մինչև կատարեցեր զաւետեալն ընդ ամենալիր աստուածութեանդ։

Բ. Արդ վասն առաքելոցն սրբոց յերկնատեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց և հոգւովդ սրբով օծելոց, զորոց զգովեստն արժանաւորութեան ըստ խմբում կարի առ 'ի փառս քո, տէր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեսցիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութեան։ Շաւիղ ինձ եղիցի նոքօք և հանդերձեսցես յերանութիւնն փափագելի. ձայն բարի հովուութեան նոցին 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի։ Ս՝ան կալայց 'ի յանեղծութիւն փրկութեան տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոցն բանականաց,

աւետարանչացն բարձանց , իշխանացն պանծալեաց , լուսապայծառ Թագիւ պճնելոցն , 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց , իւղոյն զուարԹութեան տիրական լուսոյն կատարելոց։

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ աստուծոյ Քրիստոսի՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ , որք մահացու և վշտաչարչարն մարմնով , վտանգաւոր և ամենակիրն անդամօք , երկրաւորական և հողազանգուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս . արիաբար ելեալք 'ի յերկրէ , ըստ մարգարէին , վկայք ճշմարիտք ամենափորձն մահու , իմանալեացն անտեսիցն և ծածկելոց աներկբայ բարեացն յուսով տեսելոցն ատէն նկատիչք . աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին . որ հաւասարեալ գործովք ընդ նոսին , կատարեալ լրմամբ անպակասելեաւ պարէն 'ի խրախճանս անկէտն երանուԹեան . որոց հաճոյական և ընդունական մաղթանօք , արիւնընծայ վաստակատուէր քրտնալինդրուկ աղերսից յարգմամբ՝ ընկալ զիս նորոդ ըստ նոցին մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արձանացեալս։

Դ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ արեամբ ներկելոցն և ճգնաւորացն սրբոց հարցն միանձանց և քեզ հետևելոցն , որդի աստուծոյ , անպարտելի քաջուԹեամբ և անպատիր զգաստութեամբ , ընդ դժնեայ դառողի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ . սովիմք վանեցին զանմարմինն բելիար . և մշտամարտ հանդիսիւ յապարիսի կենցաղոյս առանց զզուանաց ծանրաբեռնութեան 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս Թանձրութեան ըղԹեթևութիւն հոգւոյն Թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն կենաց հասին . և իբր սիրողք վերնում վիճակին առանց յետնոցն մտածութեան , զԹագն յաղԹութեան հա-

մարմնակապէս պայծառ ճոխութեամբ պճնեալ խսկապէս 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց և զիս զմեղաւորս 'ի պատժականաց ընկալ ընդ նոսին։

Ե. Լու աՀա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութիւն, և ես ընդ նոսին իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութեան, տգեղութիւն ընդ վայելչութեան և տիղմ ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յատակուն ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութեան զանգուածոյ հացի. արդ լուր, հզօր, հնարաւոր, գովեալ, զնոցայն վասն իմ և զիմս ընդ նոսին 'ի նոյին գովեստ, 'ի փրկութիւն իմ և 'ի փառս քո, ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքըննին, անճառ, անեղծ և անստեղծ։ Քո են պարգեւք, քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի։ Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ։ Ոչ եղծանես, այլ գրես. ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես, այլ սփոփես. ոչ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս շարժեալ սատակման, այլ 'ի փրկութիւն ողորմութեան։ Ոչ մոռանաս զայցելութիւն, ոչ լքանես զբարի, ոչ արգելուս զգթութիւն, ոչ բերես վճիռ կորստեան, այլ կըտակ ազատութեան։ Ոչ թշնամանիս յառատութեանց, ոչ բամբասիս 'ի շնորհաց, ոչ հայհոյիս 'ի պարգեւաց,

ոչ նախատիս 'ի ձրի ձրից, ոչ անդոսնիս յերկայնմտութեանց, ոչ եպերիս 'ի ներութեանց, ոչ բանսարկիս 'ի բարութեանց, ոչ անպատուիս 'ի քաղցրութեանց, ոչ քամահիս 'ի հեզութեանց, ոչ առաքին այսոցիկ տրտնջմունք, այլ անլռելի գոհաբանութիւնք։ Բարձ ըզմեղս իմ, հզօր. լոյծ զանէծս իմ, օրհնեալ. քաւեա ըզպարտիս իմ, ողորմած. ջնջեա զյանցանս իմ, գթած. մատո մատն այցելութեան, և անդստին խակ կատարեցայց. զի՞նչ քեզ, տէր, քան զոսկին դիւրագոյն, և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարևորագոյն։ Այլ կենդանագրեա, բարեխնամ, քոյնաստեղծ պատկերիս փշրումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի զամենամեղս ոգի պաշտպանեալ։

Զ. Մ՚ի ածեր, ողորմած, ինձ օր տարաժամ 'ի համառօտս երբէք՝ անթոշակ ապաձեռնութեամբ ընդ անկատար ուղին հետևել, մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան 'ի ժամ ծարաւու. մի՛ փակեր, գթած, իմ հանդէպ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուսնական դիպուածք հասեալ զաղտնեօք մնասեսցեն՝, մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն։ Մ՚ի հանդիստն մահ բերիցէ, և մի՛ նընջումն 'ի սատակումն յառաջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապականութիւն գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար 'ի վերայ իմ արշաւեսցէ, և մի՛ չնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ 'ի խոնարհ լքցի։

Է. Դու ես տէր, դու գթած, դու բարերար, դու երկայնամիտ, դու ամենակարող, առ ամենայն բան անհասութեան անճառ զօրաւոր, քաւել փրկել կենդանագործել լուսաւորել, վերստին հաստատել, 'ի ժանեաց կեր-

չաց գազանաց և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք բազմեցուցանել։ Ամենայն ոգի քեզ ակընկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց, եթէ երկնայինք և եթէ երկրաւորք, եթէ անկածն մեղօք և եթէ ամբարձեալն արդարութեամբ, եթէ տէր և եթէ ծառայ, եթէ տիկին և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՂԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՐՁՐԵԱԼ անքննին, զօրութիւն ահեղ, տէր արարածոց, թագաւոր երկնի, առեղծիչ հրեշտակաց, գոյարան մտաց, հաստիչ հրեղինաց, պետ բարի հոգւոց, այջ ապաւինութեան, անդորրութիւն հանգըստեան, տեսարան լուսաւորութեան, պայծառութիւն բերկրութեան, ճանապարհ երանութեան, պատճառ կենդանութեան, առիթ բանաւորութեան, փրկութիւն առանց չարութեան, առաջնորդ խաղաղութեան, պարիսպ ամրութեան, պատուար պահպանութեան, ցանկ բոցոյ մեծի օրհնութեան, սահման անոխակալութեան, յիշեա յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան և զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝

'ի բարի, և արա կատարեա նոցին քաւութիւն և ողոր-մութիւն։ Մ՛ի բարկասցիս նոցա վասն իմ, տէր, իբրև զուրբս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա։ Եւ արդ մատուցեալ երկա-քանչիւրոցս առաջի քո, արդարադատ, ոմանք առ մեզ վնասակարագոյնք սակաւուք, Թերևս և յիրաւի բամ-բասելոցս, և ես առ քեզ, ամենապարգև, անթիւս և ան-կշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս։

Բ. Արդ յիշեա զքո մեծութիւնդ, տէր, նայեցեալ 'ի յիմս անարգութիւն. և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց, և դու առ քոյս ըստ քում մեծութեա նըդ անճառելիս հրաշագործեսցես։ Մ՛ի սատակեսցես զիմն խածանողն, այլ փոփոխեսցես. խլեալ զխոտանս բարս երկրաւորս, զբարիսն արմատացուսցես և յիս և՛ի նոսին։ Մ՛անաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խա-ւար և յիմար. դու խնկութեամբ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր ստորիցս և երկնից, և ես անիշխան շնչոյս և հոգւոյս. դու բարձրեալ 'ի կար-եաց զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան գարշութեան. դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կործանիմ ըստ նորին բանին. 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես բովանդակն խակ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի։ Հան զիս 'ի բանտէս, արձակեա 'ի կապանացս, զերծ 'ի շըղ-թայիցս, փրկեա 'ի խեղդմանէս, ազատեա 'ի տագնա-պէս, քակեա 'ի յերկաթիցս, լոյծ 'ի պաշարմանցս, արտաքսեա յերկմտութեանցս, սփոփեա 'ի տխրութեան-ցըս, հանգո 'ի նեղութեանցս, փարատեա 'ի վշտացս, հանդարտեա 'ի խռովութեանցս, ապաքինեա 'ի լալոյս, մերժեա 'ի հեծութեանցս, հեռացո 'ի յողբոցս, կազ-դուրեա 'ի կականմանցս։ Աստուած ողորմութեան և

պարգեւատու քաղցրութեան, մի՛ զգլացեալս արեամբ հզօրիդ անտես արարեալ ընդ վայր կորուսաներ. կանգնեա զհասեալս յափն մահու 'ի բազմավտանգ հիւանդութենէս.

Գ. Ահա բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ յոչ պէտս երեւեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սենեկի փուշս գժնիկի մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուդայի, և կամ զաւակին Եփրեմի. Եւ քանզի բուսուցեալ տնկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գրոյն բանի՝ որ երէյն է քան զաւետիսն, զի՞րդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ: Ոչ սերմանեցի արդարութիւն, ըստ բանին Ովսեայ, և զի՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն: Անկաւ ստինք կուսութեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ առ Իսրայէլ, կարող ես տէր 'ի նոյնն հաստատել: Լայնեցի ընդարձակեցի ըստ մոլեկան բարուցն Յուդայի զանկողին կամացս՝ դիւայն հոմանեաց, 'ի ձեռաւքո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութիւն: Եթէ մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին անարատ գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութիւն հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար, և զկարակուճն մօրից ցամաքէ և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացողդ ամենից՝ հոգիդ աստուծոյ ո՞րքան զօրեսցես զտիղմ չարեաց աղտոյ և զԹարախ պղծութեան մեղաց մըԹերից իսկոյն սպառել: Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի՝ աւելեացն իմոց 'ի կարգ այս բանի, զի զհերքեալ վնասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես,

օրհնեալ գթութիւն. արդ կենագործեա զիս զամենամեղս անդամօք մարմնոյս ընդ բնութեան հոգւոյս խորհել միշտ զքոյդ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անքննադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն։ Քանզի արդարև առ մեզ այդպատուէր ամենայն հասակ զօրանայ, իսկ միւսոյդ երկրորդի առաջնովդ խնամով հանդիպել՝ աստուածականիդ է նմանութիւն. յաղագս այսր իւր նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս քան զերախտաւորացըն բարիս։

Դ. Եւ արդ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ 'ի քո անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան. և տուր նոցա, տէր ամենառատ բարերար և անոխակալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նոցա և առ յոյս նոցին ընկալութեան, որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկեն, որպէս թէ 'ի մասանցդ քո կեցուցչաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկութի լիով ունիցին։ Եւ զպատժաւորս անամփոփելի 'ի քոց տեսութեանց և անխաբելի 'ի յուղիղ կշռութեանց՝ քաղցր գթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս մաքուր արասցես, անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութեանն։ Եւ որպէս շուք իմն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութեան, չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարդան եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեան հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մատո պարգևեա զանեղծ մեծութիւնդ և զանթառամելի զպսակդ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափոյթ ընտրութեանն։

Ե. Զի դու ես գլուխ փրկութեան մեծութեան

անվատնելի և անծախ գանձուց սորկիս և սովեցելոյս, ՚ի վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ ՚ի քէն՝ յարգեալ ճոխանամբ։ Կցառ ինձ սահման ջրոյ հանգստեան. արժանացո, անփոփոխ, պատրաստական վստահութիւն. կարգեա, օրհնաբանեալ, անկեղակարծ յուսոյ ամրութիւն, տուր, ամենախնամ դու անաչառ պաշտպանութիւն, սասանեցելոյս բարեաց անդորրութիւն, տարակուսելոյս լուսոյ ապաւինութիւն, աշխարելոյս մեծ երջանկութիւն, վհատելոյս կենաց օգնութիւն, լքելոյս անգայթագղելի օժանդակութիւն, նահանջելոյս անսայթաք վերընթացութիւն։ Զի քո է բընաւդ և ՚ի քէն է ամենայնդ, և ՚ի ձեռն քո բաշխին հաստատութիւնք պիտանացուաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՂԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՐՔԱՅ երկնաւոր, թագաւոր բարձրեալ, տէր բոլորից, ամենից ակնկալութիւն, սեղծող տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց, կազմիչ հանդերձելոց, տուիչ լուսոյ, առիթ առաւօտու, պատրաստիչ փաղորդայնի, երևեցուցիչ երեկորի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, իմաստութեան գործօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմարիչ

քնոյ, պարգևիչ ննջման, շնչոյ յարակարգութիւն, զգայութեան տևողութիւն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անրջոց, փոխարկութիւն զարհուրմանց, այլայլութիւն տխրութեանց, խափանիչ խլթմանց, ընդարձակիչ կարծեաց, համադրութիւն ծփմանց, ահագնութիւն խարդախմանց, հարուածիչ դիւաց, փախուցիչ ախտից, ընկղմիչ գայթագղութեանց։

Բ. Պաշտպանեա երկնատեղծ ձեռամբդ, զօրացո բարձրացեալ քո աջովդ, ամփոփեա ամենակալդ թևօք, ծածկեա աստուածեան խնամօքդ, ամրացո վերակացութեամբ վերայնոցդ, շուրջանակի պարսպեա գումարտակօքդ անմահից, 'ի յամենուստ պարփակեա կը-ցորդութեամբ հրեշտակացդ, վանեա զըդդիմամարտն իմ զինուորութե՟ զուարթնոցդ, պատսպարեա զսասանեալս՝ աստուածածնիդ մաղթանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա ինձ պահապան։ Կաց ընդ աչացս դիմաց և զմտացս իմ տեսանելիս, զգաստ արա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրից դանդաղութիւն, վերացո, տէր, 'ի զգայութեանցս զմածեալս յիմարութիւն. բարձ, միայն բարեգործ, զպատրուակիս թանձրութիւն։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա, ընդ ելից արևուն՝ արդարութեան արեգակն 'ի յանձկութիւն սրտիս մտցէ. Ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի. խաչիդ տեառնագրութիւն ընդ շունչս և ընդ մարմինս համասփիռ տարածեսցի։ Յանձն առնեմ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին։ Որ դու ես աստուած անքննին, առ ամենեսին բաւական և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՁԸ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ արդ վասն զի արթնականն մեր զուարթութիւն քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութիւն լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութիւն աչաց, ուղղեա հոգւոյդ քո իմաստութեամբ զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց։ Ո՛րայցո, տէր, 'ի հանդէս բարի ճգնաւորական արի մարտակոյ, կցորդ լեր կարեացս տկարութեան, թեթեւս կացո զաշխատութեանս այս սկիզբն. արագեա, միշտ կարող, զյառաջադրեալ ձեռակերտս, դիւրաւորս ընթացո 'ի յաւարտումն լրմանն։ Ի վախճան իրին բերկրութեամբ զիս հասո, ժաման կացուսցես 'ի հանդիպումն յուսոյն, կցորդ լեր ուղւոյն ճանապարհիս ընթացից, 'ի թռիչս ամբարձման փութացուսցես յօդտակային, ընդ աջմէ իմ լցիս 'ի վտանգի ծանրութեան, զձայն քո լուր 'ի յանձկութեանն պահու, ձեռամբ քո կեցո 'ի կորստեանն ժամու, մատամբ քո ազդեա 'ի սահմանին անձկութեան, հարթեա զխորոց ամենաչար խափանմանն, հոգեղինին առաքմամբ ըստ Ամբակումայ ինձ հնարեա, բան ինձ շնորհեա 'ի յատենի բազմու՟ե, իմաստու՟ի յիս տնկեա 'ի հանդիպման քննու՟թե։ Ըմպոյլ կամաց քոց հովանացիր հրաշապէս, հանդարտեցո փայտիւդ կենաց զծովուս մրրիկ, սանձեա զաստեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ. քանզի թէ ասա ողորմու՟ի քո, տէր, կամեսցի, այս լուծու՟թի կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ 'ի

ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդութիւն յատակիս 'ի ներքոյ աստի հոսեալ սասանի։

Բ. Որդ ընկալ, Յիսուս, զպաղատանացս ձեռնարկութիւն քեզ 'ի հաճութիւն, և արա ինձ զամենակարծն գայթագղութիւն մեծ վստահութիւն։ Որպէս 'ի ջրահեղձույց ամենակործանն դարու, որք 'ի հարթ տարածման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողորմութենէդ ամուր մնացեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստին յոգնատատան հիմանն հայթայթանօք յանուն գթածիդ յեցեալ պահեցան. ընդ որս և զաղաչողս մշտատատան 'ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս պրծեալ ապրեցո. վարձս 'ի քոյոց ընդ իս բերելով հոգևոր շահից, զստորաբերս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանից առակաւ, 'ի քեզ տէր անկայց միացեալ իսպառ անբաժանելի, օրհնեալ յամենայնի։ Նաև կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան. և յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամանութեամբ՝ եղիցի եղիցի։

ԲԱՆ. ՁԷ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ այսր հառաչանաց թախծութեան ողբոց 'ի բազմաց կերպից շարակարգելոց, և ամենից հոգւոց

ողորմեա, գոլեալ և երկայնամիտ Թագաւոր։ Նա և այնոցիկ առաւել որոց հատեալ է ակնկալութի՛ փրկութեան կենաց. որք ննջեցին անպատրաստաբար շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան։ Ահա յիշեա, տէր իմ գթութեան, և 'ի յայս ես պատճառ խրատուս ինձ գրեա։ Քանզի թէ և 'ի փառս ահաւորութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս, զոմն ծանր և զոմն թեթև, զմին զով և զմիւսըն հրային զի դիմադրութիւնն 'ի հակառակացն հարթպահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւատարիմ հաւասարութեամբն. և 'ի յայսմ 'ի դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհութիւնն առկաւն դիտման անմռաց պահեալ՝ պսակ ընկալցուք ձգնաւորական։ Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման ընդ երկիր մածաք, այլ ոմն ախտիւ և այլ ոմն անդըթութեամբ, միւս մասն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց իբր գազան մշտաբոյծ յարակայ կապեալ ընդ բնութեանս։ Իսկ 'ի քառիցս ոմն անըմբռնելի և անողոքելի սլացմամբ 'ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին զնոյն կասեցուցեալ բարւոյն ընդ միջէ. եթէ օդականաւն հրեշտակայնովն յառիցիմք 'ի քեզ, ծանրութիւն թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ 'ի ըստորև քարշեալ խափանէ։

Բ. Նաւ արդ յամենուստ պարտեալ և իսպառ լքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հեղձեցայ կորեայ վանեցայ, վտանեալ 'ի բազմաց 'ի մահ գրաւեցայ. վասն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութեանն կողմ նայիմ, և պատկառեալ դիմօք համայնից ունողս զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կոյստականացն ըստ խ

մեռելոյն . ամենայն ինչ քեզ զօրելի է . Նա՛ զի և ընդ անտկար կարելոյդ և կամելդ է ախորժելի։

Գ. Արդ այսց երկուց բարդուած շնորհաց նորոգչաց առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն , բարձեալ եղիցի և յուսահատութեանն վհատութիւն աղգաց մեղաւորաց . և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հոգւոց բժշկութեան քումդ հրամանի, տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս . ամէն։

ԲԱՆ · ԶԷ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութեան , արա , տէր , վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք։ Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց անյուսութեան դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս. և դարձեալ , այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից։

Բ. Ահա օրհնեալ ես 'ի գթութեան , բարեբանեալ միշտ 'ի քաղցրութեան , խոստովանեալ յերկայնմտութեան , ծանուցեալ 'ի յայցելութեան , քարոզեալ տէր 'ի փրկութեան, ներբողեալ դու յառատութեան, պատուեցեալ 'ի պաշտպանութեան , փառաւորեալ ես 'ի վրկութեան , երկրպագեալ յանբաւ

բարձրութեան, պաշտեցեալ ՚ի յանքննութեան, գո-
վեցեալ միայն ՚ի յաղթութեան, վերաձայնեալ ՚ի
մեծ զօրութեան, խնկաւորեալ յողորմածութեան,
համբուրեցեալ յանձառ հեզութեան, ճաշակեցեալ
՚ի խոնարհութեան։ Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր
աստուածդ բոլորից մխիթարութեան. ընդ որում հո-
գիդ քո սուրբ բարութեան, որ զանկեալ զգլխատ Թըշ-
նամւոյն և զգայթագղեալ մարդն անբանութ՝ կանոնեցեր
ոչ անտես առնել։ Արդ երախտիս հզօրիդ ՚ի յիս, և ա-
ռաքինութ մեծիդ ՚ի բարձունս տօնեալ անդադար յան
վախճան փառաբանողաց. որովք զայս ձայն աղերսական
յարդեալ ընկալցիս մարտիրոսացն պաղատանօք ՚ի հոտ
հաճութե բուրման անուշից։ Եւ այսու փրկանօք հաշտա
րար բանի՝ զնախնեացն պարտս և զանդրևոյթ վէրս միջ-
նոյքն և վերջնոյքն մահացուցանողօքն զանձն և զմար-
մին բժշկեա, ամենակարող, զներքինս և զարտաքինս,
զտիպքն և զգիծքն և զխարանս հարուածոցն. բարձ-
եալ և մաքրեալ դեղովք ողորմութեանդ զկտեալ խած
ուածս բազմադունիս, որք դարշելիս ընդ ախորժել-
եացն քեզ ցուցանեն զէութիւն բնութեանս։

Գ. Եւ եթէ հասից յամս ծերութեան քև առաջ-
նորդեալ արժանիս մահու, մի թողցես զտկարութիւ-
նըս, մի անարգեր զալիսն, մի կորացուցես զկործան-
եալըն, մի զիջուցես զկքեալսն, մի վայրաբերեր զխո-
նարհեալսն, մի շնչման հողմոյ մատներ զառկայծեալսն,
մի ընդ պահկեսցես զդեդևեալսն, մի անվերարկու առ-
ներ զսառուցեալսն, մի անդարման լքցի տագնապեալսն,
մի առանց տածելոյ յարկն խարխալեալ, մի անպատե-
պատկերին հնացեալ, մի պարարտութիւնն անհամեալ.
մի շուք շնորհին անարգեալ, մի հնութիւնն քամահ-
եալ, մի նաւ հոդւոյս ալէկոծեալ, մի երկարութիւն
յուսոյն կորեցեալ, մի լոր շաւիղին խզեալ, մի ուշ ի-
մաստին բարձեալ, մի դոյին կազմած զեղծեալ, մի ամ-

բարձմանն թեւք փետտեալ, մի՛ զուարթութիւն գեղոյն տգեղեալ, մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ, մի՛ պատուհանք աչացս փակեալ, մի՛ լուսաւորութիւն նորին խափանեալ, մի՛ պատկերին խոստն անկեալ։ Ա՛հա աղաչեմ ըզքեզ, բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, լուր սոցին ինձ կանխաւ, զի զանագանն մի՛ մոռասցիս։ Դու առաջնորդեցեր ինձ ըստ սաղմոսողին և ապրեցուցեր. հան, տէր, ընդ երգողին և ՚ի կարծեացն կասկածանաց, յորմէ երկնչիմ։ Իսկ ես չեմ արժանի ՚ի քէն և ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար և առ զըլացողս բարեգործել։ Քո են զարմանալիք անճառելից բարեաց, միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութիւն, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՁԶ

ՎԵՐՍՏԻ՛Ն ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻ՛Ն ՀԵԾՈՒԹԵԱ՛Ն ՆՈՐԻ՛Ն ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅ՛Ն ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱ՛ՆԱՑ ԲԱՆԻ

ԻՆ ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԵՒ արդ ջուր կամաց և կաթ սրտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս մտացս լքմամբ՝ խորտակմամբ սըրտիս հեղեալ առաջի, զմարգարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն Սամուէլի, զոր առեալ եհեղ ՚ի սկաւառակէ յանդիման քո, ամենատես, առ ժողովրդեանն օրինակութիւն զանձն արկանելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենդանարարդ գարշապարաց։

Բ. Եւ արդ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց, և հաստատեսջիր յայս նուէր բանի անար-

իւն զոհի, Թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբերգութեան, և գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր, և յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շըրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քո, և ընծայեսցի 'ի սրահ սրբութեան քոյ. խնկեսցի 'ի տաճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան փառաց քոց. պահեսցի 'ի գանձարանի քում, և համբարեսցի 'ի ստացուածս քո։ Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց. նկարեսցի 'ի դրունս իմաստից, և տպաւորեսցի 'ի սեամս զգայութեանց. իբր կենդանեօք զիմս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր տոմարի՝ գրեցայց կենդանի։ Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո, տէր, ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ անդուլ դատիչ, անաչառ կշտամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի դսրովիչ, անողոքելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, անմարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կառափիչ, անխնամելի յայտնիչ, ապառում հրապարակիչ, աշխարհալուր բողոքիչ։ Փողով մեծութեան ազդման առանց լռութեան, և կամ դադարման զիմոցս պարտեացս խոստովանեսցի։

Բ. Սոյն գիր իմոյս ձայնիւ իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն, հռչակեսցէ ըզգաղտնիսն, կականեսցէ զկատարածն, հնչեսցէ զմոռացեալսն, յայտնեսցէ զաներեւոյթսն, բարբառեսցէ զբարուրսն, քարոզեսցէ զխորոցն, պատմեսցէ զմեղացն, մերկացուսցէ զանտեսիցն, ցուցցէ զկերպարանս թագուցելոցն։ Շօշափեսցին սովաւ որքն, գտցին գայթագղութիւնքն, յանդիմանեսցին անձառքն, քամես-

ցին չարեացն մնացուածքն։ Եւ թագաւորեսցէն կեան-
ք ըղդ շնորհաց ողորմութեան քո, Քրիստոս, 'ի գանձս
պահեստի ոսկերացն ցամաքելոց. որով 'ի ժամանակս
կենդանականս սկզբնաւոր լուսոյ մօր գարնայնոյն նո-
րոգման աւուրն պայծառութեան՝ քօղով ցօղով յոգի
աճեցեալ այսու փրկութեամբ անմահականաւ, և ան-
ցամաքելի վերամբարձութեամբ շառաւիղս ձգեալ ի-
մանալեացն բարեաց՝ դարձեալ դալարեցայց և կրկին
ծաղկեցայց ըստ քրիստոսաշունչ գրոյն յուսադրութեան։
Եւ քեզ միայնոյ փրկողի և հոգւոյդ քում հօր խակակցի,
միանական տէրութեանդ և անճառ Ե՛րրորդութեանդ
խորհրդական գովեստիւ փառք և երկրպագութիւն յա-
ւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՁԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողոր-
մած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր,
ամենագութ, պարգևատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ,
բարեբանեալ։ Դարան ամրութեան, պատսպարան վըս-
տահութեան, առանց նենգութեան բարի, առանց խա-
ւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց,
անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպաւոր, ան-
յուսութեան ելք, անուն քո խոստովանեալ աստուծոյ
որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և աչաւորի, և հոգւոյդ
ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշ-
տօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. Գ.

ՎԵՐՍՏԻ՛Ն ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻ՛Ն ՀԵԾՈՒԹԵԱ՛Ն ՆՈՐԻ՛Ն ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՐԵԲԱՆԵԱԼ աստուած երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ, մեծութիւն անհեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքննին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, ապառումն վհատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, շիջադրութիւն շնչոյ, կացուցիչ հագագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս ըղթեւոց ամէնըլթայց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես։

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութբ անհպարտութեան երկայնամտեալ հանդչիս տենչանօք անձառ հրաշիւք յանձինս սրբոց։ Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս 'ի լոյս վերին։ Ձեռնկալու մեծ վստահութեան, որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առ հաւատչէիւ աղօթողաց մատանց յայտնի եր՛եւեալ. ապաւինութիւն հանդստեան,

որ ոչ երբեք մատնես վտանգի դատապարտութեան։ Ազատութիւն շնորհածիր, որ տաս լքեալս առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես։ Պայծառութիւն անստուէր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես։ Բուժիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես։ Հնարաւոր դիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, ելք վտանգութեան առ խոստացելոցն վայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանին։ Կամք անփոխադրելի առ 'ի քաւութիւն գերւոյս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց բնաւին եղծելոց առնես զսքանչելիս։ Մենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն 'ի թարթել ական նոյնն հիւթականութեամբ անպակաս յարուցանես։ Անհաւասար համարձակութիւն, յորում աստուածօրէն պանծանօք պարծելն է իրաւացի։

Գ. Հայեաց, տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա անդորր հանգստական դիւրաւոր 'ի բազմատագնապս հեծութենէ։ Եւ զյարուցեալ զումարս ստահակացն. եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց տգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վտանգիչ և կորստական նշմարանք, մերժեսցես հանգես հատցես խափանեսցես և հալածեսցես հեռի սահմանաւ իսպառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն. և կատարեսցես կացուսցես

նպատակ կենաց և ամուր մահարձան զնշան խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ փրկութիւն. և յայսմ անպարտ և անպատիր և անխափանելի արուեստից ահաւորիդ մեծութեան լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն, վատնեսցին գայթագղութիւնքն, խայտառակեսցին հաղբից դրութիւնք, յայտնեսցին երևոյթք ըսոյն, գտցին նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք, տոչորեսցին որոմանցն բոյսք, նզովեսցին բանաւորին չարաբանութիւնք, կորեսցի լար խաբէութեան 'ի մահ որսողին, պարսեսցին պարտողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տուռունք տագնապողին։ Ջլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեսցին խրոխտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն, բաժանեսցին ազինք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին ամրոցք ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրևք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին։ Խորտակեսցի եղջիւր գոռոզին, մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց, փշրեսցին ամբարհաւանութիւնք հպարտացելոցն, ճահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակտեսցին միաբանութիւնք զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք և եթէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց յեօթն տարակոյս. 'ի գուբն ինձ փորեալ իւրեանք ընկճեսցին։ Յեղանակեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի կապն կցորդութեան մշտաջան աւազակին, նողկասցի մտացս կայից համբոյր շողոքորթին, ընդմիջեալ մեկնեսցին նետաձգութիւնք նեղչին, կասցէ 'ի սասանման նաւ խարդախողին, խլեսցին յարմատոց անտի ատամունք խածանողին։

Դ. Սան փայտիդ օրհնութեան կենաց՝ յորում
պրկեցար աստուածդ անըմբռնելի, յիշատակաւ բեւե-
ռացդ որով 'ի գործի մահուն մածուցար արարիչդ
երկնի և երկրի, արեամբդ տէրունականաւ՝ որով զվի-
շապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեղւոյն դառ-
նութեամբ՝ զոր արբեալ, զդեղատուութիւն կորուս-
չին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըղձական
ճառիւք կրիցն սարսափելեաց՝ որով զլրբութիւն հա-
կառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր, անուամբդ
անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ՝ յորմէ
դողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափ-
մամբ բնութիւնք ամենայն երեւութից և աներեւու-
թից, եղիցին այս ամենայն պարգեւք շնորհաց խոստո-
վանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութիւն և 'ի քա-
ւութիւն: Նա և մահաբեր դառնաթոյն օձին, և որ 'ի
նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւնն, 'ի սատա-
կումն եղիցի նորին. Նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշ-
կական հարուած տանջանացն սովաւ մատնեսցի, կա-
պեսցի և ըմբռնեսցի: Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ
ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կա
պաւ միացեալ 'ի մի:

Ե. Նա որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթա-
նաց գոչման աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի
և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի
աստուածսիրաբար, հաւասարապէս անաչառութեամբ
ընկալցին 'ի քէն մասն երանութեան պարտուց ազա-
տութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նո-
րոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպա-
րան անփոփոխելի: Ահա տիրապէս հնարաւոր, զօրեղ,
անպատում, անհաս, անիմանալի, տեսցես աստանօր 'ի
հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ 'ի բոլո-
րից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո
երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի

և կենդանատու ի. աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց։ Որ դու ստեղծեր զամենայն, և 'ի քէն եղեն ամենայնք, և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց, մի խոստովանութենէ անժամանակ Երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ. ՂԱ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՑՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԵՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր գթութեանց և աստուած ողորմութեանց, անուն մեծութեան, ձայն ահաւորութեան, կոչումն սաստկութեան, լուր անհասութեան, բարբառ գողութեան, հնչումն հիացման, յուսադրութիւն բարերարութեան ամէնողորմ քաղցրութեան. յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութիւնք եղելոց 'ի քո սպառնալեաց ահիդ պակուցման, սաւառնին սերոբէք, ամփոփին քերոբէք, պարուրին պարք լուսակերպից, երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոյն, նոյնք ցնծան գողութեամբ մեծաւ 'ի մի նուակատիս բերկրութեան, զարհուրին դեւք, ընկրկին չարութեանցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք օտարին։ Կապին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին, փակին 'ի ստորին բանտի քինաւոր ամաղեկացիքն, անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին, արգելլին

անզերծ զընդմանաւ՝ մահազինացն կաճառք, պնդին 'ի մեռաղս ահեղ հրամանիդ այսականացն գումարք, պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութիւնք, պարաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժողովք, անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւնք Դերաքրիստոսին։

Բ. Ա՛հա կարկառեմ մատամբք ձեռինս զտեառնանագրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանա խաւարաւ անգիտութեան, ամենեւին տեսականութիւն, քան թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակես։ Ընկալ զաղաչողս փոանդաւոր գոհաբան ընդպահպանութեամբ թեւոց հզօրիդ, փրկեա 'ի ցնորից եկամուտ պղտորութեանց, սուրբ արա զզգայարան հայելեաց սրտիս նկատմանց, ամրացո փայտիւդ կենաց 'ի տխրական անրջոց, արեամբ քո սրսկեա զշրջարկութիւնս կայից, զհետս երեւմանցն կաթուածով կենարար կողիդ գծագրեա, երգոցն պահպանարան քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի, հանդէպ տեսութեան աչացս ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի, ընդ բարաւոր յարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի, զծառայդ օրհնութեան հաւատք յուսոյ իմոյ կախեսցի։ Ա՛րդեւ, տէր, սովաւ զսատակիչըն հոգւոց, մոցէ անխաբան պաշտպանն լուսոյ, եւ ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս եւ զբեռն պարտեացըս թեթեւացո, զոր 'ի լաւարանի մտացս ամփոփման մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահատութեանցն դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս

Գ. Հանգո զվաստակեալս 'ի բազմածուփս աշխատութենէ, բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութիւնըն ընդ կարեացն, զանձկութիւնն ընդ թշուառութեանցն, զհառաչմունսն ընդ խորտակմանցն, զբեկու-

թիւնն ընդ ապշութեանցն, զթմբրութ՛իւն ընդ շբրտմանցն, զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն, զթերամտութիւնն ընդ խելագարութեանցն, զսառուցին սիրոյն և զհրայլին ջերմութ՛ի աղուական ախտին։ Օժանդակ լեր ակարութեան բազմախուռս տարտամութեան, բարեգործ աջովդ շնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ մշտափայլի, յարակայութեամբդ անեղծի, երեսօքդ զուարթականի, խակութեամբ էիդ պաշտելի, բարձրութեամբդ երկրպագելի։ Հատո զչարաչար հեծութիւն կորստականս խեղդման, զնոյ գիւտ չարին, զհին խարդախութիւն բանսարկուին, զօտար ազդեցմունս 'ի մահ կրթողին, զանյարմարական երևոյթս հանապազորդեան եղեռնագործին, զառ աչս հնարադրութիւնն դժնդակ դիւին, զողոքական բոցաշնչութիւն ձգող կախարդին։ Վանեա 'ի տեղւոջ հանդստեան մեռօրինակ այսր դադարման յաներևոյթ մտածութեանց, 'ի մանաւոր սխալութեանց, 'ի մեծագոյն գայթագղութեանց, 'ի փոքրագոյն ոտնառութեանց, 'ի խաբեբայ չար ձանձրութ՛էց։ Հեռացո զանհանդէպ մտածութիւնն 'ի զգայութեանց ծառայիս յանցաւորի, զկիրս բասրելիս, զվարս թշնամանելիս, զդիպուածս պատկառելիս, զհետս մերժելիս, զպատիրս ձաղելիս, զխորհուրդս անդոսնելիս, զաւելաբանութիւնս նշկահելիս։ Նախալ հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա, 'ի շնչմանէ հողմոց, 'ի զարկմանէ բռնութեանց, 'ի բախմանէ փոթորկաց, 'ի յոստմանէ մրրկաց, 'ի յարձակմանէ դազանաց։ Ի կամման աչացս հայեցուած սրտիս մի՛ սասուերասցի, այլ զուարթասցի պայծառասցի փայլասցի՝ ընդ քեզ փայլեսցի, տէր Յիսուս Քրիստոս, լուսաւոր փառմամբ անշիջանելեաւ։ Բանիւ քո սրբեա զպատսպարանըս բազմականիս 'ի խորամանկութեանց, 'ի զբաղմանց, 'ի քո ատելի յիշատակաց, 'ի վերնամարտ մտածմանց,

՚ի քրէական մորոսութեանց, ՚ի տիրանենգ անշնորհութեանց, յաստուածընդդէմ հերձուածութեանց։ Գնդեւք վերնայնոց վերակացու ինձ լիցին, պետութիւնք, իշխանութեամբք զօրաւորքն անյաղթականաց մաքուր մատակարարաց սուրբ աստուածութեանդ. առաքեալքն աւետեաց աւետարանաւն, մարգարէքն կտակարանօքն, մաղթանք երջանկացն ՚ի կատարածի աւուրն ընծայեալ։ Որովք նիրհեցից երկնուղին ըստ քեզ տրտմութեամբ, և զարթեայց շնորհօք քո կրկին ուրախութեամբ. եթէ վհատութեամբ ննջեցից, յարեայց զարթեալ հոգևորական բերկրութեամբ. եթէ ընկղմնեցայց մեղանօք, կանգնեցայց վերստին զատեալ ՚ի խղճէ անաղտ անբծութեամբ։

Դ. Լուր խնդրուածոց ամենահաճոյ ձայնիս հեծութեան, միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ աստուածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց ընտրելոց։ Եւ քեզ փառք յամենեցունց խմբովք գովմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց, ՚ի գովեստ հօր քո աստուծոյ մերոյ և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՂԲ

Ի ՓԱՅՏՆ ԵՐՋԱՆԻԿ ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՀԱՐԻՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ

ԱՂԱՉԱՆՍ ԵԴԵԱԼ ԸՆԴ ԿԵՐՊԱՐԱՆՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՆ

Ա. ԳՈՀԱՆԱՄ զքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի աստուծոյ կենդան-

ւոյ , այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո
յիշատակի 'ի լռութիւն հնչման փայլիդ հրաւիրման։
Որով բախեալ զձայնարձակութեանցն զազդողարան ,
սթափեցաք կանգնեցաք , 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրի-
նակս թմբրմանէ , ուստի իբր կոչմամբ սփոփանաց բա-
նի բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնաբանու-
թեան , յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ
հատուցմանս բեմի։

Բ · Ո՛հ փառք քեզ , անսահման անուն և անբո-
վանդակելի զօրութիւն , որ այսքանեօք հնարաւորու-
թեամբք ընդ փրկութեան խմում հոգացար · գոհաբան-
եալ անեղծ խնկութիւն , որ կերպարանեցեր հրաշիւք
ստոսորին զհանդերձելոյն նմանութիւն , հանդարտ
գործեալ վայելչականաւ փայտի անօթոյ առ քունս
անյարիր սաստիկս որոտացեր · որպէս թէ ընդ ծուլու-
թեանս դանդաղութիւն զյանդիմանութիւն խրատուդ-
խառնեցեր , 'ի հայրենի սիրոյդ հեզութիւն զուժգնու-
թիւն ճայթմանն յարեցեր · յընդոստ զարկուած եր-
կուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրևեցեր ·
ոչ մեղմութեամբ մեղմական վանգիւ նիրհմամբ ըն-
կղմեցեր , և ոչ անխնամաբար ահաւորութեամբ զտա-
ռապեալ հոգիս զարհուրեցուցեր։ Օ՝նրադրական եր-
կրպագութիւն ստեղծչիդ բոլորից · որ այժմէն ցուցեր
համայն յայտնապէս զօրինակ ահեղ բարբառոյն մեծի
աւուրն յարութեան , կենդանացուցեր 'ի դադարմա-
նէ դժոխական անբանութենէ , 'ի խնդիր ելեալ կոչե-
ցեր զպակասամիտս 'ի գիւտ ուրախութեան · արարեր
զոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սէր փե-
սայիդ · երկուցեր փոքր այս խթանաւ զապարասանին
զվիթխարութիւն , լուծ ստուար կրթութեան ստամ-
բակին ուսոյ զայս իր գործեցեր , վարապան վանիչ
չարախօսին կշտակաց եղեալ կազմեցեր։ Փառաւորեալ
յաւէտ անբաւ բարձրութիւն մեծիդ աստուծոյ , որ

փոխարկեցեր զփայտին պարտէս յազատութիւն շնոր-
հիդ կենաց, իմաստնացուցեր վերստին դարձեալ զյի-
մարս ցնդեալ՝ հոգեւորական հանճարովդ, կարկառ-
կռձմամբ զանբժշկութիւն հաւատոց օձին առանց
մոռացման միշտ թարգմանեցեր, ընդ Երրորդութեանդ
գծագրութիւն զկայսն երեքկին իմ վնասակարին 'ի կա-
տարածին սովիմբ կրկնեցեր:

Գ. Գովեստ ներբողից բուրմամբ խնկոց վերառա-
քեմ քեզ, ամենախնամ, զի 'ի ստապատիր կռոցն բազ-
մաստուածութենէ առաւել յաճախագունիւք որսա-
ցար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագութիւն,
խորխտ և աչարկու նուիրեալ փայտիւս զճշմարտու-
թիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ
պատշաճականաւ զնոր աւետարանութեանդ պատիւ:
Այն ինքն աղաղակ բարձրութեան գոչման սպառազի-
նութեանդ քո, արքայ պետութեանց կայսերաց երկրի
տէր Քրիստոս. Նշան խրախութեան աւարտման հան-
դիսի մարտի քո, Յիսուս, յորում իմանալին փարաւոն
կապեալ ըմբռնեցաւ, կռփիչ հանապազորդեան գլխոյ
գազանին հպարտացեալ չարագործին՝ շերտս այս
տաշեցեալ: Արմաւ գումարին 'ի պատերազմի որդւոց
Սիոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի. տօն իմն
աստուածաւանդ կրթութեան կարգեալ 'ի հեռուստ
այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խա-
փանման, Նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուց-
ման 'ի բացուստ սնդր ծանուցմամբն, ազգակից հան-
գունանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ աստու-
ծոյ, կոչարան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւք 'ի
յարկն օրհնութեան, պատկեր տեսակի տնկոյն գիտու-
թեան 'ի կարգ ընտրութեան բարւոյն և չարի, յիշա-
տակ մեծ տեառնագրութեան յերեսս կերպիս հոգւո-
վդ սրբով զնշան խաչիդ, Նախազեկոյց աւետամատոյց
փառաց գալստեան 'ի դշխոյն պահեալ սուրբ Թագա-

ւորիդ , յորդորիչ քաջալերական մաքրապարկյն խրախճանութեան , անախտական սիրարկու անձնահամբոյրն կցորդութեան չքեղաշուք քողընծայ ամենածին կուսին Թագուհւոյ , յարդարիչ ծածուկ պճնութեան՝ որ 'ի հոգին է վայելչութիւն , նմանութիւն պատգամին Սինայ , որ 'ի տէրունեայն արտաքս առաքիւր · միշտ օրհորդ պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ փառազարդէր։

Դ · Գերագոյն քան զերկքովին փողն եղջերեայ զբըռնութիւնն բելիարայ սովաւ հարթեալ տապալեցեր , քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ Գողիաթու , դայխոն նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի , զ'ի խոր անձեցեալ արմատս մեղաց մեքենայիւս այսու խլեցեր , զմռացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդ իս կապեցեր։ Որ եթէ այլ իմն ձայն բանիդ աստուծոյ անուանեմ նախապատուեմ եկաւորութեանն , ոչ սխալեմ քան թէ ճշմարտեմ . 'ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործոյդ Յիսուսի առաւելապէս պատմեալ հռչակի · բիւրաւոր օգնականութիւնս վերնապարգեւս և քոյինատուրս 'ի յայսմ անպատսպար ապաւինութենէ երկրականաց զարմանագրեցեր։

Ե · Խոստովանեալ անուանդ անքննին մարդասիրիդ բարեխնամութեան , խնկեալ խորհրդով սրբամասնութեան , անգծագրելի կերպարան լուսոյ , որ կրկնաձիր նշանաւս այսու նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատրականս օդաչուս և յարմարաթռիչս ունողս յինքեան հոգի կենդանի , որով անսխալ հանդիպմամբ ըղնպատակն խաւարային աղեղնաւորին գաղտնութեան յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճեցեր։ Իբր զպատնէշս ամրաբերձ բերդամարտութեան կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուստ անդանօր զկտեալ դիպուածըս այս փայտի զարկման հրեշտակ կամարար թշնամ-

ւոյն ներհակ վեր յուղարկեցեր։ Բանիւ հրամանի մեծիդ ակնարկութեան, օծութեամբ շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթկիչ մոլի գոռոզին իբր զխաչիդ փրկանակ յեսանեալ սրեցեր։ Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի գերքան 'ի վերնոցն քանդեալ վերայսա դրանդն ամրութեան կամաց անվայելուչ և ամենորկչոտ խենեշութեան կարճամոլին, ընդհրէական սրտին իմաստից և ստուերական տանն կործանութեան։

Զ. փառաբանութիւն քեզ վերընծայեմ, անմահ Թագաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր, աղաչեմ զ.քեզ, կրկին ներգործեա։ Ննջուցեր սովաւ հերքեալ առ 'ի մէնջ զխէթ դժնդակ խորամանկութեան բանսարկուին, զտաժանական տապ մեղաց. զհողմն դառնութեան շնչման խաբողին, զտարր արկածից մահու երկիւղի, զառ 'ի յօդից ցնդմանէ վնասակար բերմունս տխրեցուցիչս, զայսախառն հեծեծութիւնս Թալկացուցիչս։ Ցրուեա վերստին քոյինազէն հեծանաւս՝ օժանդակեալ Թևօք Նշանիդ՝ զամպս հրածինս, զորոտմունս կարկտաբերս, զցաւագին ցումունս հրախաւար կեղծաւորութեան փչման բազմատանի վիշապին, զսուր սատակման, զճակատամարտ դիմեցման, զյարուցեալսն 'ի վերայ վայրենական խորհրդոց զզիւացն կռքաւս։ Յորմէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութեամբ, կիրթ իմն ծանօթութեամբ յայտնի գիտացեալ, թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր 'ի դատաստան։ Եւ խրախուսին յոգի արութեամբ զրահեալ պնդապէս սուսերաւ հոգւոյն աստուածարեալ մարտիկք ամենայն 'ի ձև կանոնի այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպագրելեաւ համօրէն ազանց քարոզէ 'ի յօրինաւոր ասպարէզ երջանկաբար նահատակութեան։

Է. Հարաւ ահա փող աւագափող, համբարձաւ սովաւ աստուած օրհնութեամբ, պատմեցաւ սովիմբ ամենայն երկրի, հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց, ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին Եսայեայ, և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծացուք։ Ցնդեցան ջրոյն առակաւ 'ի ձեռն սորին Թշնամիք խաչին, անպատուեցաւ ճաշակն պտղոյ առաջին փայտին, տօնեցաւ նիւթս այս խորհրդական կենաց անուանեալ, անարգեցաւ երկաթ առ 'ի պէտս պատերազմի, իբր զօրութիւնն տեառն 'ի սանձս երիվարին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարադրեցաւ, ամփոփեցաւ օծեալս ցպով հովուին երկնայնոյ սուր իշխանութեան մարդկային ձեռին։ Ոչ գծեաց 'ի քար տաճարին մուրճ ինչ գործողի. իսկ յաստուածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին Թեւոց սլացեալ զօրէ։ Ոչ 'ի գլուխս ամսոյն և կամ յեօթնիցս եօթ ներորդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց և ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծովս ջուրց բազմութեան ծովուց և կղզեաց նոցա յաճախ սաստկութեամբ անարգել ճայթմամբ իմն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ։ Կոտորեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ 'ի խոփս և 'ի մանգաղս։

Ը. Ոչ արձագանք արձանաց 'ի խորոց ինչ գանչութենէ խիստս առաքեցեալ, և ոչ դժնդակապէս ըստ իմաստակի ումեմն օտարի զօդ վիրաւորեալ, ոչ անախորժ սրութեամբ ընդ ունկն մտեալ և ոչ զաման ուղղոյն անկամակութեամբ չար Թնդեցուցեալ, ոչ ոսկերցըն փուշ խրտուցման յանձն բուսուցեալ և ոչ մտացըն այլայլ ապշութիւն առաջի արկեալ, ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ և ոչ .քար ընդ վերգըս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուց-

եալ։ Պարփակարան անխորտակելի Նորոյս Սիոնի, մի սա 'ի սպասուցն կազմուածոյ արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ դէտականայն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողէն բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. նոր գործի շնորհի նուագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն աստուծոյ առ մեզ, քան առ օրհնաբանութիւն սաղմոսարանին 'ի վերայ Եղիսէին։ Սկզբնապար նախընթացութեան աշէյարմար ջութակաց բարեատւիղ ողբերգակութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց. որինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ, ոչ հեթանոսօրէն ուրուաձայն հնչման և կամ հրէաբար խակախորհութեան, զոր մարգարէն տէրամբ ազդեցոյց՝ 'ի բաց արա յինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ աչարկու դիւաց և ամենայն չար պատահարաց։

Թ. Աւ արդ ընկալ օրհնութեամբ յարդեալ գովեստիւ զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն, քո պաշտօն և իմ գոհութիւն, անաղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ։ Մատչէ ձայնդ այդ աստուածարեալ ընդ պատուաստ յօդիցս շաղկապութեան, հանել 'ի հոգւոյս զպատիրս դիւաց և զմուտս անիծից և մեղաց ապականութեան։ Որպէս լինել զայս իր նշանակիչ քնար ջահաւորական, անջրելի նամակ, ջատագով անխափանական տէրունական տնօրինականացդ։ Նա պարգևեա սովաւ, բարեգութ, աղաչեմ, հզօր, կրկին մեզ շնորհեա պահպանութիւն 'ի դիմամարտից յաներևոյթ և յերևելի։ Ընձեռեա մեզ, ձեռն ամենալի, որ բանաս և մատուցանես պատրաստաբար բաշխմամբ 'ի մասունս բազմապիսիս, օդոյ քաղցրութիւն, անձրևաց

շահեկանութիւն։ Պակասեցին քոյով հրամանաւ այսու բարբառով հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութեան. սովաւ խափանեցին ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց դժնեայ մարտչին, հալեցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ օծեալս այս փայտէ որդն և ուտիչ, և ամենայն նմանք սոցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին։ Արմատացո մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ Սաբեկայ, որ ունի կախեալ 'ի դիտակ ոստոցն զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեանն ծաղկեալ քև, Քրիստոս, 'ի պտուղ կենաց անմահականաց։ Փախիցեն յանհունն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեզեկոյց ձայնարձակութեամբ՝ նէսարք ներհակք ստապատիրն սորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց։ Մերժեսցին սովաւ 'ի յանդոց պտղատոհմական արօրադրութեանց մերոց սահմանաց և 'ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք վատնիչք և հոյլք մորմոքեցուցիչք. կորեսցին սովաւ յաւելուածք կրկնադեղ և անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չարին 'ի մեզ յայտնելոց. խկապէս վանեսցի սովաւ, որք յերկաքանչիւրոց բնութեանցըս մերոց վէրերևին ինքնաստեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց, յումեմն օտարին վրիպակ մտածմունըս, և յայլումն դարշ գոյութիւնք անմաքուր զեռնոցն ապականողաց։ Փրկեա, տէր Յիսուս, աղաչեմ զքեզ, փրկեա, բարերար. կարկառեա առ իս զաջդ ամենազօր, և օգնեալ ինձ սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ընդ դիմացողաց։

Ժ. Խառնեսցի միացի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փոխարկել զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին բանիդ արդիւնաւորութիւն. հարցես մխեսցես զայս

նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց 'ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս, և հաստատեսցես կազմեալ պնդապէս 'ի կայումն ուղիղ անսասանելի․ իսկ զանընդոստն կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզութեան աստուածայնոց քո պատուիրանիդ, որպէս զՊօղոսն և զՄատթէոսն։ Յիշեցո՛ մարդասէր, պատուեալս այս փայտիւ զերախտիս խաչիդ, որով զանճառսն ներգործեցեր․ բարձ յինէն կեցուցիչ, զվտանգ պարտեացս պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տագանակիդ։ Լուացցին կամօք քո, հզօր, 'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց․ լուիցեն յայս մեծի բարութեան 'ի քումդ ակնարկութեան՝ ականջք խլից․ պարզեսցին 'ի ձեռն սորին լեզուք համրացելոց․ լուսաւորեսցին 'ի սոյն տեսարանք աչաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար․ զղջասցին դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց․ ընձեռել տացես, տէր, տագնապելոյս անձրև արտասուաց։ Եղիցի քև սա մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուագ հանգստեան, նիւթ երանութեան, պատճառ փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խզումն խեղդմանց, ընդարձակութիւն նեղութեանց, համառօտումն խեթմանց, հալածումն հեծութեանց, թեթևութիւն թառաչմանց, յապահովութիւն կարեաց, կարգադրութիւն կրից, սփոփութիւն վհատմանց, բժշկութիւն ցաւոց, տևականութիւն հեղգութեանց, ուշադրութիւն անտեսիցն։

ԺԱ․ Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաչու, առ հայր քո օրհնաբան ահաւոր անուն ձգեալ մատուսցես, բարերար, հոգւոյդ առաջնորդութեամբ միանալ 'ի քեզ անընդմիջելի․ որով և սրբոյ միոյ միայնոյ և միանական տէրութեանդ և ա-

նեղծ արարչութեանդ ՚ի կենդանեաց և յանշնչական֊նաց հաստելոց վայելչական գոհութեամբ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ՂԳ

ՎԵՐՍՏԻՆ ՑՈՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Աղօթք Թարգմանօրէն վասն սրբալոյս իւղոյն Միւռոնի։

Ա. ՍՈՒՐԲ ահաւոր անուն բարձրեալ անպատում, անձկութեան փափագ յարախորհելի, ՚ի սրբերգենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ բնակեալդ ՚ի սըր֊բում, լի և ամենազեղուն բարութեամբ առատաձեռն աննուազելի, լոյս բարի և ծագումն գովելի, երկրպագ֊եալ փառաւորելի, ահեղ և անզննելի, ամէն և յամե֊նայնում։ Այսու բանիւ դաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, հզօր, այո, ամէն, ալէլուիա. գովեալ Թագաւոր հանուրց, աստուած բոլորից, ստեղծիչ գո֊յից և տէր կամարար, միայն առիթ պատճառաւորաց, փրկիչ և օծեալ մշտապաշտելի։

Բ. Աստի մեկնապէս Թարգմանեալ ՚ի մեզ զայս զանձ անվաճառ և հարստութիւն անփոխադրելի, Յիսուս Քրիստոս արքայ երկնաւոր, որում դողութեամբ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութեամբ ՚ի հաճութենէ անխառն մտաց, ծունր գոհութեան ստեղծող էութեանց, որ են ՚ի տեսման և ՚ի ծածկու֊թեան։ Որ եսդ և էիր միայն բովանդակ ամենևին ան֊

պականելի, առեր զմերս խնկապէս համայն, զի 'ի լրութենէ քումմէ լցուսցես. օրհնեալ և բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ 'ի փրկութիւն, 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութեան աչաւորիդ բարերարութեան։ Անզբնածիր օծմանս շնորհի մեծախորհուրդ հրաշազարդութեան. քանզի լոյս քո մեզ ծանուցեալ ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անաչառասփիռ, աստղ սահմանից երկակշիռ տարրութեանց, ճրագ ոտից և լոյս հետևմանց, որով 'ի ցոյցս իմաստից եկեալ տեսութեամբ բանիս այս յարմարութեան, տօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն յատակամնաբար փրկչավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգևաբաշխ առատատրութիւն ամենիմաստից յիւղ զուարթ անբիծ դաւանման։ Քանզի 'ի սկզբան անդ կապտեցելոյ ողորմելի տխրականութեամբ 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ սկզբնաստեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ դրաւեցաւ, կապեալ ընդ եղծման ապականութեան անզերծ հանդուցիւ, 'ի ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակործան գլորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ. իսկ դու, գթած տէր ողորմութեան, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր առեղծեր, և զի չէին ակնկալութեամբ չեկաց յոր ինչ էրն, որով անկարողանայր իսկապէս տեսանել 'ի լոյն վերին անմատոյց գերակայութեան անսահմանելւոյդ. ոչ մշտափայլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ոտնալպիրծ մթին արհաւրաց ձեռնկալութիւն ձիթոյ՝ չարամանութեամբ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ 'ի ստուերս մահու տարադրեալ գոյք՝ կանխակորուստ անկումն պարտեաց, 'ի պատճառ

իրին ազգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորութիւն. որպէս և փայտիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առաւել մեծի խորհրդոյն միաւորեալ 'ի փայտն կենաց։

Գ. Նա արդ որպէս ոչ է օր լռմամբ առանց գիշերոյ, և ոչ տնօրէնութիւն յարկի առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ. քանզի իբր օրինակն հասարակային ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւորանէ, նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շնորհին ընտրութեամբ անխմանալեաւ զաներևոյթ հոգիս միութեամբ 'ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ։ Զի որպէս յիջուածն լուսարանի սուրբ աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն, սոյնպէս 'ի յօծումն իւղոյն պարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութիւն սովիմք և 'ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի։ Նա որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի գքաւութիւն մեղաց ախտացելոցն նախավճռէիր, իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վըկայ անդարձիցն հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներևակ ծածկապէս մտեալ՝ նոր կենդանածնէ։

Դ. Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչիդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահընծայութիւն, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն անուան կցորդիս աստուած, նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տընտեսութեան որ առ մեզ։ Վեհագոյն մեծութեն խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութի այս ճարպ պարարտութե

երկրի թանձրութեան հողանիւթ գոյականութեան · զի որպէս սոյն մասն 'ի կենդանեացն ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին պտուղ որոշիւր, նոյն նմանութեամբ ես և աստանօր իբր զգօրութիւն՝ տեառն մատչելի յոյս աւանդհաճութեան էիդ աստուծոյ վայելչապէս տուեալ նըուէրի, հոգւոյս հարազատ զուգաճանապարհ, արարչիդ պահեալ և ուխտեալ · քանզի ոչ շունչ արեան և ոչ ճենճերի ինչ զուարթութեան օրինակ հոգւոյս իմոյ և կարոյս ընդ անդամաթիւս մսոյն ծախի, այլ արքայութեանդ վերնում վիճակի տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մըշտաբորբոք անաղօտելի։

Ե. Ոչ էր մատչելի 'ի նախագահութիւն արու անդրանիկ դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր · ոչ քահանայութիւն 'ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր։ Յակոբ ըղքարն պատկեր Ս իմին, 'ի խորհուրդ երկար՝ խորանին ընտրութեան, օծմամբն տպաւորեալ կերպացոյց · առ որ զիջուցն անճառ բարձրելոյդ տեսութեամբ սանդղոցն յարմարութեան, և զիս 'ի վեր տանելոյն անդուղեկցութեամբն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ 'ի ցոյցս ապառնեացն յիշատակի։ Ահարոնեան քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ աստուծոյ օծմամբն ճոխանայր · որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն զեղեալ գերափառ իւղոյն զարմանազան կենդանագրութիւն, ըստ սաղմոսողին, զփառաց նախնեացն առակէր զանդրադարձութիւն և զշնորհիդ կենաց սըրբութեան ընդ մեզ խառնութիւն։ Թագաւորութիւն ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն ընտեղծագործիդ, եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պսակաւ պճնութեան թագին յանուն քո, Քրիստոս, գլուխ ամբառնայր։ Նու

զխ՞րդ զնախնին վեհից մոռացայ, զծառայն մեծիդ և զկերպարանն անպարագրելւոյդ. ո՞չ ահա Մելքիսեդեկ յօրինակ ճշմարտիդ ահաւորութեան 'ի ձիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյդ աստուծոյ զետեղեալ կացին, 'ի վերնոց անտի հրեշտակաց 'ի պղտղոց տեղւոյն խուլեցաւ. ուստի շիրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ 'ի քէն հանդերձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լրմամբ համայն խնկութիւն ադամային կենագործութեանդ:

Զ. Նու արդ, քանզի քո են շնորհք և քեզ վայելեն գոհաբանութիւնք, օրհնաբանեալ որդի աստուծոյ, դու ինքն յարմարեա բարենշմար տպաւորութեամբ զաղաչանս իւղաւորականս խնկապատարս զմռսալիս պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան. մատո, տէր Յիսուս, վիրացս աներևութից զայս ձէթ լուսանիւթ, և արկ 'ի սոյն խարանս մահացուի զկաթուած օրհնութեան իւղոյդ փրկութեան անապակ զինեաւ սիրոյդ, միութեամբ աբարչականաւ պատսպարեալ պատանօք խնամոց. զի յիշատակարանս թարգմանօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յարմարութեամբ 'ի թևս հոգւոյդ ըղկարգ իւր դոցէ: Ի վերայ Դաւթի հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութեամբն նուիրեցաւ. Սաւուղ յայր յայլ և 'ի մարգարէս ոմանս անտուստ իսկ գրեցաւ, յորժամ օծումն ժամանեցաւ գագաթան նորին. արքայութիւնն աստեստանեայց օծմամբն գրաւեալ մատուցաւ 'ի կցորդութիւն տանն Իսրայէլի. կայսերս ոմանս նշանաւորս վեհս և երևելիս 'ի խժականաց բարբարոս ազգաց իւրս այս կենացընցուղ ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ աստուծոյ. բանն որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեան՝ զօծ-

եալըն ձայն Նմին մեծ վարկաւ․ ձայն սաղմոսողին գեր-
քան զմարգարէութիւն զօծեալն անուն նախայարմար-
եաց, կանոնափակ ընդ միջարկութեամբ պատուէր ա-
ւանդեալ, մի՛ մերձենայք և մի՛ մեղանչէք․ առ չե-
ղխաս առաքելութիւն աստուածային հրամանատրու-
թեանն, նշանակ իմն հանելոյ ՚ի պաշտամանէ անտի
բահաղու, զօծելութին ՚ի Քորեբազդեաց Յէուայ և Ազայ
էլի։ Իւղ թափեալ անուն փեսայիդ ՚ի հոգելից բա-
նից իմաստնոյն վերակայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ․
որպէս զի հոգին, աստուծոյ յաւէտ պատկեր և նշանա-
կիչ, զ՚ի փոքուս զմեծդ կերպադրութիւն քև նկարագըր-
եալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո շնորհիդ։

Է․ Իսկ զի՞ ևս երկարս պատուածօրէնս բացականադոյ
նըս գծագրականս և առակաւորս շարագրեցից առաջի
վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծու-
թիւնս․ տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և
երկրի ՚ի յօծմանէ անտի սկսալ քարոզել զաւետարա-
նըն արքայութեան, վկայեալ անտուստ ՚ի Յովհաննէ՝
օծեալ և գառն աստուծոյ բարձող մեղաց աշխարհի։
Ո՜վ իթէպէտ ընդ օծմանն օրհնութեան հոգին էր քեզ
իսկաբար լըմամբ և աստուածութեանն խառնութիւն
բովանդակապէս, այլ անուննն պաշտի խորհրդեամբ շը-
նորհին հրաշափառապէս ազդելոյ ՚ի սուրբսն․ զի զտըր-
կութիւն ադամեան մարմնոյն մեծանալ յաւէտ այսու
յորջորջմամբ պատրաստ արասցես։ Ասացեալ զառածս
մարգարէութեանն Եսայեայ՝ դու ինքն աստուածու-
թիւնդ մարդացեալ ընթերցար, հաւատարիմ առնել
զբան ծառայից քոց, տէր․ և իբրև ծանուցեալ եղեր
օծութեամբն ՚ի կարգ անդ բանին, թէ հոգի տեառն
՚ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա փակեցեր ՚ի
հանդիսափառն օծելութենէ զորքանութիւն երկա-
քանչիւրոցն յայտ արարեալ խորոցաւ սահմանի՝ ըն-
դարձակ հեռաւորութեամբ մեծաւ կնքեցեր, զմերս

կաթուածով ինչ շնորհազարդեալ, և զքոյդ իսկութիւն ընդ հօր և ընդ հոգւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ։ Ի նախածանօթ մերակերպութեանն պանծալի իմն գովեստիւ՝ օծեալն կուսմամբ 'ի հրեշտակացդ փառատրողաց արարածոց երկրի ծանուցար։ Զոր մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի Յորդանան, և յընտրեալն լեառն Թաբօրական հայրենի ձայնիդ եկաւորութիւն, թէ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր. զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ առ 'ի զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ աստուած՝ աստուած քո իւղով ուրախութեան։

Ը. Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս. որ է օծեալ անունդ իսկոյն, որով զփչումն կենդանութեան 'ի դէմս մեր լոյս բարերարութեամբդ քո աղդեցեր. իմաստութեամբ ումեմն երջանկի՝ մարդասիրութիւն խոստովանելի, ասելով առ ումն, թէ եդ վկայութիւն առաջի տեառն օծելոյն. զնոր աւետեացս վկայելով, թէ կոշիկս անգամ ոչ առի յամենայն մեղեաց։ Նորգոյն երգ իւղեփեցական զինի զաստուծով ծանուցեալ զխորհուրդըն 'ի գովեստ հարսին սուրբ եկեղեցւոյ՝ զմուռս առաքինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և եւս զմուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փոշեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց։ Պանծէր զկենսատու մահու քո, Քրիստոս թագաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի զայս անուանագրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և իմն եօթներորդացն սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց։ Դրադակիր աշտանակն Զաքարիայ Ադդովայ՝ որ 'ի Բարեքեայ իւղոյն բարեբաշխ բացատրութեամբ 'ի մատեանս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անտի զօրութեամբ անեկամտաբար վիճակաւորեալ, զ'ի քոյդ լիութենէ 'ի մեզ փրկութիւն և օծ-

լութիւն գերաբնապէս նախազեկուցեր։ Օ՜ որ ըստ օ-
րինին անտուստ գուշակմամբ 'ի խորանին որ 'ի տաճա-
րին՝ ամէնընդեր իմն կրթութեամբ սովորաբար մա-
տուցեալ լինէր, պանք բաղարջընծայք և նաշիհք իւ-
ղովք խառնեցեալք, և ղուարակք եզանց իւղար-
կեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց
ոմանց թաթաւմամբ յագգակից ճարպին 'ի յարիւն,
այսր խորհրդոյ առձեռն տեսակք և նշանակիչք յար-
մարականք քեզ, միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ-
աստուծոյ. միայն դու օծեալ նորոգ և զարմանալի՝
ինքնութեամբ համայն էութեամբ իսկապէս լրմամբ
ամենայնիւ անպակասելի։

Թ. Նա զի՞ ևս իցէ բազմապատիկս նշանակել առ
այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ,
քաղցրութիւն. իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն,
եթէ ոչ զոխրութիւնն 'ի փայտն պարտեաց սովիմբ
բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործեցես. և
զի՞նչ պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն մահու
սովաւ մոռացուք լցեալ 'ի սմանէ. և զի՞նչ օծութիւն,
եթէ ոչ զմոխրոյն թշուառ տեսութիւնն 'ի ձեռն սո-
րին փոխարկեցուք 'ի պայծառութիւն յաւէժ ուրա-
խութեան, անուամբ քո փրկեալ յոգի զօրութեան՝
հօր անուանեցուք. և զի՞նչ արդեօք մարգարէին հո-
գևոր ըղձականութիւն ամենատենչ բաղձանացն իցէ
իմանալ, որոյ ծերութիւնն առակի 'ի ձէթ պարար-
տութեան, և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբար-
ձութիւն, եթէ ոչ զհին խարդախութիւն սգոյն սատա-
կութեան 'ի մահ կործանմանն կենագործեալ դեղովս
այս կենաց՝ պատսպարեալ օժանդակեցես. և զի՞նչ
ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ 'ի
մէջ իմն անյուսութեան մեղացն միգի և կռապաշտու-
թեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ 'ի յիս
Էմմանուէլ. և կամ զի՞նչ մարգարէն աստուածաբանեալ

'ի սփոփանս զուարթարարս օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ, օծցին իւղով 'ի մրոյ պարզելոյ. և կամ իմաստունն 'ի դիմաց հարսինն առէ օրիորդացն, հաստատեցէք զիս իւղով եւ գեղեցկազարդ խնծորով յարկեալ ծածկեցէք, և 'ի պտուղ իւղենեաց տածեալ զրգեցէք, եթէ ոչ այսր ահա ընտրական նիւթիւ հոգւովդ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանիմանալիդ 'ի մեզ բարձրութիւն գովեալ։ Նա արդ քեզ, միայն խնամակալ, պատճառ բարի բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս գործակցութեամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ. լուր ողորմութեամբ, տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս. շնորհաւորեալ այսու պարգևօք՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ, հզօր ահաւոր բարձրեալ անքննլին, անփակ փափաքմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութեամբ։ Ընձեռեա առաւել բարերարութիւն իսպառ վրիպելոյս. տուր յոյս քաղցրութեան՝ ոչ մասին միոյ մատուցման լուսոյ արժանաւոր լինել հանդիպելոյս, լայնել քև, բարի, զնրբութիւն ծածուկ խորհրդոյս, զրգութիւն խառնեալ ընդ աղերս՝ առել ընդ Դաւթի, ընկալաք աստուած զողորմութիւն քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութեամբ քով յայտնի արարեր։

Ժ. Նա արդ մեծութիւն քեզ, ամենակալ առաստաձեռն աննուաղելի, ամենափոյթ առ 'ի գթութիւն, մշտայօժար 'ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս զհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեան։ Բանզի զոր երկլին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութէ և անդնդոց ներքնոց խորութեամբ՝ ծովուց բազմութեամբ ոչ զօրէ տանել, ոչ էբր զդոյն 'ի մեծէ բե-

րի, 'ի փոքր գոյս տեսականեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի․ զի մի նորոգ իմն երեւելով յայլ էութենէ՝ առ աչս հարեանցի երեւականութիւն ինչ վարկանիցի, վիրաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց։ Քանզի որպէս մարմին քեզ հաւաստապէս, օրհնաբանեալ որդի աստուծոյ, խնկութիւն եւ ոչ օրինակ 'ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, եւ կայլակ կողիդ զարիւն խաղողոյ, եւ արգանդ կենաց հոգեւոր ծննդեանն զաւաստութիւն ջուրց յորդութեան, նոյնպէս եւ զհոգի անմահիդ փչման՝ սուլաւ եւ 'ի սոյն արդիւնաւորեցեր․ երկունք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն եւ ոչ հեթանոսութեամբ է փոխարկութիւն, որպէս ոչ տեսանագրութեան խաչական փայտի ինչ երկրորդութիւն, 'նստելոցս յերկրի խաւարի ըստ նմանութեան քո, տէր, ծագեցեր։ Քանզի յայս կերպարան շնորհի զանպակաս լրութիւն անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի տնանկն կարօտասցի եւ մի ընչեղն բարձրամտեսցէ, ըստ օդոյ հաւասար բաշխման եւ լուսոյ արեգական տարածման եւ ջրական վտակաց զեղման․ զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանայիւն զուգամանութեամբ՝ փոքունցն առաւել քան մեծամեծացն։

ԺԱ․ Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն խորին խորհրդոյ եւ 'ի բնուստ անտուստ հրաշապէս ունի զթարգմանութիւն․ որպէս զի ոչ երկմիտ ինչ շութափութեամբ անհաստատապէս զտեղի փոխէ, եւ ոչ նենգողաբար ըղբնակութիւն ինքեան լքանէ․ քանզի ոչ վերջնականօք աճառովք հերքի, եւ ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ։ Նման զի որպէս պատահումն գունոյ յէութիւն մարմնոյ անփոփոխ իմն եւ անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ եւ ոչ գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ իւղոյս զօրու-

թիւն անդստին 'ի յիւրոց անտի կերպարան զառեալն ունողի միաւորական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, տէր Յիսուս Քրիստոս, ընդ իւրն դոյի և զօրինակըն լծակցելով. քանզի զանիմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից 'ի դէմս բերեալ կերպաւորեցեր, 'ի պտղոց երկրի ճնշեալ մզելով զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատրաստեցեր։ Մանաւանդ զի ոչ յոլովից խառնից 'ի մի եկելոց խըմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլութենէ, զայս իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ։ Որ թէպէտ անձառ են համեղութիւնք քումդ անուշութեան, և ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց և նարդոս ընտիր և եղեգնախունկ խառնեալ հալուէիւ, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փառաւորեալ անուանդ անքննին, որ զամենայն լնու, և յիւրի իմեքէ ամենեքին ոչ կարօտանաս։ Ուստի ոչ չփոթելովք 'ի հակառակաց բանադատութեանց բաժանեալ կամաց մեկին առակի, այլ 'ի սիրոյ հաւանութենէ ստուածապէս 'ի մէնջ պարարիս, վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ. առ որս լոյս բարի և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ ընչման անգթական սառնացրտութեան այս զանգուած նիւթոյ կաթուածոյ ձիթոյ մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յիրաւի սովաւ 'ի յատուած է միանալ։ Ընդ Սողոմոնի օծելոյ որդեգրեցելոյ աստուծոյ երգեմ բերանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութիւն, համբուրեալ 'ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց քան զամենայն խունկս, և իբր զբանս

կենաց յաւիտենականաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն և աստուածաբան աւետարանչին, զհետ քո 'ի հոտ իւղոյ քոյ ընթացուք լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան զերկլին օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութեամբ, զուարթապէս և ոչ տխրաբար։

ԺԲ. Ո՜յս իւղ խնկելի պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սեննկի, և կամ հերաց վարսից գագաթան նպաստ լինչ մատուցանի, եթէ ոչ տէրունական կենսատու խաչիւդ տեառնագրեսցի։ Այն իւղ զարմանահրաշ օրհնութեան լուսոյ զհրեայն և զխուժն՝ ըզհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթայլն և զելլենայլն՝ ըզդուժն դժնէաբար և զարհաւրատեսակ շանագլուխն սոսկալիթխար, զտէրն աղատ և զստրուկն ծառայածին՝ Քրիստոսեան արարեալ, անուամբ քո կնքէ, և հոգւոյդ սրբոյ ընծայէ, և հօրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ։ Բազմօրինակ են սմա արուեստից տեսմունք յարմարեցեալք նախ նիւթոյն, ապա զօրութեանն։ Քանզի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սմաւ՝ հեշտեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի։ Ա՛ռն սա քո, Յիսուս, որով զհրաշալին զարմանագրես. քանզի իբր անգծելի կազմութեամբ կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութեամբ պաշտպանեալ ծածկէ յայլադունակ խրթնի եկամտից. մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն 'ի սմա ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի։ Նա զի և թափանցանց լինի խառնութեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն մերոյս գոյութեան մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, ո՞րչափ ևս հոգւոյ սոյն

ճարպով լուսոյ զաներեւոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ, ազդումն տուեալ 'ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչեւ 'ի սպառուած ծայրիցն եզերաց զընաւն ընկղմէ զխշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութիւն քո միշտ ահաւոր, տէր Յիսուս Քրիստոս, 'ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ։

ԺԳ. Ա՛յս օծումն բարետեսիլ եւ առ բանամարտիկ մերկամրցանակ ըմբիշս իբր զօրաւոր հնարից կերպարան ձգնաւորական անըմբռնելի ձեռաց ներհակին օրինօք պաշտի, դիւաց եւ ախտից հզօր ահարկու։ Քանզի յօքնապաճոյճ պճնութիւն բանին Եզեկիէլի առ իմանալին փարաւոն, հենդնաւոր առակադրութեամբ ողբականօք շարայարմարեալ, յորժամ եղեր, ասէ, եւ հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան։ Օրհնաբանեալ ահաւորութիւն ամենալայր ձեռնընկալութեան, որ միշտ անձառ ես բանից եւ գերազանցեալ քննութեանց, որ աւետարանաւն կենաց խնկիս յարակայ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի Դաւթի, եւ 'ի քահանայապետին հարցմանէ, դո՞ւ ես օծեալն որդի օրհնելոյն, եւ յերանաւորին դաւանութենէ Պետրոսի օծեալ միայն որդի աստուծոյ կենդանւոյ, եւ յապահաւատ քննողացն, եթէ դո՞ւ ես օծեալն, ասեն, ասա մեզ համարձակ. եւ 'ի կանոնականացն քոց հաւատալիք յօծեալդ ուսուցիչ եւ տէր ամենայնի. եւ չերովբէս յառաջ քան զսոյն զօծեալդ անուն յայտնապէս հայցեալ. եւ զիա՞րդ գրեն, դու իսկ ասացեր, զօծեալն աստուծոյ զտէրն Դաւթի զանսկիզբըն որդի՝ ժամանակաւ որդի։ Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուութեան։

ԺԴ. Ա՛յնքան ունի ահաւորութիւն միանգամայն եւ

սրբութիւն իւղաւորական խնկաւորութիւն սոսկալի անուանս օծութեան, մինչ զի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկրայնոցս աստուած անուանել՝ այլ աստուածային, նոյնպէս ոչ բերէ մարմին զՔրիստոսդ անուն անձին համարել, այլ զՔրիստոնեայն. անտանելի նախնւոյն մեծութեան մկրտչին՝ Ջուրբ զհոգին հրաւիրողին. քանզի չեմ ես, ասէ, օծեալն, այլ առաքեալ առաջի նորա: Սոյնս շիջէին, որպէս բանն ազդէ աւետարանչին Մարկոսի, առաքելականացն լծակցութիւնք, երբ ազգակից հարազատ ձեռինդ աստուծոյ՝ այսու վարեցեալք. քանզի իւղով օծանէին և առանց մարդկային հնարից անուամբ քո բժշկէին: Սան զի որպէս խաւար 'ի լուսոյ և ցաւ յառողջութենէ, գիշեր 'ի տունջենէ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի սոյն իրէ տիրապարգևէ ամենայն չարին երևոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին: Քանզի որպէս ճանճք զազիրք և փոքր զեռունք սարդից և ունկնամոից երբ 'ի դեղոց մահու յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լրութեամբ շնորհի օրհնութեան սոյն իւղ զօրացեալ՝ և զայսս վանէ և զմուրհակս չարեաց ջրէ և զվճիռ մահու պատառէ: Ոչ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդակութեան: Եթէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ. եթէ անձարակ վիրացն Յակոբայ և Իսրայելի, սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափաքեալ Դաւիթ՝ երբ ձիթենի պտղալից 'ի տանն աստուծոյ յուսով յարակայի, լքեալ զթլփատութիւնն՝ անդստին զմկրտութեանս շնորհ գուշակէ: Նա զի՞ է ինձ զայսմանէ ճառել, և համայնին կարծել հասանել, ուր և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութեամբ ինչ բանի զսոյն խորհուրդ 'ի մասնաւորէ ինչ ճառելով նշանակել, թողում ասել՝ թէ յխկութենէ:

ԺԵ. փառք քեզ միշտ և յամենայնի, անմահ Թագա-

ւոր, 'ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս, բարեխնամ գթած և երկայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթող. անդստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումըն ածեր զխնկութիւնն ճշմարտապէս։ Դու լոյս իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ, և զաշակերտացն դաս լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկրի ճառագայթիւք երջանիկ շնորհի նոյին լցուցեր։ Ընկալար զիւղն անուշութեան յումեմնէ 'ի յատս՝ յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ, և 'ի միւսմէ պռնկէ 'ի գլուխ՝ նշանակ սիրոյ գթութեանըդ առ մեզ. մշտափափուք բաղձանօք անսահմանելիդ 'ի սոյն հոտոտեալ, մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարգաւորութիւն, զարմանս հրաշից լողացն առ ապառնեացն յուսադրութիւն։ Դուք ծնութիւն ունիք զորբոյն՝ ասաց երջանիկն առաքելութեանց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ յառաւելութենէ կենդանարարին անպակաս բովանդակութեան։ Ըստի յաւէտ իմն յարմարաւոր և հանգունատիպ առ 'ի մասնաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այս կաթուած օրհնութեան 'ի վերնոյդ բարեբաստութեանց անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և սփի լոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց և արարչութեանդ պատկերակից, որով զխաւար մթութեան մեղաց հալածես. իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուգութիւն ըստ էականին կշիռ բաշխութեան, ծածուկ և յայտնի, լռեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդ հարցի 'ի հակառակէն, ոչ յինքնասաստ յօժարմտութենէ բաղձայ բորբոքիլ։ Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդէգրեալ ընդ քեզ 'ի ժառանգութիւն հօրդ մատուս-

ցես . ողորմութեանդ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեսցուք . դարձեալ և հոգի , զի մաքրեալ զարկածս խաբէութեանն՝ որ 'ի բանսարկուին ներգործութենէ , նորոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութեամբ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք , բևեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք , ամենապարգև ։

ԺԶ . Ո՜հա արդարև յաւէտ խնկապէս իւղս այս լուսապատար խնկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսութիւն ։ Սան որոյ և Պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառ գոհաբանութեանն՝ ասելով յայտնի , որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս Յիսուս՝ աստուած է , որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր . և դարձեալ , մի՛ , ասէ , տրտմեցուցանէք զհոգին սուրբ աստուծոյ , որով կնքեցարուք յաւուրն փրկութեան ։ Պատկառելի և անվանելի օծութեանս յորջորջութիւն՝ լեր 'ի նորումս յաւէտ քան 'ի հնումն . քանզի բանն դաւթեան սաղմոսին զտիրական տնօրինականացդ սկզբնաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերասահմանէ , ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց վասն տեառն և վասն օծելոյ նորա ։ Մ՝արգարէութիւն մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս հրէախումբ չար մոլեգնութեանն՝ որ 'ի տէրդ յանդգնութիւն , ո՜վ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն և քաւեսցի . քանզի թէ և յազգայնոյն սպանաւ Սաւուղ , այլ ոչ իսպառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց , մինչև արեանդ աստուծոյ հաղորդեալ գտան ։ Դ·րաւական մեծ յիշատակի ապագայիցն ժառանգութեան աղօթանուէր աղերսարկութիւն ասել սաղմոսին , վասն Դաւթի սիրելոյ քոյ մի՛ դարձուցանէր զերեսս քո յօծելոյ քումմէ . և դարձեալ , նայեա և տես յերեսս օծելոյ քոյ , և արա ողորմութիւն ընդ օծելոյ քոյ ։

ԺԷ. Ձեռինդ քո, Քրիստոս, երկրպագեալ պարգեւատրութիւն այս հիւթ լուսակիր. քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յարքայութեանն ճոխութենէ ասէ մարգարէն 'ի գլխոյ քոյ, տէր, քան թէ գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Աւստի կիրթ իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն, տէր Յիսուս Քրիստոս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութիւն, թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն թագաւոր թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իւղելոց, փառաբանեալ երկրպագութեամբ երէկ և այսօր։ Քանզի զոր օրինակ պատրոյկ թացեալ 'ի ճարպում ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ մինչև հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղեալ 'ի հանդերձեալսն ջահաւորի։ Այս է կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմարութեամբ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ։

ԺԸ. Արդ այսոցիկ պատճառ վերագոյն մասանց կեցուցչաց աստուածականաց արարչութեանդ հարազատաց, առանց որոյ ոչ է գրել Քրիստոսեան, և ոչ նազովրեցի անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս Յուդայի, և կամ խրախոյս բառնալ յանուն աստուծոյ Յակոբայ, այս հիւթականութիւն օրհնութեան ձիթոյս, յորում սուրբ Երրորդութիւնդ խառնեցեալ միաւորի, ճառագայթ շնորհաց, շուք մերոց գլխոց, նկարագրութիւն երեսաց, բարեձևութիւն պատահմանց, լուսաւորութիւն աչաց, տեառնագրութիւն բերաց, վայելչութիւն այտից, զարդ կերպարանաց, պահպանարան շրթանց, հանդերձիչ կրծից, յարմարիչ վարուց, շաղկապ հաւաքմանց, զօրութիւն անձանց, ուժգնութիւն դիմեցմանց, խափանիչ յուռթից, քակտիչ հմայեկաց, նահանջիչ ձեռնածուաց, խայթառակիչ կախարդաց, գտիչ աղանդից, բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց կա-

տարիչ կնքեցելոց, տենչանք երախայից, անզննին ար-տաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձորկու ան-հաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, յարգանք յետ-նոց, փառք սորկաց, պճնումն կանանց, աճեցումն տղայոց, հրճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, ըզ-գուշութիւն մաքրոց, պսակ թագաւորաց, ճոխութիւն աղքատաց, յաղթութիւն կայսերաց։ Քանզի զոր-օրինակ աման ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներքնա-նոցն մեծագնութեան, նոյնպէս բարձրութիւն շնորհին ՚ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քո, աստուած տէր Յիսուս Քրիստոս, վայելչական իմն տեսակաւ ծանուց-եալ նշանակի։ Իսկ անունն իսկոյն անդստին ՚ի նոյն յօրջօրջեալ կոչմամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի սկսեալ, ՚ի դէմս ածելով զի-րին կերպարան՝ աչաւոր խորհրդոյ պատկեր։

Սակս սրբալոյս իւղոյն Միւռոնի։

ԺԹ. Քանզի Միւռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զայն աղերսեալ խնդրէր, ըստ քերթութեանն բառի որ ըստ խորութեա-նըն Հոմերոնի, թարգմանեալ իմանի, ինձ մայր. այսին-քըն է՝ առ ՚ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրա-պէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականութիւն առ աւազանին լուսաւորութիւն. և իբրև զգեղ մածուցիչ կաթին՝ ՚ի նոյն ինքն յեղանա-կել զցնդեալս իմ վայրագութիւն, և զաղբերց հեղեղ-եալ մշտահոսութիւն։ Իսկ մանաւանդ՝ որ և այս Միւ-ռոն, ըստ այլում բառի ցուցանի. այսինքն է՝ մթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն դիմաւորութեան չէ օտարացեղ. քանզի արդարև յիրէ անտի անունն նշանակի. վասն զի անքննին է այս խորութիւն յաւէտ քան զամենայն

սրբութիւն սրբոց։ Զի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութեամբ զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութեամբ 'ի մասունս ազդողականացն անօրինապէս տեառնագրի. սակայն անհասութեամբն վերնականաւ և զանուննն ունի անքննին։ Քանզի որպէս աստուած իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութեամբն յեղանակաւ իմն անբաւութեան 'ի խաւար անզննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ 'ի լեզուաց ումանց ճարտարաց 'ի ճահ ճեմութեանց դրականապէս անուանադրութեամբ մառայլ առ ձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զիսկն գիտելոյ։ Իսկ վերկաքանչիւրս աստուածականացն անդստին յինքեան հաւաստաբար տիրապէս ունի. քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւրս այս նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ. վասն զի աստուած մեր հուր ծախիչ է ըստ Մովսէսի, և դարձեալ լոյս է ըստ Յովհաննու. ուստի և Եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, եղիցի, ասէ, լոյսն Իսրայէլի 'ի հուր։

Ի. Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ 'ի նոյն պատկեր յայտնութեան իւրի. վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն՝ որ 'ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել. քանզի Մեռայ, որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որ և Միւռոն սուղաքանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն։ Քանզի այսու օծմամբ հոգևորականաւ խղեալ կամ հատեալ 'ի մտոխաւէր մահակերպարան տաղտկազազրական հեշտութեանց հակառակողին, որ օդախոնաւ մեղկութեամբ զքնարս ձայնատրական և կամ զարկուած վերածածկութեան մընար-

Հետ ուշգնաբարբառ խորխտահնչական կազմուածոյ
Թմբկիս գործականութեան Ջրացիր իմն գիջութեամբ
անվայելուչ Թուլադաշնակեալ՝ 'ի ստորև կորստեան
քարշէ զօրինակ մերս գոյութեան, կապիմք յուսով
վերստին դարձեալ ընդ անճառ խորհրդոյ խաչի քո,
Քրիստոս, մկրտեալք 'ի մահ կենդանւոյդ՝ անվախճան
կենացդ սովաւ հաղորդիմք, 'ի քեզ իսկ ստուած հա-
մայնիւ խրախուսեալ իսպառ ամենեւին անհատուածելի։

ԻԱ. Այս իւղ գդրօշեալն քառակուսեան յանուն
քո, Յիսուս, Նշանի բարձրելոյդ հաւասար հատէ.
շնորհ ընձեռեալ զուգափառ և նմանատիպ արեան կե-
ցուցչիդ նոյն անվանելի փառօք պսակեալ մեծացու-
ցանէ։ Փայտ անուանի իւղոյ օրհնութեան, ըստ մար-
գարէին կանխաձայնութեան, զ'ի հասարակաց կազմեց-
եալ բուսոց անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակու-
Թենէ չարին արկածից և օտար կարծեաց 'ի ստեղծողդ
վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հասուն ներգործէ։
Զի և որ 'ի մեզ մտիցն պատուհանաց մշտաբացիկ
Թափանցանցութիւնք՝ յանուն մեծութեան ահաւո-
րիդ զօրութեան 'ի խոհական իմն համեստութիւն քև
տեառնագրեցեալ առ 'ի յըղձակերտ օծեան հոգւոյդ՝
անաղդելի պատրանաց չարին խաւարահողմ խարդա-
խողին, այսու լուսով զպեալ ամփոփիմք 'ի նուագ դո-
հութեան երեկորեան պաշտաման ընդ երկնայնոցն զամ-
բարաց՝ առ օրինակ վառման շնորհիդ որ 'ի մեզ. 'ի
սոյն յիշատակ փրկութեան բարեացն սովաւ տնկեց-
եալ ծագի, և ծաղկաւէտ եղեալ պտղածնի, 'ի սպաս
ընԹրեացն պատրաստութեան յետնում գիշերի 'ի մե-
ծիդ գալստեան. ահա զայս լոյս ճիրագի համարեալ 'ի
կիր արկանեմք։

ԻԲ. Դարձեալ ըստ գծագրացն գումարութե՛ քսան
և չորիցն շարագրութեան՝ որ յալփափետաց անտի
վերաԹուի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի, յո-

րում զայս խորհուրդ խորութեան անտուստ Թարգմանեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին ջամբել պատրաստեմք ամենակազմ յարմարութեամբ. քանզի յութներորդէ անտի դրոյ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիւթ ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմորոյ յինքն բերողի զզանգուածն զօրեղագէս. որ ոչ սակաւն 'ի յոլովէն պարագայի, քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամենայն առ ինքն վերաբերեալ ածեցուն առնէ:

ԻԳ. Այն իւղ հեզութեան միշտ համբարձման և խոնարհութեան օրինակ և նմանութիւն, առ ումն կակուղ պատուառ մատուցեալ ջամբի, հարթակչիռ և քաղցրայարմար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծականաց հոսանուտ և ստորածորելի նիւթից գերափառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի և յաման ինչ մորթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձևոյ և կամ ջրոյ թացութեան մեղկէ, այլ 'ի սահման պատշաճին պահէ: Նոյնպէս ընկալեալ զքոյոց բարեաց անհաւասար առաւելութիւն, որդի աստուծոյ կենդանւոյ, զորբանուէր այս օծելութիւն 'ի ճակատ դիմացս արեամբ քո գրեմք, և 'ի բնութիւն շնչոյս հոգւոյ քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձակութեամբ 'ի տարածումն յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեան՝ պտուղ իւղոյ ընծայեալ զլոյս 'ի փառս ապառնեայն հանդերձելոցն: Այս ճարպ հոգևոր երջանիկ և վերնանշոյլ 'ի դէմս երեսաց իմս պատկերի՝ քում նշանաւ ջահաւորեսցի:

ԻԴ. Նու. քանզի իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ զօրութիւն արագ սլացմամբ 'ի թևս թեթևս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետևման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ խո-

պառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կը-
ցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութեամբ, ոչ սահ-
մանեցաւ ձեւակերպութեամբ, ոչ կշռեցաւ ընկերին
չափով. այլ ահա ընդ աստուածեան խաչիդ նշանի հա-
ւասարութեամբ արեան կեցուցչիդ հոգիապէս գե-
րազանցեցաւ։ Եւ արդ օրհնեա զմեզ, տէր, սովաւ
և 'ի սոյն. եւս և անունդ քո ահաւոր, լուսաւոր, երկնա-
ւոր և զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անճառից
մաքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, ան-
քննին, անպատում, բարձրեալ, ողորմած, վերերդեալ,
ճշմարիտ, բարերար և սուրբ, արա սովաւ փրկութիւն,
տուր և քաւութիւն, պարգևեա բժշկութիւն, հան-
դերձաւորեա շնորհ, առատաձեռնեա երանութիւն։
Յօծումն այս ձիթոյ երկնանձրև լուսոյ անպատ գը-
տայց. յիւղեալս այս Թեզան բանաւորական մի մոցէ և
մի դրաւեսցէ տխրականութիւն աղտոց մեղանաց՝ շա-
ղախել երբէք զոգւոյս կերպարան։ Իջցէ սոյն ինքն
որոց մաշչին օծանիլ սովաւ հարսնապաճոյճ պանծա-
նօք պճնել գեղայօրէն սուրբ վայելչութեամբ՝ եր-
ջանկապէս յոգի զարդարեալ։ Իջցէ հուրս այս լու-
սափառ և աստուածաձիր՝ մերձեցելոցն 'ի սոյն ըն-
բութիւն՝ մուխ կրկնեաց և բարեփափաք ջերմու-
Թեան այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատ-
րաստ պնդութեամբ՝ 'ի կարծրականումդ անսասան վի-
միդ յարակայեցեալ միշտ արձանացայց 'ի քեզ հաս-
տատեալ աներկմտելի։ Լիցի նշանակ վերնամիցանակ
այսր պարգևի սովաւ վառելոցն, ոչ ողողիլ ջուրբ, ոչ
այրիլ հուրբ, ոչ ցրտանալ 'ի սառնութենէ, ոչ վնասա-
կար հողմով շիջանիլ, ոչ աղտեղիլ յուրուական ինչ
պղծութենէ, ոչ զպահեալսն՝ չարին մատնել, և ոչ 'ի
սորև ելիցն զմթերս գանձուն կենաց յիմարաբար
արտաքս հանել. ոչ անպատսպար մնալ 'ի Թևոց քոց
օգնականութենէ, և ոչ զեղցեալն 'ի մեզ օծութիւն

անմաքրապէս 'ի բաց մերկանալ։ Այլ եղիցուք քեւ 'ի նոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ ազատացեալ պսակեալ եւ թագաւորեալ։ Նու․ քեզ միայնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթականութիւնք գովեստից, բարեբանութիւնք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց, ընդ հօր եւ հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այս իմ ձեռնարկութիւն 'ի սրբութիւն, եւ այս արձանագրութիւն 'ի սրբութեանցն սրբութիւն։

ԲԱՆ. ՂԴ

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԱՍՏՈՒԱԾ յաւիտենական, բարերար եւ ամենակալ, ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ գիշերոյ, կեանք 'ի մահու եւ լոյս 'ի խաւարի, յոյս ակնունողաց, եւ երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագումն եւ անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց եւ հայիս յաղօթս խոնարհաց եւ ընդունիս զխնդրուածս նոցա, աստուած իմ եւ թագաւոր իմ, կեանք իմ եւ ապաւէն իմ,

յոյս իմ և փրկութիւն իմ, Յիսուս Քրիստոս աստուածորդ ամենայնի, սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ։

Բ. Դու 'ի դրօշմէ խաչի քոյոյ նշանիւդ, զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շընորհ որդէգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք աստուածականօք ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգըն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն։ Նազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ. վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց։ Դու քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ. ԼԳ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՈՐԴԵԱԿՆ արդար, ճառագայթ օրհնեալ, լու-
սոյ կերպարան, փափագ անձկութեան, բարձրեալ
անքննին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն,
յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր
փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք։ Դու-
արդ զթերութիւն վրիպանաց բազմախառն ձայնի եղկե-
լոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հա-
ճութեան Հօր քում բարձրելոյ։ Որ վասն իմ 'ի փորձ
եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն, ամե-
նեւին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարե-
խնամօղ տեսուչ համայնից։ Ո ի թէ յանձն առեր
մեռանիլ վասն իմ, աստուած և տէրդ բոլորեցուն, ո՞ր-
չափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից
կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազ-
դակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ
քո հայր։

Բ. Դու վասն արեանդ պատուականի միշտ մատու-
ցելոյ 'ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձցին վտան-
գըք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտքն,
ապաքինեսցի ամօթն, մոռասցին պատկառանքն, բարե-
գործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վե-
րասցի լալն, հանդարտեսցէ կրճումն ատամանցն, սպա-
ռեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն,
հալածեսցի խաւարն, վառնեսցի հուրն սաստկութեան,
հեղքեսցին տանջանարանքն բազմօրինակք։

Գ. Աճեսցեն գթութիւնք կամողին եւ պարգեւողին կենաց ամենից, ծագեսցի լոյս, արագեսցէ փրկութիւն, հասցէ օգնութիւն, ժամանեսցէ այցելութիւն, կանխեսցէ ցօղ ողորմութեան, յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս պապքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութեամբ 'ի վիհն մահու. ծաղկեցուսցէ պըտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց նընջեցելոց։ Ո ի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո, գթած, 'ի քեզ զօրացեալ քեւ նորոգեցայց, զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութեամբ 'ի յարութեանն արդարոց, հօր քում օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, եւ հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԱԽՃԱՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Զհրեշտակային վարդապետս, կամ յաւէտ, որպէս սուրբն Ներսէս լամբրոնացի վարդապետն մեր ասէ, զհրեշտակն 'ի մարմնի զսրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրաշալի գրուածն' որ 'ի գլուխ սրբոց հարց ազգիս դեգերեալքն են' ո՛չ անդխառնան. որչափ ինչ երբէք ուրեք 'ի լոյս ընծայեալքն իցեն. խնամոտուն հարք մխիթարեան ուխտին Վենետկոյ փափաքեն իմն զմաքուր օրինակ գտանել զմեկնութեան ո՛ղէ դայն. որ է հատուած յաստուածաշունչ մատենէն Յոբայ' մեկնաբանեալ 'ի սրբոյ վարդապետէս. սակայն և ոչ իսկ գիտել ցուցանեն եթէ գոն սրբոյս և ատենաբանութիւնք կամ քարոզք առ ժողովրդոցն բազմութիւն ասացեալք 'ի յորդոր պատշաճից կենացն որ ըստ աստուծոյ:

Զմիոյ 'ի քարոզից աստի զձեռագիր օրինակ գտեալ ուսաեք Տ. Մատթէոս սրբազան Արքեպիսկոպոս նախկին Պատրիարք Կոստանդնուպոլսոյ' ետ մեզ, 'ի մերոց մամլոց ընծայել ազգիս, զոր աւասիկ դրոշմեմք աստանօր:

Թուի ինձ' որոց ընթեռնուն զսա, գուշակել եթէ առաջին ատենախօսութի իցէ սրբոյ Վարդապետիս, ուստի և պտուղ աղօթից սորա' որ սկսանի բառիւքս, «Աղաչեմ զանփոփոխելի էութիւն». զոր 'ի հանդիսարանս խօսից ատենի ասաց մաղթել զսրբոյ Հոգւոյն օգնականութիւն. և է 'ի կարգս աղօթական ողբերգութեանցն յերեսներորդի չորրորդի բանին: Իցէ, և այլ քարոզք հոգելից հօրս սրբոյ գտանէին. զի ո՞չ կարծեմք եթէ զայս և եթ զմի բան ատենական շատ համարեալ' լռեալ իցէ այնուհետև: Եթէ էր մեզ այդպիսում հանդիպել բարեբաղդիկ տենչանաց լրման, ո՞չ յապաղէաք և ըզնոսին ընդ սոյն յարեալ տալ բարետենչիկ ազգիս, 'ի փառս և 'ի գովութիւն Աստուծոյ և սրբոյս նորա:

ՃԱՌ
ՍՐԲՈՅՆ
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ
ԱՍԱՑԵԱԼ.

Հայեցա՛ յանձն քո. գուցէ լինիցի բան ծածուկ 'ի սրտի քո անօրէն.

Գութ արարչական խնամոցն աստուծոյ, և անդունդք սեռն և յատակ սիրոյ նորա. և անմեկնելի և անորիշ են յարարելոցն յիւրմէ լուսաշարժ և բարեբուղխ ստեղծագործելոցն յառաջնոցն, մինչև 'ի հուսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք են և անշարժք, ըստ մեծին Դիոնիսեայ արեոպագացւոյ, յոր հայելով ոք 'ի խօսնոց մտաւորաց, որ չէ արժան յուսահատութեամբ զինքն արտաքոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ, զի այն անհաւատութեան է կարծիս և կամ անասնական անմտութեան. որք զկարիս կարօտութեան ցուցանեն և զաւելի ուռճիկն ընդունին և զդարմանիչն ոչ գիտեն. յորոց փնասուց և տուգանաց արտաքոյ կամիմք լինիլ. և ախորժիմք ընդ շնորհապարտօքն և ընդ երախտահատոյցսն, զոր թէ չկարեմք ըստ արժանւոյն վճարել զանբաւազօր խնամս նորա, գոնեայ խոստովանել թէ բարեաց նորա ոչ գոյ թիւ, և ոչ ե-

րախտեացն համար, և մեր տկարութիւնս չէ՛ բաւական մտօք իմանալ և բանիւ ասել զորքանութիւն անեզրական բարեացն, թո՛ղ թէ հատուցանել զորխտուր փոխարէնն զհասարա (կա) կանն և զյատկականն. զոր ունիմք 'ի յանսահման ծովէ ողորմութեան նորա. ուստի և յորմէ ես առի անարժանս յամենայնի, քանզի ողորմութիւն անարժանիցն է և թշուառացելոցն, և կարօտելոցն, ասէն 'ի մէջ մարդկան կրելոցն և աղքատ կոչելոցն. վասն զի և ամաչեմ խսկ ես զըրբոցըն զձայնս առնուլ 'ի պէտս իմ, 'ի ցուցումն արագ և փցուն, հող և մոխիր զիս ասել, որդն, և տառապանք, ստուեր և հովանի, ընկեցիկ բարեաց և անմասն 'ի լաւութենէ, և անարժան երկնի և երկրի. բեռն ծանր և տաղտկալի մասանց արարածոցս։ Սակայն զի ո՛չ ըստ մեղաց իմոց արար տէր և ո՛չ ըստ անօրէնութեան հատոյց ինձ. այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց տէր 'ի վերայ նուաստութեանս իմոյ. և որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց, գթացաւ տէր յերկիւղած անձն իմ. զի ո՛չ միայն եկի 'ի պատկեր արարչին՝ յարգանդ եկեղեցւոյ 'ի նա անկայ, և կաթնաբուծ եղեալ 'ի հոգևոր ստեանցն քահանայ մեծ 'ի տան նորա մեծարեցայ, և հին և նոր գանձուց նորա ընդունակ լինել արժանաւորեցայ. թէ և ո՛չ ըստ արժանւոյն յոգի և 'ի միտս գանձել՝ փոքր կացուցեալ զանօթս, այլ 'ի լսելիս և 'ի շրթունս և 'ի տեսիլ աչաց՝ և 'ի բազուկս բառնալով զգիրս աստուածաշունչս՝ հոգեշունչ լինել յուսացայ մինչև յայս ահաւոր ատենըս և 'ի սոսկալի ժամու յառաջ կոչեցեալ հրաւիրեցայ. եթէ ըստ արժանեաց ո՛չ ունիլ ասել, յամենայնի գոլով անբաւական և անարժան, բայց եթէ նախախնամութեամբ ներել ազատ կամաց մերոց, և կամ ողորմութեամբ և գթութեամբ յարուցանել զաղքատս յերկրէ և զտառապեալս յաղբեաց, առաւել ցուցեալ

յիս զամենայն երկայնմտութիւն և զանյիշաչարութիւն քան թէ առ հովիւսն և առ ձկնորսսն, կամ առ մաքսաւորսն, և հալածիչսն, յաղագս որոյ առեալ ընդ իս զբոլոր գոյս 'ի մասունս բաժանելով և ստէպս կոտորելով, քան զկիտուածս *մանրութեան հատից մանանխոյ, տալով բնաւիցն խօսուն լեզուս. և ամենեքումբք գոհանամք զնմանէ, որ ետ ինձ 'ի վայելս զայս ամենայն։ Նաև 'ի կատարման սուտ, և յոտն կալ պարգևաց առակի սստուածարկու և քրիստոսաժողով հարանց և հարազատաց եղբարց՝ առնուլ զօրհնութիւնս և զաղօթս աղէկիզեալ և սիրալի և աստուածադութ խնամոցն, և արկանել ջուր 'ի վերայ մաքուր ոտից ձեռաց 'ի տանէ տեառն բղխմանէ, յորմէ արբեալ իբրև յանապակ գինւոյ անգիտացաք զչափս անձին մերոյ, որ և բնաբանիս անգամ ոչ զգուշացաք, որ և պատուիրէ իւրաքանչիւր ումեք հայել յինքն, զոր մեք ոչ արարաք գոնեայ յայս երևեալ բանականս, զի ասացեալ է, թէ յինքեանց գիտակք են իմաստունք, բայց մեք յայսմանէ զանխլացեալք յոյլ ինչ միտս հայելով բուռըն արկաք զայսպիսի նախակարգեալ բանէ որ ասէ (Հայեաց 'ի քեզ, մի լիցի բան ծածուկ 'ի սրտի քո անօրէն։)

Արդ՝ քանզի չեմք տեղեակ տկարութեանս մերում և անբաւականութեան յայսմ գործառնութեան և անուան, սակայն 'ի լսել զբանս խրատու աւագաց, և մըտաց աստուծոյ **մօտաւորաց՝ ոչ թերացաք կրելով սրտի երկմտութիւն և բան անյուսութեան արտաքոյ օրինաց մերոցն հրամանատուացն և օրինադրացն։ Օ մտաւ ածեալ զպատուիրեալն 'ի գիրս հարանց որ ասէ, թէ ունիցիս քեզ ծեր յաստուածակողմանէ, չէ

---

*. Յօրինակին էր մանրութիւն հատէ մանանխոյ։ **. Յօրինակին էր՝ մտաւորաց։

քեզ փոյթ յօրինաց և 'ի մարգարէից. և զայն ևս՝ ե-
թէ հնազանդայն է յոյս, վստահացեալ և զխարխիս
յուսոյն յաստուած առաքել, միջնորդութեամբ աղօ-
թից ձերոց յանձն առայք զհաւանութիւն, որ զմահն
ունի սահման 'ի տեառնէ մերմէ և յաստուծոյ եղ-
եալ, որ եղև հնազանդ հօր մահու չափ և մահու խա-
չի, ոչ խստանամ ասէ և ոչ ընդդէմ դառնամ, զթի-
կունս ետու 'ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս, և
զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ և 'ի թքոյ, զայս ա-
սէր և առնէր որ տէրն էր փառաց և աստուածն բո-
լորից. զոր և ինձ պարտ է կրել նախատինս 'ի մարդկա-
նէ և արհամարհանս 'ի ժողովրդոց, վասն տգէտ և ան-
վարժ և երկրաքարշ անձինս. միայն կորստեան արտաքոյ
փութամք լինել, և անհնազանդից խորխորատից. այլ
և զգանձ մնասուն, թէ տուեալ իցէ ինձ տէրն իմ ա-
նարգամեծար, ոչ ծրարեցից զնա 'ի վարշամակի՝ կար-
ծելով պատուել զնա՝ և բարձր առնել 'ի կողմանէ ա-
նարժանից. այլ վաճառեցից զնա 'ի խանութս խնդրո-
ղաց և 'ի տրապիզխոս սրտից ունկնդիր լսողաց։ Ո՜վ
մայրն սուրբ Ռեբեկայ՝ որ է կաթուղիկէ եկեղեցի, ա-
րասցէ 'ի յայնմանէ խորտիկս, որպէս և սիրէ հայրն, և ան-
դրր մեծարեցից զտէրն զքաղցեալն մարդկանց փրկու-
թեան. զի այն է նորա կերակուրն, ըստ այնմ, իմ կերա-
կուր այն է, զի արարից զկամս։ Նու այսօրինակ այսքան
պատճառս պատասխանաց առ այնոսիկ, որ այլազգ ինչ
զմտաւ ածեն յաղագս մեր՝ բաւականասցի. ժամ է
այսուհետև զՄովսէսական բանն յաշտանակի դնել. և
մանաւանդ զՀոգւոյն Սրբոյ՝ որ 'ի նմա խօսէր՝ վասն
պիտոյից բազմաց, զի լոյս տայ ամենեցուն որ 'ի տան ի-
ցեն, այսինքն է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, և չը-
դնել 'ի ներքոյ մահճացն, որ է հեզգութիւն և անհո-
գութիւն։ Քանզի որք կամին վաստակել զառակաւոր
բանս գրոց և 'ի մեկնօղ աշտանակի դնել, նոքա են որք

մահճօք դնեն, և ընդ գրուանաւ՝ որ է չափ, որ այսինքըն է չափաւոր կենացս 'ի հոգւոյն չպարապել յաստուածայնոյն բանից պարզելոյն, այլ զայն դնել վերագոյն, զոր Տէրն մեղադրեաց Մարթայի քեռն Ղազարու որ զբաղեալ էր յոլովիւք՝ ասելով, աստ սակաւ ինչ պիտոյ է. և արդ Մարիամ այն ընտրելով մասն նորին տեառն ողորմութեամբն նստելով առ ոտս նորա, հարցցուք և ուսցուք 'ի նմանէ, և յաշտանակս մերոյս մտաց և բանիցս հանցուք զ'ի նմանէ տուեալն, նախ զանօթն լուսընկալ, և ապա զվառումն ճրագին, և այսպէս է անօթն Մովսիսական զտեալ և պարզեալ մաքրողական բանի հոգւոյն սրբոյ յայտնեալ զպիտանացու բանն՝ որ ասէ, Հայեմց 'ի քեզ. զգոյշ լեր անձին քում, գուցէ լիցի բան ծածուկ 'ի սրտի քո անօրէն։

Արդ մեծին Մովսէսի է բանս. և յերկրորդումն օրինացն գրեալ է զսա, 'ի մէջ լայն և արձակ ճառին. իսկ Մովսէսն այն է, զոր ծանեաւ տէր դէմ յանդիման նշանօք և արուեստիւք, որ բերան 'ի բերան խօսեցաւ Աստուած ընդ նմա երեսօք և ոչ առակօք, զոր վկայէ գիրք եթէ չեկաց մարգարէ յազգ մարդկան իբրև զմեծ Մովսէս նշանօք և արուեստիւք. քանզի Աստուած կոչեցաւ Փարաւոնի, զի հնազանդեցան նմա արարածք ասէ՝ ծով ցամաք և հուր, և նոքօք զորս կամէր խրատէր, և զորս կամէր բարութեամբ լնոյր 'ի տարերացս ասոյ. և այս է Մովսէս առաջին մարգարէն և աստուածախօս, որոյ բանն պատուական և ամենայն բարութեամբ լի՝ պարտ է լինել որ 'ի յաստուածաշարժ բերանոյ ասացեալ զանձի առատ և ամենունակ շտեմարան և բժշկարան հասարակաց և պիտանացու առողջաց և հիւանդաց, և կանանց փարթամաց և տառապելոց. զի հոգին սուրբ է բոլորից ստեղծող և խնամող, և զոր խօսեցաւ օրինօք և մարգարէիւք և աւետարանաւս, ընդ ամենեսեան խօսի որոց տուեալ է միտս և

բանականութիւն. զի որքան սատ են՝ յասպարիսի են, և 'ի տեղւոջ հանդիսական չարգելոյ զգուշաւոր խրատս և քաջալերս։ Բայց զպատճառ ասելոյ բանիս առ տեղեաւն պարզաբար այսպէս իմանի, զի յառաջ քան զբանըս զայս 'ի մարդասիրութիւն յորդորեաց զազգն իսրայէլի ասելով, եթէ աղքատանայցէ եղբայր քո, և զինքն քեզ 'ի ծառայութիւն տացէ, և դրամ առնու և զիւր պարտն վճարէ, քանզի պարտական է և չքաւոր, վեց տարի ծառայէ քեզ, և յեօթներորդումն պարգևօք ազատեա զնա՝ զի եղբայր քո է աստուածապաշտ իբրև զքեզ և յորդւոց անտի Աբրահամու, և եթէ փոխ խնդրէ 'ի քէն արծաթ, կամ այգի և անդաստան որ գործէ և կանգնի և ապրի 'ի գլորմանէ աղքատութեան, և դու ձեռնահաս լինիցիս, մի կծկեցուցաներ զսիրտ քո, և մի դարձուցաներ զերեսս քո 'ի նմանէ, այլ տալով տացես զինչ և խնդրիցէ, զի տէր աստուած քո օրհնեսցէ զքեզ և բարի արասցէ քեզ. և բազմօրեայ լիցիս 'ի վերայ երկրի. աճեցուցանելով որ ինչ քո իցէ, զի և նոցա ժամանակաց համարն յիսուն խնդրէր, և զյիսունեան առնուին 'ի թիւ համարոյ, և ասէին թէ քանի՞ յիսուն է յադամայ ելիցն 'ի դրախտէն՝ զոր Յոբելեան կոչէին, որ թարգմանի ազատութիւն։ Քանզի ասէին թէ յիններորդի Յոբելինի նոցա՝ ազատութիւն եղև 'ի ծառայութենէ եգիպտացւոց, և ըզփոխն զոր առեալ էին 'ի նոցանէ զարդս ոսկեղէնս և արծաթեղէնս և դրամս 'ի գինս պատարագաց տեառն աստուծոյ իւրեանց՝ այլ ոչ դարձուցին 'ի տեարս իւրեանց։ Նոյն օրինակ հրամայեաց աստուած զՅոբելեանըն պատուել, զյիսնատակ ելից իւրեանց և ազատութեան. զծառայսն ազատել և զպարտսն թողուլ, և զոր ինչ դրաւ լինէին առեալ յաղքատաց, տունս և ագարակս և այգիս, և այլ զինչ և իցէ հայրենիս՝ 'ի տեարս իւրեանց դարձուցանելով, և որպէս ինքեանք թողլին

զտունս և զանդաստանս եգիպտացւոցն զոր 'ի Նոցանէ ունէին։ Արդ՝ 'ի պատուիրելն զօրէնս զայսոսիկ՝ հայեցաւ ոգին 'ի տկարութիւնս մտաց մարդկան , զի այսպիսի ինչ ծնանի 'ի նոսա արատս 'ի ժամ հայցելոյն զփոխն , և կամ պատճառելոյն զինչն 'ի ծառայութիւն , թէ մերձեալ լինի տարին թողութեան հինգամեա , և տասն ամաւ , կամ աւելի և կամ պակաս , վասն այսորիկ արգելու զինչն տալ զկարիս եղբօրն , յաղագս որոյ զգուշացուցանէ և ասէ , Հայեաց 'ի քեզ գուցէ։

Զաշուել զմնացեալ քանիս յոբելինին , թէ հեռի իցէ տալ , և թէ դարձեալ իցէ արգելուլ , զի շահիլ կամի 'ի նմանէ . և չհատուցէ խոստմանն աստուծոյ , թէ 'ի նմանէ առնու բազմապատիկ օրհնութիւնս և աճումն գոյիցն՝ յերկար կենդանութիւն 'ի վերայ երկրի . քանզի յերկինս չունէին յոյս , և յարութեան ակն ոչ ունելով , զի մարմնաւորք էին և երկրատեսակք զոր տէրն նորոյ ժողովրդեանս պատուիրեաց կատարելապէս կատարելոց , փոխ տալ՝ ուստի ակն ոչ ունէին աստէն հատուցման , և հաւատասցի ձեզ յարքայութիւն արդարոց յաւիտենական կենօք հարիւրաւորօքն հանդերձ , զոր և աստէն յաւելու կարողն զյաւելուածս ընչիցն և զանուն բարի , և նախ քան զօր դատաստանին 'ի յարութեան անդ մարմնոյն 'ի հանգստին փառաց . զի ունիցին հոգիք արդարոցն , զոր ետես Մեծն Յովհաննէս 'ի յայտնութեանն , զի տուան սպիտակ ագանելի հոգւոցն , զի վայելեսցեն անդ , մինչ եղբարք նոցա որք աստ են լրմամբ բարձր երթիցեն 'ի կատարումն կենցաղումս յանցաւորիս , և ապա յարութեամբ մարմնոյն՝ աստուծոյ արդար դատաստանաւն առնուցուն զկատարեալ պսակն ընդ բուն վերջին արդարսն որ առ յարութեամբն լինիցին։

Բայց 'ի Հայրապետ Աբրահամն Բաւիլէոս՝ առեալ է

զբանս զայս յօգուտ իւրոյ հօտին՝ լուսաւոր և ընդարձակ մեկնողութեամբ յոլովս տայ իմաստս, որ և նա տրար մեզ զսա բաղձալիս հոգւոյն սուրբ որ 'ի նմա, ընդոստուցեալ հանել զնա 'ի սմանէ ամենապէտ գանձս մանկանցն եկեղեցւոյ փարթամացուցիչս, որ և ասէ ըզսմանէ. եթէ չէ ոք յորդւոյն ադամայ եկեալ 'ի կենցաղումս՝ և որ գալոցն է, որ ոչ կարօտ է լեալ և կարօտի այսր աստուածամուխ բանից և հոգևոր իմաստից, և ասէ այսպէս։

Թէ հայելոյն 'ի մեզ կրկին իմաստք են՝ երևելի և աներևոյթ աչաց պարգևելոց մեզ 'ի տեառնէ. ապա քննելի է, թէ որո՞ց աչաց է հրամանս հայել 'ի յինքն. եթէ մարմնական աչացս ասիցէ, վաղվաղակի յանդիմանի անկարութեամբ պատուիրանին, քանզի մարմնոյ ակն չկարէ զամենայն անդաման տեսանել, ոչ զինքն զթիկունսն, և ոչ զգլուխն բոլանդակ և ոչ զպարանոցսըն, և ոչ Հոգին Աստուած զանկարելիսն չհրամայէ, ուստի յայտ է թէ մտացն է այս կարելի, որ ակն է՝ 'ի հոգւոջն տեսող և իմացող, որով գիտէ հոգին զմարդոյն՝ իբրև զաստուծոյն Հոգին Սուրբ. յանբան կենդանեացն իւրաքանչիւր ոք ըստ բնութեան գիտէ ընտրել զիւր մարսական կերակուրն. և եթէ ախտանայ՝ զդեղն բժշկութեան. իսկ բանաւոր մարդ մտաւոր խորհրդով և քննութեամբ հայելով յինքն կարէ զգուշանալ 'ի մահաբեր արատոյն՝ որ յերկուս բաժանի, 'ի մեղաց հեշտութիւնս գարշելի գործոց, յոր իբրև 'ի կերակուրս դիմեն ցանկասէրքն իբրև 'ի մահաբեր խոտս. և կամ 'ի բանն հերձուածողաց, զի և այն սպանող է, այլ երթիցուք զհետ արդարութեան գործոց և ուսմանց. որպէս Նոքա զկնի առողջական կերակրոց։

Պարծեալ է և յանբանն բնաւորեալ շնորհս որով զերծանին յորոգայթից որսողաց, որպէս այժմ որ սուր է աչօք, և այլք ոտիւք, և թռչունք թևովք. զոր թէ

մեք հայիմք 'ի մեզ յաճախ իբրև 'ի հայելի, և յստակեմք զակն հոգւոյ մաքրեալ յախտից և 'ի մախանաց, 'ի նախանձուէ և 'ի հպարտութենէ, որք զաչս հոգւոյն շամանդաղ առնեն, յայնժամ կարեմք տեսանել զական ականն, որ ամենայն ուստեք թաղէ մեզ չարն, և անցանեմք զնոքօք, և յերկաքանչիւր մարդս մեր 'ի հոգի և 'ի մարմին ածեմք զերկու կտակարանս, ուր հանգուցեալ է Հոգին Աստուծոյ, որք թևօքն վերացեալ 'ի ստորոտս երկրէ 'ի վերնական և յիմանալին՝ որ ո՛չ գո՛ն որոգայթք և ո՛չ որսողքն չարի գէշ կենցաղոյս։

Հայեա՛ց 'ի քեզ դարձեալ այլ բան փիլիսոփայական, որ ասեն երեք մասունք են մարդկայինք, այլ եմք մեք, և այլ է մերն, և այլ է շուրջ զմեօք. մեք եմք հոգի և միտք. զի այս է մարդն որ է պատկեր Աստուծոյ՝ անմահ և երկնային. և մեր է մարմինս, և հինգ զգայարանքըս, որով տեսանեմք լսեմք խօսիմք շօշափեմք հոտոտիմք, և սօքօք լինին հեշտութիւն աշխարհիս, և շուրջ զմեօք է հանդերձ և կերակուր. տուն և ինչք։ Արդ՝ յորժամ ասէ՝ հայեա՛ց 'ի քեզ, 'ի հոգին ասէ հայել և 'ի միտսն, և պահել անախտ և մաքուր. և ո՛չ 'ի մարմնոյն հեշտութիւնս որ զգայարանօքս լինի, զի պիղծ և գարշելի լինի այնպիսեացն կեանք. և անասնոցն է զայն առնելն, և ո՛չ արժան հայել 'ի գեղեցկութիւն հանդերձից և 'ի բնակութիւն, և յընչից բազմութիւն. զի սոքա չգան ընդ մեզ 'ի հանդերձեալն։

Իսկ Աստուածախօսն Պօղոս՝ երկու ասէ զմարդն, ներքին զհոգին, և արտաքին զերևելի մարմինն, և ասմարմնոյն մի՛ տալ իշխանութիւն, զի ծառայ է, այլ հոգին է թագաւոր, նմա արժան է տալ զառողջութիւն և զառաջնորդութիւն. զի ո՛րքան արտաքին մարդն չարչարի և ապականի, ներքին մարդս մեր նորոգի և պայծառացեալ գեղեցկանայ. քանզի հակառակ են միմեանց, մինն 'ի վեր ջանայ առ Աստուած ելանելով սրբութե՛,

և մինն ՚ի վայր բերէ յախտս և յապականութիւնս . զոր պարտ է հայել միշտ՝ որպէս ասէ միտքն անապատի Եւագրիոս , թէ մինն ջանայ ՚ի վեր , և միւսն ընդդէմ դառնայ . այլ ջանակից լինի նմա պահօք և արտաւօք և հսկմամբ և ամենայն տանջանօք , ապա թէ ոչ՝ յորժամ նա ՚ի հուրն այրի , ո՞ ՚ի սմանէ և յետին նաքարակիտն պահանջէն , այսինքն թէ զհոգևորին զհետ գնայ մարմինն , եթէ ոչ՝ երբ հոգին *՚ի հետ սատանայի տանջի ՚ի գեհենն , և մարմինն ընդ չարի փոքր հեշտութեան ընդ նմա տանջի . և դառնագոյն կսկիծ նմա լինի անզերծանելի և յաւիտենից։

Հայեա՛ց ՚ի քեզ տե՛ս , թէ առողջ ես և անմեղ հոգւով . և զպատկերն աստուծոյ անարատ ունիս՝ երանելի ես և ցանկալի Հոգւոյն սրբոյ , այր ցանկութեանց իբրև զգեղեցիկն Դանիէլ . փափաքելի հրեշտակաց՝ զի ճառագայթ Աստուծոյ փայլատակէ ՚ի քեզ . և գեղեցիկ լինիս տեսանելով քան զամենայն որդիս մարդկան , նըման Քրիստոսի գլխոյն և սկզբնատիպին քրիստոնէից։

Հայեա՛ց ՚ի քեզ հայեաց , և պահեա անարատ , զի թէ մեղանչես տգեղացար գարշելի եղեր և զազիր՝ և ամենայն ողբոց արժանի հրեշտակաց և մարդկան , դարձեալ թէ մեղար և հիւանդացար մեղօք , հայեա՛ց ՚ի քեզ և դեղոյ ապաշխարութեանն պէտ արա՝ զի մի մեռանիցիս զմահն յաւիտենական։

Հայեա՛ց ՚ի քեզ տե՛ս , թէ ծանր է մեղքն և մեծ . ապա ծանր ապաշխարութիւն պիտի և դառն արտասուք , իբրև Պետրոս յուրացութեան . իսկ թէ թեթև և սակաւ են մեղքն , ապա հեշտ և դիւրաւ քաւի պահօք և ողորմութեամբ տնանկաց։

Արդ՝ ասէ և աստուածախօսն և սուրբ հայրապետն Բասիլէ . ինչ որ ՚ի Սուրբ Եկեղեցի կարգ և աստիճանք

* Յօրինակին՝ ՚ի յետ սատանի .

կան, ամենեցուն պիտանացու է բանս որ ասէ, հայեաց 'ի քեզ։

Որդ՝ եկեղեցի կոչին ժողովուրդք քրիստոնէից, և է ասել՝ զհաւատն Եկեղեցի Աստուծոյ, որ զամենայն քրիստոնեայս տարեալ ունի և հաւաքեալ 'ի մի խոստովանութիւն և 'ի մի յոյս կոչման, և թուէ այսպէս, եթէ ունի Եկեղեցի որսորդս ուղեգնացս ճարտարապետս և շինօղս, երկրագործս և հովիւս, ըմբիշս զօրականս, ընդ արուեստս և գործաւորս համարէ, և հրամայէ ամենեցուն պիտանացու լինել զհայելն յինքն. ընդ խորհուրդս՝ ասէ Եւագրիոս՝ ապականիչս յորոց վերայ կան դասք դիւաց. բաժանեալք ըստ ախտաւոր խորհրդոցն ութ. և կռուին ընդ մարդկան զօխ և զգիշեր, յորոց ընդ դէմ կալով քաջքն և իմաստունքն պսակին յաղթութեամբ։

Առաջինն որսայ որկորստութեամբն զժուժկալութիւն և զպարկեշտութիւն, զոր և դու հայելով 'ի քեզ և 'ի զպականն տեսեալ՝ յետ բերցես զգողացեալ բարիսն, հմուտ որսորդ լեր որսալով յաստուածաշունչ գրոց բանս պիտանիս ընդ դէմ չարին իբրև զտեառն ասելն թէ ոչ հացիւ միայն կեայ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ աստուծոյ. ուղղեգնացն կացցէ ընդ դէմ պոռնկական ախտին՝ որ զկնի որկորին է. գիտելով թէ ուղղեգնաց է՝ և ամենեցուն ճանապարհն 'ի մահն է, և յետ մահուն 'ի դատաստան աստուծոյ. զի գրեալ է. ճանապարհ զարքունի գնասցես, և մի՛ 'ի խոտոր. մի՛ յաջ, և մի՛ յահեակ։

Հայեաց 'ի քեզ եթէ իցես ճարտարապետ, 'ի վերայ Քրիստոսի որ հիմն է քրիստոնէութեանս՝ շինեալ մի՛ խոտ և ցօղուն զնիւթ գեհենոյն, որ է աստէն հարստութիւն, այլ ոսկի արծաթ՝ պահք, ողորմութիւն և աղքատութիւն. թէ յայլս կամիս զարուեստ 'ի բան տանել, նախ զհաւատն դի՛ր յոգիս աշակերտացն՝ որպէս

ճարտարապետն, և ապա զշինուած առաքինութեան՝ որպէս շինող. զերկոսինն ցուցանելով 'ի քեզ զօրութիւն ընդ դէմ հպարտութեան և սնափառութեան, որք են ապականիչք խոնարհութեան, և չափաւորութեան խախտիչք։

Հայեա՛ց 'ի քեզ, զի թէ իցես երկրագործ բանաւոր երկրի՝ քեզ և այլոց զամենայն մասունս հոգւոյդ և զգայարանս մարմնոյդ պտղաբերս կալ աստուծոյ՝ զան- պտուղ թզենին մի փութով հատանել, այլ աղաչես զաստուած խնայել. թէ լինի յաշակերտացն որք ծոյլ՝ քրքրեա երկիւղիւ դատաստանին աստուծոյ՝ և արկ աղբ՝ զնախատանացն զբանսն. թերևս արասցէ պտուղ և կերակրեսցէ զտէր քաղցեալ. և այս ընդդէմ կեալն բարկութեան և զայրացման ախտիցն։

Հովիւ ես՝ հայեաց յարուեստդ, զմոլորեալն դարձո, զբեկեալն կազդուրեա, զյուսահատեալն 'ի յոյս ածե- լով, զհիւանդն յախտէն բժշկեա յորդորելով յառա- քինութիւն, և այսպէս կաց ընդ դէմ տրտմութեան ախտին։

Ըմբիշ ես մենամարտ՝ որ կարես առանց ծերոյ խր- բատողի կալ 'ի կառուարանի աշխարհիս, հայեա՛ց 'ի քեզ, և մի վայրապար ածեր զձեռն զգործով առանց վկայ- ութեան գրոց՝ զհողմս կոծելով իբրև զանփորձ ըմ- բիշ՝ զի ոչ պսակիս, եթէ ոչ ըստ օրինին մարտիցես, և այսպէս կացցես ընդդիմակաց ախտին ձանձրութեան։

Եթէ զինուոր ես հայեաց 'ի քեզ, ագի՛ր զզրահն ար- դարութեան, դիր զսաղաւարտն փրկութեան 'ի գլուխ. զյուսոյն՝ ա՛ծ զսուսերն՝ զաւետարանին բանն ամենայն գրոց զօրութեամբ՝ ընդ մէջ ածելով. և յամենեցուն վերայ զվահանն հաւատոյ, զի կարող լինիցիս զամենայն նետս հրացեալս չարին շիջուցանել, ապա կարասցես կեալ ընդ դէմ հնարից սատանայի, և աւելի ես սրտնե- ղութեան սատանայի ախտի. և այսպէս յօրինես զքեզ

յամենայնի բաւական լինելն՝ կարողն հայել 'ի քեզ միշտ։ Դարձեալ պարզելի է բանս ըստ երևելեաց՝ զի գիտասցուք եթէ միայն տէրն և ամենեցուն արարիչն ընդ ամենայն տեսակ և հասակ խօսի ընդ այր և ընդ կին, ընդ ծեր և ընդ տղայ, եթէ այր ես՝ պատկեր աստուծոյ ասի՝ մի օտարակերպ բերել 'ի քեզ որ յաստուած չկայ։

Հայեա՛ց 'ի քեզ թէ ցանկասէր և խղամոլ ես՝ արջառոյ և ձիոյ և իշոյ ես պատկեր՝ և ո՛չ աստուծոյ. թէ հպարտ ես առիւծոյ՝ թէ ոխապահ ուղտոյ. թէ որկորեայ ես՝ խոզի. թէ նենգաւոր՝ օձի և աղուեսու. թէ գող՝ մկան և գայլոյ. և այսպիսիքս պատարագ ո՛չ մատչին. և հեռի են յաստուծոյ, այլ որպէս արի և քաջ մարդոյ վայել է, արիացի՛ր ընդ դէմ այս ամենայն ախտիցն, հեռի պահելով 'ի քէն. և մերձ կայցես սկզբնատըպին աստուծոյ։

Թէ կին մարդ է թող հայի 'ի յինքն, զի և նա և ներքին մարդոյն և հոգւոյն աստուծոյ պատկեր է, և անուն կնոջն կեանք ասի, թող չմեղանչէ՝ զի մի՛ մեռցի. զի գրեալ է, անձն որ մեղանչէ, մեռանի. և եթէ մարդոյ մեղաց պատճառ լինի, մայր եղև մեղաց, և եհան զինքն 'ի դրախտէն. զայրն որ գլորեաց որպէս Եւա, այլ անմեղ կացցէ, զի եղիցի մայր կենաց իբրև զՍուրբն Մարիամ Աստուածածինն։

Թէ ծեր ես հայեա՛ց 'ի քեզ. զի մերձաւոր ես մահու, և գարշապար գերեզմանին. աստուծոյ տուր զանցեալ սակաւ աւուրքդ, աղօթեա արտասուօք, զի պաշարով երթիցես 'ի կարեաց աշխարհն։

Եթէ երիտասարդ ես և տղայ, հայեաց 'ի քեզ, մի՛ շաղախեր և աղտեղեր 'ի քեզ զաւազանին պայծառութիւն. և կաց 'ի Քրիստոսի դրախտն. այսինքն յեկեղեցի. զի այլ չգտանես այնպիսի պայծառութիւն, բազում պահօք և արտասուօք. զի մահն ծերոց է և տղայոց. 'ի

յուժով հասակին տկար ես բարի գործել և ծառայել աստուծոյ. նոյնպէս երևի զօրութիւն բանիս 'ի վերայ ամենայն աստիճանի։

Եթէ կաթողիկոս ես հայեաց 'ի քեզ, զի ամենակալ Թարգմանի. և այս աստուծոյ է անուն, և աստուծոյ փոխան ես, աստուածաբար խնամ պարտիս տանել ամենեցունց՝ և անխատ մնալ 'ի մարդկային ախտից։

Եթէ եպիսկոպոս ես՝ հայեա՛ց 'ի քեզ, տեսուչ ասի եպիսկոպոսն և ոստիկան, տե՛ս յիստակ աչօք* անկաշառ վիճակս առաքելաբար շրջեաց առ ամենեսեան, և ընդպարգևս հոգւոյն մի՛ վաճառեր արծաթոյ, և ոգւոց և անարժանից, և մի՛ լինիր կցորդ մեղաց օտարաց, և արեան ամենայն տղայոց, 'ի բարձրն ածելով գան՝ ուստի անկցի վաղվաղակի ուշացնորեալք։

Եթէ քահանայ ես, հայեա՛ց 'ի քեզ, զի քաւիչ լեցիս, և կոչիս միջնորդ աստուծոյ և մարդկան, տե՛ս զի մեղքն քո յաստուած է ամբարշտութիւն. վասն զի մարդ մարդոյ մեղանչէ՝ զաստուած աղաչէ, ապա թէ աստուծոյ մեղանչեն՝ զո՞վ աղաչեն. և եթէ քաւիչդ անբաւելի մեղանչես, ո՞ր խորք ծածկեն զքեզ. և ընդ հօտն թէ ո՛չ քաւեսցես, զարիւն նոցա 'ի ձեռաց քոյ խնդրէ։

Եթէ աբեղայ ես և կրօնաւոր, հայեա՛ց 'ի քեզ. աբեղայն հայր ասի և կրօնաւոր, որ կրէ զխաչն Քրիստոսի յուսն բարձեալ. զի զՔրիստոս հայր ասէ մարգարէն հանդերձեալ աշխարհիս, որ զամենայն քրիստոնեայս ծնեալ աւազանին շնորհօքն, և կացոյց առաջի հօր ասելով, ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետուր ինձ. քրիստոսի նման է աբեղայն. որ նա զինքն ծնանի նոր մարդ, և իւր հայր լինի. Որպէս Եսայի ասէ. յահ և երկիւղ քո յղացաք և ծնաք զոգիս մեր

* Յօրինակին էր, անկաշառս վիճակին։

փրկել պահօք և աղօթիւք և անհանգիստ աշխատութեամբ, կրելով զահ և երկիւղն աստուծոյ, անկեր և անխում, պարկեշտ, հեզ և խոնարհ, սիրտ բեկեալ, հոգի մաշեալ, և խաչեալ աշխարհի, և միայն կենդանի աստուծոյ. և վասն զի 'ի քրիստոս յիսուս հաւատացեալն ո՛չ արու է խորած, և ոչ էգն. զի նմանապէս անդամք են քրիստոսի և գլուխ զնա ունին, և 'ի միասին առնուն զպսակն, և զանախտ ուրախութիւն, հրաւիրելով յերկինս. ելին ոմանք և ('ի) կանանց ջերմն սիրով յաշխարհէ. և կեցք բնաւ չխառնակեցան յաշխարհ, այլ և կուսութեամբ հարմնացան քրիստոսի. նըմանեալ արիութեամբ արանց. և կեցք սակաւ ինչս զողջ տուեալ կարօտելոց, և վաղագոյն հրաժարեալ խոշոր և խարազնազգեստ վերարկուօք մազեղինօք՝ աւետաւոր կոչմանն արժանացեալք, որ է հաւատ կալեալ խոստմանն քրիստոսի 'ի հանդերձեալն, զարդիս ոչինչ դնելով այլում կենաց աւետաւոր գոլով, զի թէ չունիմք այլոյ կենաց ակն, զայս կեանքս և զէր հանգիստն ո՛չ արհամարհէին. վասն որոյ և նոցա է բանս պիտանի. հայել յինքեանս, եթէ տեսողին աստուծոյ սրբեցին զանձինս, որ քննէ զսիրտս և զերիկամունս. և ո՛չ շնացան խորհրդովք և զգայութեամբք, * որ ո՛չ պղծեաց զանարատ առագաստն աստուծոյ և պարտական մահու եղև, զի թէ զմարդիկ խաբելով, զաստուած ո՛չ կարէ խաբել. որում ասէ իմաստունն Սողոմոն, թէ ո՛չ ծանիցես զքեզ** գեղեցիկդ 'ի կանայս՝ որ նուիրեցեր զքեզ անմահ Թագաւորին Քրիստոսի, ելանես 'ի նմանէ՝ և 'ի դասուէ նորա 'ի յայծիցն դասս ձախակողմն կոյս. որք զանիծեալքն լսելով երթալ 'ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է և կրճել ատամանց։

---

* Յօրինակին՝ որս ո՛չ պղծեաց։ ** Յօրինակին անշէշտ էր գրեալ։

Հայեա՛ց 'ի քեզ թէ փարթամ ես . արա տեառն զխրատն, վաճառեա զինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս գանձս. զի ուր գանձք ձեր, յիշեա զմեծատունն, որ ատէն անտես արար զաղքատն, և անդէն տապակեալ 'ի հրոյն,* կաթի մի ջրոյ չլինէր արժանի. Քրիստոս ասաց զայս և ո՛չ մարդ։

Եթէ աղքատ ես հայեաց 'ի քեզ . յառաքինութենէ մի՛ լինիր աղքատ. զհոգիդ և զմարմինդ լից գանձիւք առաքինութեամբ և գոհութեամբ աստուծոյ . համբերեա՛ նահատակութեամբդ . և յերանութենէ աղքատացն ձգեա՛ 'ի քեզ՝ զոր ասաց Տէրն , Երանի՛ աղքատաց հոգւով զի նոցա. յիշեա՛ զղազար աղքատն, զի գոգն աբրահամու ընկալաւ զնա. և դրախտին հանգիստն յետ չանցն տեղւոյն և աղբիւսոյն։

Եթէ գեղեցկութիւն ունիս , եթէ առողջութիւն, եթէ զօրութիւն ուժից , եթէ շնորհ բանի , կամ արուեստ , հայեա՛ց 'ի քեզ . զգեղեցկութիւնդ նուիրեա՛ աստուծոյ, և ծրարեա՛ անկողոպուտ և մի՛ դներ 'ի վաճառ և գնեալ զգեհենանն անշիջանելի. զառողջութիւնդ և զոյժդ տո՛ւր 'ի վաստակ այգւոյ և անդաստանի պատուիրանին աստուծոյ. և պտղաբերեա հիւանդաց և տըկարաց 'ի տեառնէ տուեալ քոց բարեացդ,** զհոգևոր շնորհն աճեցո՛ առատապէս. բաշխելով զտերունիսն ծառայակցացն 'ի ժամու*** զհոգևոր կերակուրն. իսկ զարուեստին զվաստակսն 'ի կարիս մարմնական պիտոյից կարօտելոց սեղան , լսելով խրատողին , թէ պատուեա՛ զտէր 'ի քոց արդար վաստակոց , և հան նմա պտուղ։

Եթէ թագաւոր է ոք, կամ իշխան, հայեսցի յինքն, զի չեն միշտ թագաւոր և իշխան. յիշեսցեն զընութիւն և մի՛ փառահացցին, զի մահկանացու են. մի՛ լիցին ծա-

---

* Յօրինակն մեր կաթոյ էր գրեալ։ ** Յօրինակին էր՝ զհոգևորն շընորհն։ *** Յօրինակին էր՝ զհոգևորն։

ուսեալ մեղաց և գերի ախտից, այլ իմաստութեամբ և հնարիմացութեամբ յերկինս զվայելսն փոխեսցեն, լինիցին ահ և երկիւղ չարագործացն, և 'ի գովութիւն բարեգործացն. դատ առնելով որբոց՝ և տացեն իրաւունս այրեաց. կորզեսցեն 'ի բերանոյ հզօրաց զտկարսն և զանօգնականսն. պակասութիւն արասցեն մեղաց, և ամբարիշտք մի՛ գտցին յիշխանութեան իւրեանց. առցեն լերինք զխաղաղութիւն, և դաշտք զշինութիւն. քաղաքք և գաւառք զանամբոխութիւն և զանխռովութիւն. իմաստունք հայելով յինքեանս, և յիմարք լիցին 'ի չարիս, բնաւ չճանաչելով թէ զինչ իցէ չարն, և իմաստունք 'ի բարիս՝ յառաջ ածել զբաղումս 'ի խելս և 'ի հանճար ըստ աստուծոյ. տխմարք հայելով յինքեանս, գիտասցեն թէ չեն բաւական յինքեանց, և կարօտ են գիտնոց, մի՛ արասցեն ինչ յանձանց ընտրութենէ. հնազանդութեամբ ուսցին զբարին՝ և վայելեսցեն (յ)այլոց իբրև (յ)իւրեանց սեփհականից. և զի ամենեցուն յաստուծոյ է բարին։

Նոյն այլ համառօտաբար ասասցուք. վասն զի յերկու բաժանի քրիստոնէութիւնս, յեկեղեցականս և յաշխարհականս. եկեղեցականքն հանդէս արասցեն ոտից իւրեանց, թէ ո՛րպէս արժան է նոցա 'ի տան աստուծոյ շրջել, որ է եկեղեցի աստուծոյ կենդանւոյ. սիւն և հաստատութիւն աշխարհի. և եկեղեցականացըն անարատ և մաքուր վարք է. և յորժամ արատ և մնաս լինի յեկեղեցականսն, խախտի և 'ի փուլ գայ յաշխարհի. և նոքա աւերման և արեանց հեղման պարտական գտանին. յոյժ զգուշութեամբ և մեծաւ սոսկմամբ դողալի է մեզ, և ահագին մեղացն որ գործի յեկեղեցականսն, զի ո՛րքան սոսկալի է յեկեղեցւոջ պոռնկել՝ քան արտաքոյ, նոյնքան 'ի ներքոյ կարգի մեղանչելն՝ քան աշխարհականի որ պատճառել զանգիտութիւն կարեն. և մեք ո՛չ կարեմք. աղ գոլով և լոյս

կոչեցեալ , զոր թէ անհամ գտանիմք՝ ո՛չ յաղբ և ո՛չ յերկիր եմք պիտանացու , և թէ լոյս որ 'ի քեզ խաւար է , խաւարն ո՞րչափ ևս . աստուծոյ է բան և ո՛չ մարդոյ ասացած . որ ասաց թէ երկինք և երկիր անցցեն՝ և բանք իմ ո՛չ անցցեն . որպէս ասէ առաքեալն, աՀ մեծ է անկանել 'ի ձեռս աստուծոյ կենդանւոյ . և անկաշառ յատեան նորա մտանել։

Նոյնպէս և որ յաշխարհական կարգի էք՝ հայեցարուք 'ի ձեզ . զի յայլ կեանս և յայլ աշխարհ փոխելոց էք . որ այլ չէ հնար յայս կեանքս դառնալ . զի ո՛վ որ աստ վաստակի , անդ հանգչի . և ո՛վ աստ հանգչի , անդ չարչարի . քանզի այս չափաւոր և սակաւ կենօքս իմաստունքն յաւիտենից հանգիստ զուգին անեզր և անսպառ մշտնջենաւորութեամբ . իսկ տխմարքըն և ծոյլքն դառն տանջանք զուգին . և օգնականն օգնական ասի . աշխարհն սգոյ և աղէտի անուն է և ողբոց , զի աշխարհելի է աշխարհականն , 'ի բազում հոգոց և 'ի ցնորից և 'ի ցաւոց պաշարեալ 'ի կնոջէ 'ի տղայոց , 'ի յաւագաց և 'ի բռնաւորաց , 'ի դիւաց և 'ի մարմնաւոր կարեաց , և քանի՞ ոյժ պիտի և քաջութիւն և արթնութիւն և * (առ երախտի) և աղօթք և սուրբք ամենայն բարեխօս . զի ձեռն կարկառէ աստուած՝ և չընկղմի 'ի խորս անդնդոց , և 'ի պտոյտս շրջանաց գետոյ , և անմոռաց ունել զմահն 'ի մտին և զերկիւղ դատաստանացն աստուծոյ , և զհամար պարտուցն ահաւոր ատենին . զի թէ սուտ և սակաւ հեշտութեամբ աշխարհիս խաբուի և մեղօք խոցոտի , և աստուծոյ ահն և շնորհն հեռանայ 'ի նմանէ , զի՞արդ ապա այնպիսին չուղղեալ կարէ և 'ի ցամաք ելանել 'ի յորձանաց

* փարենթագիզ նշանաւ որոշեալ բառն ըստ նոյնութեան եդաւ աստ . թողեալ 'ի կամս որոց յուզեն , ընտրել զոր ախորժեն ըստ զօրութեան բանին։

փորձութեանց կենցաղոյս , և ազատանալ 'ի կապանաց
ախտից՝ ընդ որ տմլորութեամբն շաղապատի , վասն որոյ
յառաջին հասակի տղայութեան զգուշասցին՝ և պա-
հեսցեն զանմեղութիւն և զշնորհն աստուծոյ . պա-
հապան անմեղ հասակին առնուն և զսուրբ հրեշտակն
խաղաղութեան ամենայն ջանիւք և խրատիւք գիտ-
նոց , և աղօթիւք սրբոցն . և կայցեն հանգիստ 'ի բըղ-
ժախառ խղճէ մտացն , իսկ եթէ անգամ գլորեցան
և մեղան , մի՛ յուսահատեալ կորիցեն և անապաշխար .
զի որպէս երկիւղն պիտանի է անմեղաց , նոյնպէս և
յոյսն մեղուցելոց . զի երկիւղն չտայ անկանել , և յոյսն
չթողու յանկմանն . քանզի յաստուծոյ յողորմութե-
նէն չէ հեռի ապաշխարողն . և ապաշխարողն է որ դառ-
նայ 'ի մեղաց , և ապաշաւէ զիւր անցեալ ունայնու-
թեամբ զկեանսն , և յառաջակայէն զգուշանայ պահօք
և աղօթիւք . ողորմութեամբ և լռութեամբ և խոնար-
հութեամբ , զի յառաջ մեք ողորմիմք մեզ և խնա-
մեմք , զ   այրել 'ի մարմինս մեր 'ի կսկծուտ
և 'ի կծուագոյն տանջանացն անհնարելի , և այս լինի աս-
տուծոյ ողորմութեամբն , պատկեր թողու մեզ ողոր-
մութեամբ և ասէ ցմեզ , ահաւասիկ ողջացար մի՛ ևս
մեղանչեր , զի մի՛ չար ինչ լինիցի , այլ չգտանել ողոր-
մութիւն , զի իբրև զշուն դարձար 'ի փսխածն , և իբ-
րև զխոզ լուացեալ դարձեալ թաւալեցար 'ի տղմի . և
ատելի եղեր աստուծոյ և հրեշտակաց։ Յաղագս հա-
յելոյն 'ի քեզ՝ այսչափ բաւական լիցի։

Տեսցուք այսուհետև զասելն՝ գուցէ լինիցի բան
ծածուկ՝ 'ի սրտի քո .* այն բանիւ ետ մեզ ստացօղն
մեր՝ զպէտս մեր վճարել . զի թէ մերկ էաք՝ հոգւով
իմաստիւքն առ 'ի յիրեարս մերձ լինէաք որպէս զհրեշ-
տակսն , այլ զի վարագուրաւ ծածկեալ է անձն մեր ,

---

* Օրինակն ունէր գրեալ , անբանիւ . կից այսպէս։

բանից և անուանցն կարօտանամ առ 'ի յայտնել զ'ի խորոջ կացեալ իմաստն, բայց բանն վարժ և առաքինի պարտ է լինել, և առաքինութեամբ բանի այն է ոչ թագուցանել անյայտութեամբ զմիտսն, և ոչ ընդվայր շատխօսութեամբ ցնդեալ՝ որպէս զբանս զայս՝ հոգին սուրբ կարճ եդիր, զի դիւրաւ պահեսցուք զյիշատակն, և շատ դանձեալ զմիտսն. քանզի լոյս տայ բանս իմաստից մեր և վկայէ ասացելոցս, եթէ դիւրին եմք մարդիկ 'ի մտօք մեղանչելն. վասն այսորիկ արարիչն արագ զգուշութիւն արար նմա, և պատրաստութիւն, զի մի հիւանդասցի վաղվաղակի. որպէս զբժիշկ տկարագոյն անդամոցն նախահոգութեամբ զօգնութիւն մերձ *դնէ զխրատն. քանզի գիտելով տեառն դիւրակործանս զմեզ մտօք լեալ՝ զերկիւղ տեառն և զհայելն յինքն պահապանս դնէ ասելովն, հայեաց գուցէ լինիցի բան ծածուկ 'ի սրտի քում. Քանզի մարմնոյ գործք ժամանակի կարօտանան, և յաջողութեանց, և գործակցաց, և աշխատութեանց, և այլոց մատակարարութեանց. իսկ մտաց անօրէնութիւնն՝ առանց ժամանակի կատարին անմարմնապէս շարժմամբ, անաշխատապէս, և առանց գործակցաց հաստատին, և առանց միջնորդի վճարին. յաղագս որոյ** ուրանօր յանցանքն, անդ և արագագոյն բժշկութիւնքն և սպեղանիքն 'ի մարդասիրէն աստուծոյ 'ի վերայ ածեալ լինին, որպէս զգուշութիւն երկիւղին աստուծոյ, ըստ որում ասէ, հայեա՛ց 'ի քեզ, գուցէ լինիցի բան ծածուկ 'ի սրտի քում. Քանզի և յաւետարանի անդ ես պարզագոյն յայտնէ տէրն. 'ի սրտէն ելանել ասէ՝ ամենայն խորհուրդք չարք, և պղծեն զմարդն. քանզի աստուած 'ի սիրտն հայի և 'ի ծածուկն, և մարդն 'ի բանս և 'ի

---

* . Դնէն էր յօրինակին.

** Ըստ օրինակ մեր ունէր գրեալ՝ ուրանօր սուր յանցանքն.

գործս յայտնիս։ «Քանզի որ ստեղծ առանձինն զսիր-
տս նոցա՝ եւ ՚ի միտ առնու զամենայն գործս նոցա,
վասն որոյ ասէ, գուցէ լինիցի բան ծածուկ։ Գուցէ
ասելն ՚ի զգաստութիւն կոչելոյ է եւ ՚ի բազում պատ-
րաստութիւն. քանզի սատանայ աներեւոյթ թշնամի է
դարանակալ լինի ՚ի ծածուկ, եւ զգաղտնաձիգ նետն ար-
ձակէ այնոցիկ՝ ոյք ուղիղ են սրտիւք. որ թէ չիցեն
արթունք եւ թէ չիցեն կազմեալք, ըստ առաքելական
խրատուն, զրահաւն արդարութեան, եւ ագուցեալ զո-
տս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութե̃,
եւ եդեալ զսաղաւարտն յուսոյ, եւ առեալ սուսեր ընդ-
մէջ զհոգւոյն զօրութիւն, որ է բանք ա̃ծ աստուածա-
շունչ սուրբ գրոց հաւաքեալ ՚ի հոգի, եւ տալ պատաս-
խանի ՚ի դէպ ժամանակի. որպէս տէրն ՚ի պահանջելն
զհացն, ասաց՝ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ. եւ ՚ի յաշ-
տարակ տաճարին ՚ի ստիպելն թէ արկ զքեզ աստի ՚ի
վայր, ասէ՝ ո՛չ փորձեսցես զտէր աստուած քո. եւ ՚ի
պահանջելն զերկրպագութիւն ասէ՝ գրեալ է, տեառն
աստուծոյ քո երկիրպագցես, եւ զնա միայն պաշտեսցես,
որով բանիւք իբրեւ պողովատիկ սրով կոտրեալ ՚ի բաց
կայր ՚ի նմանէ. քանզի ըստ առաքելոյ, թէ սուր է բա-
նըն աստուծոյ, քան զամենայն սուսեր երկբերան.
որ անցանէ ընդ շունչ եւ ընդ ոսկր եւ ընդ ուղեղ, եւ
քննիչ է խորհրդոց եւ սրտից, զի գրոց բանն կենդանի
է. եւ զազդօղն յինքեան ունի, եւ ՚ի հանդերձեալն դա-
տաւոր է, եւ դատէ զյանցաւորս, որպէս ասաց քրիս-
տոս. եւ այս է սողոմոնի ասելն, մի՛ բամբասեսցես զար-
քայն ՚ի սենեկի քո, յայտ է թէ զաստուած ՚ի սրտի
քում, իբրեւ զանզգամն որ ասաց, եթէ ո՛չ գոյ աստ-
ուած, ապականեցան։ Նաեւ դարձեալ. ասէ անօրէնն մե-
ղանչելով ՚ի միտս իւր, թէ չի՛ք երկիւղ, այսինքն թէ
չտեսանէ աստուած զսիրտ որ երկնչի յաստուծոյ. զի
՚ի նմա նախ եդաւ պատուիրանն, սիրել զտէր աստուած

՚ի սրտէ և ՚ի զօրութենէ և ՚ի մտաց, գիտելով որ նախ ՚ի նմա է անօրէնութիւնն, ՚ի սէրն և յերկիւղն աստուծոյ. որ և ՚ի ժամ աղօթից ՚ի սենեակս սրտին հրամայէ մտանել ՚ի փակել զդրունս զգայարանացն՝ և կալ յաղօթս առ հայրն որ տեսանէ ՚ի ծածուկ՝ և հատուցէ յայտնապէս։ Պուցէ լինիցի բան։

Օրինաւորացն սիրտք հեռի կացցեն ՚ի խորհրդոց ամբարշտաց, * որոց յորժամ ոչ յաջողի ըստ կամաց նոցա կենցաղս այս, երկմտեն յաստուածոյ՝ ասելով ՚ի սրտի, արդեօք է՞ աստուած արարիչ ամենայնի և խնամածու, որ ըստ արժանեաց ուղղէ, և վարէ զամենայն, ապա չարն ուստի՞ է և յորմէ՞ սկսանի. և ընդէ՞ր սատակի ՚ի բարւոյն. և ընդէ՞ր յաջողեալ է մեղաւորաց. և արդարոցն հակառակ հանդիպի։ Սոքա տկարանան, և նոքա զօրանան. սոքա սակաւակեացք, և նոքա բազմաժամանակեայք և բազումս տողեն այսպիսի՝ որք յերևելիս միայն հային, և զառօրեայսն կատարեն. և ոչ հաւատան դատաստանացն աստուծոյ ՚ի հանդերձեալ աշխարհ, և ՚ի յարութիւն հասարակաց, և ՚ի գալ անսպառ յաւիտենին, յորում դնին կշիռք արդարութեանն, և ընդունին ըստ արժանւոյն արդարքն և մեղաւորքն զհատուցումն գործոց անեղր կենօք և անսպառ յաւիտենիւն. և այսոքիկ բանքեն անօրէնք և չարք (և) ծածուկ են սրտիւ. ՚ի Թոյլ և ՚ի Թերահաւատ մտաց ծնեալ է. քանզի չարն ոչ եթէ գոյացութիւն է իսկական, կամ յաստուծոյ եղեալ, կամ յինքենէ գոյացեալ, կամ յայլմէ սկզբանէ, այլ ՚ի պակասութենէ բարւոյն լինի չարն. որպէս պակասութիւն լուսոյ՝ խաւարն է, և պակասութիւն արդարութեան՝ անիրաւութիւն. և պակասութիւն սրբութեան՝ պղծութիւն. և պակասութիւն կենաց՝ մահն. որ և գոյացաւ յաղագս

---

*Յօրինակին՝ որք յորժամ

կամաց ծուլացելոց 'ի բարի ընտրութենէ . որպէս որք ընտրեն զհեշտութիւն մարմնոյ , և զընչեղութիւն ապականացու գանձուցն՝ առաւել քան զմեծութիւն հոգևոր ուրախութեան . և զանանց բարութիւնս երկնաւորս , այս է չար և մեղք . իսկ հիւանդութիւնք և աղքատութիւնք , և սովք , և պատերազմունք , և մահտարաժամք ըստ մարդկան մտաց ախտացելոց է թուեցեալ չարն , այլ կատարեալ մտաց ոչ է այնպէս , այլ՝ այլազգ համարեալ է , և չարեաց 'ի բաց բարձողք են նոքա . քանզի յոլով չարութիւնք և մեղք յայսցանէ խափանին , իբր յորժամ զնիւթն 'ի բաց բարձեալ 'ի հրոյ բորբոքելոյ շիջանի հուրն . և չիք ինչ պատճառ յարարածս աստուծոյ գտանել , որով սխալէ մարդ , և բամբասէ զառաջախնամութիւն արարչին . բայց եթէ ապականեալ միտս ոք ունիցի իբրև ախտացեալ աչք , որ կամ ոչինչ տեսանէ , և կամ այլ ընդ այլոյ տեսանէ . ուստի զգուշացուցանէ Հոգին սուրբ ասելով , հայեաց 'ի քեզ , գուցէ լինիցի բան ծածուկ 'ի սրտի քո անօրէն . որ և նորին յուսովն և ողորմութեամբն քննեցաւ ըստ կարի մերում տկարութեանս , զոր բաւական համարելի է 'ի յահաւոր և 'ի պատկառելի ատեանն երկուցեալ 'ի շատախօսութեանցն՝ տաղտկութեանցն , չդնել բեռինս 'ի վերայ իշխանական և ազատ մտացդ ձերոց տէրունեացդ մերոց։

Այսուհետև դարձուսցուք զիմանալի աչս մեր 'ի մեզ . հայելովն 'ի վեր 'ի բարձունս բարձանց 'ի յերկինս երկնից և 'ի սուրբն սրբոց , որ անդր է քան զիմանալի գաւառն հրեղինաց , յոր միայնակն ամենասուրբ Երրորդութին շրջէ զնմ արարածս . սրովբէս թողեալ առաջին վարագուրաւն զիմանալիսն յինքենէ , և երկրորդաւն զմեզ 'ի նոցանէ . զոր և աստուածաբանեալ փառաւորեսցուք աստուածաբան փառատրութբ օրհնելով զնա յերիս երևեալ՝ յերիս անձինս . թէ և 'ի դէմս , և 'ի զօ-

հութիս հաճոյից է ումեք ասել. և 'ի մի միանականութիւն յաստուածութիւն և 'ի զօրութիւն, 'ի մի բնութիւն, և 'ի համակամութիւն, և 'ի մի թագաւորութիւն և յիմաստութիւն, էակցութեամբ և իսկութեամբ, և 'ի մի պատիւ թագաւորեալ, և զուգակցութեամբ երկրպագեալ, անորոշաբար բաժանեալ, և անխառնապէս միաւորեալ նախ քան զյաւիտեան և յառաջ քան ըզժամանակն, և երիցագոյն քան զընթացս մտաց և բանից և զգայութեանց, արարիչ գոլով և նախախնամիչ բոլորից իմանալեաց և զգալեաց։ Նայեսցի և ինքն այժմ յիւր անեզրական բարիսն, և իւրական գթութեամբն յիւր արարածս, և բացեալ զանմերձելի և զողորմած ակն՝ տեսցէ զկարիս և զկարօտութիւն աշխարհի. և լցուսցէ զպակասութիւն յամենեցունց յանծախելի ծովէն, և յօգնել մեզ նայեսցի 'ի տկարացեալ բնութիւնս, և փութասցի յընկերել անկեալ և կործանեալ ազգիս մերոյ 'ի պէս պէս և 'ի զանազան խորխորատս. միակն միական միածին Որդին աստուծոյ, ծագումն և ծնունդն Հօր յառաջ քան զարուսեակն, որ 'ի լըմանց աւուրց եղև պտուղ կուսութեան և Նոր Ադամ, յինքն առեալ զբնութիւնս անթերի և որ ինչ է մարդ, բաց 'ի մեղաց. մի Որդի և մի Քրիստոս խոստովանեալ յուղղադաւան սուրբ եկեղեցւոյ. որ և խաչիւըն աւարտեալ զմեր փրկութիւն, և թաղմամբ թօթափեալ 'ի մէնջ զապականութիւն մեր. և կործանմամբ դժոխոյն՝ ազատեաց զհոգիս. Նորն Ադամ՝ յարեաւ աստուածաբար և ել յերկինս նովիմբ աստուածացեալ մարմնովն, որով և գալոց է հայրենի փառօք դատաւոր կենդանեաց և մեռելոց, և հատուցանող ըստ իւրաքանչիւր գործոց անեզրական յաւիտենիւն. որ և նա որ պատուիրեաց մեզ հայել 'ի մեզ, հայեսցի և տեսցէ Հարբ և Հոգւով զվէրս կողին տիգախոցիւ, և զհարուածս բևեռացն յոտն և 'ի ձեռս, և

այնու եռանդաշարժ սիրովն հայեցի 'ի գինս արեան իւրոյ , և երկնակացմ և ամենաչէն ձեռօքն բևեռեցէ զամենեցեան յերկիւղն իւր և 'ի սէրն , և ջնջեցէ զամօթ և զարտօսր յամենայն երեսաց քրիստոնէից դաւանել 'ի ճշմարիտ կրօնիցն Նուիրական համատարած կաթողիկէ և առաքելական եկեղեցի . հիմնադրեցեալ 'ի զարդ անկողոպտելի անարատ առագաստի . տեղի լոյնագոյն և երկնաձիգ , խորագոյն և բարձրագոյն ըստ անչափին աստուծոյ մեծացեալ և բարձրացեալ յանհասական բարձրութիւն , որ է հաւատոն համահաւաք տիեզերագրաւ համաշխարհական ամենասփիւռ և բոլորից բովանդակող , որոյ հիմունքն հաստահեղոյսք , և պաղպաջունքն ականակուռք և մարգարտայեռք և ոսկեփայլք և արծաթաձոյլք . որոյ ամբալերինք մշտնջենաւորք և բլուրք յաւիտենականք , յորոց առաջինն և *այն նշանաւորն միակն և աննմանական լեառն էր կոչեցեալ , և լեառն մածեալ . լեառն պարարտ և լեառըն սուրբ լուսընկալ , և լեառն որ երկնից գոյ բարձրագոյն 'ի Դանիէլէ տեսեալ , ուստի վէմն ծնաւ առանց ձեռին , և մեծացեալ կալաւ զտիեզերս ամենայն . որ նա ինքն է մայրն Էմմանուէլի ամենաբաղդն ամենօրհնեալն 'ի կանայս սրբուհի Աստուածածինն , որ 'ի զօրաց հրեշտակաց և 'ի հրեշտակապետաց պատուեալ , որ է օրհնեալ յաւիտեանս ամէն։

---

* . Յօրինակին՝ և աննշանաւորն մեկնակն , և աննմանակն։

ԸՍՏ հոլովման ընթացից ամանակաց յառաջ չարժութեան, որ ըստ լրապատարն նշուլագեղն արփիաճաճանչ լուսակիրն օրակշիռն մղտափարատն ակնապարարական արևու՝ ստեղծականն արուսեկի, որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն 'ի չափս դարուց շնչասպառ. և կենդանանորդ առուղեկան յաւիտենից, 'ի յաւարտումն կատարման հինգերեակ յոբելինին, 'ի սկիզբն պսակելոյ մօտ տասներկին Յաբեթական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոյ՝ որ զկնի գալստեան 'ի կայս և 'ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝ յաղթող և մեծ կայսերն Հոռոմոց Բասլի, յորժամ ընդարձակ և մակագաւիթ կանոնաւ սփիռ. տարածեր՝ լիասահման և անխտրոց 'ի ստուարակարկատ կոթողս կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին և յանխզելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց խմբից աշխարհաց 'ի ծոց իւր. արդ 'ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմատեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արդասաւորի, ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իբրև զմի մարմին բանական 'ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ

տեսեալք։

Արդ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոգնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրոյ 'ի միտս բարիս. որով և դուք եղիջիք գըրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեանն։

ՅԻՇԱՏԱԿ ՎԱՐՈՒՑ ՀՈԳԵԿԻՐ ՀՌԵՏՈՐԻ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԱՄԵՆԱՓԱՅԼ նշողիւք ճառագայթից շնորհաց հոգւոյն աստուծոյ՝ լուսապատար պայծառազարդեալ՝ հրեշտակն 'ի մարմնի սուրբն Գրիգոր՝ էր յԱնձևացեաց գաւառէ Վասպուրական աշխարհին. որդի տեառն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի. 'ի ժամանակս կայսերութեան Յունաց Վասլի և Կոստանդեայ. յաւուրս Սենեքարիմայ Հայոց արքայի. և 'ի հայրապետութեան տեառն Վահանայ կաթուղիկոսի։ Որ սնեալ 'ի կարգ կրօնաւորութեան 'ի վանս Նարեկայ, որում և եղև առաջնորդ, ուստի և հռչակեցաւ Նարեկացի։ Այն սա երկնահանճար վարդապետութք գերափայլեալ՝ մեկնեաց զԵրգն երգոց Սողոմոնի. գեղգեղեաց զճառ խաչին, և զՆերբողեանս 'ի սուրբ աստուածածինն, 'ի համօրէն գունդս առաքելոց, և 'ի սուրբն Յակոբ Մըծբնայ. և զՔարոզս գանձից։ Ապա բանապաճոյճ պերճամանութեամբ գրեաց զայն զՂԵ բանս աղօթից 'ի խնդրոյ հայցման հարց միանձանց, զոր թողեալ մեզ վերջին ժառանգութիւն անսպառ մթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերկրաստորդական հասակի, 'ի թուականիս Հայոց՝ ԴՃԾԲ. և ամփոփեցաւ 'ի նոյն վանս Նարեկայ։ Իսկ յորժամ Սենեքարիմ արքայ փոխեաց զտէրութիւնն 'ի փոքրն Հայաստան, ապա և միանձանցն Նարեկայ դիմեալ մերձ 'ի կողմանս քաղա-

քին Ակնայ և Տիւրիկեայ , շինեցին վանս յանուն Նարեկայ , ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինըն , Թէ և այժմէ աւերակ , և կոչի ուխտ Արակայ , յորմէ լինին նշանք բժշկուԹեան 'ի փառս աստուծոյ։ Որոյ աստուածախօս մաղԹանաց օժանդակուԹեամբ արժանասցուք զմայլական տեսուԹեանն աստուծոյ . որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագուԹք յաւիտեանս . ամէն։

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Ա. ԳՈՒՄԱՐՔ խմբից դասուց երջանկացն պատուասիրեն բիւրաբեղուն բանիւք գովեստի զսկզբնալոյսըն կենաց գոյից 'ի կիցս բանից ըղձաձայնուԹեանց . և որպէս փողովք տաւղօք և քնարիւք զգայական սըրտի շարժեալ զգործի՝ զգերազանցեալն 'ի լոյս անմատոյց ուրախուԹեամբ վերադրուատեն։ Նաև զանձառ արարչուԹեան հրաշագործ ամենաստեղծն տէրուԹիւն օրհնելով՝ պատճառ փառաբանուԹեան խոկուԹեան հաստչին զհաստուածոյս անուն գոյուԹիւն . որպէս և ճշմարիտն բան ցուցանէ , 'ի ստեղծանելն ինձ զայս ամենայն , բոյլք զօրաց դասուց երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն , և ամենայն հրեշտակք իմ գովեցին զիս։ Նաև արդ եԹէ հրափայլ և երագընԹացըն փառաբանչօք վերնաԹախչ պատգամաւորօք հոգիանիւԹ և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի . որ Թէպէտ և նոքա վեհք են բնակուԹեամբ կայից ստորիցս , և նշոյլ երկրորդ լուսոյ առաջնոյն , այլ սակայն յոյժ անտեսաբար տպաւորուԹեամբ առ բնուԹիւն բարի բանին բարձրելոյ բարեզարդաբար բերկրանօք բերին . և որ գոհաբանի առ 'ի նոցանէ սուրբ

աստուածութիւնն, լայնածիր հեռաւորութեամբ և ընդարձակ միջոցաւ յաւէտ անջրպետ նշուլիւքն ծածկի 'ի նոցունց։

Բ. Ապա զայն որ զանհասն հրեղինաց 'ի հողեղէն յարկըն պարունակեաց, և զանճառն 'ի սերովբէից զգալի մարմնոյ յօդիւն պատեաց, և զկերակրիչն դասուց հրեշտակաց կաթնասուն ստեամբքն դիեցոյց, ո՞ր երգ պատկանակիր 'ի ճահ գովեստից օրհնեալ պատուեսցէ։ Զմարմնարանն անտեսին և զճեմարանն մեծին, զտաղաւարն տիրական և զխորանն աստուածական, զխառնարանն ճաշակման անապական խրախճանութեան, զորբարանն մաքրութեան և զընդունակն զգաստութեան, զնպատակն կուսութեան և զօրինակն երանութեան, զհարսնարանն անլուծանելի՝ անժամանակականըն փեսայի, զընակարանն հաճութեան կամաց անեղն աստուածութեան։ Զայսքան փառազարդ շնորհաց ընդունակն և ոչ նոքին աստուածութեանն օրհնաբանք հրեշտակացն պարք որպէս պարտն է պատուել ժպրհին, թող թէ մարդ երկրային 'ի կշիռս չափոյ բերանոյ հողազանգուածս հիւթոյ մեղխս մարմնոյ. քանզի անճառութեամբ անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկնայինք զարարչին անհաս տնօրէնութեանն զանքննին ծնող արժանապէս վերաքարոզել։ Քանզի թէ ըստ առաքելական ձայնին Պօղոսի, մարդն անձնացեալ ոչ յումեքէ պատմի, ապա որ զլրութիւն բանին էութեան աստուածութեանըն յղացեալ կրեաց 'ի մարմնի՝ զիա՞րդ զննեսցէ շարժութեամբ շրթանց լեզու մարմնեղէն զնա ճանաչել։ Զի թէ դասք պետութեանց անմահից վեհից վերնոյ բնակութեանն՝ եկեղեցեաւս յայս խորհուրդ խորին յառեցան, ապա յայտ է թէ մեծ է առ նոսա հիացումն սքանչելի գործոյս այսորիկ, քան զհասումն երկրաւորացս բանից պատմութեան։

Գ. Բայց սակայն երգեսցէ բանս որքան զօրեսցէ 'ի բաղձանաց սրտի փափագման՝ նմին ընծայ օրհնաւսք փառաց տեսչութեան. Նա զի թէ երկինք փառացն աստուծոյ լինին պատմաբանք, և յանդրէն դարձ տարագրելոյ տոհմին Յուդայի ժողովք ժողովրդոց տեսին զփառս անեղին, ապա այժմ յերևիլ բանին 'ի մարմնի և լինիլ մարմին ադամեան կերպիւ, հարկ է յոյժ ճահողապէս՝ ոչ միայն անմարմնոցն, այլ և զգայնոցս արժանաբար ըղձականութեամբ հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեանց։ Քանզի խոնարհս այս երկիր եղեալ տիրակիր, գտաւ լծակից ընդ աստուածակիր երկինն վերին. վասն որոյ խրախուսեալ հոգևորական հրճուանօք երկուցն դասուց 'ի մի խումբ պարու, տօնս տարեկանս փրկչին փայլման կատարեն, զգայական սեռս եղականաց, և անմարմին դասք հրեշտակաց. յերևելիս տեսականաց, և յիմանալիսն ծածկեցելոց։ Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի դուստըր վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Դ. Ո՜վ ամենասուրբ արարչընկալ տիրուհի և աստուածածին, որ զանտանելին երկնի բարձրութեան և երկրի լայնութեան, ծովու խորութեան և անդնդոց անհասութեան, զ'ի քէն մարմնացեալն խոկութեամբ էութեան յորովայն անձուկ սուրբդ քում սենեկի կրրել զօրեցեր։ Ո՛ւ որ հայեցեալ երջանկին Յոբայ՝ պատուաբանեաց 'ի ձև առակաց, զանբաւութիւն մեծին աքանչացուցեալ, յումեմն դիմաց ասելով եթէ չունիմ զնա, և զայլմէ՝ թէ չէ ընդ իննե։ Որում երգակցեալ վեհին Յովհաննու 'ի բանն Յայտնութեան ասէ հիացմամբ. փախեաւ երկին և երկիր 'ի մի սասանութիւն 'ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարև յաւէտ անձկութեամբ ամփոփին 'ի բերումն

բովանդակութեան արարչական բանին հանգստեան։ Իսկ դու ընտրեալ 'ի զարմէ և 'ի զանգուածոյ մաքուր զաւակի սուրբ աստուածածին։ Տարար զնա 'ի քեզ ախորժ հանգստեամբ կամացն հաճութեան, եղեալ երկիր անձնական բանական բուսոյն, և զգայական անդաստան կենացն հացի, և փառարան բորբոքման անշէջ կայծական, և վայր դալարբեր հայրական ծոցածին ծաղկին, և ծառ երկնուղէշ անթարշամ խնծորին, և գործարան գոյութեան լուսատու մարգարտին, և լեառըն արձանունակ երկրաւէր վիմին, և այգ արփիակիզբըն աստեղն առաւօտին, և յարկ դիտապետին բանական հօտին, և արքայարան լուսակերտ անմահ Թագաւորին, և մայր կաթնամատոյց բնաւից ստեղծողին, և հարսն սրբուհի հօրն Քրիստոսի։

Ե. Խնդա և ուրախ լեր ձայնիւ երգոց օրհնութեան քումդ երանութեան բանագովութեան. խրախացիր և ձայնիւ ողջունի գաբրիէլեան աւետեացն, բերկրեալդ 'ի կանայս, բնակարան արժանաւոր բանին խոնարհութեան, տնկասաղարթ մարմնոյ աստուածութեանն խառնարան, իւղարան օծելութեան քրիստոսական անունադրութեան. որ նախ քան զծնանիլ բանին առ 'ի քէն անթերի լրականութեամբ հրեշտակական թևոցն սքօղմամբ ցանգ արկեալ պահէիր անաղտ անբծութեամբ։ Դու որ հաճեալ հաւանութեամբ երրորդական փառք աստուածութեանն, ճանապարհ արար հանգստեան. քանզի հոգին սուրբ եկն 'ի քեզ յօրինողն անախտ սրբութեան. և բարձրելոյն հօրն զօրութիւն մօրդ հովանացաւ, որդւոյն պատրաստեալ զքեզ ընդունակ։ Դու որ բնակեցաւն էակիցն հօր բարձրելոյ` էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով 'ի քէն ծնաւ` սկիզբն ունի էութեան նախ քան զարուսեակ. ուստի և զյօդաւոր մարմինն միակ` խառնեաց ընդ աստուածական բնութեանն իւր անքակ. և սեպհա-

կանխեաց զաթոռն հօր իւրոյ Դաւթի յաւիտեան, թագաւորեալ տանս աշխարհի և երկրիս քաղաքի. արկեալ սոցա ուղ ճանապարհի զփայտակերտն գործի՝ հանել 'ի կամարն երկնից տաճարի. և կանգնեաց զխորանն կործանեալ ադամեան մարմնոյն 'ի նորոգութիւն շինութեան քրիստոսական ուխտին դաշնաւորութեան։ Ո՛րդ այսպիսեաց բազմաթիւ և բարձրագոյն բարեաց ընդունակ և մատակարար միայն դու մաքուր կուսութեամբ էին խնկարան տիրուհի օրհնեալ սուրբ աստուածածին. քանզի իբրև զծ՛նչումն խառնութեան խնկոց կնդրկի և զմռսի ընդ տաշխին և կասիայի բորբոքեալ հրով մաքրութեան, բարդեցեր զծուխ բուրման անուշահոտ սրբութեան 'ի հոտոտելիս աստուծոյ և հօր հաճութեան. վարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ արձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ սուրբ աստուածամայր։

Զ. Խնդա և ուրախ լեր յարկ անճառ ծնելոյդ 'ի քէն անեղդ աստուծոյ, որ 'ի նմին յորդւոյն քո խնամոց հրաշազարդ փառօք ամբարձար 'ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս, և թեւօք թեթեւութեան հոգւոյն սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր 'ի կայանս հանգչելոյ։ Աստի և զանհասանելին իշխանականս իմացման՝ զանկապտելին զգայութեան սրտի նկատման վայելս անտեսիցն անձնապէս հոգիագրկեալ, զանեղծին փառաց ճոխութիւն քեզ սեպհականեցեր, սուրբ աստուածածին։

Է. Ներբողեալ ես մաքուրդ փայլումն կրող արարչին առաքինութեան, որ սքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ քև 'ի մեզ զփոփոխումն մեծ արգասեաց փառացն ընդ փոքուն յեղանակեցեր. քանզի զանհայրն մանուկ մայրդ որդեպէս գերագգուեցեր. և ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկօք զանպարագիրն էակ մար-

դացեալ՝ 'ի համբոյր հպելոյ մատուցման շրթանցդ ողջագուրեցեր. որում գտաք մեք ժառանգակիցք աբբայ հայր զաստուած առձայնել 'ի ձեռն քումդ միջնորդութեան, սուրբ աստուածամայր։

Ը. Նարեհամբաւեալ ես մաքրութեան շաւիղ նախընթաց կուսից, որ զլլութեամբ ունողն գոյից կարօտաբար կաթամբ լցուցեր, և աչաց մարդկութեան զանտեսն 'ի մարմնի ետուր նկատել. վասն որոյ զամենայն բերան գոհութեամբ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարփման, սուրբ աստուածածին։ Նշանեալ ես դու 'ի լեզուս անբիծս ընտրական շրթանց ծաղկդ Յեսսեայ պտղոյն մեր կենաց. որ 'ի դրութենէ խառնութեան քառից յեղանակեալ տարերաց՝ անկցորդ մնացեր 'ի մանէ հողածնելոցս հասարակաց. ոչ բերող ծանրութեան բնակակիր համաստեղծս կարեաց, այլ քրովբէօրէն հրաբերան բղխող նշուլից։ Աստի երագ ընթացիւք հեռոց հեռացեալ՝ 'ի վայրն անմատոյց յարփին վերին ընծայեցար, սուրբ աստուածամայր։

Թ. Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ 'ի կանայս, որ դժուարընտել դաստիարակաւ խաչին վարժեալ կրթեցար. որդւոյ քոյ կցորդակցութեամբ միատեւակն ժուժկալութեամբ կրելով զերաշխէպ վշտաց ծնիցելոյդ 'ի քէն տեառն՝ մշտաչարչարն մեռելութե անձնաստոչոր տօթով խորտակեալ. իբրև զորոջ անարատ քահանայական նուիրմամբ 'ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար, ասրաբոյս և ստևագխակ գեղմնաբարձ մաքուր պատարագ. 'ի ճգնաւորական վարս ողջակիզեալ, քան թէ 'ի սրոյ հանդէս խողխողեալ։ Վասն այսորիկ 'ի նուէր քոյ զենման հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ, զմիայն արժանիդ պատուեալ գովէին, սուրբ աստուածածին։

Ժ. Խրախացիր համայն տարփանօք բերկրեալդ 'ի կանայս, որ 'ի կոյս և յանարօր արգանդէ բան բեղմնա-

ւորեցեր՝ ցաւոց անխծից արմատ օրհնութեան, հօրն Ադամայ որդի բերկրութեան։ Վասն որոյ շնորհ ունելով քեզ օրհնեալքս 'ի յորդւոյ քո փրկիչ աշխարհի, երանեմք քեզ, սուրբ աստուածածին։

ԺԱ. Խրախացիր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ, որ յօրէնս երկրային աղցաւոր կրից՝ զերկնայինն ածեալ մատուցեր, և զաննմանն նմանեաց մասզանդուած ազգի մարդկութեանս 'ի չափ հասակի դեղոյ գեղեցիկ զատեղն վայելուչ 'ի Լիբանանէ մեզ պարգևեցեր։ Ուստի զպատկեր նախահօրն 'ի քէն՝ ստացեալ՝ նորոգ հաստատեալ, գոհաբանեմք զսուրբ տիրամայրդ։

ԺԲ. Խրախացիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին, տաճար սրբափայլ. որ լուսով աստուածականաւ ուռճացեալ լցար, և երկրաւոր մարմնով երկնային աթոռ կազմեցար, և արեգակնապէս հոլովմամբ առ արուսեակն երագ ընթացար։ Վասն որոյ բացեալ զբերան պառաւոյն ամլածին որդւոյն, օրհնէր զօրհնեալդ 'ի կանայս սուրբ աստուածածին։ Նա և դու լցեր զտունն Զաքարիայ բարբառովն գոհութեան, յօրինակ հանրական եկեղեցւոյ, որ է քո միշտ օրհնաբան. զի երանեն ահա յայնմհետէ քեզ ամենայն ազգք ըստ բանի աստուածազգացիկ քում դաւանութեան. սկզբնարար կուսից անարատութեան, 'ի բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ սուրբ աստուածածին։

ԺԳ. Քանզի արդ եկեղեցի դասուց անդրանկաց զ'ի քէն մարմինն 'ի բանէն անանջատ համապատիւ հօր փառաւորէ յերկիս սրբասաց. առ որ հպաւոր քո գոլով ահաւոր խորհրդոյդ տեսող՝ զանճառն ուրախութիւն յաւէտ վայելես։ Զի զոր նոքա թևաքողելով դիմաց ծածկութիւ 'ի բացուստ ակնարկեն, դու յաւէտ համարձակ նմին կաթնաձիր մայր ցուցեալ ծանուցար,

և 'ի մէջ դաստակաց ձեռաց որպէս զմանուկ զծերն հին աւուրց գգուանօք ընկալար, եղեալ կառք անձնաւոր կայից բազմելոյն յաթոռ քրովբէից։ Մա՛ն զի ոչ ընդ քեզ միայն, այլ և 'ի քեզ. ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլ և բնակեցաւ տաղաւարեալ. ոչ միայն միացաւ 'ի զանգուած մարմնոյ, այլ և մարդացաւ՝ առեալ զկերպարան 'ի քէն սկսելոյ. ոչ միայն մի զօդեցաւ Քրիստոս յերկուց գոյութեանց, այլ և ընկղմեցաւ յանապական անօսր էութիւնն մարմնոյն վերբերումն. ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հողոյ միաւորեցաւ դիմակ տեսակօք, այլ եռամասն խառնեալ էութեամբք միաւորեցաւ անշփոթելի։ Մի՛ որդի մերով բնութեամբ յաթոռ հօրն իւր աջոյ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ։

ԺԴ. Յաղագս որոյ և մեք երկրաւորքս զմատակարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ Երանեմք ըղձական երգօք՝ զանժամանակն էութեան երջանիկդ ծընող. որ զամենայնի և ամենեցուն պսակեալն հոգեշունչ երգօք՝ 'ի քեզ ընկալար, ոչ 'ի մասնէ, այլ 'ի լրութենէ. ոչ հատմամբ, այլ հաստատութեամբ. ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ փոխատրութեամբ. ոչ 'ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ 'ի սեննակ լայնատարր ոգւոյ։ Քանզի զբերողն 'ի կշիռ ձեռին զերկիր և զերկին տարար յարգանդի. և ոչ միայն 'ի տես նկատման աչաց նայեցար 'ի նա, այլ և շօշափմամբ, ձեռացդ ծաներ. ոչ միայն ողջունեալ զանհուպն շըրթանց, այլ և ըմբռնեալ. ոչ միայն զննեալ զհասարակաչէն խորան մարդացեալ բանին, այլ և անուանեալ կոչմամբ Յիսուս՝ զՔրիստոսն աստուծոյ. ոչ միայն ըստեամբքդ սնուցեր զանժամանակն ըստ աւուրց, այլ և աճման հասակի զնոյն ընծայեցեր։ Ո՜ որ խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ 'ի քէն աստուած մըրմարմին՝ ընդ նախնեաց գոյակն միացեալ 'ի տեսութե-

նէ իմաստից քննութեան մեր փակեալ։ Յորոյ տիպն ապացուցի խաբողն Յակոբ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխուլ խորհրդով զաստուածատեսն անուն ընկալաւ։ Նոյնպէս և որ 'ի քէն ծնեալըդ մարմին 'ի յարգանդ սրբոյ սենեկի ընդ աստուած խառնեցաւ. և խաբեալ զնդոյն մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսող աստուծոյ՝ այլ ճշմարիտ աստուած անուանեալ, զամենեսեան յիսրայէլ անուն փոխադրեաց։ Սակս որոյ լի բերանով զպաշտպանդ փրկութեան այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ սուրբ աստուածածին։

ԺԵ. Որոյ տեսչութեամբն աստուծոյ նախագիծ 'ի ծովէ քարն պատուական հրափայլ և սպիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ։ Քանզի արդարև դու ես ակն պատուական 'ի յաշխարհիս ծովէ ընտրութեան, որ զաստուածային հրոյն տարար կերպարան։ Ո՜վ որքան մեծ է 'ի քեզդ աւարտեալ խորհուրդ, որբուհի. զի թէ առածք մարգարէիցն հոգեկիր յղացմամբ Իսրայէլի ծնողք ասացան, ապա դու որ զբանն աստուած անձնաւոր՝ հայրենի բնութեանն հպաւոր՝ 'ի սենեկի քում մաքրականի մարմնապէս բացածանուցեր, զորպիսի արժանապատիւ գովութիւնս ոչ ընդունիցիս։ Ո՜վ շնորհաշուք գեղով արփաւոր ծածկութիւ յանմատոյց գեղեցկութենէն պաճոյճ փաղփաղեալ. ո՜վ համեստ հեզութեամբ, խոնարհ անբծութեամբ, կերպասիւք լուսոյ 'ի հոգւոյն պարասքողեցեալ. ո՜վ զարդուք երկնայնովք ոսկեզօծ սրբութեամբ. արծաթափայլ մաքրութեամբ, ականակապ պսակ քեզ փառաց զբարձրելոյն հովանի 'ի գլուխ ընկալեալ. ո՜վ քառեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ուլանցն յեռամամբ, աստուծոյ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ, 'ի մի էութիւն երիցն հիւսմամբ 'ի յորդւոյն լանջք սուրբ քո շնորհօք առլցեալ։

ԺԶ. Օրհնեալ միայն 'ի կանայս շրթամբք քահանայուհւոյ մօր մարգարէին Յովհաննու, փառաւոր և 'ի դասուց համազարմ նմանացեղիցս ցանկալի երգօք ներբողականս տաւղօք։ Զի թէ բանականս մարդոյ գոյութիւն պատկեր աստուծոյ 'ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծողին զշնորհս կալաւ, ապա և առաւել քեզ պարտական եմք երկրպագութեամբ ունել շնորհ, տիրամայր, որ աստուծոյ 'ի ծառայի կերպարան ստեղծման եղեր պատճառ. առ որ 'ի լրումն աւարտման մարգարէական կտակին հասանիւր, այն զոր ասէ, եղիցի 'ի վերայ առն ձեռն քո, և աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ 'ի քեզ խրախուսելոյ։ Ոչ և կարողութիւնն և բազուկն հօր միածինն 'ի քեզ հանգուցեալ, և զամենայն որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Նոյն նկարագիր և կերպարանն հօր գոյութեան 'ի քեզ բնակելոյն, սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեաց։ Ապա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք, սուրբ աստուածածին։

ԺԷ. Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յեղծականաց սեռից անմահ սերովբէ, 'ի հողային նիւթոյ ոսկի Սոփերայ, 'ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ, 'ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ, 'ի յաւուրց նախնեացն ձիր օրհնութեան, ցօղոյն հանդարտի ամպ անձրևաձիր, արևուն ծագման ակն արփիափայլ, մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի, գիշերային մթոյն լուսնակ բերկրանաց, օրինի ստուերին տառ ճշմարտաճառ։ Ապա որոյ իբր զնիւթ գործօնեայ այսքանեաց բարեաց օրհնեալ ես դու 'ի կանայս, նախաստեղծին մերկացելոյ փառք անկապտելի, վշտացելոյ անխծապարտ մօրն սփոփիչ քաւութեան, որդւոց նորին խռովութեան՝ խաղաղութեան ձայնատու։ Նաև արդ ո՞ր բան բաղդատելով՝ զանհամեմատ քո մե-

ծութիւնդ լեալ կարող գերահռչակել, արարչին մայր, անհասին ծնող, անբաւին գրկարան, ամենակալին յանձանձիչ, փառազարդողին զգեցուցիչ, վերօրհնելոյն գրդիչ։ Ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քո բանի յիրաւի տացուք քեզ երանի, մայրդ Յիսուսի։

ԺԸ. Անկիրհելի դիտմամբ տեսակ լուսալիր աչօք նկատեալ, կտակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ, սահման յարակայ մեծութեան կցորդութեանն, երկուց միութեանն անայլայլական կապ պատկանակիր, վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ, Թեթեւ պարզութիւն հիւթիւ բաղկացեալ, տառ տարբերական տողիւ ձեւացեալ, տումար անճառելի անախալ դրոշմեալ, մատեան մեծութեան շնորհիւ նկարեալ, նամակ ընտրութեան բանիւք բարդեցեալ, արձան անձնական իմաստիւք զօդեալ, կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ։ Ո գեստ լուսանիւթ երկնից արքային, օթոց որբութեան անմահ բնակողին, յարկ վայելչութեան անեղ շինողին, առիթ մարդկութեան բանի անեղին, գործի մարմնութեան վեհին բնութեան, պատճառ պատշաճից անպատկառ ճգնութեանց, օրինակ ուղղութեան անայլայլակ վրիպութեան, անպակաս աճելութիւն լման Թերութեան, խնկուհի երկնային կենդանեաց դաւառին, մանակից շնորհընկալ հայրական գթութեանն, անպարտակիրն ազգակցութեան երկնիչ վերստին, անամանակն արդանտի ծանուցող ծննդեան։

ԺԹ. Դու զհօրն լուսոյ զորդի հարազատ՝ 'ի սորինըս կոյս աշխարհի մայրենի կաթամբ ջամբեալ դիեցուցեր, և որպէս Թեւովք խնայական պահպանութեամբ զպարունակողն պարփակեցեր։ Եւ զկենցաղոյս ընթացք ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր, և ըստ նմանութեան սրագման օդային Թռչնոյ 'ի յանցաւորաց ատտի փոխեցար, և 'ի մէջ դասուց հրեշտակաց ունող ա-

տուծոյ յայտնեալ ծանուցար։ Նա լուսաւորի ամպով առ 'ի Նոյանէ պատուեալ համբարձար, և հողեղէն հաստուած 'ի քրովբէից աղի հանգուցար, և 'ի կանանց ազանցն կերպից արուեստին տեսակաւ տեսար, և զննելի բնութեամբ մարդկայնոյ յանձնաւաշնորհ խորհուրդ ծածկեցար, և 'ի ստեղծողէն քո և համայնից հպատակորէն ձեռով պաշտեցար, և հաստողին ծագաց աշխարհի մայր օրինակ անուամբ ձայնեցար, և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար. և ամենայն անբծից բնութեան պսակ սրբութեան դու դաւանեցար, և երբե զհանդարտ երկինք անարատ արարչաւանդ լծոյն մատուցար, և երբ յաւանակ կամաց անբաւին աստուածութեանն հետևեցար, և 'ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւղօք ամբարձար, և երբ 'ի գժնեայ փշոց խստութեանց յաշխարհիս ըղբաղմանց ծաղկեցար, և երբ 'ի դառն արմատոց երկրի քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար, և Երրորդութեանն անտես Թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար, և ծածուկ հաւաքման բանին երբ լուսատու ձորձով պատեցար, և անքակ էին տէրութեան սահման սկսման վերակարգեցար, և 'ի սրբանեալ միջոց քո սուեանց զանկէտն 'ի տաշխին ծրար թագուցեր. և 'ի կուսական քում բարունակէ զանմահարարն ողկոյզ հասուցեր, և միջնորդ կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար, և համօրէն 'ի խաղաղութիւն մրրկածուփ շարժմանց կացուցար, և խրախակից վերնոյն բարձրութեան անկապտելի անուամբ պատուեցար։

Ի. Արդ յայսքանս և 'ի սոյնպիսիս, և յևս ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես վսեմական վարուց Նախընթաց և յառաջաշաւիղ սուրբ աստուածածնին։ Վասն զի որպէս երևեալն 'ի քեն միածին անդրանիկ բնութեանն հօր՝ սկիզբն առի հետևման խաչունակ մահակիր ճգանց, այսպէս երանեալդ և բարեբան-

եալդ գերօրինակ ցուցման տեսակի աստուածակրօն կարգաց ծագեցար։ Եւ զանմատոյց հուրն կիզանող անապական ծաւքմամբ ծախեցաք , եւ զարադեալն 'ի թևս օդայինս 'ի քառընթաց կենդանիս տեսաք , եւ զանկցորդն տեսականաց 'ի մարդկային կերպ նկատեցաք , եւ զգովեալ բարձողն մեղաց իբր զգառն ճաշակ ընկալաք , եւ դատելոյն 'ի չարագործաց որպէս աստուծոյ ճշմարտի երկրպագեցաք , եւ զանծանօթն հօր տէրութիւն ազգակցապէս օրհնաբանեցաք , եւ զմուրհակ պարտուց անիծիցն 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք , եւ զանտեսն աչաց հրեշտակաց տղայական տիօք դգուեցաք , եւ զանսահման բանին բնութիւն 'ի հասարակածին տիպ համբուրեցաք , եւ զԱդամին նոր հոգեղէն 'ի չափ հասակի առաջնոյն տեսաք , եւ զարեգակն արդարութեան կենցաղակից մեր կցորդ տացաք , եւ զանժամանակ բանին էութիւն՝ սկսեալ 'ի Դաւթայ պատմեցաք , եւ զանհամեմատն մարդոյ պատկերի մեզ նմանատիպ գործով գրեցաք։ Արդ այսքանեաց որքաղնական մասանցս ճառեցելոց դու միայնակ պատճառ , անարատ կուսից նպատակ կրօնից , տիրամայր սուրբ աստուածածին։

ԻԱ. Քանզի թէ չէր 'ի քէն առեալ ուղէշն երկնային , ոչ էր պողաբերեալ զանճաշակելին 'ի շրթանցն մեր հաղորդութիւն . և թէ չէր երևեալ հօրն արդարութիւն 'ի յերկնից , չև էր սկսեալ ճշմարտութիւնն 'ի յերկրէ . և թէ չէր յղացեալ յանփորձականդ քում արգանդի , ոչ էր մարմնացեալ . և թէ չէր յայտնեալ մերով բնութեամբս , ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ անհասն իմաստից . և թէ չէր կրեալ 'ի գիրկ բարձողաց հողեղէն բազկաց , ոչ էր ծանուցեալ . և թէ չէր համբուրեալ երկրաւոր շրթամբք , ոչ էր ճառեցեալ . և թէ չէր հետեւեալ 'ի մարդկան ընթացս , ոչ էր քարոզեալ էակն 'ի յէից . և թէ չէր թափեալ իւղն անապական

'ի վեհագունէն, ոչ էր զմեզ օծեալ. և թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. և թէ չէր խրախուսեալ մարդն 'ի յերկնայնումն, ոչ ևս էր սրբեալ. և թէ չէր խոնարհեալ բարձրն 'ի յընտանի փառացն, ոչ էր վերացեալ 'ի ստորնայնոցս առեցեալն:

ԻԲ. Բայց մարմնացաւ, որքան մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փառաւորեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բեւեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և սլացաւ որպէս վերնային, թռեաւ որպէս հոգեղէն, ծածկեցաւ որպէս զանքննին, փախեաւ որպէս զանհաս, 'ի յամպս երկնից եդ զգնացս, գովեցաւ որպէս միածին, բոսորաբուղխ կայլակօք ներկեաւ, անկից վերացն խոցով հարցաքննեցաւ, 'ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ, դատաւոր արդարակշիռ յամենայն ազգաց վերապատմեցաւ: Քանզի 'ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութեան անեղն իսկութիւն. և յընտրեալ անպատում շնորհէ զայս ամենայն անփոխանորդելի պարգևական ձիրս ընկալաք. և քև ամենայն այս պատրաստութիւն բարեբաստութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ: Ու զամենայն փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոց բազմագովեստ պայծառ յօրինման նոր արարածոց անճառ շինուածոյ սուրբ եկեղեցւոյ, 'ի քէն ծնիցելոյ կերպիւ մերոյ և բարձրացելոյ անուա-

Նըն Յիսուսի ծնկովք կրկնելովք մատուցանեմք։ Աստի և քեզ բերկրեցելոյդ զտիրականն օրհնաբանութիւն բանիս երկրորդեմք։

ԻԳ. Օրհնեալ ես դու 'ի կանայս, գլուխ նոցին պանծանաց, և պայծառ պսակ։ Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան, պսակ ընտրութեան անփորձ գովութեան, պսակ անեղծութեան, լուսոյ նմանութեան, պսակ շնորհանորոգ էին ծնելութեան, պսակ երանական բանին հօր մայրութեան, պսակ սուրբ պանծանաց կենացն բարձրութեան, պսակ պայծառափայլ վարուց իմաստութեան, պսակ տիրապատուաստ երկնահանճարն գիտութեան, պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութեան, պսակ պաշտելութեան Միոյնի նորոյ զարդարման, պսակ յոգնանկար յարկից եօթանց փայլատակման, պսակ առաջնորդական վերնոցն ազգակցութեան, պսակ անբծութեան շաւղացն արդարութեան։

ԻԴ. Արդ ամենեցուն վերակարգելոց թուոցս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին զ.քեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս նորաստեղծականն Ադամայ. որոց անհամար և անթիւ ազանց ամրական և պահպանական պարիսպ կառուցար։ Քանզի յարժանահայց և յամենազոր քոյ բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ մնամք 'ի հաստատութեան, խնամեալք և հանդուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ աստուածածնիդ։ Պատուար պճնայօրէն 'ի զանազան մաքրազարդ ականց յարմարեալ. պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմողացն հինից. պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց. պատուար ամենահրաշ ըստ Եզեկիէլի, որ աղխեալ ըզմուտ քո ճշգրտապատումն գրեաց. պատուար շրջապարիսպ ըստ Դաւթայ, որոյ հիմն անշարժութեան 'ի բարձրելոյն հաստատեցաւ. պատուար ամրակառոյց

քաղաքին վերնոյ ըստ Պօղոսի, որում զհանուրս բնակի-չըս արարեր։ Քանզի զաստուած ծնար 'ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր Սիովնի որդիս արարեր վերնումն հոգևորի։ Որոյ աղագաւ օրհնեցաւ արդ արդ քո կուսութիւն 'ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնարան և տաճար հօր խսկակցին։

ԻԵ. Որով արդարապէս 'ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութեան. մաքրութիւն կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութեան հաստատութեան եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին աստուծոյ։ Ո՛ քեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պսակեմք 'ի նուիրեալ տեղիս սրբութեան քում տաճարի, և 'ի թևս պահպանութեան լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս մեր 'ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւատամք ապրել։ Արդ աղաչեմք ընկալ զերգաբան օրհնութիւն մերումըս լեզուի. և հաճեալ տացես սմա զձիրս շնորհայ Սիովնի և Բեթղեհէմի։ Ուստի արժանացուք ընդունել մասն փրկութեան յաւուր գալստեան մեծի յայտնութեան փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն աստուծոյ, տեառն Յիսուսի։ Եւ իբր զպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց՝ 'ի սոյն կամարի գեղապաճնելոյ զքեզ պատուեսցուք, անժամանակ էին բարձրացեալ ծնող։

Նորին վերստին 'ի վերայ գրոյ անուան իւրոյ։

ԳԵՐԱԶԱՆՑ չափոյ կշռման երկրային բնութեան, և քրովբէականն նախադասութեան եղեալ վեհական. որբուհի պայծառ առագաստ փրկչին Քրիստոսի, և նորուն իսկ տեսաւորիչ վասն մեր· ծունր կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի· հայցեա վասն մեր առ ծնեալդ 'ի քէն աստուած 'ի մարմնի։

Որպէս յոգնաթիւ մասանց բերկրութիւն, ազգաց և ազանց արմատդ օրհնութեան· 'ի ծագմանէ փառացն երկնայնոյ անստուեր նշոյլ տարփալի շողեալ 'ի սուրբինս տեղի· անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ 'ի մահապարտեացն զերծո զառ քեզ ապաստան ծառայքս քումդ որդւոյ։

Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր, Մարիամ առիթ տեսութե՛ նոցին զանզննելին որդւոյն կերպարան։ Սատի տեսին զանկէտն սկսեալ, և երանեցին զարմատդ և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենաց, և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութիւն։

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զիմանալին փարթամ մեծութիւն· որ սլացեալ հասեր 'ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման՝ մարմին, յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ տեառնդ կենակից սուրբդ տիրամայր. արգահատեա միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք 'ի վիհս ներքին։

Սնող հրճուանաց անթիւ խրախութեանց աստուածային անկէտն խոստմանց 'ի բուրաստանս անդաստանաց տիրական տնկոյն, որոյ ստեղունք շառաւիղացն երկրային հնարից գերազանց· անդր մուծցես զքո դա-

ւանողքս, սուրբ տիրուհի մայրդ Յիսուսի։

Րոտեմք 'ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի. միայն երանեալ և բարեբանեալ, հօրն հաճութեամբ հովանաւորեալ. որդւոյն ծնող, հոգւոյն վերընդունող, Երրորդութեան փառացն տարող. վերանկարեա զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարգացեալս անուն 'ի գիր մատենի վերնում դպրոցին։ Եւ զերգագրութիւն սակաւամասնեայ այսր գովեստի, արժան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի. ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ, և զգայական շնչոյս զպատկեր բանիս։ Օ է իբր 'ի գոյից երկուց զուգելոց 'ի մի խառնութիւն միոյ կենդանւոյ, միշտ փառաւորեացիս դու սոյին օրհնութեամբ, որպէս անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութեամբ։ Թերեւս 'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին։ Եւ գտցուք արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոյն հաստատութեամբ հանդիպել և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան. փառաւորել ընդ քեզ և ընդ քոյսն յանդիման դիմաց պաշտելի և պատկերի քում աստուածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ զէութիւն անքակ և անքննելի սուրբ Երրորդութեանն 'ի միում տէրութեան և արարչութեան։ Որում վայելչական պատիւ, և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Համառօտութիւն աղօթից եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ գօշի խստակրօն ճգնաւորի և բանիբուն հռետորի՝ ասացեալ ՚ի սուրբ Պատարագին։

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս բան հօր և կերպարան, կենդանի և կենդանարար, յոյս և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ։ Որ շնորհես առաւել քան զարժանն, և տաս խնդրողացն զպիտոյս կարեաց։ Զի ոչ միայն արարեր և ստացար ՚ի վերստին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քոյ, այլև միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան։ Վասն որոյ մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո, և յամենայն երկրի ցուցաւ փառք քո։ Նա այնքան գերազանցեաց պարգևաց քոց նշանակ, մինչ զի ոչ միայն մարդկային հիանան ազգք, այլև երկնային զօրքն և առաւել մերձականքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւ ասելով, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց. զորս և ուսեալ մեր՝ երգեմք ՚ի ժամ անմահիդ զենման՝ կցորդելով անմարմնոցն երջանկաց։

Զի զառ մեզ զանճառն տեսանելով զխորհուրդ՝ զօրինակ մահուն ճշմարտի, ընդ մեր եղեալ՝ մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան։ Զի եթէ զօրինակն անգիտանան գովասանութեան՝ միայն զսուրբն կարդան զանուն, ուստի զերեսն ծածկեն և զոտն. մեք զո՞ր ասասցուք զօրհնութիւն և զգովութիւն, բայց միայն զքեզ օրհնեսցուք սարսափմամբ, և հաւատովք մերձեսցուք յանտեսանելիդ և ՚ի տեսանելիդ անճառութիւն։

Օրհնեմք զհայր՝ զառաքող փրկողիդ։

Օրհնեմք և զհոգիդ սուրբ՝ զկատարիչ և զլրիչ ընդգալոյն օրինակի։

Օրհնեմք զանխմանալի զքո խոնարհութիւնդ։

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամսդ։

Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո սուրբ շնորհեցեր մեզ 'ի քաւութիւն։

Օրհնեմք՝ որ հուր աստուածութեան քո՝ ոչ կիզու զբնութիւնս հողեղէնս։

Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամենայն, այլ տանին նիւթական և նուաստական եկեղեցիք։

Օրհնեմք՝ որ նստիս 'ի քերովբէս, և բազմիս 'ի սեղան սրբութեան։

Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին՝ և իննեակ դասք անմարմնոցն, բառնան մատունք քահանայից։

Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելեօք մատուցանէր 'ի բերան մարգարէին. իսկ աստ ձեռամբ բաշխիս հողեղինաց և մատամբք մատչիս ճաշակողաց։

Օրհնեմք՝ որ ոչ գարշիս յաղտեղութենէ մարմնական կրից, այլ մաքրես սրբութեամբ քով։

Օրհնեմք՝ որ զպէսպէս յանցանս անտես առնես զազգի մարդկան՝ որք հաւատով ապաւինին 'ի քեզ։

Օրհնեմք՝ որ միջնորդութեամբ կենարար մարմնոյ և արեան քոյ՝ հաշտեցուցանես զհայր քո ընդ օտարացեալս մեզ, տալով վճիռ անստելի. ոչ ուտողացն և ոչ ըմպողացն ոչ ունել կեանս, և ուտողացն և ըմպողացն զընակիլն 'ի քեզ, և զքեզ 'ի նոսա։

Քանզի տիրապէս մարմին և արիւն քո սուրբ կատարեալ արձակումն է և ազատութիւն 'ի կապանաց մեղաց։

Զի եթէ սուրբք ամենայն առ հասարակ յիշին, և քոյոց բարեաց կարօտին, զիա՞րդ և ոչ ես անկեալս 'ի շնորհաց և ունայնս 'ի բարեգործութեանց։

Զի եթէ այժմ ոչ ողորմիս, յորում բացեալ ես ըզդուռն անձառ ձրից, երբ տայցես յայլում ժամու. քանզի անվրէպ յայսմ ժամու է առնուլ 'ի քէն ըզխնդիրս, որպէս և սուրբք 'ի քաղցրութեան ժամանակի։

Ո՜ի եթէ յորժամ ընդհանուր երկինք և երկիր առ հասարակ բարեխօսեն՝ ոչ լսես , այլ յորո՞ւմ ժամու զամենեսեան ժողովեցից։

Ո՜ի եթէ մինչ հիանան անմարմնոցն դասք ընդ առատութիւն պարգևաց քոց, և զօրհնութիւնս մատուցանեն , ոչ առնուս. յորժամ 'ի կշիռ դնես , զի՞արդ ընկալայց։

Ո՜ի եթէ յորժամ դասք հրանիւթիցն գոչեն ասելով ողորմեա քո արարածոց , մասն ինչ ոչ տացի․ ընդ ո՞րոց այլոց առից։

Աղաչեմ զքեզ տէր , մի՛ ունայն դարձուցաներ զիս յամենասուրբ երեսաց քոց , անչափ պարգևացդ իշխան։

Յորժամ յարգեալ է իբրև զգեստ 'ի լրութենէ ծովու մեծիդ պարգևք, ուստի և ինձ կաթիլ մի բաւական է․ զի սակաւն քո անչափ ունի մեծութիւն , և առաւելեալ է քան զխորս ծովու։

Ո՜ի եթէ 'ի ծագիլ լուսոյ արեգականդ ոչ լուսաւորիմ, 'ի գիշերի ո՞րպէս պայծառացայց։

Եւ եթէ ձրի բժիշկդ մերձ ես՝ և զդեղդ կենաց ոչ տացես, այլ ո՞ւր գտից բժիշկ զի բժշկեցայց։

Եթէ յարուցչիդ պատահեալ մեռանիմ , և ո՞ զիս յարուսցէ։

Եթէ բնութեամբ ձոխացուցիչդ զաղքատութիւնս ոչ բարձցես, առ այլ ո՞վ երթայց 'ի փարթամաց։

Ընդ խաղաղութեան աշխարհիս զոր շնորհես , տուր և ինձ խաղաղութիւն յամբոխից կրից ․ ընդ հաստատութեան եկեղեցւոյ՝ հաստատեա և զշարժեալ անձինս։

Ընդ քահանայապետաց և քահանայից՝ սարկաւագաց և դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութեան , զօրութեամբ քո և զիս ընդ հովանեաւ քով ամրացո։

Ընդ թագաւորաց և իշխանաց՝ զօրավարաց և զօրա-

կանաց յաղթող և զիս 'ի վերայ աներևոյթ թշնամւոյն արասցես։

Ընդ ննջեցելոյն հաւատացելոց յիշեա և զիս տէր ըզմեռեալս մեղօք․ զորս 'ի խորոցն հաներ անդնդոց, ընդ նոսին հան և զիս 'ի չարին բանդէ՝ միջնորդութեամբ կենարար մարմնոյ քոյ և արեան, արժանապէս գոհանալ զողորմութենէ քումմէ։

Գոհանամ զքէն տէր՝ որ արժանի արարեր զիս տեսլեան սուրբ խորհրդոյ քոյ։

Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուայց զօրհնութեան։

Գոհանամ՝ զի զաստուածախօսութիւն քոյ լսել արժանացայ։

Գոհանամ՝ որ զհոգիս յուսով լցեր, և զսիրտս ուրախութեամբ։

Զո՞ր օրհնութիւն կամ գոհութիւն քեզ մատուցանեմ՝ աստուած իմ Յիսուս, զի արժանի եղէ կենաց հացիդ և անմահարար բաժակիդ։

Գիտեմ՝ զի չար է ինձ մերձենալն չարեօք, և տարակուսանք հեռանալն․ մանաւանդ զի անսուտ սահմանեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում։

Ահա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ, և քեզ է յարուցանելն․ զի փառաւորեցից զքեզ ընդ հօր քում ամենազօրի, և ընդ ամենասուրբ հոգւոյդ ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս․ ամէն։

Ամենակալ ամենախնամ աստուած՝ յամենայնի օրհնեալ․ որ յամենայնի ես և ամենեցուն անհաս՝ և բովանդակեալ պահես զամենայն արարածս՝ զհոգեղէնս և զհողեղէնս, զաննիւթս և զնիւթեղէնս․ զի մահկանացուաց կեանք ես և անմահութեան յարամնացութիւն։ Բաց զդուռն ողորմութեան քոյ՝ գթած, և ծագեա լոյս խաւարելոյս։ Զծանրացեալս բեռամբք

մեղաց՝ Թեթեւացո. զսեւացեալս աղտեղեալ կրիւք՝ ըսպիտակացո. զսառուցեալս յաստուածային սիրոյդ՝ ջերմացո. զմթացեալս անասնական սահեցմամբ՝ զգաստացո։ Զըմբռնեալս 'ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա. զմանրեալս 'ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենագործեա. և զհոգիս խաւարեալ մեղօք՝ անճառ լուսով քով լուսաւորեա, և միշտ առ քեզ հայեցո։ Զգերեալ խորհուրդս 'ի գերողէն՝ առ քեզ դարձո. զըմբռնեալ կամս 'ի խարդախողէն՝ զերծո. զյօժարութիւն՝ քաղցրութեամբ 'ի քեզ միացո. զբանական մասն հոգւոյս՝ խոհեմացո. զսրտմտականն արիացո. զցանկականն ողջախոհացո, և առ քեզ դարձո. զերիս մասունս՝ արդարութեամբ ամրացո. զնսեմացեալ միտս՝ պայծառացո։

Զներտրամադրեալ բնութիւն բանիս՝ հոգւով քո խառնեա. զարտաբերեալս յօդուտ լողաց՝ շնորհօք քո ներկեա. զզգայարանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո. զզգայութիւն պատուհանացս՝ պղդմամբ քո լցո։ Տեսանելեացս՝ ցոյց զողորմութիւն քո. լսելեացս՝ լսելի արա զձայն քո. ճաշակելեացս՝ քաղցրասցին բանք քո. հոտոտելեացս՝ բուրեսցի հոտ կենաց քոց, մինչ առ քեզ պաղատիլ և աղաչել և երկրպագանել՝ բաղխմամբ կրծից, տարածմամբ ձեռաց, տատանմամբ մատանց, կականմամբ ձայնից, հառաչմամբ սրտից, հեծութեամբ ողբոց, արտասուօք աչաց, յայտնութեամբ գաղտնեաց, խոստովանութեամբ մեղանաց, և 'ի քէն ընդունիլ թողութիւն սխալանաց, քաւութիւն յանցանաց, հանգիստ փառաց, և զուարճանալ տեսութեամբ աչաց, և վայելել 'ի փառս երրեակ անձնաւորութեանդ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Տէր Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան 'ի սուրբ Գրիգոր Նարեկացին։

ԱՐՓԻԱԿԱՆ լոյս երկնային, Յիսուս Քրիստոս հօր միածին, լցեր շնորհիւ քո անքննին, զսուրբ Գրիգոր Նարեկացին։

Բղխեալ աղբիւր անհիւթական, անճառ հոգւովդ աստուածական, մեղուցելոց լոյս փրկութեան, յանցաւորաց ազգի մարդկան։

Գանձ անսպառ անսպական, աննիւթ նիւթով շարադրական, զի որք առնուն փարթամանան, շահով երկնից արքայութեան։

Դեղ խոցելոց 'ի բանսարկուէն, և անջատումն 'ի չար ախտէն, մեզ օգնական լինի և զէն, ընդ դէմ այսոց նենգողէն։

Երանելի տէր սուրբ Գրիգոր, դուռն բացեր մեզ հոգևոր, ռահըս ցուցեր մտաց մոլոր, բանիւ քոյին արդիւնաւոր։

Զօրքայն երկնից աչօք տեսար, զհոգին աստուած սուրբ ընկալար, հօրըն լուսոյ ուռ կազմեցար, յորթըն Քրիստոս պատուաստեցար։

Էին հրովըն մաքրեցար, անտես բոցովըն վառեցար, ընդ աստուծոյ խօսակցեցար, մեղուցելոց ցուցեր դուճար։

Ընտրեալ ծաղիկս 'ի սուրբ գրոց, հաւաքեցեր 'ի մի շարոց, դեղ կազմեցեր հիւանդ հոգւոց, պարգևեցեր ձիր մարդկայնոց։

Թախանձանաց բանս լալագին, բարբառեցար դու 'ի խորին, խորտակեցեր զժանիս չարին, զդիւաց գնդին Լէգէոնին։

Ժամանակաւ յետին ցուցար, քան զառաջինսն պատուեցար, յերեկոյիս լոյս ծագեցար, քան զմիջօրեայ պայծառացար։

Իմաստութեամբ քո անքննին , անբիծ վարուքդ իսկ 'ի մարմին , եղեր պարծանք տանս արամին , Ասքանազեան Հայկ Արմենին։

Լուսաւորչին համանըման , Գրիգորիոս արթուն անուան , զի որք նովաւ 'ի լոյս դարձան , եւ առաւել քեւ ցնծացան։

Խաչեալ մարմնով ընդ Քրիստոսի , զօրհանապազ միշտ յաղօթի , Գրիգորիոս լոյս գերարփի , լուսաւորիչ մեզ 'ի հոգի։

Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար , անմահութեան հոտ բուրեցար , Գրիգորիոս ծառ ծաղկեցար , պըտուղ կենաց պարգեւեցար։

Կեանք մեռուցեալ մարդկան ցուցեր , յուսահատից յոյս կանգնեցեր , Գրիգորիոս բանս երգեցեր , յանցաւորաց կանոնս եդեր։

Հաղբըն չարին անխըզելի , որ ընդ մարդկան պատուտեսցի , Գրիգորիոս սուր երկսայրի , սուրբ աղօթիւքըդ խորտակի։

Ձայնիւ քոյին հըսկողական , սանդարամետքն ահիւ դողան , Գրիգորիոս դու աննման , հողանիւթեայ բնութեանս մարդկան։

Ղամբարափայլ ճաճանչ փառաց , 'ի գաւառին Ըռըշտունեաց , քան զարեգակն ընդ աստեղաց , նոյնպէս բան քո ընդ այլ կտակաց։

Ճըրագ եղեալ յաշտանակի , ըստ հրամանի տեառն Յիսուսի , Գրիգորիոս մարմնով յերկրի , հոգւով 'ի դասս հրեղէն գընդի։

Մշտահոսան հոգւոյն անձառ , յարմարեցեր բանիւ մեզ ճառ , Գրիգորիոս մըտօք պայծառ , փարատեցեր զմեղաց մառայլ։

Յանեղ լուսոյդ լոյս կոչեցար , յաշտանակի մարմնոյդ եդար , եկեղեցւոյ ջահ վառեցար , խաւար հոգւոց դու լուսարար։

Նախանձաւոր հարանց վարուց, ճգնաւորաց Նախնի
դասուց, Գրիգորիոս ցանկ խրատուց, բանս խօսեցար
վասըն նոցունց։

Շաւիղք բարունական, առեր շնորհս և գաւազան,
քարոզ լինիլ որդւոց մարդկան, կոխելով զօձն անդըն-
դական։

Ուրախանան յաւէժական, ազգըս Հայոց Թորգոմա-
կան, յորժամ լսեն զքո խօսեալ բան, որ դեղ կենաց
է փրկութեան։

Զարին յաղթեմք քոյին երգով, և զնա ուժգին խոցո-
տելով, զըսպիս մեղաց մեր մաքրելով, քաղցրանուագ
այսու դեղով։

Պարուց վերնոցըն հրակերպեան, եղեր մարմնով համա-
նըման, Գրիգորիոս կանգնեալ արձան, Ռըշտունեաց
ծովն յանդիման։

Ջնջեալ 'ի մէնջ զաղտըս մեղաց, սուրբ աղօթիւք քո
յոտընկաց, Գրիգորիոս տեղ պարծանաց, ակըն լուսոյ
Հայաստանեայց։

Ուսումն կենաց մեզ կազմեցեր, առատապէս մեզ բաշ-
խեցեր, Գրիգորիոս կոչ արարեր, զքաղցեալս հոգւով
կերակրեցեր։

Սուրբ և մաքուր բանից քոյին, այլասեռից ազգ ցան-
կային, եռափափագ սիրով եկին, և գծագրեալ առեալ
գնացին։

Սըշտացելոց դու մխիթար, և նեղելոց անդորրարար,
տէր սուրբ Գրիգոր հայր բարերար, այսահարից դեղ
և հընար։

Տաղանդ շնորհաց զոր ընկալար, բազմապատիկ զայն
շահեցար, Գրիգորիոս կատարեալ այր, աստուածու-
թեանն կամարար։

Ռամից ստեղծչին դու խօսակից, ճգնաւորաց աղօթա-
կից, վարդապետաց հանուրց վարժից, Գրիգորիոս պետ
բաղձալից։

Ցնծան մանկունք սուրբ հաւատոյ, ընդ լուսակիր ա-ղօթըս քո, Գրիգորիոս դու սիւն լուսոյ, Հայաստան-եայց եկեղեցւոյ։

Հիւանդ հոգւոցս մարդկային, բարեխօսեա տեառն Յիսուսին, սուրբ աղօթից քոց կցորդին, բանք տիրա-մօր աստուածածնին։

Փայտն կենաց սրբոյ խաչին, և ձայն սրբոյ Կարապե-տին, Ստեփաննոսին՝ սուրբ Գրիգորին, յորդիս լուսոյ զմեզ ծնողին։

Քեզ Քրիստոս փառաբանեմք, ընդ Հօր Հոգւով եր-կրպագեմք, Երրորդութեանն փառս վերբերեմք, աստ-ուածութեամբ մի դաւանեմք։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Սուրբ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և զամենայն ախտս 'ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին 'ի պէս պէս ցաւս և 'ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս. և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք 'ի Գալիլեէ և 'ի Դեկապոլեայ և յԵրուսաղէմէ և 'ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

Եւ իբրև էջ 'ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, և ասէր, տէր եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր և հասոյց 'ի նա Յիսուս՝ և ասէ. կամիմ, սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա։

Եւ մտեալ 'ի կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և ասէր. տէր, մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ և բժշկեցից զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ. տէր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա բանիւ,

և բժշկեսցի մանուկն իմ։ Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս. ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ։ Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու՝ և ընդ Սահակայ՝ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից։ Իսկ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Իսկ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ, և որպէս հաւատացերդ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։ Իսկ եկեալ Յիսուս 'ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր զնոսա։ Իբրև եղև երեկոյ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսսն բանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեաց։ Զի լցցի բանն, որ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։ Իսկ իբրև անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք 'ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Իսկ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո Յիսուս որդի աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Իսկ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Իսկ դևքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։ Իսկ ասէ ցնոսա. երթայք, և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակըն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի ջուրսն։ Իսկ խոզարածքն փախեան, և երթեալ 'ի քաղաքն պատմե-

ցին զամենայն, եզիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի, իբրեւ տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ 'ի սահմանաց նոցա։

Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս, եւ եկն 'ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր 'ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։ Ո ի՞նչ դիւրին է. ասե՞լ՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել արի եւ շրջեաց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՝ առ զմահիճս քո՝ եւ երթ 'ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւոր առնէին զաստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ եւ ասէր. դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո 'ի վերայ նորա՝ եւ կեցցէ։ Յարեաւ Յիսուս՝ եւ գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա։ Քանզի ասէր 'ի միտս իւրում, թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նորա՝ փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ ետես զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ։ Իբրեւ եկն Յիսուս 'ի տուն իշխանին, եւ ետես զփողարսն եւ ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. 'ի բաց գնացէք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ

նորա, և յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին. ողորմեաց մեզ որդի Դաւթի։ Եւ իբրև եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. հաւատա՞յք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո, տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են՝ և մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս։

Եւ գնացեալ անտի Յիսուս եկն 'ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պա՞րտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնո-

սա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն զնա։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին. միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց։

Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա կին մի Քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեաց ինձ, տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. տէր, օգնեա ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ. այո, տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. ով կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս։ Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։

Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց, և ելեալ 'ի լեառն նստէր անդ։ Մատեան

առ նա ժողովուրդք բազումք որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյրս համերս միակողմանիս , և այլ բազումս . և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա։ Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին , և փառաւոր առնէին զաստուած Իսրայէլի։

Եւ իբրև եկն 'ի ժողովուրդն , մատեաւ այր մի՝ 'ի ծունր իջանէր և ասէր . տէր , ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ . բազում անգամ անկանի 'ի հուր՝ և երբեք 'ի ջուր։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ . ով ազգ անհաւատ և թիւր , մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ . ած զնա առ իս . և ածին զնա առ Յիսուս։ Եւ սաստեաց 'ի նա Յիսուս՝ և ել 'ի նմանէ դեւն, և բժըշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ։ Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս . մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ նա ասէ ցնոսա . վասն թերահաւատութեան ձերոյ։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասաջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի . և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք։

Եւ յելանելն նոցա յԵրիքովէ , գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն . իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն . ողորմեաց մեզ , Յիսուս , որդի Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն . և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին , տէր , ողորմեաց մեզ , որդի Դաւթի։ Ոտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ . զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա . տէր , զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ

Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա։

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

ՏԵՐԱՄԲ ՄԵՐՈՎ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ մտանեն ՚ի Կափառնաում, և իսկ և իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն։ Եւ էր ՚ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ դոյր ՚ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ։ Թո՛ղ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես սուրբդ աստուծոյ։ Սաստեաց ՚ի նա Յիսուս և ասէ, կարկեաց և ել ՚ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այսն պիղծ. և աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և ել ՚ի նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մինչև հեծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին նմա։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց։

Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն ՚ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբու և Յովհաննու հանդերձ։ Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։

Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պէս պէս ախտից, և դևս

բազումս եհան, և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոս է։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և որ ընդ նմայն էին։ Եւ իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. եկայք, երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դևս հանէր։ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ 'ի նա՝ և ասէ ցնա, կամիմ, սրբեաց։ Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ։ Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ, ցոյց զքեզ քահանային. և մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ ևս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց։

Եւ մտեալ դարձեալ 'ի Կափառնաում յետ աւուրց, լուր եղև եթէ 'ի տան է։ Եւ ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից։ Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս. և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի՝ որ

անդ նստէին. և խորհէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի աստուած։ Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին 'ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է. ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի, առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծըն. քեզ ասեմ, արի, առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զաստուած՝ և ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։

Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի, անց 'ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել. և նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա։

Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց 'ի ծովեզրն. և բազում ժողովուրդ 'ի Գալիլեացւոց երթային զհետ նորա. և 'ի Հրէաստանէ, և յԵրուսաղէմէ, և յայնկոյս Յորդանանու, և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ. բազում ժողովուրդ իբրև լսէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատ-

րաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի նեղեսցեն զնա։ Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ։ Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին. Թէ դու ես որդին աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա. վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ շղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև ետես զՅիսուս 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա։ Աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և ասէ, զի՞ կայ իմ և քո՝ Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յաստուած, մի տանջեր զիս։ Քանզի ասէր ցնա. ել այսդ պիղծ 'ի մարդոյ այտի։ Եւ հարցանէր ցնա՝ Թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. լէգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի արարեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն և ասեն. առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նոսա։ Եւ հրամայեաց նոցա. և իբրև ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զի՞նչ իցէ՝ որ գործեցաւն։ Գան

առ Յիսուս, և տեսանէին զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլէգէոնն, և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղև այսահարին, և զի՞նչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նոցա։ Եւ իբրև եմուտ նա 'ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա լիցի. և Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. երթ 'ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ Եւ չոգաւ՝ և սկսաւ քարոզել 'ի Դեկապօլիս, զոր ինչ արար նմա Յիսուս, և ամենեքին զարմանային։

Եւ իբրև անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն։ Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան զերկոտասան ամ. և յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։ Իբրև լուաւ զՅիսուսէ՝ եկն 'ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա. քանզի խորհէր 'ի միտ, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նորա, փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն, տեսանե՞ս զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես՝ թէ ո՞վ մերձեցաւ

՚ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քանզի գիտէր զինչ եղև նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։ Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց։

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ՚ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա։ Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ զեղբայրն Յակոբայ։ Գայ ՚ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս, և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ ՚ի ներքս՝ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա. տալիթա կումի, որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իբրև երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։

Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ։ Եւ իբրև ելին ՚ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. և ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր ՚ի գեօղս կամ ՚ի քաղաքս կամ յագարակս, ՚ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի

գոնէ 'ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն . և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

Եւ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի . և մտեալ 'ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել։ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ . եկն անկաւ առաջի նորա։ Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկ Ասորի յազգէ . և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա։ Եւ Յիսուս ասէ ցնա Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք . զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ Նա պատասխանի ետ և ասէ . տէր, և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Եւ ասէ ցնա . վասն այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ։ Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճս։

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի Դեկապօլիս։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր . և աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուք անդր . և կալաւ զլեզուէ նորա . հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ . Եփփաթայ՝ որ է բացիր։ Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա . և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն . և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին . և ևս քան զևս զարմանային և ասէին . զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համերց խօսել։

Գան 'ի Բեթսայիդա . և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա։ Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ 'ի վերայ նորա . և հարցանէր ցնա՝

թէ տեսանիցէ՞ ինչ։ Նայեցաւ՝ և ասէր․ տեսանեմ զմարդիկ՝ զի շրջին իբրև զծառս։ Դարձեալ եդ ձեռս ՚ի վերայ աչաց նորա՝ եբաց, և տեսանէր․ ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն։ Արձակեաց զնա ՚ի տուն իւր՝ և ասէ․ ՚ի շէնդ մի մտանիցես, այլ երթ ՚ի տուն քո․ և յորժամ ՚ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես ՚ի շինին։

Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ շուրջ ըզնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա։ Եւ եհարց զնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա։ Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն և ասէ․ վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա․ և փրփրէ՝ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի․ և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա։ Պատասխանի ետ նոցա և ասէ․ ո՜վ ազգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ առ ձեզ․ մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ․ ածէք զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա․ իբրև ետես զնա այսն, վաղվաղակի շարժլեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր։ Եհարց ցհայր նորա և ասէ․ քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղև դմա։ Եւ նա ասէ․ ՚ի մանկութենէ․ բազում անգամ ՚ի հուր արկանէ զդա և ՚ի ջուր՝ զի կորուսցէ․ արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթացեալ ՚ի վերայ մեր։ Եւ Յիսուս ասէ ցնա․ ասացեր թէ կարող ես․ ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն։ Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ․ հաւատամ, տէր՝ օգնեա անհաւատութեանս իմում։ Իբրև ետես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն ՚ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ․ համրդ և խուլ այս՝ ես տամ քեզ հրաման, ել ՚ի դմանէ, և այլ եւս մի մտանիցես ՚ի դա։ Եւ աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց զնա, և ել․ և եղև պատանեակն

իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ։ Եւ Յիսուս կալեալ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, և կանգնեցաւ։ Եւ իբրև եմուտ նա 'ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։

Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի։ Իբրև լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեաց ինձ։ Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր. որդի Դաւթի ողորմեաց ինձ։ Օ տեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեաց, արի՝ կոչէ զքեզ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. րաբբունի՝ զի բացայց։ Եւ Յիսուս ասէ ցնա, երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա 'ի ճանապարհին։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթուն։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա։ Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ, ասէ. Թու-լացո, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կո-

րուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց ՚ի նա Յիսուս և ասէ. պապանձեաց և ել ՚ի դմանէ. զգետնեաց զնա դեւն ՚ի միջի անդ՝ և ել ՚ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս և ասէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

Եւ յարուցեալ ՚ի ժողովրդենէ անտի, եմուտ ՚ի տուն Սիմովնի։ Զոքանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ, և աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա՝ սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք ՚ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա։ Ելանէին դեւք ՚ի բազմաց, աղաղակէին և ասէին. եթէ դու ես որդի Աստուծոյ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոս է։

Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրև ետես զՅիսուս՝ անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութին։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել, այլ թէ երթ, ցոյց զանձն քո քահանային. և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա։ Եւ յորդէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկել ՚ի հիւանդութեանց իւրեանց։ Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս։

Եւ եղև ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որ ժողով-

եալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաստանի և Երուսաղէմի. և զօրութիւն տեառն էր 'ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս՝ և դնել առաջի նորա։ Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս և 'ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի Յիսուսի։ Եւ տեսեալ զհաւատսըն նոցա՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն, և ասեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն աստուած։ Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ առ ժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրև յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց 'ի տուն իւր, և փառաւոր առնէր զաստուած։ Զարմանք կալան զամենեսեան, և փառաւոր առնէին զաստուած. լի եղեն ահիւ, և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշանս։

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. արի անց 'ի մէնջ. և նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա Յիսուս. հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի մի ապրեցուցանե՞լ թէ կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք

զայրագին՝ ասէ ցնա․ ձգեա զձեռն քո․ և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։ Եւ նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի։

Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափարակ․ և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղէմէ՝ և յայնմ կողմանէ՝ և'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի․ որ եկին լսել 'ի նմանէ՝ և բժշկել 'ի հիւանդութենէ իւրեանց․ և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա, զի զօրութիւն բազում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։

Եւ իբրև կատարեաց զամենայն զբանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառնաում։ Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանել, որ էր նմա պատուական։ Եւ իբրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն 'ի հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ և ապրեցուսցէ զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնաստէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ Յիսուս գնաց ընդ նոսա․ իբրև ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա․ տէր, մի ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես։ Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի՝ առ քեզ գալոյ․ այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ․ քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ․ ունիմ ընդ ինև զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ․ և այլում թէ եկ, և գայ․ և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ։ Եւ իբրև լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա՝ և ասէ․ ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յԻսրայէլի

այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատգամա
ւորքն 'ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, որում
անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա
և ժողովուրդք բազում։ Իբրև մերձ եղեն 'ի դուռն
քաղաքին, և ահա եհանէր մեռեալ մի՝ որդի միամօր
մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղա-
քին էր ընդ նմա։ Իբրև ետես զնա տէր՝ գթացաւ 'ի
նա և ասէ. մի լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դա-
գաղն, և որք բարձեալն տանէին՝ զտեղի առին. և
ասէ, պատանի դու՝ քեզ ասեմ՝ արի։ Կանգնեցաւ և
նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր
իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին
զաստուած՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարուց-
եալ է 'ի միջի մերում, և եթէ այց արար աստուած
ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել զրոյցս ընդ
այս ամենայն Հրէաստան վասն նորա. և ընդ ամենայն
կողմանս աշխարհին։

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն
ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս
յաշակերտացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց առ տէր
և ասէ. դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։
Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս Մկրտիչ ա-
ռաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ, դո՞ւ ես որ գալոցն ես՝
եթէ այլում ակն կալցուք։ Եւ 'ի նմին ժամու բժշկեաց
զբազումս 'ի հիւանդութեանց և 'ի հարուածոց և յայ-
սոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։
Պատասխանի ետ նոցա և ասէ. երթայք պատմեցէք
Յովհաննու՝ զոր տեսիք և լուայք. զի կոյրք տեսանեն,
և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք
յառնեն, աղքատք աւետարանին. և երանի իցէ՝ որ ոչ
գայթագղեսցի յիս։

Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց. որ է

յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք, պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դևք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր 'ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն յանապատ։ Եհարց ցնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ, Լեգէոն. զի դևք բազումք մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա երթալ յանդունդս։ Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն, և աղաչեցին զնա զի հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա. և հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն. և դիմեաց երամակն 'ի գահէ անտի 'ի ծովակն՝ և հեղձաւ։ Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակսն։ Եւ իբրև ելին տեսանել ըզգործն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դևքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի, և երկեան։ Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զի՞արդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ 'ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դևքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ և ասէ. դարձ 'ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ արար քեզ աստուած. գնաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։

Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անունն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ։ Մ՝ատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա. և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս։ Իբրեւ ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմա էին. Վարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և թէ ո՞րպէս բժշկեցաւ առ ժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա՝ և ասէ. մի երկնչիր, բայց միայն հաւատա՝ և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։ Լային ամենեքեան՝ և կոծէին զնա։ Եւ նա ասէ. մի լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և

ասէ․ արի, կաց մանուկ դու։ Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի․ և հրամայեաց տալ նմա ուտել․ և զարմացան ծնողքն նորա։ Եւ նա պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեն։

Եւ եղև ’ի վաղիւն մինչ իջանէին նոքա ’ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի ’ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ․ Վարդապետ, աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա այս հարկանի ’ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ’ի նմանէ խորտակեալ զնա․ և աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ոչ կարացին։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ․ Ո՛վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղեց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ․ մատո այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն՝ և շարժլեաց։ Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն․ և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան ’ի վերայ մեծամեծացն աստուծոյ․ և ’ի զարմանալ ամենեցուն ’ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր․ դիք դուք ’ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ․ զի որդի մարդոյ մատնելոց է ’ի ձեռս մարդկան։

Եւ հանէր դև մի համր․ և եղև յելանել դևին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ամենայն ժողովուրդքն։ Եւ ոմանք ’ի նոցանէ ասեն․ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եւ այլք փորձէին՝ և նշան յերկնից խնդրէին ’ի նմանէ։ Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա․ ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։ Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա․ զի ասէք զինէն եթէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ

զդեւս, որդիքն ձեր յո՞վ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք։ Իսկ եթէ մատամբ աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն աստուծոյ։ Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ ըզտուն իւր, 'ի խաղաղութեան են ինչք նորա։ Բայց եթէ հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։ Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն 'ի տուն իմ ուստի ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեաց զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ասէ. նա երանի այնոցիկ է, որ լսեն զբանն աստուծոյ, և առնեն։

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթս։ Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն. և էր կարկամեալ, և ոչ կարէր ամենևին 'ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա. կին դու՝ արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն, և առ ժամայն ուղղեցաւ, և փառաւոր առնէր զաստուած։ Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէ՞ր 'ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու։ Պատասխանի ետ նմա տէր՝ և ասէ. կեղծաւորք, իւրաքանչիւրոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ՝ և տանի տայ ջուր։ Իսկ այս՝ դուստր Աբրահա-

մու էր․ զոր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ, ո՞չ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Եւ զայս իբրեւ ասէր, յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա․ եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանցն որ գործէին 'ի նմանէ։

Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց, եւ նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր ումն էր անդ ջրգողեալ առաջի նորա։ Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցօրինաւորսն եւ ցփարիսեցիս․ եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել։ Եւ նոքա լուռ եղեն․ եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ արձակեաց։ Եւ ասէ ցնոսա․ ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր, եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

Եւ եղեւ մինչ երթայր նա յԵրուսաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր 'ի դեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին 'ի հեռաստանէ, բարձին զձայնս՝ եւ ասեն․ Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ։ Եւ իբրեւ ետես զնոսա, ասէ ցնոսա․ երթայք ցուցէք զանձինս քահանայիցն․ եւ եղեւ իբրեւ գնացին, առժամայն սրբեցան։ Մ՝ի ումն 'ի նոցանէ իբրեւ ետես՝ եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զաստուած․ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, եւ գոհանայր զնմանէ․ եւ ինքն էր Սամարացի։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ․ ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝ ինունքն ո՞ւր են։ Օ ի ոչ գտան դառնալ տալ փառս աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։ Եւ ասէ ցնա․ արի, գնա․ զի հաւատք քո կեցուցին զքեզ։

Եւ եղեւ 'ի մտանելն նորա յԵրիքով, կոյր ումն նստէր

առ Ճանապարհաւն մուրացիկ։ Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց եւ ասէ. Յիսուս, որդի Դաւթի՝ ողորմեա ինձ։ Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. եւ նա եւս առաւել աղաղակէր, որդի Դաւթի, ողորմեա ինձ։ Զտեղի էառ Յիսուս, եւ հրամայեաց ածել զնա առ ինք. եւ իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա եւ ասէ, զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ. եւ նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ՝ եւ տեսից։ Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առժամայն ետես, երթայր զհետ նորա՝ եւ փառաւոր առնէր զաստուած. եւ ամենայն ժողովրդեանն տեսեալ, տայր օրհնութիւն աստուծոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յօհաննու։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց ՚ի Գալիլեայ։ Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Իսկ յորժամ եկն նա ՚ի Գալիլեայ, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ ՚ի տօնին. քանզի եւ նոքա եկեալ էին ՚ի տօնն։ Եկն դարձեալ ՚ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար ըզջուրն գինի. եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի Կափառնաում։ Նա իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեայ. եկն առ նա՝ եւ աղաչէր, զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ՚ի մեռանել։ Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։

Ասէ ցնա Թագաւորազն. տէր, էջ մինչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո կենդանի է. և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրըն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեայ։

Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրուսաղէմ 'ի Պրոպատիկէ աւազանին. որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդայ. հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում։ Զնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա. կամի՞ս ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն. տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս. արի, առ զմահիճս քո՝ և գնա։ Եւ ողջացաւ այրն, և յարեաւ՝ եառ զմահիճս իւր՝ և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրէայքն ցբժշկեալն. շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա և ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ զմահիճս քո՝ և

զնա։ Հարցին ցնա և ասեն. ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, առ զմահիճս քո՝ և շրջեաց։ Իսկ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի։ Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ՚ի տաճարին, և ասէ ցնա. ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մեղանչեր՝ զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն՝ և պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զիս։ Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրէայքն, զի զայն առնէր ՚ի շաբաթու։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլև հայր իւր կոչէր զաստուած, և հաւասար առնէր զանձն աստուծոյ։

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ՚ի ծնէ. և հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն. ռաբբի, ո՞յր վնաս է, սորա՞՝ թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս. ոչ դորա վնաս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն աստուծոյ ՚ի դմա։ Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։ Զայս իբրև ասաց, եթուք ՚ի գետին՝ և արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին։ Եւ ասէ ցնա. երթ, լուա յաւազանին Սելովմայ. որ թարգմանի առաքեալ. չոգաւ լուացաւ. եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. ո՞չ սա էր՝ որ նստէրն և մուրանայր. կէսքն ասէին. նա է։ Այլքն ասէին. ոչ՝ այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես եմ։ Ասեն ցնա. իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա ետ պատասխանի. այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. երթ ՚ի Սելովամ, և լուայ. չոքայ լուացայ՝ և տեսանեմ։ Ասեն ցնա. ո՞ւր է նա. ասէ

ցնա. ոչ գիտեմ։ Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն
կոյրն էր։ Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յս. և
եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փա-
րիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ ցնոսա.
կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց, և լուացայ՝ և տեսանեմ։
Ասեն ոմանք 'ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յաստուծոյ,
զի զշաբաթս ոչ պահէ։ Այլք ասէին. իսկ զիա՞րդ կարէ
մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել։ Եւ էին հերձ-
ուածք 'ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞
ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ
մարգարէ է։ Եւ ոչ հաւատային Հրէայքն զնմանէ՝ եթէ
կոյր էր՝ և բացաւ. մինչև կոչեցին զծնողս բացելոյն.
հարցին ցնոսա և ասեն՝ սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն
ասէիք, եթէ կոյր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ։ Պա-
տասխանի ետուն նոցա ծնողքն նորա՝ և ասեն. գի-
տեմք զի սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. բայց զի-
արդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ՝ ո՞ եբաց
զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք, ինք-
նին 'ի չափ հասեալ է. ինքն իսկ խօսեսցի վասն իւր։
Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին 'ի Հրէից.
քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք խոստովա-
նեսցի զնա Քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն։
Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, թէ ինքնին 'ի
չափ հասեալ է, ցնա իսկ հարցէք։ Դարձեալ կրկին
անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր, և ասեն ցնա.
տուր փառս աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն մե-
ղաւոր է։ Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գի-
տեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ։
Դարձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ, զիա՞րդ եբաց
զաչս քո։ Պատասխանի ետ նոցա. այժմ ասացի ձեզ՝ և
ոչ լուայք. զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ և դո՞ւք
կամիք աշակերտել նմա։ Նոքա հայհոյէին զնա՝ և ա-
սէին. դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսէսի աշակերտ։

եմք։ Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի իցէ։ Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա. այդ իսկ են սքանչելիք. զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ, եւ զիմ զաչս եբաց։ Գիտեմք զի աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ եւ զկամս նորա առնիցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ ոչ յաստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին, եւ դու վարդապետ լինիս մեր։ Եւ հանին զնա արտաքս։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս, եւ իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. դու հաւատա՞ս յորդի աստուծոյ։ Նա պատասխանի ետ եւ ասէ. տէր, ո՞վ է՝ զի հաւատացից ՚ի նա։ Ասէ ցնա Յիսուս. եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։ Եւ նա ասէ. հաւատամ, տէր, եւ երկիրեպագ նմա։

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԽՐԹԻՆ ԲԱՌԻՑ ԻՆՉ ՄԱՏԵՆԻՍ

Ադդոմ։ Ջաքարիայ մըճըրէի պապուն անուն է։ ՂԳ · 8։
Ադոնայի տէր։ Որ աստուծոյ կըսուի · Թանըրը։ ԼԴ · 8։
Ազատազնեայ։ Քիչիզատէ։ ՁԱ · 3։
Ազդարան։ խապար տրուած տեղ · ԾԹ · 2։ կամ խա-
պար տուող գործիք, որ է՝ բերան, կամ լեզու։ ՀԳ · 3։
Ալէլուք։ Օրհնութիւնք, գովասանք · մէտհ։ ՂԳ · 24։
Ալէտանջ հողմ։ Տալղա հանող հով։ ԾԴ · 3։
Ալփափետք։ Այբբենին շարքը։ ՂԳ · 22։
Ախտարծարծ։ Ախտը շարժող · մարազ թէ փրէտճի։ Կ · 4։
Ածանցական։ Անցաւոր, թէզմը անցնող։ ՀԴ · 3։
Ակատ։ Նաւու թէքնէ, կամ փիեատէ խայեխ։ ԿԳ · 2։
Ակնայայրատ։ Աչքը մըտըռող։ ԽԸ · 4։
Ակումբ։ Ճիւմհիւռ, սիւրիւ։ ԻՋ · 1։
Աղարտեալ։ Աւրած, խարապ եղած։ Ե · 1։ և ԻԵ · 2։
Աղաւաղել։ Աւրել, փճացընել, եօխ ընել։ Բ · 3։ և ԿԷ · 2։
Աղէյարմար։ Քիրիշով տիւզէնլէնմիշ եղած։ ՂԲ · 8։
Աղիւսարկուճ։ Քէրփիճճիունի, թուղլաճիունի։ ՀԵ · 12։
Աղխեալ ազդարան։ Կղպած գոցուած բերան, կամ
լեզու։ ՀԳ · 2։
Աղորի ըմբոշխնելի։ Տէյիրմէն՝ էզմիշ ընելու, որ է ծա-
մելու ակռաներ։ ԿԳ · 2։
Աղու աղաւնի։ Մազլըմ կէօվէրճին։ Բ · 1։
Աղուական։ Անուշիկ · միլայիմ։ ԿՋ · 4։
Աղուականախտ։ Թաթլը մարազ, որ է ցանկութիւն։ ՂԱ · 3։
Աղջութիւն։ Մթութիւն․ քարա տուման։ Ջ · 3։
Աղտաղտին։ Աղի լեղի · աճը զէհիր։ ԼԹ · 2։
Աղօթկեր։ Աղօթող, աղօթաւոր։ ԾԱ · 5։
Աղօտանալ։ Մթննալ, 'ի լուսոյ պակասիլ։ Է · 3։
Աճառ։ Սապօն։ ՂԳ · 11։
Աճիւն։ Մոխիր · քիւլ։ Ի · 1։ և ԻԳ · 2։
Ամանակ։ Ժամանակ, ատեն · վագթ։ 'Ի Յիշատակարանն։

Ամբարձուղէշ։ Բարձր ճիւղ ունող. իւճէ տալլը։ Թ. 2։
Ամենագրաւ։ Ամէնը զապդ ընող։ Բ. 2։ կամ խիստ սաստիկ զապդ ընող։ Ը. 1։
Ամենապիկար։ Խիստ տկար. զայիֆ։ ԼԸ. 2։
Ամպրոպ։ Վէլվէլէ։ Ջ. 3։ և Ղ. 3։
Այտ։ Եանաք։ ԿԳ. 2։
Անագան։ Կէճտէն կէճ։ ԼԹ. 3։ կամ վերջինը. սօն-րաքի։ ԿԸ. 2։
Անախտակիր։ Այլոց ցաւակից չըլլող։ Ծ. 1։ և ԾՋ. 2։ կամ խարէզ չըպահող։ Բ. 2։
Անաղըլի՝ խակակութ։ Չի աղուած՝ նոր ծնած բիճ։ ԾԳ. 2։
Անարծարծելի։ Ա՛լ չի վառւելու։ Է. 3։ և ՀԱ. 2։ կամ ա՛լ չը ինծելու։ Ի. 2։
Անբոյժ։ Չի բժշկելու. օնղուլմազ։ ԾԸ. 2։
Անդաձմունք։ Խորունկ մտմտուք։ ԻԷ. 3։
Անդամանդեայ։ Էլմասիպէս պինդ։ ՂԲ. 10։
Անդանձառք։ Անդ, այսինքն՝ ՚ի հնումն անձառելիք. որպիսի էր ՚ի հին օրէնս՝ սրբութի սրբութեանցն, որ անձառելի և անմատչելի էր նոցա. վասն որոյ ասացուածըս՝ Սրբո—Բեանց անդանձառ—էց, իմացեալ լինի՝ Սրբո—Բի—Ն սրբո—Բեանցն։ ՀԵ. 15։
Անդասելի։ Կարգէ դուրս, նիզամ չի մտած։ ԼԳ. 7։
Անդուլ։ Իժիր, տայմայ։ ՁԸ. 2։
Անդուղեկցութիւն։ Այն տեղը երթալու ճամբորդութիւն և եօլտաշութիւն։ ՂԳ. 5։
Աներևակի։ Աներևոյթ. կէօրինմէզ։ ԻԳ. 3։ և ԾԵ. 3։
Աներկևան։ Անվախ. շիւպհէսիզ։ Գ. 1։ և ԿԵ. 3։
Անընդել գազան։ Եապանի եավրուզ ճանավար։ Թ. 3։
Անկանել։ Տօղումագ։ ԿԳ. 2։
Անկեղակարծ։ Անկասկած. շիւպհէսիզ։ ՁԳ. 5։
Անկուինչ։ Շունչը կտրած. նէֆէսի քէսիլմիշ։ ԺԳ. 2։
Անհաղագ։ Շունչ չունող, հոգի չունող. ճանսըզ։ ԼԳ. 7։

Անհամբոյր։ Թէրպիյէյի չեկող․ հէրկէլէ։ ԻԲ․ 2։ կամ չի գոցուող, շատախօս։ ԻԳ․ 2։ կամ գարշելի, պէթ։ ԾՋ․ 2։ կամ խաթր կէօնիւլ չի նայող։ ՁԸ․ 2։

Անհամոզելի։ Խօսք մտիկ չընող․ ինատճը։ ԾՋ․ 2։

Անհատուածելի։ Անբաժանելի, չի զատուելու։ ՀԵ․ 5։

Անհրաժեշտ։ Անդառնալի․ միւհքէմ։ ԿԱ․ 2։ կամ անխափան, անզատելի։ ՂԳ․ 11։

Անձաւ։ Մաղարայ։ Խ․ 2։

Անձնամատն։ Ինքիր անձը մատնող։ ԽԸ․ 2։

Անձուկ։ Նեղկուկ։ Ա․ 2։ և ԿԴ․ 2։ կամ քչիկ մը․ պիր ազաճըք։ ԺԷ․ 2։

Անյարիր։ Ջատուկ։ Վեր չելլելու նենգաւոր և ցաւագար։ ԾԸ․ 2։

Անշամանդաղ։ Չիմթնալու պայծառ․ տումանսըզ։ Գ․ 2։

Անշուշտ։ Անփոփոխ, անխառնակ։ ԿԷ․ 1։

Անոպայ։ Էյլէկ պիլմէզ․ նախա։ ԽԸ․ 4։

Անպատուար։ Պատ չունող․ հիսարսըզ։ ԼԹ․ 2։

Անջրպետ։ Բաժանող, զատող․ պէօլմէ։ ԻԷ․ 2։

Անսպուժելի։ Ետ չիձգուելու, էհմալ չըլլուելու։ ԼԹ․ 2։

Անստգիւտ։ Անպակաս․ էքսիքսիզ, մահանասըզ։ ԻԸ․ 3։

Անվթար։ Անսխալ․ քուսուրսուզ։ Ժ․ 2։

Անտարրափակ։ Տարերքի տակ չընկնող, նիւթեղէն բաներէն դուրս։ ԺՋ․ 1։ և ԼԴ․ 3։

Անքատ։ Տկար, փոքրիկ․ զայիֆ։ ԿԹ․ 2։

Աշխար։ Ողբ, լաց, սուգ։ ԻԷ․ 3։ ԼԹ․ 3։ ԽԸ․ 2։ ԾՋ․ 2։ և այլն։

Աշտանակ։ Շամտան։ ԽՋ․ 2։

Աշտէ։ Խըշտ, մըզըրախ։ ՀԱ․ 2։

Ապաքան։ Պապանձած, անճըրկած։ ԽԷ․ 3։

Ապազէն։ Զէնք չունող․ սիլահսըզ։ Է․ 1։ և ԿԸ․ 3։

Ապաթոյն։ Թոյն չունող․ զէհիրսիզ։ ԿԳ․ 1։

Ապախտաւոր։ Անշահ․ էյլիկ պիլմեզ։ Ջ․ 2։ և ՀԴ․ 1։

Ապահար։ Ամսական հայրը բռնած։ Ի. 2։
Ապաձեռն։ Օգնական չունող, խեղճ։ ԻԴ. 3։ և ԼԷ. 3։
Ապաշուք։ Անպատիւ. իթիպարսըզ։ ԼԳ. 7։
Ապաջան։ Ջանք չընող. խայրէթսիզ։ Բ. 2։
Ապառում։ Լիրբ. առսըզ։ ԺԱ. 3։ և ԻԱ. 2։ և ԿԴ. 2։
կամ խաթր կէօնիւլ չսայող, անգութ։ ՁԸ. 2։
Ապարանջան։ Պիլէզիկ։ ԼԳ. 1։
Ապաւանդակ։ Չուան նաւու. բաշլամար։ ԻԵ. 2։
Ապաւինութիւն խարսխի։ Նաւուն մեծ երկաթը. ճան
գուրթարան։ ԻԵ. 2։
Ապաքինել։ Փարատել, դադրեցընել, կամ բռընտցը-
նել։ ՁԳ. 2։ և ՂԵ. 2։
Ապէնիազ։ Անկարօտ, միւհտաճ չըլլող։ ԾԹ. 2։
Ապիկար։ Տկար, խատիր չըլլող։ Ժ. 1։ և ԻՋ. 2։
Առակայք։ Առաջիկայք, առջևը, կամ մօտը եղած-
ները, կամ քիչ մի ետև ըլլալքները։ ԺԳ. 3։
Առանցեալ։ Դադարել 'ի ծնելոյ, վախտը անցած։ ԼԱ. 1։
Առիգած։ Գոգնոց. փէշտիմալ։ Ի. 2։
Առկայծեալ։ Ճրագն որ մարելու մօտեցած, վերջին
կայծակը հասած։ ՁԷ. 3։
Առհաւատչեայ։ Չէշնի, նումունէ. կամ փէյ։ ԻԵ. 4։
ԿԵ. 2։ և ԿԷ. 1։
Առուղեկան յաւիտեան։ Անցաւոր ժամանակ։ 'ի Յիշ″։
Առօրինակեալ։ Բաղդատեալ, նմանեցուցեալ։ Ա. 2։
Ասուի։ Բրդեղէն, չուխայ՝ և այլք նմանք։ ԻԱ. 3։
Ասպականասպաս։ Շան կերակրի իւմիտ ընող։ ԼԵ. 3։
Ասպատակ։ Քէլէփիրճի, փուսու խըրսըզը։ ԿԹ. 2։
Ասպարէս, կամ Ասպարէզ։ Մեծ մէյտան. աթ մէյ-
տանը։ Ա. 2։ և ԽԸ. 4։ Դարձեալ՝ երկրի չափ է, որ
է մէկ միլ տեղին՝ ութը փային մէկը։ Թ. 1։
Աստարտէ։ Կնկան կերպարանքով կուռքի մի անուն է։
Կ. 4։
Ատտիկեցի։ Աթենացի, որ 'ի հնումն այս քաղաքացւոյ

գլաւ մարդն՝ խիստ նամտար , և գլխան՝ խիստ պէթ-նամ համարէին։ ԿԵ· 1։

Արահետ։ Լան ճամբայ · քեօռ եօլու։ Թ· 2։ կամ չի-տակ ճամբայ · ճատէ։ ԽՋ· 3։

Արամաթացի։ Արիմաթացի , ուստի էր Սամուէլ մար-գարէն։ ՁԸ· 1։

Արբուն։ Կատարեալ հասակ · քեամիլլիք չաղը։ Գ· 2։

Արգահատել։ Ցաւակցելով մխիթարել · սիրտ ալ։ ԺԲ· 1։ կամ աղաչել , ընձա ընել։ ԺԵ· 1։ և ԾԵ· 2։

Արգասաւոր։ Արդիւնաւոր · մէյվէտար։ Ն Յէշապակարանն։

Արդարալլուկ։ Հախ տեղը տանջուող։ ԻԹ· 2։

Արդեան։ Հիմակուան · չիմտիքի։ ՀԵ· 8։

Արդվատնական։ Հիմակուց Թէլէֆ եղած։ ԻԲ· 2։

Արկածք։ Փորձանք · պէլայ։ Ջ· 3։ և Կ· 2։ և ԿԷ· 2։

Արձագանք։ Ետ դարձող ձայն , որ մաղարաներուն մէջ , կամ խորունկ տեղուանք՝ կանչողն ինչ որ կան-չէ , ձայն կը լսէ։ ՂԲ· 8։

Արուարձան։ Քարէ փորած երիկ մարդու պատկերք , կուռք։ Կ· 4։

Արութիւն։ Արիութիւն , կորիճութիւն։ ԻԹ· 3։

Արուսեակ։ Սապահ եըլտըզը , զէօհրէ · կամ արեգա-կըն · կամ սադայէլ։ ԼՋ· 2։

Արջնաթոյր։ Սև գոյն ունող։ ԿԹ· 2։

Արջնատես։ Սիեահ կէօրինիւշլիւ։ ԼԱ· 3։

Արտալած։ Ճամբէ դուրս ելած · եօլսուզ · կամ սիւր-կիւն եղած։ ԾՋ· 2։

Արտաքնայարդար։ Դրսի դիյէն Թէմիզ։ ԻԷ· 3։

Արտուղի։ Ճամբէ դուրս , ծուռ · եանղըլըշ։ ՀԸ· 3։

Արփիացնցուղ։ Լոյս տարածող , շաւիղ ծագող։ Գ· 1։

Արօտ։ Արծուելու տեղ · չայըրըլըխ։ ԻԵ· 3։ և Կ· 2։

Արօր։ Չիֆթ քշելու գործիք · սապան։ ԾԴ· 2։

Աւաղական։ Ափսոսական , ողբալու։ ԻՋ· 1։

Աւանդ։ Էմանէթ։ Դ· 1։ կամ տուըք · վէրկի։ Թ· 2։

կամ թէմպին, վասխթ։ ԻԷ. 4։

Աւողական։ Բեռի ալըշմիշ չեղած. աճամի, հէրկէլէ։ ԻԲ. 2։

Աքար։ Պատժուած մարդոյ մի անունն է. (Յեսուայ. 7. 1)։ ԻԷ. 2։ և ՀԱ. 3։

Աքիա Սիլոնացի։ Մարգարէի մը անունն է, որ 'ի Սելով քաղաքէն էր։ (Գ. Թագ"). ԺԱ. 29։ ԽԸ. 4։

Բաբելոն։ Պաղտատ քաղաքն է։ Ա. 1։ և ԿԷ. 2։

Բագին։ Կուռքի սեղան, կուռք։ ԻԷ. 3։ և ՀԵ. 13։

Բազմակ։ Բազմելու տեղ. մէքեան։ Կ. 3։

Բազմական։ Մէճլիս նստող։ ԽԸ. 1։ և ՂԳ. 4։ կամ բազմելու, նստելու տեղ։ ՂԱ. 3։

Բազմաձեռնեան խարդաւանողք։ Շատոր հիյլէպազներ. կամ ֆէնտէրով խաբողներ։ ՂԲ. 9։

Բազմայածեան։ Բարբարական պըտըտող։ Կ. 3։

Բազմատեղնեան։ Շատ ճիւղ ունող. տալը պուտախլը։ ԽԵ. 2։ և Յիշատ"։

Բազմարկածեան։ Շատ փորձանքոտ. թէհլիքէլի։ ՀԳ. 2։

Բահաղ։ Կուռքի անունն է։ ԿԴ. 2։ և ՂԳ. 6։

Բամբիռն։ Չալփարայ, զիլ։ ՂԲ. 8։

Բանդագուշեալ։ Խելացնոր. չըլղըն։ ԺԸ. 2։

Բանին սերմնականութիւն։ Խօսքին էօզը՝ զայ ընելը, խէնէթ ու մէնէթ եօլսուզ խօսիլը։ ԽԵ. 2։

Բառաչ։ Ոչխարներուն և նմանեաց պօռալը։ ԺԵ. 2։

Բառացի։ Փառաւոր. շէօհրէթլի։ ՂԲ. 8։

Բասիլ. Վասիլ։ Էր կայսր Յունաց։ Ի Յիշատ"։

Բասրէլի։ Մեղադրելի. այըպլանմաղա լայըգ։ ՂԱ. 3։

Բարանութիւն։ Խօսիլ չի կըրցողի բերնով խօսիլ։ ՂԲ. 8։

Բարացուցական։ Բաղդը ցըցընող, թալիյէթը յայտնող։ ՂԲ. 8։

Բարաւոր։ Դրան վերի շեմը։ ՂԱ. 2։

Բարետաւիղ։ Անուշիկ խայտելի. տիւզէնլի։ ՂԲ. 8։

Բարեքիա։ Զաքարիայ մարգարէի հօրն անունն է։ ՂԳ. 8։

Բաղունակ մահողկուզեան։ Ամայի ձիւղ՝ որ զէհիր-լի սալխըմ ունի։ Է. 2։

Բաւանդակապէս։ Բովանդակապէս. կամ բաւականա-պէս։ Ջ. 4։

Բաւիղ։ Սաչախ, որ մաղարայի, կամ դրան վրայ կ'ըլլայ։ Խ. 2։

Բժժանք։ Պիւլիւճիի կամ պախըճիի չըխըն։ ԿՋ. 4։

Բիծք բոցակիծք։ Կրակի պէս կծուած ուռեցներ, ինչպէս՝ Թախտապիթիէն, կամ սիվըլխինէկէն խած-ուած տեղուանքը։ ԿԹ. 2։

Բոլորապտուղ։ Ողջակեզ. Թամամ փէշկէշ։ Ա. 1։

Բոսորայ դիակունք։ Կարմրագոյն արիւնաթաթախ լէշեր։ ԿԸ. 3։

Բոսորայինն։ կարմրագոյն, կարմրած. գըզըլ։ ԿԳ. 1։

Բռեալ։ Սըվայա, կամ պատանայ եղած։ ԻԷ. 3։

Բռնախոյեան։ Դէմ ելլող կորիճ ճէնկճի։ ՂԳ. 18։

Բռնամարտիկ։ Կորիճ ճէնկ ընող։ ԿՋ. 2։ կամ ուժով կիւլէշմիշ ըլլող։ ՂԳ. 13։

Գահաւորակ։ Թահտրւան. քէօշկ։ ԻԵ. 2։

Գաղձնաւոր։ Անշահ խոտերով, (կամ այրըխ խոտով) լցուած։ ԾՋ. 2։

Գաղտնակուր։ Գաղտնի ուտող, ինչպէս պաղըրսախից մէջի որդերը։ ԿԹ. 2։

Գայլխոտն, երկան մըզըրախ։ ՂԲ. 4։

Գանձութիւն։ Հնչումն, կանչուածք։ ՂԲ. 8։

Գարնանազայր գետ։ Գարնան ատենը աղմիշ ըլլող չայ. Թաշղըն ըռմախ։ ԾԴ. 3։

Գեղայօրէն։ Գեղեցիկ յօրինած. հիւսիւնլիւ։ ՂԳ. 24։

Գեղմն։ Ճերմակ բուրդ. եափաղը։ ԾԲ. 1։

Գերաբնապէս։ Բնութ. ատէթէն վեր, հրաշապէս։ ՂԳ. 8։

Գերանակիր։ Տիրէկ կրող, կամ տիրէկ ունող։ ԻԷ. 3։

Գերաշխարան։ Խիստ ապաշխարող. շատ լացող ողբացող։ ԽԸ. 5։

Գերաշխարհիկ։ Ամենէն պատուաւոր, խիստ իթիպարը։ Գ. 3։
Գերունակ։ Ամէն գերազանցութե և կատարելութե ունող։ ԻԷ. 2։ և ՀԵ. 7։ կամ ամէնէն էվէլ ունող։ ԽԹ. 2։
Գթել։ Գլորիլ, սխալիլ, չի գիտնալով պակասութիւն ընել՝ ընկնիլ։ ԼԱ. 2։ ԾԵ. 4։ ԾԷ. 3։ և ՀԲ. 2։
Գժդմնութի։ Սրդողելով երեսը ծռելը. իգզապ։ ԽԵ. 2։
Գժտութիւն։ Կռիւ. Նիզա։ ԽԵ 2։
Գինդ։ Օղ. գիւփէ։ ԼԳ. 1։
Գիշերավար։ Սատանայ. շէյթան։ ԼԷ. 1։
Գլխաշուք կտաւ։ Գլուխը ծածկող՝ զարդարող լաչակ։ ԼԴ. 1։
Գլխաւորել։ Գլուխ հանել, լմընցընել։ ՀԱ. 2։
Գոգջէք։ Ասացէք։ ՀԲ. 1։
Գողտրական։ Կակուղիկ, փափուկ. Նազիք։ ԽՉ. 2։
Գոմոր։ Սոդոմայ մէկ քաղաքն է։ ԾԴ. 2։
Գոյարան։ գոյացնող, ստեղծող. վար էտիճի։ ՁԴ. 1։
Գործականութիւն։ Գործելը. իճրա ընելը։ ՂԳ. 20։
Գործնականաց գործի։ Գործելու ալեաթ, որ է՝ ձեռքըն։ ԻԳ. 2։
Գործօնեայ։ Գործող փէյտահ ընող։ ՁԴ. 1։
Գումարտակ։ Գումարեալ բազմութի. ճէմիյէթ, ճիւմհուր։ Չ. 3։ ԻԴ. 1։ ԼԷ. 1։ և ՀԵ. 12։
Գունել։ Գոյն տալ, ներկել։ ԼՉ. 2։ և ՂԳ. 17։
Գուպար։ Պատերազմի զօրք. ճէնք ասքերի։ Կ. 4։
Գռիհ։ Գռեհ. սօխախ։ ԿԷ. 2։
Գրաբանական։ Գրող խօսուած՝ զրուցած ԼԴ. 1։
Գրաւական։ Ռէհնի. նումունէ։ Ժ. 2։ ՂԳ. 16։
Գրգեալ։ Ջէֆքի սէֆայի մէջ ըլլող։ ԽԸ. 2։
Գրկանք։ Սիրով և գթով գրկելը. գուճմագ։ ԻԷ. 2։
Գրուան։ Հինիկ, ցորենի էօլչէկ։ ԼԵ. 3։
Գօշել։ Կակըծցընել՝ խըշխըշցընել՝ սրտոր ցաւցընել։ ԺԷ. 1։
Դադան։ Աբիրօն, Երկու եղբարք էին, որ Մովսէսի դէմ

կեցան ու գետինը անցան։ (Թուոց. 16. 1)։ ԿԸ. 4։
Դանդաչել։ Գուրգուրալ, քեօրի պէս շարժիլ։ ԺԹ. 3։
Դանդաչեցուցանել։ Երերցընելով չընկըր չընկըր ձայնը հանել։ ԴԲ. 8։
Դասակ։ Սիւրիւ, պէօլիւկ։ ԿԳ. 2։
Դաստակնիք։ Վճիռ. սիճիլ։ Գ. 1։ և ԺԷ. 3։
Դարաստան։ Դրախտ. պախճա։ ԽՁ. 3։
Դեգերեալ ողբայ։ Աղլայըք եաթըյօր։ ԻԵ. 2։
Դերապքրիստոս։ Նեռն. Թէճճալ։ ԴԱ. 1։
Դժնիկ։ Փուշ. քարա չալը։ ԿԹ. 2։
Դժուարամոքելի։ Դժար անուշնալու. գէհիր Թապիէթլի։ ԻԸ. 3։
Դրժել։ Խօսքէն դառնալ, խաւլը աւրել։ ԾԵ. 4։
Դիզի. այսինքն՝ դիզեցի։ Երդմիշ ըրի։ ԻԷ. 3։ կամ Նիզամը շարեցի։ ՚ի Յիշատակարանն։
Դիմագրաւութիւն։ Գլուխը օրթան դնելով սերպէստութիւն, սէրտէն կեչտիութիւն։ Կ. 4։ և ՀԱ. 1։
Դիմակ։ Դէմք, կերպարանք. քիւլէթ։ Գ. 1։
Դիմակերպութի՛։ Ույղունութի՛. մինասիպէթ։ ԴԳ. 4։
Դիմակս դիմակս։ Թիւրլիւ Թիւրլիւ։ ԼԹ. 3։
Դիտակ։ Տեսնելու բարձր տեղ, ինչպէս՝ կէմիին չանախլըխը։ ԻԵ. 2։ կամ տեսնալու տեղ, ինչպէս՝ մարդոյ երեսը։ ԿԵ. 2։
Դիտակ ոստոց։ Ծառի ճիւղերուն ծայրը։ ԴԲ. 9։
Դիւաճենճեր զոհարան։ Սատանայի համար զուրպան եփելու տեղ։ ԾԱ. 4։
Դիւրափխրելի։ Խօլայ փշրուելու, փսորվելու։ ԳՀ. 3։
Դուժ։ Եապանի միլլէթ. խորեաթ։ ԴԳ. 12։
Դստիկոն։ Տանը խաթը, կամ վերի խաթը։ ԿԹ. 2։
Դարոյլել։ Քամահրել, սիթեմ տալ։ Լ. 3։
Դրականապէս անուանադրութիւն։ Ույղունձա լաղապ դնելը։ ԴԳ. 19։
Դրանդ։ Դրան վերի չէմը։ ԴԲ. 5։

Դրուակ, կամ դրուագ։ Դրուած, օրինած շինուած։ ԼԴ. 8։ և Յիշատակարանն։
Դրօշ։ Թուղ, սանճախ, խաչալէմ։ ԼԷ. 1։
Դրօշեալ։ Փորուած կուռքի պատկերք։ Բ. 1։ և ՀԵ. 12։
Եդովմայեցիք։ Եսաւայ այալէթին բնակիչները։ Ա. 2։
Եզող։ Եզ վարող, չիֆթ քըշող։ ԾԴ. 2։
Եթովպացի։ Արապիստանցի. արապ։ ԾԴ. 2։
Ելլենացի։ Հելլենացի, Հոռոմ։ ՂԳ. 12։
Եղեամն։ Խըրաղը։ ԿԸ. 3։ և Ղ. 3։
Եղեռնագործ։ Չարագործ. գիւանքեար։ Դ. 3։ և ՂԱ. 3։
Եղերական ձայն։ Լալկաններու Թախըմին լացը։ ԿԸ. 1։
Եղևին։ Բարձր սէրվին, կամ չամի ծառ։ ԿԱ. 3։
Եղէգնախունկ։ Պուհուր ղամըշը։ ՂԳ. 11։
Եղեգնախառն։ Խամըշի կտրտուք՝ եօնկա։ Է. 3։
Եղինձ։ Ըսըռկան օթլուղու։ ՀԱ. 2։
Եմակ։ Զօր. տէրէ։ Խ. 2։
Եպերիլ։ Քամահրիլ. խաթիրքալ օլմագ։ ՁԲ. 5։
Երախայրի։ Առաջին պտուղ. Թուրֆանտայ։ ԼԱ. 2։
Երախան։ Լալկաններու սիւրիւ։ ԻԶ. 1։
Երամակ։ Սիւրիւ, սիւրէկ։ ԽԶ. 1։
Երասանակալ։ Տիզկինը բռնող, ղայըթ ընող։ ԼԲ. 2։
Երբէք, երբեքի։ Ժամանակ. զաման։ ԼԴ. 3։
Երգիծանութիւն։ Սիրտ կսկծցնելու խօսք. սիթէմ։ ԽԸ. 2։
Երևականութիւն։ Երևոյթ. խէյալ կէօրիւնիւշ։ ՂԳ. 10։
Երևիլ։ Ծառոց և խոտոց կիւվէնէ։ ԿԸ. 3։
Երիզապնդեայ։ Երկան կտաւով ոլոր փաթթած։ ԾԸ. 3։
Երիթացեալ։ Ցամքած, չորցած։ ԻԹ. 2։
Երինջ։ Մատղաշ կով. կէնճ ինէք։ ԽԵ. 2։
Երկքով։ Սուրբ երուսաղէմի սէմթը քաղաք մի է։ ԿԳ. 1։ և ՂԲ. 4։

Երկակշիռ տարրութիւն։ Երկու ներհակ բան, ինչպէս՝ տաքն ու պաղը, ցորեկն ու գիշերը։ ՂԳ. 2։
Երկեւանութիւն։ Կասկած, շիւպհէ։ ԺԱ. 1։
Երկնաձեւմ։ Երկինքը հանող, կէօյէ չքարան։ ԼԲ. 2։
Երկնել։ Տղաբերքի ցաւ քաշել։ Ա. 2։ և Բ. 2։
Երկուորեակք։ Լուծք եզանց, որով չիֆթ կըքշեն։ ԾԴ. 2։
Երկրակենցաղ հէնք։ Երկրիս վրայ կեցած մասխարակութիւններ, աշխարհքիս մութալլիխ խախկութիւնք։ ՀԱ. 4։
Երկրորդութիւն։ Թէքրարլամիշ ընելը։ ՀԵ. 1։ և ՂԳ. 10։
Երփն։ գոյն. ռուէնկ։ ՀԱ. 2։
Երկք։ Աշխատանք. զահմէթ, մէշագգէթ։ Է. 1։
Եւղընձիւղ փայտ։ Եղ տուող ծառ, ինչպէս՝ ձիթենին։ ԼԹ. 2։
Զակատիլ։ Քէօրի պէս՝ շաշխընի պէս ըռէզիլ ըլալ։ Ի. 2։
Զանգուած։ Քանի մը բաներէ խառնուած՝ մէկ խմոր եղած, ինչպէս՝ մարդոյ մարմինը։ ԻԳ. 2։ և ՀԱ. 1։
Զառածեալ։ Մոլորած, ճամբէ ելած։ Ը. 1։ և ԿԴ. 2։
Զարհուրատեսակ։ Զարհուրելի տեսք ունող. աչկըն չէհրէլի։ ՂԳ. 12։
Զարմանուհի։ Զարմանալիք, թաաճիւպ ընելու։ ԽԹ. 1։
Զեղծանիլ։ Սուտիլ, խօսքը փուճ ըլալ։ ԾԵ. 1։
Զըլացող։ Երախտամոռաց, հախը ինքեար ընող։ ՁԷ. 3։
Զըմբաղ։ Ուրախութիւն. զէվք՝ սէֆա։ ԾԵ. 3։
Զընդամ զընդանաւ։ Զարչարուիմ զընտանով։ ԺԶ. 1։
Զկծեցուցիչ։ Սիրտ կսկծցունող, աղիքը կտրտող։ ԼԹ. 3։
Զկծիլ։ Հազմ չընելով սիրտը երիլ։ ԻԹ. 2։ և ԿԴ. 2։
Զմռսալից։ Քաղցրահոտ, ամպլպէնտով լցուած։ ՂԳ. 6։
Զոփանալ։ Ցրտէն դողալ. թիթրէմէք։ ԻԹ. 2։
Զրահետական։ Պօշ պարապ, անպտուղ. մէյվէսիզ։ ԽԵ. 2։

Զօրէն։ Նման. այնիւ։ ԿԹ. 2։
Ըղձութիւն։ Իղձ, փափաք. աշգ։ ՂԴ. 1։
Ըմբերանեալ։ Աբիբերան եղած, հախ չունելով պապընձած։ Բ. 1։
Ըմբոշխնել։ Ծամել. չէյնէմէք։ Ե. 2։
Ըմպահկանք։ Արհամարհանք. րէզալէթ, մէզադ։ ԽԸ. 4։
Ընկլուզեալ։ Ջրի մէջ պաթմիշ եղած։ Գ. 3։
Ընդակից։ Հետը ույղուն, այախտաշ։ ԿԱ. 1։
Ընդարմացուցիչ։ Թմրեցնող, սէրսէմցնող։ ՁԳ. 3։
Ընդգոգեալ։ Գոգին մէջ ժողուած պահած։ ԾԱ. 4։
Ընդերք։ Փորոտիք, փորու միջի աղիք. պաղըրսախ։ ԼԶ. 2։
Ընդ կրունկն դառնալ։ Ետ ետ գնալ։ ՀԱ. 2։
Ընդհատ։ Պակաս, հեռու. ֆարգլը։ ՀԲ. 2։
Ընդմիջարկութիւն։ Օրթայէն իբրու պատ քաշելը. մէօհքէմ թէնպիհ։ ՂԳ. 6։
Ընդմիջել։ Փէրտէ քաշել։ ԼԷ. 3։ կամ էնկէլ ըլալ՝ զատել։ ՁԶ. 1։
Ընդոստնուլ։ Վեր ցաթկել. սըչըրամագ։ Ե. 3։
Ընդունայնաթող քիրտն. սըխլէթ տուող պօշ քրտինք, որ է ասել՝ նաֆիլէ զահմէթ։ ԽԸ. 4։
Ընդպահկել։ Երեսէ ձգել, ձեռքէ թող տալ։ ՁԷ. 3։
Ընկճիլ։ Սըմքիլ, տակ ընկնիլ, սինմէք։ Լ. 3։
Ընկրկիլ։ Ետ ընկնիլ, ետ փախչիլ, կէրիյէ գափանմագ։ ՂԱ. 1։
Ըստանձնեալ։ Շալակն առած. իւքլէնմիշ։ ԾԵ. 3։ և ՀԷ. 3։
Ըստ բան քո։ Քու խօսքէդ դուրս. սէնին սէօզիւնտէն տըշարը։ ՀԶ. 1։
Թաւանչ։ Հառաչանք. կէօյիւս կէչիրմէք։ ԻԳ. 2։ Լ. 1։ և ԽԸ. 2։
Թատր. մէյտան օյունու։ ԼԱ. 2։
Թարահատ։ Կուռքի անուն է, զոր Թարս հայրն Աբ-

բահամու չինէր էր։ Կ. 4։

Թարթափումն։ Աչք գոցել բանալը։ ԼԷ. 3։

Թարմատար։ Փուճ, պօչ, բան մը չարժող։ ԾՋ. 2։ և Կ. 4։

Թափանցանց։ Մտնող անցնող, թէէսիր ընող։ ՂԳ. 12։

Թեզան։ Մանած, երկան թել։ ՂԳ. 24։

Թելադիր։ Ցուցորդ. թահրիք էտիճի։ ԽԸ. 2։

Թերափ։ Կռապաշտից գործիք, համայիլ։ ԽԸ. 3։

Թինդս առնուլ։ Ցաթկտել, ըղալ։ ՀԱ. 3։

Թխատիպ։ Սեւագոյն, մութ գոյն. զիֆիրի։ Խ. 3։

Թշուառաքիրտն թօշակ։ Մահուան քրտինքով վաս-տակ. մէշագգէթլը էյրատ։ ԽՆ. 3։

Թոպեալ։ Զարչարուած, պէրպատ եղած։ ՀԲ. 3։

Թուլադաշնակեալ։ Տիւզէնը թուլցած, տիւզէնը աւ-րած։ ՂԳ. 20։

Ժայթքել։ Փսխել, գուսմագ։ ԿՆ. 1։

Ժանիք։ Գազանի ակռաներ։ Դ. 1։ ԿՋ. 4։ և ՀԹ. 4։

Ժխտող։ Ինքեար ընող, հիյլէ ընող։ Բ. 1։

Ժողխեալ։ Մարազներով լցուած, հոտած, լըկած։ ՀԳ. 2։

Ի գիծն թուլանալ։ Շիտակ ճամբան չի կրնալ երթալ, թուլնալ ու ճամբան մնալ։ ՀԱ. 2։

Ի ճիւղս մատանց թուել։ Մատներուն վրայ մէկիկ մէկիկ համրել։ ՀԸ. 3։

Իններեակ յոբելինի։ Ինն անգամ յիսուն, որ է չորս հարիւր յիսուն։ ՚Ի Յիշատակարանն։

Ինքնաբքոյ բարձրայօն։ Ինք զինք յարգող մեծարող հպարտ։ Գ. 2։

Ինքնոգոր։ Ինք իր հետ կռուող։ ԾԹ. 1։

Ինքնօրէն։ Ինք իրմէ. կէնտի քէյֆինէ։ ԿԱ. 1։

Իշանդամ։ Իշու անդամի պէս ամօթ ունող։ Կ. 4։

Իսկ անուանն իսկոյն։ Բուն իսկական անուանն իսկու-թեանն. զաթինին իսմի զաթի։ ՂԳ. 18։

Իրաւամերժ։ Իրաւունքով մերժուած, միւսթահախ-ըը վըրընտուած։ ԻԹ. 2։
Լայնատարր հետք։ Լան ու արձակ ճամբայ։ Ե. 3։
Լանջք։ Կուրծք, կէօյիւս։ ԼԳ. 1։
Լաստ։ Նաւուն տակը, կէմիի թէքնէ։ ԻԵ. 2։ և ՁԵ. 2։
Լաստին դադարք։ Կէմիին հանգչելու տեղը. իլիմանի։ ԻԴ. 2։
Լափլիզող։ Լափելով լիզող, արիւնը ծծող։ Ժ. 1։
Լքնիլ։ Անամօթ լինիլ, էտէպսիզ օլմագ։ ԿՋ. 4։
Լուծ։ Թէրազիի թաթ։ Թ. 1։ կամ պօյունտուրուխ։ ԽԵ. 2։
Լուծք ստուարք ամոլից։ Կէմիի կէօվէրթէյին հաստը գօտիները։ ԻԵ. 2։
Լուղակ։ Լօղացող, ինչպէս՝ ձկները։ ՀԱ. 3։
Լուռ։ Լսեցո՛ . իշիթտիր։ ՁԵ. 1։
Լուսանցոյց երդ։ Երդիքէն լոյս մտնելու տեղ. պաճա։ ԺԲ. 3։
Լուսնական դիպուած։ Թուլթարըխ։ ՁԲ. 6։
Լուտացող։ Քամահրող. պէթ սէօյլէյիճի։ ԺԱ. 3։
Լպրշեալ։ Անամօթ՝ էտէպսիզ եղած։ ԾՋ. 2։
Լռնացեալ։ Ճերմըկաց, ինչպէս՝ լուացած եարային տեղը։ ԻԴ. 2։
Լրապատար։ Լըման լեցուն. միւնէվվէր։ ՚Ի Յիշտտ″։
Լրթագոյն։ Մթնագոյն. փէք գարամթը։ Լ. 2։
Լքանել։ Դուրս ձգել. բէտտ էթմէք։ Բ. 3։ և ԻԷ. 2։
Խարթաբեալ։ Աւրած, խարապ եղած, փճացած։ ԻԵ. 3։
Խակախորհուրդ։ Խամ իմացմունք, ճահիլութի։ ՂԲ. 8։
Խաղաւարտ հրակայծակ։ Կճած ուռեցք՝ կրակի պէս երող՝ կսկծցնող։ ԿԹ. 2։
Խաղը։ Իբրև թէ՝ խիղը. որ է՝ կապ, կամ կապանք. ըստ այլոց՝ հաղը. որ է՝ որոգայթ։ ԼԲ. 3։
Խայրիք։ Պտուղներ. մէյվէլէր։ ԼԳ. 1։
Խառնիճ, կամ ջրեակ։ Խառնատուղ չէկիրկէ։ ԿԸ. 3։

խարան։ Նշան տաղլամիշ ընելու երկաթ։ Զ. 1։ կամ տաղլանմիշ եղած խոց։ Ձէ. 2։ և ՂԳ. 6։
խարդաւանք։ Խաբեբայութիւնք. ֆէնտ։ Կ. 2։
խարխափանք։ Քէօռի քալուածք, գուրգուրալ։ ԺԷ. 2։
խափուցանել։ Խափանել. մէն էթմէք։ ԿԳ. 2։
խելք։ Նաւու խըլչ։ խելք չըլթանց։ խըլչին Թարաֆի քիւփէշտէները։ ԻԵ. 2։
խեննեշանալ։ Ըտէպսիզճէ հագուիլ կապուիլ։ ՀԲ. 2։
խժական բարբարոս։ Կոպիտ, խորեալթ եարամազ։ ՂԳ. 6։
խիզախել։ Համարձակիլ, ճիւրահալթ ընել։ ԿԸ. 3։
խիթ։ Խօստուկ, սանձը։ Զ. 1։ և ԻԶ. 3։
խլրտումն։ Տեղացը ժաժիլ, Թէփրէնմէք։ Զ. 3։ և Է. 1։
խծբիծ։ Խառնելը փնտռելը. արաշտըրմաք։ ԽԸ. 4։
խխայթ. խղխայթ։ Պէօճէկ, Թըռթըռ։ Է. 1։
խնծիղք։ Խնտում. զէվք, շագլըք։ Դ. 1։
խնկաւորութիւն։ Օրհնենք, գովասանք։ ՂԳ. 14։
խոհեր։ Գարշելի գործք, մուրտառ բան։ ԽԵ. 2։
խոպանացեալ։ Զորցած, աւրած, խարապ եղած։ ՀԳ. 2։
խորշակ։ Տաք հով. սամ եէլի։ ԿԶ. 4։
խուել։ Զարչարել. էզիէթ էթմէք։ ԿԶ. 4։
խուզել։ Փնտռել։ Թ. 2։ և ԾԵ. 4։
խուժադուժ։ Եապանի, ապուռճուպուռ։ Կ. 4։
խուճապել։ Խիստ աճելէով սխլէթ ընել։ ՀԹ. 3։
խուն։ Սակաւիկ. ազաճըք։ ԿԴ. 2։ Հ. 2։ և ՀԴ. 3։
խուփ։ Արօրի երկաթ. սապան տէմիրի։ ՂԲ. 7։
խտրոց։ Զատող միջոց. պէօլիւճիւ սընըռ։ Բ. 1։ և ՂԲ. 7։
խրթնանալ։ Խոժոռիլ. մթննալ՝ զզուիլ։ ՀԵ. 11։
խրթնի։ Սեցած, աղտոտ. չիրքին։ ՂԳ. 12։
խօլական ցնորք։ Խենթ ու մենթ երազներ։ ԺԲ. 3։
խօսնականաց շարժողական գործի։ Լեզու. տիլ։ ԼԵ. 3։

Ծայրակատար՝ Ծայրագոյն կատարող, խիստ ջարդող։ ԻԸ. 1։
Ծերպ։ քարերու և ծառերու ծակ. գօվուք։ Խ. 2։
Ծնդեցեալ։ Հալած մաշած, խիստ վատուժ։ ԾԸ. 2։
Ծորիլ։ Մաշիլ, եօխ ըլլալ։ ԿԵ. 2։ ՀԳ. 2։ և ՂԲ. 10։
Ծործոր։ Լեռներու մէջ տեղը, ձոր։ Խ. 2։
Ծորումն։ Կաթելը, վազելը, բղխալը։ ԼԵ. 1։ և ՂԳ. 19։
Ծուէնք։ Պատըռտուք, պէզ եըռթքլարը։ ԻԵ. 2։
Ծուղակ։ Որոգայթ, տուզախ, խափանձա։ ԽԶ. 3։
Ծուր և Ծայթան։ Սուր, Սայտա. են քաղաքք Փիւ-
նիկեցւոց։ (Եզէկ". 28)։ Բ. 1։
Ծրդեալ։ Աղտեղեալ, պլըշկած՝ մրտռած։ Բ. 1։
Կազդուրել։ Նորոգել, բժշկել խալսել։ Զ. 3։ և ԶԳ. 2։
Կականիլ։ Հեկեկալով լալ. եօքիւր եօքիւր աղլամագ։
ԺԲ. 1։
Կաղակարծ, կամ կեղակարծ։ Շիւպհէլի։ Լ. 2։ և ԽԸ. 2։
Կաղկանձողական։ Վնկվնկալով, եալթախլանմիշ ըլլալով։
ԼԵ. 3։
Կայթ։ Ցաթկտելով խաղ, պար։ ԻԱ. 2։ և ԼԱ. 2։
Կայտառ։ Վնասակար կենդանի. պէօճէկ։ ԽԵ. 3։
Կայմ։ Նաւունեէլքէն բանալու սէրէն տիրէկի։ ԻԵ. 2։
Կապարան ձգողական։ Զուան՝ քաշելու, իպլար։ ԽԵ. 1։
Կապարանք զըստի։ Նաւու թէքնէի երկու կողմի կապե-
րը, խապուրղաները։ ԻԵ. 2։
Կապարճ։ Նետ դնելու աման. թէրքէշ։ ԿԶ. 4։
Կապուտ։ Եաղմա եղած մալ. թալան։ ԺԶ. 1։ և ՀԵ. 8։
Կառափիճ։ Գլուխ կտրող, սպաննող. ճէլլատ։ ԶԸ. 2։
Կարակում մօր։ Մուրտար չամուռ. պալչըխ։ ԶԳ. 3։
Կարեկցել։ Ցաւակից ըլլալ։ ՂԵ. 1։
Կարթ։ Որոգայթ. քէմէնտ, օլթա։ ԽԶ. 3։ և ԿԶ. 4։
Կարծրերախ։ Տիզկինի չեկող, զապթ չըլլուող, ինչ-
պէս՝ գլուխը սէրթ ձին։ ԻԲ. 2։
Կարկառ։ Քարերու եղըն. թաշլըխ։ ԿԳ. 1։

Կարկառել։ Մատուցանել, երկնցնել. ունմագ։ ԺԸ. 2։
ԼԴ. 2։ և ՂԲ. 9։
Կարկառ կոծումն։ Վեր վերցնելով զարնելը։ ՂԲ. 2։
Կարկեհան։ Ճեվահիր քար, որ գիշերը լոյս կուտայ. չամչըրագ։ ՀԵ. 12։
Կարութիւն։ Կարօղութիւն. քատըրլըք։ ԺԹ. 4։
Կափառնաում։ Յորդանան գետի բերանը մեծ քաղաք մի է։ Բ. 1։
Կաքաւ։ Ցատկելով խաղալը։ ԼԱ. 2։ և ՂԲ. 6։
Կեղեքել։ Պատառոտել, բըզըքտել։ ԺԷ. 1։ և ԿԸ. 3։
Կենդանախարոյկ կայծակն։ Երելով մաքրող՝ ողջընցնող կրակ։ ԼԳ. 5։
Կենսախրախոյս։ Կեանքի ումուտ տուող։ ԽԴ. 2։
Կիսայար։ Կիսկատար տայանմիշ եղած՝ կանգնած։ ԼԲ. 2։
Կիտի կորիւն։ Մեծ ձուկի եավրու։ ԽԵ. 1։
Կիւրոս։ Պարսից Թագաւորի մի անուն է։ (Ն". 4. 51)։
ՂԳ. 6։
Կմախք։ Մեռելի ոսկորներ։ ՀԴ. 2։
Կնդրուկ։ Անուշիկ հոտով ծխանելի պուհուր։ Ի. 2։
ՀԵ. 4։ ՂԳ. 8։ և 19։
Կնիւն։ Սազ, որ ջրոտ կեօլ տեղ կը բուսնի։ ԼԹ. 2։
Կշտամբեալ։ Յանդիմանած, չեխուած։ Բ. 1։
Կռփող։ Իւմրուխով գլխու զարնող՝ ծեծող։ ԼՋ. 2։
Կոթող։ Բարձր տնկած քար. տիքիլի թաշ։ ԼԵ. 2։ և Յէշ"։
Կոհակ։ Ալիք ծովու. տէնիզ տալկասը։ ԻԵ. 2։ և ՁԵ. 1։
Կողկողանք։ Խղճալի կերպիւ լալը՝ աղաչելը։ ԻՋ. 1։
Կոշկոճել։ Խիստ չարչարել՝ տանջել։ ՀԱ. 3։
Կոշտ։ Պինդ հողի կտոր, իւմրու հող։ ՀԴ. 3։
Կորակոր գնացք։ Ծըռմըռկելով քալուածք։ ԿԹ. 2։
Կտեալ։ Զարնուած՝ եարալանմիշ եղած։ ՁԷ. 2։
Կտեալ դիպուած։ Զարնելու դպչիլը. վուրուձու տօ-
քանըշ։ ՂԲ. 5։
Կրթականութի։ Թալիմլի մարիֆէթ. հիւներ։ ԽԳ. 1։

Կրկնադատ անմթափելի։ Թէքրար սիճիլ եղած՝ որ այլ չի ազատուիր։ ԻԶ. 2։
Կրկնակապէն։ Երկու անգամ տրուած կաշառք, որ անգամ մի Յուդային տրուեցաւ, անգամ մի այլ զինուորներուն։ ԼԶ. 2։
Կրկնապարոյր կռածագ։ Չէնկէլի պէս ծառը ծուռ ինչպէս փիրէյին կոտուցն է։ ԿԹ. 2։
Կքումն։ Սըմփիլը, երկու խաթ ըլլալը, խոտխաթիմալը։ ԺԲ. 2։
Հագագ։ Ձայն, շունչ. սէտա, նէֆէս։ ԻԳ. 2։ ԽԵ. 2։ Ղ. 1։ և ՂԳ. 12։
Հալուէ։ Անուշահոտ եղ մի է, կամ էօտ աղաճինին էօղը։ ՂԳ. 11։
Հաղբ։ Որոգայթ, տուզախ։ Դ. 1։ ԾԳ. 1։ և ԾԵ. 2։
Համաբանաբար զուգամանութեամբ։ Միաբերան ամէնը մէկէն։ ՁԵ. 2։
Համաձևութեան օրէնք։ Ըրածը գտնելու օրէնք. գըսասա գըսաս չէրահալթը. ինչպէս Մովսիսական օրէնքն էր՝ ակն ընդ ական, և այլն։ ՀԲ. 2։
Համառօտ երբ։ Կարճ ժամանակ. քըսա վագթ։ ՁԲ. 6։
Համանեալ յանանջրպետ միականութիւն։ Միաւորեալ անբաժանելի միաւորութեամբ։ ՀԵ. 7։
Համասփիւռ։ Ամէն կողմ եայըլմիշ եղած։ ԼԳ. 1։
Համբարտակ վստահութեան։ Սըղընմիշ ըլլալու խուլէ։ Գ. 4։
Հայթայթանաց կրկուտ։ Կէչինմէյի համար չալը չըրփը, եօնղա։ Հ. 2։
Հայթայթումն։ Ապրին անդին ընկնիլը՝ ճար ընելը։ ԺԴ. 2։ և ՁԵ. 2։
Հանդիտափառ։ Նման փայլ ունող. ագրան։ ՂԳ. 7։
Հանգոյց։ Կապանք, քայտուպէնտ։ ԾԲ. 3։ և ՂԱ. 1։
Հանդերձանք։ Յարմար խառնուածք չինուածք։ ԻԳ. 2։

կամ սալթանաթ, թախըմ։ ԼԸ. 2։
Հանդերձաւորիլ։ Զարդարուիլ, պատրաստուիլ։ Գ. 2։
Հանի։ Մամ, մեծ նէնէ։ Հանի Մովաբու։ Մովաբին մեծ մայրը, որ է Ղովտայ կինն։ ԼՋ. 2։
Հաշմեալ։ Ախտած, խասխաթի եղած։ ՁՋ. 2։
Հասկ։ Ցորենի՝ կամ գարիի գլուխ։ ԼԸ. 4։
Հաստարան։ Հաստատուելու կանգնելու տեղ, գաւազան. ուէյնէկ։ Գ. 3։
Հաստուածք։ Հաստատուածք. վինճուտ, կէօվտէ։ Ջ. 3։
Հատուածեալ։ Կտրուած, զատուած։ Ը. 2։ և ՀԵ. 2։
Հարևանցի երևականութիւն։ Այլը չեղած երևոյթ. խէյալէթ։ ՂԳ. 10։
Հարևանցիկք։ Երևցող ու թէզ մը անցնող։ ՀԳ. 3։
Հարթուցեալ։ Լեղուով ծեծած, թաղիր եղած։ ԺԷ. 1։ և Ձ. 3։
Հեծան։ Բիր. սօփայ։ Ժ. 2։ և ԺԲ. 1։ կամ սուրբ խաչին պօյձա փայտն, որ է Քրիստոսի զէնքը։ ՂԲ. 6։
Հեծանոց։ Հարմանճիներուն մատ մատ քիւրէկն, որով յարդը՝ ցորենէն կը զատեն. եափա։ ՀԱ. 3։
Հեղեղատ կեդրոնի։ Երուսաղէմի սէմթ գետ մի է։ Ա. 2։
Հեղեղամայր։ Ջուր կոխած տեղ, կէօլ։ ԼԹ. 2։
Հեղիաս։ Եղիա մարգարէն։ ՂԳ. 6։
Հեղոյս։ Բևեռ. էքսէր, չիվի։ ԻԵ. 2։ և ԻԸ. 6։
Հենգնել։ Ծաղր ընել. մէզադ էթմէք։ Կ. 4։ և ԿՋ. 4։
Հենուլ։ Հինել, հուսել։ ԿԳ. 2։
Հեստեալ։ Օրէնքէ դուրս ելող՝ դէմ կեցող։ ԼԳ. 4։
Հերապանծ տունկ։ Տերևներով ճիւղերով զարդարուած ծառ։ Թ. 2։
Հէն։ Չէթէճի, խուրսանտ։ ՂԲ. 9։
Հիւղ։ Մանրիկ փոշի. հիւլէ։ ԽԷ. 2։
Հմայեկ։ Համայիլ։ ՂԳ. 18։
Հմայք։ Պախըճիութիւն, տալէթ։ ԽԸ. 3։

Հնարագիր։ Տուղախ խուռամիջ ընող։ ԾԵ. 3։

Հոգենկար։ Հոգւով սրբով բէամ եղած. կամ հոգևոր գրուած։ ՀԵ. 3։

Համանի։ Պոռնիկի սիրահար։ ՁԳ. 3։

Համերոն։ Համերոս, բանաստեղծ մարդոյ մի անուն։ ՂԳ. 19։

Հովիտ։ Ձոր. տէրէ։ Ա. 2։ Խ. 2։ ՂԳ. 11։

Հրաշակերտութիւն։ Գեղեցիկ և զարմանալի շինուածք։ Ի Յիշատակարանն։

Հրաշեկ։ Կրակի պէս կարմրած։ Բ. 2։

Հրապոյրս արբուցանել։ Թմրեցնող ու խելըցնող դեղ խմցընել։ ԿՋ. 4։

Հրատապ։ կրակի պէս տաքցնող։ Խ. 3։

Հօրան ուլուց։ Սիւրիւ՝ այծու ձագերու. օղլագլար սիւրիւսիւ։ ԽԸ. 1։

Ձեղուն։ Տանը ծածքը, ատկք։ ԿԸ. 2։

Ձեռնազննին։ Ձեռքով բռնուելու։ ՀԵ. 12։

Ձեռներէց լինել։ Ցանդգնութեամբ ձեռք ձգել. էօն այազ օլմագ։ ԾԸ. 2։

Ձուլածոյ։ Տէօքմէ կուռքի պատկերք։ ԽԸ. 3։

Ղօղել։ Պահուիլ. կիզլէնմէք, սագլանմագ։ Դ. 1։

Ճակատիլ։ Պատերազմիլ, ճէնկ ընել։ Կ. 4։

Ճայ։ Ճայեկ, սևագոյն թռչուն մի է։ ՀԱ. 2։

Ճայթումն։ Սաստիկ հնչումն, չաթըրտը։ ՂԲ. 2. և 7։

Ճապուկ բոտոտ։ Կակուղիկ բարակուկ՝ փորու սօղուլճան։ ԿԹ. 2։

Ճարպ։ Փորու եղ. իչ եաղը։ Ա. 1։ ՂԳ. 8. 17. և 23։

Ճենճեր։ Քեպապին փրփուրը՝ քէֆը։ Ա. 2։

Ճիրան։ Սուր եղունկով ճանկ, փէնչէ։ Ջ. 3։ և ԿԸ. 3։

Ճնշեալ մզել։ Սխմելով քամել։ ՂԳ. 11։

Ճշդավ։ Էշկեարէ այըրտ ընելով։ ԽԵ. 1։ կամ Նէքէ-սութիւնով։ ՀԹ. 3։

Մ՝ագնեստիս վէմ։ Մըխլատըզ թաշը։ ԽԵ. 1։

Մածուած լոյծ։ Ջրեղէն երկինքն է։ ԼԴ. 4։
Մածուած լաստի. Կէմիի թեքնէ։ ՁԵ. 2։
Մակադաւիթ. Լայն և արձակ տեղ։ ՚Ի Ցէշտփ"։
Մամռարմատ։ Բոլոր քէօքէն մամռօտ, գորտընկրդոտ. եօսունլու։ ԾԴ. 3։
Մանկաղ։ Մանգաղ. օրագ, թռփան։ ԼԵ. 3։ և ՂԲ. 7։
Մառնամուռ։ Մութ տումանով ծածկած, չի տեսնուելու։ ՂԴ. 19։
Մարդելոյզ։ Հողըքորթ, միւտահանէ ընող։ Կ. 4։
Մարմանջումն. Ցանկութեան հարադէթ։ ԽԵ. 2։
Մեծգիտականն։ Մեծապէս գիտցող, ինֆրաթ վուխուֆ։ Գ. 2։
Մեկնադէն. Չէթէձի. փոսու խըրըքըը։ ԿԹ. 2։
Մեկին։ Յայտնի. էշկեարէ։ ՂԳ. 11։
Մեղկել։ Թուլցնել, կէվշէթմէք։ ՂԳ. 23։
Մեղսամակարդ։ Մեղքով պըըշկած։ ԾԵ. 3։
Մեղքոմ։ Կուռքի անուն է։ (Գ. Թագ". 11. 5)։ Կ. 4։
Մեռայ։ Դառնութիւն, լեղիութիւն. և է անուն տեղւոյ։ (Ելից. 15. 23)։ ԿԳ. 1։ և ՂԴ. 20։
Մերասել։ Մեր, այսինքն՝ մարդոյ սոյէ ծնած։ ԼԴ. 9։ և ՀԵ. 7։
Մերկամրցանակ։ Չպլախ ձէնկ ընող՝ կիւլէշ բռնող։ ՂԳ. 13։
Մերկապարանոց։ Յայտնի. էշկեարէ, պէյան։ Ը. 1։
Մեքենայ։ Խափանձա. տուզախ։ ԾԵ. 2։ Ղ. 3։ և ՂԴ. 2։
Մզնարհեստ։ Կաշիի զարի պէս բարակ կազմած։ ՂԳ. 20։
Մթեր։ Գանձարան. խազնա։ Դ. 1։
Միխ։ Մոծակ. սիվրիսինէկ։ ԿԸ. 3։
Միջուկ։ Գինիի, կամ ձիպրէի մանրիկ ձանձ։ ԿԸ. 3։
Միագոյ իր։ Շատ մասունքէ ձեւմեղած մէկ բան։ ՚Ի Յէ"։
Միատարր։ Ջուր, սառոյց. զալթը, եօզ։ ՀԱ. 1։
Միեղջերու։ Ճակատը մէկ պոյնուզ ունող քաջ կենդանի մի է, բէձկէրտան։ ԿԸ. 3։

Մղձկիլ։ Լալը գալ. տօլուքսունմաք։ Խ. 3։ և ԿԲ. 2։
Մղտափարատ։ Մութը հալածող՝ տէֆ ընող։ ՚Ի Յէլ"։
Մողոք։ Կուռքի անուն է։ (Ամով. 25. 6)։ Ի. 2։
Մորմոքեցուցիչ։ Սիրտ կսկծցնող, խշխշցնող։ ՂԲ. 9։
Մուխ։ Ջուր տուող, զաղլամիշ ընող։ ՂԳ. 24։
Մուրհակ։ Վճռոյ գիր. խլամ։ ԽԸ. 2։
Մուրճ։ Թաշճիկի չէքիչ. քիւլիւնկ։ ՂԲ. 7։
Մտել։ Մտանել, մտնել. կիրմէք։ ՀԱ. 2։
Մրմնջել։ Թրմնջալով և էզկլով լալ՝ ողբալ։ ԼԹ. 3։
Մրցանակ։ Կորիճութեան ճէնկ։ Ժ. 2։ կամ կորիճութեան համար պախշիշ, չէլէնկ։ ԿԱ. 2։
Յաբեթական տոհմ։ Նոյ նահապետի որդւոյն սննիլէն է, որ է ազգն մեր՝ Հայոց։ ՚Ի Յէլ"տոֆորանն։
Յամայր յամրութիւն։ Շատ ժամանակ ուշանալը։ ՁԱ. 2։
Յամրային։ Ուշ մնացող, օյալանմիշ ըլլող։ ԽԸ. 2։
Յայրատ։ Անամօթ. առսըզ, էտէպսիզ։ ԼԳ. 1։
Յայրատատես։ Էտէպսիզճէ նայող՝ տեսնող։ ԾՋ. 2։
Յանգաւորութիւն։ Լմննալը. թամամլըք։ Թ. 3։
Յանգիլ։ Վերջը հասնիլ, լմննալ։ ԿԱ. 1։
Յանկաւոր։ Ուղղուն, եախըշըխլը։ ԾԳ. 2։
Յանձանձել։ Պէտ ընել, թիմար ընել։ ԽԹ. 2։ և Ձ. 3։
Յառաջատեալ։ Յառաջ ընկնող. իլէրի սէրփէն։ ԾԳ. 1։
Յարագօղ։ Արեւին դէմ կախող՝ մեռցնող։ ՀԱ. 3։
Յարգահատել։ Յաւակցելով աղաչել, եալվարմալ։ ՀԳ. 2։
Յարկել։ Օտայի պէս տեղ չինել՝ մէջը պահել։ ՂԳ. 9։
Յաւակնիլ։ Աներեսութեամբ լըբութիւն ընել։ ԼԴ. 7։
Յաւտնական. յօնական։ Ամբարտաւանական. էտէպսիզ տիւզէնլի։ Կ. 4։
Յափրացեալ։ Տաղտկացեալ, պըխմիշ եղած։ ՂԲ. 10։
Յեղուզակ։ Աւազակ. հարամի։ Ջ. 3։
Յեղանակել։ Դարձընել, պաշխայ կերպ ընել։ Բ. 3։ ԿԳ. 1։ և ՂԳ. 19։ կամ Երգել։ ՀԳ. 3։

Յեղյեղել։ Փոխարկել, Թէպտիլ ըլլել։ Թ. 2։ կամ շատ կրկնել՝ յիշել։ ԿԱ. 2։
Յեսանել։ Սրել. պիլէմիշ ըլլել։ ԴԲ. 5։
Յերփուրումն։ Զարդարելը՝ ետխըշըխ բերելը։ Խ. 3։
Յէու և Ագայէլ։ Երկու Թագաւորաց անուանք են։ (Գ. Թագ″. 19. 15)։ ԴԳ. 6։
Յղփացեալ։ Խիստ կշտացած. իֆրաթ տօյմուշ։ ԾԹ. 2։
Յոբելեան։ Յիսներորդ տարի, Թողութեան տարի։ (Ղեւտ″. 25. 8)։ ԴԲ. 7։
Յոլովամեղծ ծուխ։ Շատ խուրում փէյտահ ընող ծուխ, խալի Թիւթիւն։ ԽԸ. 4։
Յողդք դեգերիլ։ Գերեկնալ. ըէճայա մէշղուլ օլմաք։ ԺԲ. 1։
Յօյզ մտաց։ Մտմտուք, մտքի ալաւէրա։ Թ. 3։
Յովանակ։ Աւանակ, իշու քուռակ. սըփա։ ԻԲ. 2։
Յորջորջումն։ Կոչումն, անունը տալը։ ԼԴ. 3։ և ԴԳ. 7։
Յորսայսել։ Կռնըկին վրայ գետինը ձգել։ ԼՁ. 2։
Յուռթի քրտունք։ Առատ քրտինք. քան Թէռ։ ԿՁ. 4։
Յուռութ։ Համայիլ, կամ կռապաշտական հնարք։ ԿՁ. 4։ և ՀԵ. 12։
Յուսոյ ձգարան։ Յօյսին Թելը, ումուտին չուանը։ Դ. 4։
Յօնիցն յաւակնութիւն։ Ընքուններուն հպարտութիւնը՝ լըրբութիւնը. մաղրուրլուք էտէպսիզլիղի։ ԽԵ. 2։
Նախայանցք։ Առաջուց մեղանչողք, ջըհեղեղին ժամանակի մեղաւորները։ ՀԹ. 3։
Նախայլք։ Առաջին այլք. էվէլքիլէր։ Գ. 4։
Նահանգ։ Մէմլէքէթ. այալէթ։ ԼԷ. 1։
Նահանջեր։ Նահանջեցեր արգիլեցիր խասխաթի ըրիր։ ԿԳ. 1։
Նաշիհ։ Շարմաղուն՝ խիստ բարակ ալուր։ ԴԳ. 8։
Նարդոս։ Անուշահոտ ծաղիկ է, նօնօֆար։ ԴԳ. 11։
Նարեկ։ Էր վանք կրօնաւորաց՝ ի գաւառին Անձեւացեաց, ուր վանահայր էր վեհափառ այս մեր

Նաւակատիք։ Տօն, ուրախութիւն. տօնանմայ։ ՂԱ. 1։
Ներգևեալ։ Խեղճ՝ աէֆիլ եղած. տէրախմէնտ։ ԻԱ. 2։
Նրբութիւն։ Նրբողութիւն, սուչը պախչելը. ալֆի։
ԺԸ. 1։ և ՁԲ. 5։
Նեցուկ։ Յենարան. տայախ։ ԿԷ. 2։ և ԴԲ. 10։
Նէսար։ Այս պիղծ, չար դև, սատանայ. ճին։ ԴԲ. 9։
Նժար։ Թէրազիի թաս, թաթ։ Թ. 1։
Նկատ եղանիլ։ Նկատել, տեսնող ըլլալ։ ԿԸ. 2։
Նկարագրեր։ Նկարագրեցեր, միւսէվվէտէն գրեցիր,
խմայուցիր։ ԾԲ. 1։
Նհանջել, կամ նահանջել։ Արգիլել, ետ դարձընել։
Բ. 3։ և ԽԱ. 1։
Նշաւակել։ Ցոյց տալ. խայրէթ էթմէք։ Գ. 2։
Նշկահեալ։ Անարգուած. մէզագ եղած։ ԽԲ. 1։
Նօդկալ։ Գարշելի՝ զզուելի ըլլալ։ Ղ. 3։
Նուիրան։ Նուէրարան, փէշքէշ ընծայելու տեղ։ ՀԵ. 9։
Նպատակ։ Նշան առնուած տեղ. նշանկեահ։ ԴԲ. 5։
Շաղակրատ։ Ապուշ ծուռ խօսող. լաֆազան, պօշ
պօղազ։ ԾՁ. 2։
Շամբ։ Անտառ եղեգանց. գամըշլըգ։ Թ. 1։
Շամրին։ Սամարիա, որ Երուսաղէմի մօտ գաւառ մի է։
(Եղէկ". 16. 46)։ ԾԴ. 2։
Շանդ։ Կայծակ. երլտըրըմ։ Ձ. 3։
Շերտ։ Փայտ. սօփա, օտուն եառմասը։ ԴԲ. 3։
Շչուկ։ Սատանայական ադմուկ՝ վելվելէ։ Խ. 3։
Շուայտութիւն։ Ցանկական ճիւնունութիւն։ ԽԸ. 3։
Շութափութիւն։ Խիստ արտորալը. աճէլէ։ ԴԳ. 11։
Շուշան։ Ծաղիկ է, զամպախ։ Կ. 1։ և ԴԳ. 11։
Շուք։ Պատիւ, փառք. իզզէթ։ ՁԳ. 4։ և ԴԳ. 18։
Շտեմարան։ Ներսէ ներս օտայ. սըր օտասը։ Խ. 2։
Շրջագրութիւն։ Էթրաֆը տօնաթմիշ ընելը, կամ
պահպանելը։ ԿԲ. 1։ և Ղ. 1։

Շլտումն։ Շուարումն, անձրկելը, շաշմիշ ըլլալ մնալը։
ՂԱ. 3։
Ոգորել։ Կռուիլ, ձէնկ ընել։ Թ. 3։
Ոզիէլ։ Մարդոյ անունն է։ (Բ. Թագ" . 6. 7)։ ՀԵ. 12։
Ոզնափայտ։ Նաւուն գլխէն մինչև 'ի խորշըն' տակի երկան տիրէկն է, որոյ վերայ կողերն շարած է։ ԻԵ. 2։
Ողողիլ։ Լուացուիլ, առնելով ցօղվելը։ ՂԳ. 11. և 24։
Ողողակ մթայլն ոչ ընթելական։ Ողողացող քէօր աձամի։
ԾԵ. 2։
Ողիայ, Ողիբայ։ Էին անուանք երկուց թագաւորութեանցն՝ Սամարիոյ և Երուսաղէմի. զորս եդ մարգարէն։ (Եզեկ" . 23. 4)։ ԾԴ. 2։
Ոռոգել։ Ջրել, ինչպէս՝ պախճան, ծառը։ ԼԷ. 2։
Ոստայնս կկել։ Կտաւ, կամ էօրիւմճէկ գործել։ Է. 3։
Ոստիկան։ Վերակացու. քեահեայ։ ԾՋ. 2։ և ՀԹ. 3։
Որոջ։ Գառն. գուզու։ ԼԱ. 3։
Ուղերձեալ։ Ծլած ծաղկած, փիլիալէնմիշ եղած։
ԺԵ. 4։ և ԽԹ. 2։
Ուղէշ։ Ծառի ճիւղ. տալ պուտագ։ ԻԳ. 2։ և ԿԱ. 3։
Ունելիք։ Կրակի մաշա, խըսաձ։ ԼԳ. 5։
Ունկ, ունկի։ Ցարդի մանրուք. սաման թօզու։ ԻՋ. 2։
Ունկնախից։ Ականջը խըցած՝ գոցած, խուլ։ Ծ. 4։
Ուշ։ Միտք. ֆիքիր, ֆէրասէթ։ ԻՋ. 3։ ԼԴ. 2։ ԾԹ. 1։
ՀԲ. 2։ և ՂԳ. 24։
Ուտիչ։ Ցեց. կիւվէ։ ՂԲ. 9։
Ուտձահալ։ Ցեցէն կերուած, փտտած։ ԾՋ. 2։
Ուրոյնութիւն ել։ Զատութիւն ըլլալ, զատ զատ ըլլալ։ ԼԴ. 7։
Ուրուական։ Գարշելի, փուճ, դիւական։ ՀԱ. 4։ ՀԵ. 12։
և ՂԳ. 24։
Չարաշուք։ Չարութիւն երևցնող, գզուելի. պէթ։
ԾԵ. 2։ և ԾԲ. 2։
Չորեքվտակեան առոջ։ Չորս մեծ գետ ունող ըռմախ.

որ էր յԵդեմայ բղխած գետն։ (Ծնն″. 2, 10)։ ԿԸ. 1։
Չու։ Քալուածք, յառաջ քալել գնալը։ Բ. 2։ և ԻԵ. 2։
Չքնաղ։ Խիստ աղէկ գեղեցիկ։ ԺԱ. 1։ և ՀԵ. 13։ կամ փառաւոր, հրաշալի։ ՀԱ. 4։ և ՂԳ. 19։
Չքոտի։ Նուաստ, փոքրիկ, փուճ. ղայիփ։ ԿԹ. 2։
Պակուցեալ։ Խիստ վախցած, սիրտը փրթած։ Ծ. 2։
Պահակ։ Անկարիայի բռնուած, որ էր Սիմոն Կիւրենացին։ (Մատ″. 27. 32)։ ԾԸ. 3։
Պահպանակ։ Պահող, պահպանող։ Դ. 3։ և ԿԵ. 2։ կամ գլուխ։ ՂԳ. 12։
Պաղպաջունք։ Գեղեցիկ պայծառ քէօշկ։ ԻԵ. 2։
Պաճար։ Կովու սիւրիւ։ ԾԵ. 3։
Պայթիլ։ Փաթլամիշ ըլլալ, ճաթիլ։ ՀԴ. 3։
Պայման։ Չափ. սինօռ։ Բ. 3։ ԻՁ. 2։ և ՂԳ. 24։ կամ ուխտ, խաւլ։ ԾԳ. 5։
Պան։ Հաց, սօմուն. էքմէք։ ՂԳ. 8։
Պաշտօնատէր։ Խըզմէթ ընող։ ԻԱ. 2։ ԻԸ. 2։ և ԾԳ. 4։
Պաշտօնատեղ։ Աղօթքի տեղ։ ԾԱ. 4։
Պատանդիչ ցանցարկ։ Խավռանմիշ ընող զապթ ընող՝ խուռուլմիշ եղած տուզախ։ ԾԵ. 2։
Պատարուն։ Լեցուն. սիլմէ՝ տօլու։ ԽԸ. 3։ և ԿԳ. 2։
Պատգամ։ Խապար, խօսք. քէլամ։ ՂԲ. 3։
Պատնէշ։ Թապիյէ, պէտէն, մէթէրիզ։ Կ. 2։ և ՂԲ. 5։
Պատուածօրէն։ Պըտուտուք՝ տօլաշըքլը։ ՂԳ. 7։
Պատուաստումն։ Կցուիլը, էքլէնմիշ ըլլալը։ Լ. 4։
Պատսպարան։ Սըղընմիշ ըլլալու տեղ. սիփէր։ Խ. 2։ ՁԲ. 1։ ՁԹ. 1։ և ՂԱ. 3։ կամ տայախ, իբր՝ թէմէլ։ ԽԵ. 2։
Պարոյկ։ Ճրագի ֆիթիլ։ ՂԳ. 2։
Պարս։ Սափան, որով քար կընետեն։ ԼԴ. 7։ և ՂԲ. 4։
Պարսել։ Իբր սափանով քարոտել, տանջել։ Է. 2։ կամ հալածել, դուրս ընել։ ԼԲ. 3։ և Ղ. 3։
Պէծակ։ Իշմեղու. էշէկ առըսը։ ԿԸ. 3։

Պխտակ։ Լոկ. սալթ, սատէ։ ԻԸ. 6։

Պղպջակ։ Ուռեցք, որ ջրին երեսը բուշտ բուշտ կ'ըլ-լայ. տու. գապարճըղը։ ՀԴ. 3։

Պղտորարբութիւն։ Պուլանըխ խըմելը։ ԾԴ. 3։

Պճնելի։ Զարդարելու, սազելու։ Բ. 2։

Պնդիլ։ Ետեւէն ընկնիլ՝ վազել։ Բ. 2։

Պուետիկոս։ Բանաստեղծ. շայիր, աշըղ։ ԽԸ. 6։

Պուրակ։ Օռման, կամ ծառերու երըըն, տէմէթ։ Թ. 1։

Պչրութիւն։ Նտէպսիզ սազուիլը, ինչպէս՝ ըկտի կանանց տիւզէնը։ ԽԸ. 4։

Ջախել։ Ջաղխել, ջարդել. կոտրել։ ԽԸ. 4։

Ջահաւորիլ։ Մաշալայի պէս վառիլ, փայլիլ։ ՂԳ. 17. և 23։

Ջահել։ Ծագել, լուսաւորել։ ՁԳ. 2։

Ջամբել։ Կերցընել, տալ։ ԺԴ. 3։ և ՂԳ. 22։ և 23։

Ջնար։ Սանդուռ։ ՂԲ. 8։

Ջնել։ Ջարնել, ծեծել։ Կ. 2։

Ջութակ։ Սանդուռ, կամ քէման։ ՂԲ. 8։

Ջրակարծ։ Ջրէն կարծրացած՝ սառած, ինչպէս՝ կարկուտը։ ԿԸ. 3։

Ջրել։ Ջնջել, աւրել. պօզմագ։ ԼԲ. 3։ ԽԸ. 1։ ԿԷ. 2։ և ՂԳ. 14։

Ջրողող։ Ջրհեղեղով ապականած՝ թէլէֆ եղած։ Կ. 5։

Ռետին։ Թիրէմէնթին, որ եարայի դեղ՝ մէհլէմ լինի։ ԿԲ. 1։

Սաբեկ։ Է անուն ծառոյն, յորմէ կախեալ տեսաւ Աբրահամ՝ զխոյն։ (Ծնն՛՛. 22. 13)։ ՂԲ. 9։

Սադրել։ Մատնել, խամզել. էլէ վէրմէք։ ԿԵ. 1։ կամ չար ֆիթ տալ։ Ղ. 3։

Սակ։ Հարկ. վէրկի, խարաճ։ ԽԵ. 1։ կամ չափ. հիսապ։ ԺԷ. 3։ ԽԷ. 2։ և Հ. 3։

Սակաւաձեռն։ Տկար, զայիֆ, նուազ։ Գ. 3։ և ՂԳ. 15։

Սահա՛նք ծովու։ Ծովու ախընթը։ ԿԴ․ 1։
Սահանք յորձանաց։ Տէրէ, սէլ տէրէսի։ Խ․ 2։
Սաղարթ սեւութեան վարսից։ Տերև՝ սև եավրախնե-րուն, որ է սաչ, սև մօրուք։ ԿԴ․ 2։
Սամի։ Տիւմէնը դարձընող փայտ, եէքէ։ ԻԵ․ 2։
Սառնասէր։ Պուզի սօյ, պուզի պէս փառոցած։ ՁԱ․ 3։
Սատեր։ Սիկղ, զօլաթա, որոյ գինն էր 88 ըստակ։ (Մտթ″․ 17․26)։ ԽԵ․ 1։
Սարդ։ Մամուկ։ ՂԳ․ 14։
Սարտուցեալ։ Բաժանուած, երեսէ ձգած։ ԽԸ․ 2։ ԾԵ․ 2։ և ԿԲ․ 3։
Սաւառնիլ։ Թռչտելով խանատները վրայ բերել՝ ծած-կըւիլ։ ՂԱ․ 1։
Սափիրա։ Պատժեալ կնկան մի անուն է։ (Գործ․ 5․ 9)։ ՀԱ․ 3։
Սելով։ Խաղաղու-Ըէ-ն, քաղաք մի է։ Ա․ 1։
Սեղանանենգ։ Սեղանը, կամ տաճարը թալլող։ ԽԸ․ 2։
Սեպուհ։ Պէյզատէ, քիշիզատէ։ Գ․ 2։
Սեռն։ Մաքուր, ուղիղ․ հիլյէսիզ։ Ժ․ 2։ և ՚ի Ցիշպ″։
Սեւեռք։ Գամուածք, մըխլամիշ ըլլալը։ ԿՋ․ 4։
Սթափիլ։ Այընալ, խելքը գլուխը գալ, արթըննալ։ Գ․ 3։ և ՂԲ․ 1։
Սիգացող։ Փօտուըլութեամբ ուռեցող, սալըմիշ ըլլող։ ՀԳ․ 2։
Սիդոնացիք։ Սայտացիք, որք նաւատար կուռք մի ունէին, զոր պատուեաց Սաղոմոն։ (Գ․ Թագ″․ 11․ 5)։ ԽԸ․ 3։
Սիկ։ Անուշիկ հոտ․ խօշ րուզկեար։ ԼԲ․ 3։
Սին։ Դատարկ, պօշ, փուճ։ ԻԷ․ 3։ և ՁԱ․ 2։
Սլաք։ Օք տէմիրի, խըշտ։ ԻՋ․ 3։
Սկախառն։ Մուրտառ պուլանըխ, չիրքէֆ։ ԾԴ․ 3։
Սկաւառակ։ Քէասէ, թաս, աման։ Լ․ 2։ և ՁԸ․ 1։
Սկիւթացի։ Թաթարաց ազգն է։ ՂԴ․ 12։
Սնոտիապատուաստ։ Անշահ շինուած, նիզամըզ տխ-

պէնմիշ եղած։ Գ․ 1։
Սնոտիասէր։ Պօշ՝ փուճ սէր ունող։ ՂԴ․ 20։
Սոսկական։ Եայան։ Գ․ 3։ կամ Ռամիկ, Ֆախիր։ ՀԱ․ 2։
Սոսկամխիթխար։ Անարկու լէնտուհա, պէտտամլի։ ՂԳ․ 12։
Սոր։ Խորուկ տեղի ճամբայ, տէրէ։ Խ․ 2։
Սուզել։ Տակը իջեցնել․ պաթըրմագ։ ԼՁ․ 2։
Սուրհանդակ։ Սայի, մէնզիլ։ ԾՁ․ 2։
Սոփեր։ Մատեան, գիրք․ քիթապ։ ՁԸ․ 2։ և ՚ի Յէշուա″։
Սպանդ։ Ջոհ․ ղուրպան։ ԽԴ․ 2։
Սպանդարան։ Ղուրպան մորթելու տեղ։ ԽԷ․ 3։
Սպառազէն։ Սիլահլը, փիւր սիլահ։ ԾՁ․ 2։
Սպեղանի։ Դեղ, մէհլէմ։ Բ․ 3։ և ԽԸ․ 1։
Ստամբակ։ Նախս, զալըմ, եարամազ։ ԽԸ․ 3։ և ՂԲ․ 2։
Ստգտանք։ Մեղադրանք․ սիթէմ։ Թ․ 3։
Ստորևելք։ Վարէն վեր ելող, կամ ելած։ ՂԳ․ 24։
Ստուար։ Թանձր, հաստ։ ԽՁ․ 2։ և ԿՁ․ 4։
Ստուարաստեղն։ Ճիւղը հաստ․ դալըն տալլը պու-տագլը։ Թ․ 2։
Ստուգաբանեալ։ Ուղղուն գալով խապաթ եղած ՂԳ․ 20։
Ստրուկ։ Խեղճ՝ ծառայ․ բայէ։ Գ․ 3։ ՂԳ․ 12․ և 18։
Ստրջանալ։ Ափսոսալ, զղջալ, փիւշման ըլլալ։ ԻԹ․ 2։
Սրահի առագաստ։ Բակի փէրտէն, որ է՝ դուռն։ ԽԸ․ 1։
Սրանալ։ Թռչիլ, փախչիլ։ Ի․ 2։ Լ․ 4։ ԽԸ․ 3։ ՀԱ․ 2։ և ՀԴ․ 2։ կամ Սիվրիլմիշ եղած․ քէսկինցած։ ԻԸ․ 3։
Սրացեալ վարատական։ Փախչող հեռացող, տէտիրկին։ ԺԱ․ 3։
Սրբերգեան։ Սբ Սբ երգող, ինչպէս՝ Սերոբէքն։ ՂԳ․ 1։
Սրինգ։ Նէյ․ Կիրիֆ։ ՂԲ․ 8։
Սրսկումն։ Ցրցըքնելը, սէրփմիշ ըլլելը։ ԾԱ․ 4։
Սփոփանք։ Սփոփութիւն, մխիթարանք․ թէսէլլի։ Դ․ 1։ ԼԴ․ 3։ և ՂԳ․ 9։
Սքանչելահրաշ։ Հրաշալի․ մուճիզաթլը։ ՀԵ․ 10։
Սքանչելատես։ Զարմանալի գեղեցիկ տեսիլ ունող։

ԾԱ. 4։

Սքանչելամարտ։ Զարմանալի գերազանց քեզք ունող։ ՀԴ. 2։

Վայրագասուն։ Լեռը մեծցած, եապանի։ ԽԶ. 1։

Վայրագութիւն։ Եապանի կոպտութիւն. եավուզլուք։ ԺԱ. 3։ Լ. 4։ ՀԱ. 4։ և ՂԳ. 19։

Վանդակապատ։ Պարմախլըխ շարած գեղեցիկ քէօշք։ ԻԵ. 2։

Վանիչ։ Զայ ընող, Թէլէֆ ընող։ ԻԶ. 2։ կամ փճացնող, չէուրիւթմիչ ընող։ ՂԲ. 9։

Վարակեալ։ Պաշարեալ, մուհասերէ եղած։ ԼԱ. 3։

Վարանիլ։ Վախուն Թասայիլ՝ անճրկիլ։ ԻԶ. 3։ և ԻԸ. 2։

Վարապան։ Կէմ, հալխա, որ գաղտնի բերան կը կապեն։ ՂԲ. 2։

Վարատիլ։ Ջատուիլ՝ տէտիրկին ըլլալ։ ԻԷ. 3։

Վարմ։ Տուզախ, խափանճա։ Խ. 3։

Վարք։ Մաղեր, որ Թէ մարդոց իցէ՝ մերչէմն է։ ԿԳ. 2։ և ՂԳ. 12։ և եթէ ծառոց իցէ՝ եափրախներն է։ Թ. 2։

Վերակացումն։ Զապիտութեամբ ձեռք վերցընելը։ Ա. 2։

Վերակենցաղել։ Կրկին ողջնալ, յարութիւն առնել։ ԼԴ. 5։

Վերակնարկել։ Վեր նայիլ, դէպ 'ի վեր ումուտ ընել։ ԻԶ. 3։

Վերնամարտութիւն։ Վերինին հետ ճէնկ, որ է աստուծոյ դէմ դնելը։ ԾԱ. 4։

Վերնամրցանակ։ Երկինքէն տրուած յաղթութեան համար՝ վարձք. չէլէնկ։ ՂԳ. 24։

Վերջին դատակնիք։ Ի կորուստն յաւիտենական վճռել, որք են դատապարտելոյն դասք։ ԻԷ. 2։

Վերջնական։ Եօքինը. կամ խիստ պէթերը։ Ծ. 3։

Վերջնական աճառ։ Քէօկին լէքէ սապօնու։ ՂԳ. 11։

Վէս։ Հպարտ, ինքնահաւան։ Ծ. 2։

Վիժած անգրելի կոչման։ Անցուցած տղայ, որ մարդ չի կոչուիր։ Ի. 2։
Վիհ մեծից։ Խորունկներուն խորունկը։ Խ. 2։
Վիրգ մահու։ Մեռցնող ձէնկի քար. կիւլէ։ Կ. 2։
Վիրգ սալի։ Տէօշէմէյի քար, դայքան։ ՂԲ. 8։
Վտակ։ Ախընտը, կամ սէլ, ըռմախ։ ԾԴ. 3։ և ՂԲ. 10։
Վտտել։ Վատուժցնել, չիրքինցնել։ Ի. 2։
Վրիժակ։ Վճիռ. իլամ, սիճիլ։ ԻԷ. 2։
Վրիպակ։ Մոլար, ծուռ։ ԺԸ. 2։ ԽԸ. 4։ և ՂԲ. 9։
Վրնջողական։ Բղջախոհ ցանկութեամբ կատղիլը, աղմիշ ըլլալը։ ԽԵ. 2։
Տակաւ տակաւ։ Կամացուկ կամացուկ, քչիկ քչիկ։ ԾԸ. 3։
Տաղանդ կամ քանքար։ Քէսէ մը ստակ, բիւր քանքար, տասը հազար քէսէ ստակ, կամ այլ աւելի։ ԻՋ. 2։
Տաղաւարեալ։ Բնակելու տեղ ըլլալ։ Ձ. 1։
Տաղաւարիլ։ Գօնադ էթմէք։ ՀԵ. 13։
Տաղտկազգալական։ Իքրահ ընելու, մուրտառ։ ՂԳ. 20։
Տաշտ։ Քեասէ, թաս։ Լ. 2։
Տատամսելի։ Տրտմելի, խասալէթ ընելու։ ԼԱ. 2։
Տարազ։ Կերպ. թարզ։ ԺԸ. 2։ և ԾԴ. 5։
Տարացոյց։ Նման էօրնէկ, ուլղուն։ ԺԵ. 2։ և ԽԵ. 3։
Տարժանելի կամ տաժանելի։ Խիստ աշխատելի մէշաղգէթլի։ Ը. 1։ և ԿՋ. 5։
Տարմ։ Խանատըրներու քիւմէ՝ երընախ։ ԿԸ. 3։
Տարր։ Բոլոր նիւթաւոր մարմիններուն իմէմէլը, և է չորս. Հուր. Օդ. Ջուր. Հող։ ՁԲ. 3։ և ՂԳ. 15։ և զայս բառըս՝ պէս պէս նշանակութիւ գործածէ սուրբս. զոր օրինակ, Իտարր գոյի։ Տարերքէ եղածներուն մէջ, կամ կայ եղածներուն էօզին մէջ։ ԽԱ. 2։
Տարր ժամանակի։ Ժամանակին կացութիւնը, կամ չափը, որ հիչի մօտ՝ քիչ է։ ԾԻ. 3։
Տարր ժամանակաց։ Չորս եղանակնէ. Գարուն. Ամառն.

Աշուն. Ձմեռն. որք իբր տարիին տարերքն են: ԽՋ. 2:
Տարր մաշու: Մաշուան քեօքը՝ սէպէպը: ՂԲ. 6:
Տարերս սասանել: Բոլոր աշխարհս շարժել՝ դողցնել: ԼՋ. 2:
Տարր փոքր: Փոքրիկ ոչինչ իր. շէյճիղէզ: ԿԹ. 1:
Տեառնագրել: Կնքել, խաչակնքել: ԺԲ. 3: և ՂԳ. 12:
Տենդ: Ջերմ. սըթմա: ԻԸ. 5:
Տեսական: Տեսանող, կէօրիւճիւ: ԼԳ. 5: կամ երևելի. կէօզէ կէօրինէն: ԼԴ. 3: և ՁԴ. 1:
Տեսականել: Աչըլ եօզը խըլըխուլ մը մէյտան հանել: ՂԳ. 10:
Տէզ: Մըզըրախ, խըչտ: ԽԵ. 3:
Տիրադաւ: Իր տէրը խաբող՝ մատնող: ԾՋ. 2:
Տիրադրուժ պաշտօնեայ: Իր տէրը ֆէնտով խաբող խըզմէթքեար: Է. 2:
Տիւրոս: Կամ Ծուր, քաղաք մի է Սայտայի սէմթ: (Ես". 23. 15): ԼԹ. 3:
Տխրատեսակ ծո–ր, կամ Երկին: Մութ գոյն, սև ըռէնկ: ԼԴ. 8: և ՂԳ. 12:
Տղմախիտ գուբ: Չամուրով լեցուն հոր: ԺՋ. 1:
Տնտեսել: Պէտ ըլնել. քէրէմ էթմէք: ԺԵ. 2: կամ յայտնել, ցուցանել: ԽԸ. 6:
Տոյժ տանջանաց, կամ ըլկանաց: Վնաս պատժոյ. դալէպ ճէրիմէսի, սիասէթ: Բ. 2: և ՀԱ. 3:
Տռան: Չուանէ կապ. իփլար: ԻԸ. 1:
Տուայտիլ: Չարչարուիլ, ճէֆայէն մաշիլ: ԿՋ. 5:
Տպաւորագոյն: Էշկեարէ ույղուն, թըպգը: ԺԹ. 3:
Տրոհել: Որոշել, բաժանել, զատել. այըրմագ: ԽԸ. 1: և ԿԲ. 2:
Ցանց: Սիճիմով հուսուած թոռ. աղ, տուզախ: Խ. 5:
Ցիռ: Վայրի էշ. եապան էշէկի: ԽՋ. 2:
Ցնցուղ: Ցաթկոտուկ. սէրփինթի ջրոյ, կամ հրոյ: Ջ. 3: և ԿԸ. 3:

Ցոլք նշուլից։ Շողշողումն ճառագայթից, շաւխն փայլելով ցաթելը։ ՁԱ. 3։
Ցոփութիւն։ Անառակութիւն, աներեսութիւն. էտէպսիզլիք։ ՀԲ. 2։
Ցրիչ ցնորիչ։ Խենթ ու մենթ երազները տաղըթմիշ ընող։ ՁԴ. 1։
Փագովր։ Բէլփէգովր. կուռքի անունէ։ (Թուոց. 25. 3)։ ԽԸ. 3։
Փաղանգ։ Ճիւմհիւռ. Թապուռ. օռտու։ ԿԵ. 1։
Փաղաքշել։ Երեսպաշտութիւն ընել, խօշամէտի խօսիլ։ Ժ. 1։
Փապար։ Ծակ, խօմուխ. չուխուր։ Խ. 2։
Փարաքումն։ Բղջախոհ ցանկումն, էտէպսիզումն։ ԽԵ. 2։
Փթթեալ։ Ֆիլիզլէնմիշ եղած, ծաղկած։ ԴԳ. 11։
Փղշտացիք։ Բարբարոսաց և հմ այլազգաց կլառուի։ Ա. 2։
Փոկ։ Կաշիէ կապ։ ԽԵ. 2։
Փրկանակ։ Փրկութեան տեղ։ ԻՋ. 2։ կամ ումուտթէլի։ ԾԱ. 4։ կամ ազատելոյ գործիք։ ԿԳ. 3։ և ԴԲ. 5։
Քաղցկեղ։ Մարմինը չիւրիւթմիշ ընող եարա մի է, կերցառ. չիրիփէնչէ։ ԺԸ. 3։
Քամոս։ Կուռքի անունէ։ (Գ. Թագ″. 11. 7)։ Կ. 4։
Քայռ։ Կէրտանլըք, կամ լէօֆ։ ԼԴ. 1։
Քանան։ Նոյ նահապետի թոռնէ, Քամայ որդին։ Բ. 1։
Քանանուհի։ Կին մի էր Քանանացի, որոյ զաղջիկն Քս բժշկեաց։ (Մատ″. 15. 22)։ ԼԽ. 3։
Քանասար։ Կատաղի. եաւուզ, զալըմ։ ԿԹ. 2։
Քանցել։ Ճուղերը կտրտելով փրցնել։ ԻԴ. 1։ և ԿԻ. 2։
Քառադիմակք։ Ի մեկնութիւն բառին քե անայ, որ երևի ելեալ ՚ի Յունական բառէն կեֆըն, որ թարգմանի քառակուսի. ուստի քեան՝ քառադիմակի պատկեր, ասել է՝ չորս երեսով, կամ չորս թարաֆը կուռք, զորպիսի չինեաց Մանասէ (Դ. Թագ′. 21. 5)։ ԾԱ. 4։

Քաւարան։ Քաւող, մեղքը թողող։ ՂԳ. 1։
Քեղի։ Օրթա տիրէկ, թէմէլ տիրէկի։ ԼԲ. 3։
Քիմք։ Տամախ, կէյնզ։ ԻԳ. 2։
Քինաւոր։ Քէն ունող. ղարէզ ունող։ ՂԱ. 1։
Քղանց։ Հանդերձի փէշ. էթէկ։ ԺԸ. 2։
Քոյինանիւթ։ Քու նիւթըդ։ Քոյինանիւթ զանգուած. քու նիւթիդ խմորը, որ է իսկ մարմին խորհրդոյ։ ԾԳ. 4։
Քորեբ։ Արապիստան լեռ մի է, ուր խօսեցաւ աստուած Եղիայի հետ։ (Գ. Թագ". 19. 8)։ ԼԴ. 9։ և ՂԳ. 6։
Քստմնափուշ։ Վախցնող՝ մարմինը փուշ փուշ ընող։ ԻԸ. 6։
Քստմնելի։ Զարհուրելի, խիստ վախցնող։ Ը. 1։ ԺԸ. 2։ ԻԸ. 2։ ԽԸ. 4։ և ՀԹ. 3։
Քրայ։ Խալճիի օճախ։ ԺԹ. 1։ ԻԶ. 3։ և ԿԹ. 1։
Քրէական։ Խիստ մեծ մեղք, որ է աստուծոյ դէմ։ ԾԱ. 4։ և ՂԱ. 3։
Քրձազգած լինել։ Զուլ հագնիլ։ ԻԹ. 2։
Քրքում։ Զաֆրան չիչէկի, կամ զաֆրան։ ՂԳ. 11։
Օդք, օդէյ։ Ոտից աման, ինչպէս՝ չիզմէ, փապուճ։ ԽԷ. 3։
Օթոց։ Հանդերձ. էսպապ։ Գ. 1։
Օժանդակել։ Եարտըմ ընել, ուժ տալ։ Ե. 1։ Ժ. 2։ ԺԱ. 1։ ԼԴ. 6։ Ձ. 2։ և ՂԴ. 9։
Օճառ։ Ճէնկի թախըմ. սիլահ։ ԿԶ. 3։
Օն և օն։ Սանկ ու նանկ. չէօյլէ պէօյլէ։ ԻԹ. 3։
Օշինդր։ Լեղի խոտ մի է. փէլին։ Զ. 3։
Օստացի։ Յոբ երանելին է, զի էր յՕստեր գաւառէ. որ է 'ի կողմն Արապիստանու։ ԽԸ. 6։
Օտարազն։ Օտար ազգէ, այլազգի։ ԿԳ. 1։
Օտարութիւն։ Անընմանութիւն, մինասիպէթսիզլիք։ ՀԵ. 12։
Օրակշիռ։ Օր չափող, որ է արեգակն։ 'Ի Յիշատակարանն։
Օր 'ի յօր յերկարաձգել։ Օրէ օր ձգել։ ԾԸ. 3։

Օրհներգ. Երգող օրհնութեան, կամ օրհնութիւն։ ԿԱ. 2։

Գովութիւն, բարեբանութիւն, որ միայն աստուծոյ վայելէ, որ է անսկզբնաբար սկիզբն ամենայն սկսելոյ, և անեզրական վախճան։

ԴՐՈՒԹԻՒՆՔ ԳԼԽՈՑ

ԱՂՕԹԻՑ

Աղօթք առաւօտու։ ԲՃՆ . Խ . ՁԴ . ՁԵ . ՂԲ։
Աղօթք գիշերայնոյ։ ԺԲ . ԽԱ . ՂԱ . ՂԴ։
Աղօթք զղջման։ Է . Ը . ԻԲ . ԻԶ . ԻԷ . ՀԱ։
Աղօթք խնդրելոյ զշնորհս և զթողութիւն մեղաց։ Դ . ԺԵ . Ի . ԻԴ . Լ . ԼԲ . Խ . ԽԷ . ԽԹ . Ծ . ԾԷ։
Մաղթանք հաւատոյ։ Ժ . ԺԱ . ԺԴ . ԼԴ . ԽԴ . ՀԵ։
Մաղթանք յուսոյ և սիրոյ։ Բ . ԺԲ . ԼԳ . ԼԷ . ԽԲ . ԽԹ . ԿԵ . ՁԸ։
Աղօթք յառաջ քան զպատարագն կամ զհաղորդելն։ ԼԳ . Ե . ԻԴ . Դ . ԽԷ . ԾԲ . ԾԴ։
Աղօթք զկնի պատարագին կամ հաղորդելոյն։ ԼԳ . Ա . Ե . ԻԴ . ԿԷ . ՁԵ։
Աղօթք ՚ի սուրբ չարչարանս Քրիստոսի։ ՀԵ . ԻԸ . ԼԶ . ԿԶ . ՀԶ . ՀԸ . ԽԴ . ԿԷ . ԼԷ . ԾԲ . ԾԸ . Ղ։
Աղօթք առ սուրբ աստուածամայրն։ Ձ . ԻԶ։
Աղօթք բարեխօսութեամբ սրբոցն։ ԼԱ . Հ . ՀԱ . ՁԲ . ՁԶ . ՁԷ . ՂԱ։
Աղօթք առ հրեշտակս և առ պահապան հրեշտակն։ ՁԱ։
Աղօթք վասն բարի մահուան։ Բ . ԿԶ . ՀԳ . Ձ . ՁԵ։
Աղօթք վասն բժշկութեան։ Գ . ԺԴ . ԺԷ . ԺԸ . ԻԵ . ԼԵ . ԽԲ . ԽԳ . ԽԸ . ԿԳ . ԿԴ . ԿԶ։
Աղօթք վասն հոգեվարաց յիշատակաւ մահու գերեզմանի յարութեան և դատաստանի։ Ա . Բ . Է . Ը . Ի . ԻԳ . ԼԲ . ԼԷ . ԼԹ . Խ . ԿԵ . ԿԶ . ՀԳ . ՀԴ . ՀԹ . Ձ . ՁԱ . ՁԸ . ԿԷ . ՂԱ . ՂԵ։
Աղօթք վասն ննջեցելոց։ ՁԶ։
Աղօթք վասն հարուածոց սպառնեաց։ Գ . ԿԳ . ՁԸ . ՁԹ , ՂԲ։

75 n.

8324

2300, 63

Г-41